

ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԱՅՍՕՐ



ԹԵՐՐԱՆԻ
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ
ԲԵՅՐՈՒԹԻ
ՓԱՐԻՉԻ
ԹԲԻԼԻՍԻ
ՀԱՅԵՐԻ
ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ



МИНИСТЕРСТВО ДИАСПОРЫ РА
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ЭТНОСОЦИОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ
АРМЕНИИ И ДИАСПОРЫ
12

РУБЕН КАРАПЕТЯН

АРМЯНСКИЕ ОБЩИНЫ СЕГОДНЯ
ЭТНОСОЦИОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ АРМЯН
ТЕГЕРАНА, ЛОС-АНДЖЕЛЕСА, БЕЙРУТА, ПАРИЖА, ТБИЛИСИ

MINISTRY OF DIASPORA OF RA
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

ETHNO-SOCIOLOGICAL STUDIES
OF ARMENIA AND THE DIASPORA
12

RUBEN KARAPETYAN

ARMENIAN COMMUNITIES TODAY
ETHNO-SOCIOLOGICAL STUDIES OF ARMENIANS
IN TEHRAN, LOS ANGELES, BEIRUT, PARIS, TBILISI

ИЗДАТЕЛЬСТВО ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ НАН РА
ЕРЕВАН 2018
PUBLISHING INSTITUTE ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NAS RA
YEREVAN 2018

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
12

ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԱՅՍՕՐ
ԹԵՅՐԱՆԻ, ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ, ԲԵՅՐՈՒԹԻ, ՓԱՐԻԶԻ, ԹԲԻԼԻՍԻԻ
ՀԱՅԵՐԻ ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018

Տպագրվում է
ՀՀ սփյուռքի նախարարության դրամաշնորհով,
ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Գրախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Մկրտչյան
պատմական գիտությունների դոկտոր Մ. Գալստյան

Կարապետյան Ռուբեն
Կ 294 Հայ համայնքները այսօր. Թեհրանի, Լոս Անջելեսի, Բեյրութի, Փարիզի, Թբիլիսիի հայերի էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություններ / Ռ. Կարապետյան. – Եր.,: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչություն, 2018. – 252 էջ:

Մենագրությունը ամփոփում է ԱՄՆ-ի, Իրանի, Լիբանանի, Ֆրանսիայի և Վրաստանի խոշոր քաղաքների և մայրաքաղաքների հայերի երկարամյա ուսումնասիրությունները, որոնք իրականացվել են հեղինակի «Հայերը սեփական և արտաքին միջավայրում. համեմատական էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություններ» ծրագրի շրջանակներում: Հիմնվելով ավելի քան քառասուն տեղացի փորձագետների խորացված հարցազրույցների վրա՝ փորձ է արվում համեմատել այդ քաղաքների հայ գաղթօջայիների կենսագործունեությունը ազգային նկարագրի պահպանման և վերարտադրման ասպարեզում, վերլուծել համայնքների ներկա վիճակը և պատկերացնել այն մարտահրավերները, որոնք առկա են ազգապահպան և հայրենիք-Սփյուռք հարաբերությունների շրջանակում: Գրքում ներառված է նշված քաղաքներում իրականացված հարցազրույցների բնագիր ծաղկաբաղը, որոնք խմբագրվել և դասակարգվել են ըստ յուրաքանչյուր գաղթօջայի իրավիճակի և խնդիրների:

Նախատեսված է քաղաքագետների, սոցիոլոգների, ազգագրագետների, պատմաբանների և Սփյուռքի հարցերով հետաքրքրվողների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	7
Գլուխ առաջին Հայերը սեփական և այլազգի միջավայրում (ՀՍԱՄ ծրագիրը). համադրական ուսումնասիրությունների հիմնադրույթները	10
Գլուխ երկրորդ Հայացք ներսից: Գաղթօջախների մասին ձևավորված կարծիքների նկարագրությունների, վկայությունների համեմատական պատկեր	23
Գլուխ երրորդ Իրանի հայերը. Թեհրան	52
Գլուխ չորրորդ Լիբանանի հայերը. Բեյրութ	92
Գլուխ հինգերորդ Ֆրանսիայի հայերը. Փարիզ	140
Գլուխ վեցերորդ Ամերիկայի Միացյալ Նահանգների հայերը. Լոս Անջելես	171
Գլուխ յոթերորդ Վրաստանի հայերը. Թբիլիսի	206
Վերջաբան	238
Заключение	243
Conclusion	248

СОДЕРЖАНИЕ

Введение	7
Глава первая	
Армяне в своей и инонациональной среде: задачи и основные положения сопоставительного исследования	10
Глава вторая	
Взгляд изнутри. Сравнительный анализ описаний, свидетельств, мнений и оценок армянских переселенческих очагов	23
Глава третья	
Армяне Ирана. Тегеран	52
Глава четвертая	
Армяне Ливана. Бейрут	92
Глава пятая	
Армяне Франции. Париж	140
Глава шестая	
Армяне Соединенных Штатов Америки. Лос Анджелес	171
Глава седьмая	
Армяне Грузии. Тбилиси	206
Заключение	243

CONTENTS

Introduction	7
Chapter One	
Armenians in their own and foreign lands. Comparative study: objectives and key points	10
Chapter Two	
A look inside. Comparative analysis of descriptions, testimonies, opinions and assessments of Armenian communities	23
Chapter Three	
Armenians of Iran, Tehran	52
Chapter Four	
Armenians of Lebanon, Beirut	92
Chapter Five	
Armenians of France, Paris	140
Chapter Six	
Armenians of the United States of America, Los Angeles	171
Chapter seven	
Armenians of Georgia, Tbilisi	206
Conclusion	248

*Իմ ուսուցչի և ընկերոջ՝
Յուրի Հարությունյանի հիշատակին*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի աշխարհում մեծ հետաքրքրություն է դրսևորվում Սփյուռքի նկատմամբ: Դա հիմնականում պայմանավորված է ընդունող երկրների քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքում Սփյուռքի նշանակալից դերով, որը բացատրվում է հոծ էթնիկ խմբերի միգրացիայի բուռն շարժընթացով և հետևաբար բազմէթնիկ կազմով երկրների քանակի աճով: Ըստ այդմ՝ պետությունների կազմում առաջացած այլէթնիկ խոշոր խմբերը՝ նոր միջավայրում կազմավորում են ինստիտուտներ, որոնց գործառույթը էթնիկ ինքնության և հայրենիքի հետ կապի պահպանումն է:

Հետևաբար, Սփյուռքի այն կազմավորումները, որոնք կարողացել են ձևավորել և զարգացնել նման ինստիտուտներ, ունակ են ազդելու միջպետական հարաբերությունների վրա, մասնավորապես բնակչության փոխանակմանը մասնակցող երկրների միջև: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ արդի Սփյուռքը կարող է նշանակալի դեր ունենալ ինչպես բնակության երկրի, այնպես էլ նախկին հայրենիքի քաղաքական և տնտեսական կյանքում: Այս առումով ուշագրավ են չինական, կորեական, հրեական, իռլանդական սփյուռքի և այլոց գործուն մասնակցության օրինակները հայրենիքի տնտեսական կյանքում: Հատկանշական է նաև այն, որ պետություն չունեցող սփյուռքի ընտրանին ձգտում է իր հայրենիքի անկախությանը՝ գործադրելով որոշակի միջոցներ, ընդհուպ դիմելով ռազմական միջոցների:

Այսպիսով կարևորվում են այս գործընթացներով պայմանավորված քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացման ուղիների ճշգրտումը և դրանից բխող հեռանկարների պատկերացման համար գիտական մոտեցումների մշակումը: Ակնհայտ է, որ խնդիրը բազմաբովանդակ է. յուրաքանչյուր դեպք, յուրաքանչյուր երևույթ և յուրաքանչյուր գործընթաց եզակի է, իսկ դրանցում ներգրավված մասնակիցները և միջավայրերը շատ տարբեր են և յուրահատուկ: Հե-

տևաբար, անհրաժեշտ է ունենալ համեմատաբար «մաքուր դաշտ», որը հետազոտողին հնարավորություն կընձեռի հասնելու իր իսկ սահմանած նպատակներին՝ աշխատանքային վարկածների ճշգրտման, մեղոդի և գործիքակազմի փորձարկման համար: Պարզորոշ է, որ անհրաժեշտ է ուսումնասիրության համեմատաբար համաձին օբյեկտ, որը ազատ է այլ բազմաբնույթ գործոնների ազդեցություններից: Այլ կերպ ասած՝ դիտարկվող թիրախը պետք է ունենա այն հատկանիշները, որոնք հնարավորին չափով կարող են վկայել նրա համասեռության մասին: Մյուս կողմից՝ այդ օբյեկտի, տվյալ դեպքում մարդկային առանձնահատուկ խմբի կենսագործունեության պայմանները պետք է լինեն այնքան բազմատեսակ, որ հնարավոր լինի բացահայտել նրա և միջավայրի միջև ընթացող փոխներգործության բնույթը: Այսինքն՝ անհրաժեշտ է այնպիսի հետազոտական փնտրտուք, որը կապահովի ճշգրիտ ու իրականությանը մոտ արդյունքներ, կնկարագրի որոշակի դեպքեր՝ դրանով իսկ դառնալով առանցքային նմանատիպ այլ դեպքերի համար:

Այսպիսով, հետազոտության արդյունքների «մաքրության» և վավերության բարձր մակարդակի ապահովման համար անհրաժեշտ է էթնիկ համասեռ զանգված, որի կենսագործունեությունն ընթանում է բազմաբնույթ միջավայրերում: Այս առումով հատկապես ուշագրավ է հայկական Սփյուռքը: Այն բազմազան է միջավայրի (տեղաբաշխման երկրների) բնույթով և գաղթօջախներում ընթացող գործընթացներով, բայց և համասեռ՝ էթնիկ հատկանիշներով: Հայ էթնոսը տարբերակվում է էթնիկ ինքնության, լեզվի, մշակույթի համաձին հատկանիշներով. այն էթնոսոցիալ կուռ միավոր է:

Սույն աշխատության հեղինակին այս հանգամանքը խթանեց ձեռնամուխ լինելու «Հայերը սեփական և այլազգի միջավայրում. Համեմատական էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություններ» (ՀՄԱՄ) ծրագրի մշակմանը: Նշյալ շրջանակներում առաջարկվեց այս հետազոտական աշխատանքը, որն արդյունք է Եվրոպայի, Ամերիկայի և Մերձավոր Արևելքի մի շարք երկրների խոշոր քաղաքների և մայրաքաղաքների հայ գաղթօջախներում իրականացված երկարամյա էթնոսոցիոլոգիական ուսումնասիրությունների: Դրանք հիմնված են վերոնշյալ ծրագրի շրջանակներում ընտրված երկրներում իրականացված էթնոսոցիոլոգիական ծավալուն հարցումների և ավելի քան քառասուն տեղական փորձագետների խորացված հարցազրույցների նյութերի

վրա: Աշխատանքները Լուս Անջելեսի, Թեիրանի, Լիբանանի, Փարիզի և Թբիլիսիի հայկական համայնքներում հեղինակի ղեկավարությամբ իրականացրել են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի աշխատակիցներ Սյուզաննա Բարսեղյանը, Նուշիկ Զարիկյանը, Սոնա Ներսիսյանը և Լուսինե Տանաջյանը:

Աշխատությունում, բացի վերլուծական մշակումներից, ներկայացված են փորձագիտական հարցազրույցների տղագրություններից կազմված բնագիր նյութեր, որոնք համակարգվել են և ենթարկվել գիտական խմբագրման: Հարկ է նշել, որ Թբիլիսիի հետազոտությունը ներկայացված է միայն փորձագետների միասնական տեքստով, որը տրված է համեմատության համար:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

**ՀԱՅԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԵՎ ԱՅԼԱԶԳԻ
ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ (ՀՍԱՄ ԾՐԱԳԻՐԸ).
ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

Հայ ժողովրդի պատմական զարգացման ընթացքում XIX դարի վերջը ու XXI դարի սկիզբը նշանավորվեցին կարևոր իրադարձություններով, նոր մարտահրավերներով: Հայաստանի անկախության հռչակումը, Արցախյան հերոսամարտը, երրորդ հանրապետության սոցիալ-քաղաքական և տնտեսական բարեփոխումները, բնակչության մեծ թափով տեղաշարժերը և դրանից բխող հայերի տարածական արագ ցրիվ լինելը արմատապես փոխեցին ազգի գոյատևման պայմանները: Իրական դարձան ինչպես ողջ ազգի, այնպես էլ նրա առանձին հատվածների ժողովրդագրական վերարտադրության, էթնոսոցիալ կերպարի պահպանման և զարգացման սպառնալիքները:

Ստեղծված իրավիճակի իմաստավորման և հեռանկարների ընկալման նպատակով անհրաժեշտ է Հայաստանի և Սփյուռքի առկա մտավոր ներուժի համախմբումը, որի հիմնական նպատակը որակապես նոր հիմնախնդիրների մշակումն է: Այս առումով կարևորվում են սեփական և այլազգի միջավայրերում հայ էթնիկության կենսագործունեության ընթացքում առաջացող խնդիրների վերաբերյալ որոնումները, հետևաբար՝ տվյալների հավաքումը և համախմբումը: Նշված կենսական խնդիրների նկատմամբ առաջարկված մոտեցումն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական ելքեր: Առաջինն ուղղված է հայ էթնիկության համատեքստում նրա առանձին հատվածների կենսագործունեության տրամաբանական ընթացքի համալիր ուսումնասիրությանը տարբեր միջավայրերում: Այն կարող է ելակետ հանդիսանալ միջին մակարդակի տեսությունների շրջանակներում հիմնարար դրույթների հիմնավորման համար, օրինակ՝ էթնոսի, միգրացիայի, ադապտացիայի, սոցիալական զարգացման և այլն: Գիտական այդ

մոտեցումների մեթոդաբանական մշակումների ամբողջական օգտագործումը հնարավորություն կընձեռի համակողմանիորեն իմաստավորելու էթնիկ հանրությունների մեջ ընթացող փոփոխությունների բնույթը արդի համահարթեցման գործընթացների պայմաններում: Տեսական առումով այս խնդիրը պահանջված է նաև հոծ կամ ցրիվ վիճակներում գտնվող էթնիկ խմբերի զարգացման կանխատեսման մոդելների մշակման համար: Դրանց նկատմամբ պահանջարկի աճը պայմանավորված է նրանով, որ արդի շրջանում դիտարկվում են «տիտղոսային» էթնոսների վրա հիմնված բազմաթիվ պետությունների օրինականացում (ուղեկցվելով նրանց թվի ավելացմամբ), ինչպես նաև երկրների բազմէթնիկության միտումների հզորացում:

Առաջարկված հիմնախնդրի մշակման գործնական մոտեցումները պայմանավորված են ներկայումս առաջացած բազմապիսի մարտահրավերներով, որոնք հետևանք են հայերի կենսագործունեության պայմանների հսկայական բազմազանությամբ: Այն պահանջում է համակարգված փորձարարական գիտելիքներ, որոնք, բացի հեռանկարային տեսական բնույթից, ներառում են ծրագրային կամ նախագծային մշակումների համար անհրաժեշտ տեղեկատվական ռեսուրսներ: Սա բացատրվում է նաև նրանով, որ ժամանակակից գիտական որոնումների մեծ մասի նպատակներն են՝ ելք դեպի գործնական գիտելիքներ, հրատապ խնդիրների շուտափույթ լուծում, ապագային ուղղված հեռանկարային ծրագրերի մշակումներ: Այս առումով հայկական «փորձը» կարող է օրինակելի համարվել ժամանակակից էթնիկ հանրույթների հեռանկարների և համաշխարհայնացման գործընթացներում նրանց դերի իմաստավորման գործում: Հարկ է նշել, որ հայագիտության ասպարեզում գործնական ելքեր նպատակաուղղված գիտական որոնումներն այսօր հատկապես հրատապ են, ունեն որոշակի և իրական սպառողներ՝ ՀՀ կառավարությունը, Սփյուռքի լայն շրջանակները, բազմազգ երկրների ղեկավար մարմինները, միջազգային կազմակերպությունները: Այժմ անհրաժեշտ է համակարգված գիտելիքների որոնումների և ստացման այնպիսի նպատակաուղղվածություն, որը կընդլայնի դրա օգտագործումը քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային ծրագրերի մշակման ոլորտում՝ դրանց ստեղծման լայն հնարավորություններով հանդերձ:

Անդրադառնալով հայ էթնոսում ընթացող արդի էթնոսոցիալական գործընթացների խնդրին՝ անհրաժեշտ է նշել, որ պատմական ճա-

կատագրի բերումով նրանք ընթանում են տարբեր ուղղություններով և պայմանավորվում են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ բնույթի գործոններով: Դրանցից առաջինները ձևավորվում են այսօր ընթացող համաշխարհային գործընթացներով՝ էթնիկ խմբերի տեղաշարժերի արագացում, տեխնոլոգիական առաջընթաց, հեռահաղորդակցության արագ զարգացում և այլն. հետևաբար և՛ ժողովրդագրական, և՛ սոցիալական, և՛ մշակութային առումներով առաջանում է շարժունակ, փոփոխություններին հակված բնակչության սովորական գավառ: Գործոնների երկրորդ խումբը հիմնականում ձևավորվում է տարբեր էթնիկ խմբերի, մասնավորապես հայերի կենսագործունեության տարաբնույթ պայմաններով: Տարաբնակությունը, զարգացման ակունքները, հոգևոր կերտվածքի առանձնահատկությունները, մշակույթը՝ կենսական պայմանների հետ մեկտեղ, ձևավորում են սուբյեկտիվ բնույթի այն բազմությունը, որը նոր պատմական դարաշրջանում խթանում է էթնոսի զարգացման բավականին ոչ միանշանակ ուղղությունների առաջացմանը:

Վերոնշյալ գործոնների փոխազդեցությունների բացահայտման բարդությունը դժվարություններ է հարուցում սեփական և այլազգի միջավայրերում հայերի շրջանում ընթացող էթնոսոցիալական գործընթացների կանխագուշակման գործում, որոնց իմացությունը պահանջում է գիտական մեծ փորձառություն: Փաստորեն, հայ ազգի տարբեր հատվածների շրջանում ընթացող էթնոսոցիալական, այսինքն՝ սոցիալ-տնտեսական և էթնոմշակութային գործընթացների ուղիների և բնույթի առավել մանրակրկիտ և բազմակողմանի իմաստավորումը պահանջում է գիտության առաջադեմ մեթոդների վրա հիմնված փորձարարական գիտելիք:

Այդ նպատակով մշակվել է հայկական սփյուռքի էթնոսոցիոլոգիական ուսումնասիրության «Հայերը սեփական և այլազգի միջավայրում» (ՀՄԱՄ) ծրագիրը: Այն ուղղված է բացահայտելու ազգի տարբեր հատվածների տնտեսական, սոցիալական և հոգևոր ներուժը, մշակելու ազգային ինքնության պահպանման և զարգացման ռազմավարությունը, ինչպես նաև կոչված է փնտրելու կարողությունների համախմբման ուղիներ համազգային խնդիրների լուծման գործում:

Առաջադրված խնդիրների լուծման համար ՀՄԱՄ ծրագրի շրջանակներում արդեն նախապատրաստվել և իրականացվել են տարբեր էթնոսոցիալական միջավայրերում հայ էթնիկության իրավիճակի հա-

մեմատական էմպիրիկ հետազոտություններ, որոնց նպատակն էր նրա տարբեր հատվածների գոյատևման էթնոմշակութային փորձի ընդհանրացումը և յուրաքանչյուր խմբի զարգացումը պայմանավորող գործոնների բացահայտումը: Այդ գործոններն են տվյալ երկրում բնակվելու տևողությունը, տարածքային տեղաշարժերի և տարաբնակեցման ընթացքը, էթնոսոցիալական և դավանաբանական շրջապատը, հոգևոր և քաղաքական կենտրոնների առկայությունը, իրավական դաշտը և այլն: Թվարկված գործոնները դարձան էմպիրիկ հետազոտությունների շարքի թիրախի և մեթոդների ընտրության ելակետային հիմնադրույթներ, որոնց նպատակն էր ոչ միայն սեփական և այլէթնիկ միջավայրերում ձևավորված հայերի սոցիալական և հոգևոր կյանքի նկարագրությունը, այլև ազգի տարբեր խմբերի ինքնության պահպանման աստիճանի բացահայտումը իրենց արժեհամակարգի միջոցով: Դրանով իսկ հետազոտության արդյունքները ձեռք են բերում միջմշակութային երանգ, քանի որ մասնակիցների առումով դրանք համաձի՞ն են (մեկ էթնիկ ընդհանրության հատվածները) և բազմաձի՞ն են (կենսազործունեության պայմանների էթնիկ միջավայրի բազմազանության պատճառով):

ՀՄԱՄ ծրագրում նախատեսված հետազոտություններն իրականացվել են երեք ուղղություններով:

Առաջին ուղղություն՝ 2005–2018 թթ. Երևանում և Սփյուռքի տասը հոծ բնակեցված մասերում՝ Մոսկվայում, Կրասնոդարում (կրկնակի), Թիֆլիսում (կրկնակի), Տաշքենդում, Լոս Անջելեսում, Թեհրանում, Փարիզում, Բեյրութում, Պոլսում և Կիևում բնակվող հայերի շրջանում էթնոսոցիոլոգիական հետազոտությունների¹ ընդհանրացումն էր և թիմային աշխատությունների նախապատրաստումը²: Ըստ այդմ՝ ստացված փորձի հիման վրա մշակվում են նոր մեթոդաբանական մոտեցումներ, որոնք արտացոլվել են ծրագրի շրջանակներում ներկայացված յուրաքանչյուր գիտական հրապարակման մեջ և տեղ են գտնվել առանձին աշխատությունում:

1 Այդ հետազոտությունների մասին տե՛ս www.diasporastudies.am:

2 Տե՛ս հայրենիք-Սփյուռք առնչությունները հայկական մամուլում, «Գիտություն» հրատ., Երևան, 2012: Армянская диаспора в контексте российско-армянских экономических связей, М., 2013. Հայերը սեփական և այլազգի միջավայրում. համեմատական էթնոսոցիոլոգիական հետազոտություն, «Գիտություն» հրատ., Երևան, 2014:

Երկրորդ ուղղություն՝ հայ էթնիկության վերաբերյալ լայն փոխհամաձայնության ստեղծում: Այս երկարաժամկետ նախագծի իրականացումը ենթադրում է, որ հայերի համադրական և համեմատական ուսումնասիրություններում կընդգրկվեն նորանոր համայնքներ և տարբեր երկրների նոր հետազոտողներ: Ըստ այդմ՝ այս հետազոտական ուղղությունը կդառնա առավել ծավալուն և հեռանկարային: Այդ իսկ նպատակով սույն գրքի առաջին մասում, ինչպես նաև մեր նախորդ հրատարակումներում ներկայացվել են տվյալ համայնքի գիտական շրջանակների հայտնի ներկայացուցիչների հետազոտությունները³: Նրանց խոր գիտելիքները և մասնագիտական կարողությունները մեծապես հարստացնում են նյութերը ոչ միայն նորագույն դրվագներով, այլև նպաստում սփյուռքահայերի կյանքի իրողության առավել խոր վերլուծություններին: Դրանից բացի, գիտելիքների, հմտությունների տիրապետող հայ համայնքի ներկայացուցիչների ընդգրկումը նպաստում է, մի կողմից, Հայաստանի և Սփյուռքի գիտական ընկերակցության միջև որոշակի փոխհամաձայնությանը, մյուս կողմից՝ Սփյուռքի հիմնախնդիրների առավել խոր մոտեցումների մշակմանը: Այս առումով փաստենք, որ ծրագրում արդեն ընդգրկված են հետազոտողներ Ռուսաստանից, Բելառուսից, Իրանից, ԱՄՆ-ից և Լիբանանից⁴: Վերջերս կապեր են հաստատվել Լեհաստանի, Չեխիայի և Ղազախստանի հայ համայնքների մասնագետների հետ: Առաջարկվում է վերոնշյալ երկրների համայնքային կազմակերպությունների հետ կազմակերպել գիտական կոնսորցիում:

Երրորդ ուղղություն՝ հայերի օրինակով, էթնիկ ինքնության ընդհանուր տեսական խնդիրների հարցադրման և լուծման համար, ուշադրությունը կենտրոնացնելով յուրաքանչյուր խմբին բնորոշ կոնկրետ իրավիճակի, համազգային նշանակության մարտավարական և ռազմավարական հետևյալ խնդիրների վրա՝

- 3 Տե՛ս Հայերը սեփական և այլազգի միջավայրում. համեմատական էթնոսոցիոլոգիական...; Арутюнян Ю.В. Об армянской диаспоре России, Гитутюн, Ереван, 2011; Роль армянской диаспоры в экономических связях России и Армении, М. 2013; Армяне России, Этносоциологическое исследование, Гитутюн, Ереван, 2016 .
- 4 Նշված աշխատանքների հրատարակմանը, Սփյուռքի հետազոտման բաժնի աշխատակիցներից բացի, մասնակցել են Ռուսաստանի (Յու. Վ. Հարությունյան), ԱՄՆ-ի (Ժ. Գոսազեան) և Իրանի (Ա. Թարվերդյան) ներկայացուցիչները:

1. բացահայտել հայ էթնոսի ամբողջ զանգվածի և նրա առանձին հատվածների սոցիալ-ժողովրդագրական հատկանիշները.
2. գնահատել սեփական և այլէթնիկ միջավայրերում էթնիկության պահպանմանն ուղղված գործունեության մեջ ընդգրկված, գանազան սոցիալ-ժողովրդագրական խմբերի համախմբվածության և ներգրավվածության աստիճանը. մշտադիտարկման միջոցով բազավորել տարբեր երկրներում բնակված հայերի սոցիալական և մասնագիտական ներուժը.
3. առաջարկել տարբեր միջավայրերում էթնոսի առանձին օղակների կենսագործունեության ձևերի բազմազանության տիպաբանությունը, սոցիալական ցանցերի ձևավորման առանձնահատկությունները հայրենիքում և Սփյուռքում. ընդհանրացնել հայրենիքի հետ Սփյուռքի համայնքների կապերի բնույթին և ինքնակազմակերպմանն առնչվող աշխատանքների փորձը.
4. տարբերակել առանձին էթնոմշակութային, սոցիալական, տնտեսական և քաղաքական դիրքորոշումները, պատկերացումները, որոնք ձևավորում են ազգային ուղղվածություն ունեցող լեզվեւորները, կոչերը, ծրագրերը, նպատակները և այլն.
5. ճշգրտել «արտադրողներին» և «սպառողներին» բնորոշ հատկանիշների գաղափարախոսական կաղապարները. տարբերակել էթնիկ ինքնության պահպանմանն ուղղված իրական դրդապատճառները.
6. պատկերացնել էթնիկ բնույթի փոփոխականները, որոնց միջոցով կարելի է չափել անձի էթնիկ ինքնության մակարդակը, սեփական էթնոմշակութային միջավայրում ընդգրկվածությունը և ենթամշակութային դրսևորումների գրանցումը.
7. ուսումնասիրել հայ գործարարությունը, տարբեր սոցիալ-ժողովրդագրական խմբերի գործունեության ոլորտները, փորձառությունն ու կառավարման ձևերը, ավանդույթները, արժեքների կառուցվածքը, դրդապատճառները և ըստ այդմ պատկերացնել էթնոսի իրական սոցիալական ու տնտեսական ներուժը հեռանկարների որոշման նպատակով:

Այժմ ՀՄԱՄ ծրագրի շրջանակներում իրականացվում է փորձարարական տարբեր հետազոտությունների համալիր, որի նպատակն է՝

ա) մշտադիտարկմամբ, կրկնվող հետազոտությունների կիրառմամբ մշտապես կամ պարբերաբար հետևել գործընթացներին. բ) կենսագործունեության բոլոր ձևերի ընտրությամբ որոշել դրանց ուսումնասիրման տեսանկյունները և խնդիրների շրջանակները: Դրանից ելնելով՝ հատուկ քննարկվում և վերլուծվում են իրականությանը համապատասխանող տեղեկատվության ստացման համար անհրաժեշտ աղբյուրագիտական հիմքը, հետազոտության գործիքները, փոփոխականները և չափորոշիչները: Աղբյուրներում ընդգրկվել են պահոցային, վիճակագրական, ԶԼՄ-ների, գրականության, գրանցված վկայությունների և տարատեսակ հետազոտությունների նյութերը, որոնք ներառում են հարցաթերթային ու ֆոկլորային հարցումները, փորձագետների խորացված հարցազրույցները, տիպային փաստերի և իրադրությունների (քեյսերի) արձանագրումը, փաստաթղթերի և գրանցված նյութերի քանակական-որակական վերլուծությունը, բանավոր պատմությունների ուսումնասիրությունը և այլն: Յուրաքանչյուր աղբյուրի ընտրությունը պայմանավորվում է իր տեղեկատվական ներուժով, որը հնարավորություն է տալիս՝ ա) համադրական և համեմատական տվյալների օգտագործման միջոցով ուրվագծելու երևույթների համայնապատկերը, բ) տեղավորվելու տվյալների վերլուծության դիմամիկ պատկերում՝ օգտագործելով մոդելավորման մեթոդները, գ) համակարգելու որակական (բացատրող և բովանդակային) տվյալների քանակական ցուցիչները:

Ծրագրում ընտրված փոփոխականները հնարավորություն են ընձեռում ստանալու առանձին խմբերի ներկայացուցիչների կենսագործունեության հիմնական փուլերի և կյանքի պլանների նկարագրությունը, որոնք դիտարկվում են արժեքային կողմնորոշումների, մտադրությունների, գնահատումների, դիրքորոշումների, համոզմունքների և պատկերացումների խորապատկերի վրա: Փոփոխականների կարևոր մասն է հանդիսացել կատարվող գործընթացների համայնապատկերի գրանցումը, որն ընդգրկել է անցյալը, ներկան և ապագան: Այդ հիմնային հատկանիշները լրացվում են յուրաքանչյուր իրավիճակի առանձնահատկություններն արտացոլող ցուցիչներով:

ՀՄԱՄ ծրագիրը նպատակաուղղված է հիմնականում տարբեր երկրների մայրաքաղաքներում և խոշոր քաղաքներում, ներառյալ Հայաստանի Հանրապետությունում բնակվող հայերի համեմատական և համադրական ուսումնասիրությանը: Առաջարկված ընտրության

սկզբունքը պայմանավորված է հայ ազգի ուրբանիզացման ընդհանուր միտումով և դրա համատեքստում էթնոսի մեծամասնության քաղաքային միջավայրում ցրված ներկայիս վիճակով:

Ուսումնասիրման ենթակա երևույթների համադրությանը, հետևաբար համեմատությանը հասնելու համար հետազոտության ընթացքում չափումներն իրականացվել են փոփոխականների մոտավորապես նույնատիպ խմբի հիման վրա, իսկ ուսումնասիրության թիրախի ընտրության համար ելակետային են հանդիսացել կենսագործունեության պայմանների երկճյուղ հետևյալ ցուցիչները՝ միատարր-բազմազգ միջավայրը, մոտ-օտար (ինչպես նաև բազմադավանանք) շրջապատը, հին-նոր գաղութը, հոծ-ցրված տարաբնակչությունը և այլն:

Նշվածի համատեքստում ձևավորվում են ուսումնասիրման ենթակա գաղթօջախների ընտրման սկզբունքը և հետագա տիպաբանման ուրվագծերը: Այսպես՝ ընտրված տասը գաղթօջախներից երեքում (Պոլիս, Թիֆլիս և Կրասնոդար) հայերը հանդիսանում են բնիկների անխախտելի մասը: Մյուս երկուսում (Թեհրան և Բեյրութ) հայերը 100–400 տարի հաստատվել են և կառուցել իրենց առանձնահատուկ ազգային կենսակերպը: Հաջորդ ընտրանքում ընդգրկված բնակատեղիներում հայ գաղթօջախը նման պատմություն չունի (Լոս Անջելես, Փարիզ): Հարկ է նշել, որ տրված այս քաղաքների հայ համայնքների բնութագրերը այդքան միանշանակ չեն: Այսպես, Փարիզի և Լոս Անջելեսի գաղթօջախները Բեյրութի նման ձևավորման պատմություն ունեն, բայց, ի տարբերություն լիբանանահայերի, ֆրանսահայերը չունեցան հոծ բնակեցման տարածք և ծագումնաբանորեն ավելի բազմազան են: Նույնը կարելի է ասել Լոս Անջելեսի մասին, որը իր կազմով ամենաբազմազանն է, իսկ բնակեցման ձևը դիսկրետ և դիսպերս է:

Հաշվի առնելով այս հանգամանքները՝ մեր ընտրանքից այս ուսումնասիրության համար ընտրվել է հինգ քաղաք՝ Թեհրան, Բեյրութ, Փարիզ, Թբիլիսի և Լոս Անջելես, որտեղ տեղակայված են խոշոր հայկական գաղթօջախներ: Նման ընտրությունը պայմանավորված է նաև այդ գաղթօջախներում զարգացած համայնքային կյանքի առկայությամբ: Եվ դրանց փորձի իմաստավորումը որոշակիություն կմտցնի այլ գաղթօջախների ուսումնասիրության սկզբունքների մշակման մեջ: Ի լրումն վերը նշվածի և նորից անդրադառնալով այս քաղաքներում բնակվող հայերի ուսումնասիրությանը՝ ենթադրվում է նորովի իմաստավորել էթնիկ խումբ-միջավայր փոխներգործության դրսևորումների

բացահայտումը առավել ցայտուն ընդգծված երկու բևեռային կենսապայմաններում՝ ամենաբարենպաստ և առավել անբարենպաստ:

Լիբանանում պայմաններն ավելի մոտ են առաջին բևեռին: Այստեղ հայկական համայնքը մեծ հնարավորություններ ունի զարգացնելու և բարդացնելու սոցիալական կառուցվածքը, մշակութային ենթակառուցվածքները և քաղաքական օրինականացումը (լեգիտիմությունը) իր ինքնության համատեքստում: Դրանով է պայմանավորվել այն հանգամանքը, որ ՀՍԱՄ ծրագրի իրականացման ընթացքում լիբանանահայ համայնքը ներկայանում է որպես պատմականորեն ձևավորված հոծ վերաբնակեցման դասական օրինակ: Հասկանալի է, որ նման բնույթի համայնքի ձևավորման խնդիրը մշտապես առանցքային է դառնում նրա գիտական ճանաչման գործում:

Նույն բնույթագրերը, բայց որոշակի առանձնահատուկ հատկանիշներով վերաբերում են Իրանի գաղթօջախներին: Այն, ի տարբերություն Լիբանանի, որը ձևավորվել է Մեծ եղեռնից փրկված արևմտահայերից, առաջացել է արևելահայ զանգվածից 400 տարի առաջ և ունի իր առանձնահատուկ պատմական ուղին:

Իրանի և Լիբանանի հայ գաղթօջախներում էթնոսի նման հոծ զանգվածների ձևավորման ակունքները բավական դյուրին է վերականգնել հրապարակում եղած պատմական նյութերի և գիտական շրջանառության մեջ գոյություն ունեցող հատուկ հետազոտությունների միջոցով: Դա հիմնականում վերաբերում է իրանահայ գաղթօջախին: Սակայն Թեհրանի հայերի այս ուսումնասիրության ժամանակ պարզաբանվեց մեկ ուշագրավ երևույթ: Ինչպես ստանդարտացված հարցման, այնպես էլ փորձագետների վկայություններով արձանագրվեց քաղաքի համայնքի կազմի մեջ հայերի նոր խմբերի համալրման փաստը, որը ցույց տվեց գաղթօջախի ձևավորման նոր ելևէջներ: Նույնը կարելի է նկատել Լիբանանի գաղթօջախում, որը համալրվում էր և այժմ համալրվում է սիրիահայերով: Նման տեղաշարժերը, համեմատած մնացած երկու երկրների՝ ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հետ, հետևանք չեն թողնում նշված գաղթօջախների կենսակերպի վրա: Այդ իսկ պատճառով սույն հետազոտության մեջ անհրաժեշտություն չկար ինչպես ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հայերի հետազոտության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնելու Մերձավոր Արևելքի այդ գաղթօջախների ծագումնաբանական կառուցվածքին, որում ենթադրվում է նրանց անդամների կամ ծնողների «ելքի» տարածաշրջանը: Բնականաբար, չէ՞

որ այդ երկրների հայ գաղթօջախները բազմաշերտ են ինչպես ձևավորման աղբյուրներով (եկվորների ծագման երկրների բազմազանությունը), այնպես էլ դրանց տեղափոխման ժամանակագրական շարժընթացով: Ինչպես Լոս Անջելեսում, այնպես էլ Փարիզում՝ գաղթօջախի հին գաղթական հոսքերից՝ Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի արևմտյան մասից, Մերձավոր Արևելքի գաղթօջախներից, նախկին ԽՍՀՄ տարածքից, մասնավորապես Հայաստանից, Վրաստանից և Ադրբեջանից: Համարյա նույնը կարելի է ասել Թբիլիսիի հայ գաղթօջախի մասին:

Ինչպես արդեն նշվել է, հայոց սփյուռքի բազմազանությունը բավականին բարդացնում է նրա ուսումնասիրության համակարգվածությունը: Դրա լուծման ուղիներն են, մի կողմից, խնդիրների դրվածքի համապատասխանեցումը իրականությանը, մյուս կողմից՝ մեթոդաբանական մշակումների ճշգրտումը, հնարքների և գործիքակազմի փորձարկվածությունը: ՀՄԱՄ ծրագրի շրջանակներում հայ գաղթօջախների ուսումնասիրման ժամանակ, բացի վերոնշյալ ստանդարտված հարցումներից և փաստաթղթերի քանակական ու որակական մեթոդներով (կոնտենտ անալիզի) ուսումնասիրություններից, առանձնակի տեղ են զբաղեցնում տեղի փորձագետներից ստացված տեղեկատվությունները, որոնք լուրջ անալիտիկ ռեսուրս են ներառում համայնքում տիրող իրավիճակի վերաբերյալ: Այդ տեղեկատվական ռեսուրսն ստանալու համար անհրաժեշտ էր քննարկել մեթոդի կիրառման որոշ առանձնահատկություններ: Առաջին հերթին պետք է հաշվի առնել Սփյուռքի ուսումնասիրման համար սոցիոլոգիական մեթոդների կիրառման բարդությունը: Այսպես բավականին բարդ է ապահովել հարցման միջոցով ստացվող նյութի ներկայացուցչականությունը: Հետևաբար անհրաժեշտ է ուսումնասիրության մեջ ընդգրկել տեղացի բարձրորակ և իրավասու մասնագետների, որոնք լավ տեղեկացված են գաղթօջախի խնդիրներին և ընդհանրապես իրավիճակին: Դիմելով նման աղբյուրի՝ հնարավորություն կընձեռվի ստանալու հավաստի տվյալներ գաղթօջախի վերաբերյալ: Բացի այդ, նման իրավասությունը հիմք կձառայի հետազոտության վերլուծական հնարավորությունների ընդլայնման, նրա որակի բարձրացման և սոցիոլոգիական հարցման արդյունավետության ստուգման համար: Իսկ փորձագետների խորացված հարցումը, անկախ նրանից, որ համալրում է ուսումնասիրության այլ մեթոդներով ստացված տեղեկատվությունը, կարող է

դառնալ ուսումնասիրության առանձին ուղղություն: Այն կարող է պատասխանել բազում մի շարք հարցերի, որին հնարավոր չէ հասնել այլ մեթոդների կիրառմամբ:

Այս առումով առանձնակի նշանակություն է ստանում ուսումնասիրության որակական մեթոդի կիրառումը, որը ենթադրում է փորձագետների խորին հարցազրույցների անցկացում: Այսպիսով հնարավոր է ստանալ հարուստ բովանդակությամբ նյութեր և տվյալներ գաղթօջախի մասին՝ համակարգվածություն հաղորդելով հետազոտությանը: Նշվածը հասանելի դարձնելու համար պետք է ապահովել երկու կարևոր պայման: Առաջինը փորձագետների այնպիսի ընտրությունն է, որը կերաշխավորի նրանց տեղեկացվածության բարձր մակարդակը, անաչառության ապահովությունը և երկխոսությանը մասնակցելու ցանկությունը: Հաշվի առնելով, որ ցանկացած գաղթօջախ բարդ էթնոսոցիալական երևույթ է, փորձագետների ընտրությունը պետք է ապահովի նրանց մասնագիտական ոլորտների ներկայացուցչականությունը՝ ընտրանքում անհրաժեշտաբար ներկայացնելով գաղութի խոշոր ժողովրդագրական և սոցիալական բոլոր խմբերը:

Այդ իսկ պատճառով այս հետազոտության ընթացքում տեղ գտան հետևյալ հնարքները: Նախորդ հետազոտական փուլի, հարցման և կոնտենտ անալիզի անցկացման ժամանակ առաջին հերթին պարզաբանվում են գաղթօջախի կառուցվածքը և նրա մասնագետները: Ապա պարզաբանվում են փորձագետների նախնական ընտրության սկզբունքները, որոնք կախված են մի կողմից՝ ստացված տեղեկություններից, մյուս կողմից՝ գաղթօջախի առանձնահատկություններից: Այսպես, օրինակ, Լոս Անջելեսի փորձագետների ընտրությունը հիմնականում տարբեր է Բեյրութի փորձագետների ընտրությունից այն պատճառով, որ վերջինիս ընտրանին որոշակի է գաղութի տեղեկատվական «դաշտի» պարզության, իսկ Լոս Անջելեսինը՝ բարդության պատճառով: Եթե Թեհրանում և Թբիլիսիում ավելի դյուրին է փորձագետների ընտրությունը, քանի որ հայտնի են հանրությանը, ապա Փարիզի ընտրանին, բացի հասկանալի բնորոշող հատկանիշներից, պետք է համապատասխանի նրա տարածական սփռվածությանը, ծագումնաբանական և այլ առանձնահատուկ ցուցիչներին:

Փորձագիտական հարցումի գործընթացում հատուկ նշանակություն է ստանում հարցրագրուցավարների որակավորման աստիճանը:

Որակի ապահովման համար հետազոտությանն ընդգրկվել են այն մասնագետները, որոնք մասնակցել են ինչպես ստադարտացված հարցումներին, այնպես էլ դիտարկումներ են կատարել գաղթօջախում: Ուստի նրանց անցկացրած հարցումները բովանդակալից են, անաչառ և որ կարևոր է՝ միասնական ծրագրով. դա հնարավոր դարձրեց յուրաքանչյուր գաղթօջախի մասին ստանալու ոչ միայն իրականին մոտ պատկեր, այլև համեմատության համար անհրաժեշտ հարցադրումներ և դրանց մեկնաբանությունները: Փորձագետների խորին հարցազրույցները փոխլրացնում են նշված քաղաքների հայերի շրջանում անցկացված զանգվածային էթնոսոցիոլոգիական հետազոտությունները: Իրենց համայնքի կենսագործունեության նկարագրությունը, գնահատականները և վերլուծական այտժենները ոչ միայն կարևոր ու բովանդակալից լրացումներ են, այլև միս և արյուն են հաղորդում չոր թվային նյութերին:

Աշխատանքը, որը կատարվել է տեղի փորձագետների հետ, նպատակ ուներ ընտրված գաղթօջախների կենսագործունեության բազմազան պայմանների խորապատկերի վրա հայ ազգի տարբեր հատվածների էթնիկ նկարագրի վերհանման համար իրականացնել համեմատական ուսումնասիրություններ: Դիտարկելով այդ գործընթացները՝ որպես իրադարձությունների ժամանակագրական հաջորդականություն, և նկատի ունենալով, որ հայերի տվյալ խմբերը, ինչպես և նրանց կենսապայմանները այդ իրադարձությունների ընթացքում անընդհատ փոփոխվում են, կարևոր էր դրանց հիմնական ուղղությունների և հատկանիշների տարբերակումը: Այդ իսկ առումով ենթադրվում է որոշել համադրական հետազոտության փոխկապակցված հատկանիշների շարք: Այն ինքնըստինքյան, առաջանալով փորձագետների հետ հարցազրույցների ընթացքում, թելադրվում էր ծրագրում ներառված հետևյալ հարցադրումներից.

առաջին՝ գաղթօջախի ընդհանուր պատկերն է, որը պարունակում է դրա առաջացման պատմությունը, ժողովրդագրական կառուցվածքը (քանակը, սեռատարիքային և միգրացիոն կազմը), արտագաղթ-ներգաղթ միտումները: Հատուկ ուշադրություն է հատկացվում տվյալ միջավայրում հայերի վարկանիշին.

երկրորդ՝ այս շարքը կոչված էր փաստագրելու գաղթօջախի ինքնակազմակերպման գործընթացները, դրա ինստիտուցիոնալացման

մակարդակը, տեսակները՝ դպրոց, եկեղեցի, մշակութային կենտրոն, միություններ և կուսակցություններ.

երրորդ՝ կրթություն և մշակութային կյանք. պահանջվում է մայրենի լեզվի ուսուցման և հաղորդակցման ենթակառուցվածքի վիճակի մանրամասն նկարագրություն, որը վերաբերում է հայկական դպրոցներին, հեռահաղորդակցման միջոցներին, ներառյալ՝ ԶԼՄ-ներին: Մշակութային կյանքի վերաբերյալ հարցադրումը ենթադրում է մշակութային միջոցառումների և մասնակիցների թվարկում.

չորրորդ՝ գաղթօջախում ընթացող փոփոխությունները կոչված են արտացոլելու որոշակի միջավայրում սոցիալական, ժողովրդագրական և տնտեսական շարժընթացը, ինչպես նաև պատկերացում կազմելու ազգի որոշակի մասի որոշակի պայմաններում ձևավորած ներուժի մասին.

հինգերորդ՝ վերաբերում է քաղաքական, սոցիալական, տնտեսական, հոգևոր ասպարեզներում հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունների բնույթին (յուրաքանչյուր համայնքի հետ) և հայրենադարձության հեռանկարներին:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՑՔ ԼԵՐՄԻՑ: ԳԱՂԹՕՁԱԽՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ, ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ

Հարցազրույցների ընթացքում փորձագետներից ստացված տեղեկատվությունը բավականին բազմազան է և ներառում է ինչպես տվյալ գաղթօջախի պատմության, կազմի, կենսագործունեության վերաբերյալ տվյալներ, այնպես էլ գնահատականներ նրա վիճակի, հարենիքի հետ փոխառնչությունների և հեռանկարների մասին: Ման հարուստ բովանդակությամբ տեղեկատվությունը հնարավորություն է ընձեռում հետազոտողին ներթափանցելու ընտրանքում ընդգրկված յուրաքանչյուր քաղաքի հայերի շրջանում ընթացող որակական փոփոխությունների գործընթացների մեջ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, անկախ առաջարկված հարցաշարի սահմանափակումներից, փորձագետներն անդրադառնում են նաև այլ խնդիրների, անհրաժեշտություն առաջացավ ուսումնասիրության շրջանակները լայնացնել ու տեղեկատվության քննարկման առարկան հարստացնել նոր նյութերով: Այսպես, գաղթօջախի ներկա իրավիճակը մեծ առումով առնչվում է իր առաջացման և զարգացման պատմության հետ: Հետևաբար, անդրադարձը պատմությանը (դրա անհրաժեշտության մասին վկայում են փորձագետները) կարևոր պայման է հետազոտության ճանաչողական արժեքի բարձրացման համար:

Հաղորդված տեղեկությունները պարզաբանում են գաղթօջախի ծագումնաբանությունը, այսինքն՝ նրան համալրող խմբերի տեղափոխման ժամանակագրական կտրվածքը, ելքի երկիրը: Ըստ այդմ՝ կարևորվում են նոր միջավայրին ընտելանալու ընթացքի իրավիճակի նկարագրման և գնահատման պոթենցիալը: Հարցված անձինք առանձին ուշադրություն են դարձնում բնակության երկրի ընդհանուր քաղաքա-

կանությամբ, որի խորապատկերի վրա տեսանելի են երկիր եկած տարբեր խմբերի հայերի վիճակը և ընտելացման գործընթացը բոլոր ժամանակահատվածներում: Այս առումով անհրաժեշտ է քննարկել մի քանի տեսանկյուն՝ իրավական, տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական, մշակութային, որոնք իրենց հերթին դիտարկվում են գործընթացային երկու դաշտում՝ ա) գաղթօջախի ներքին կյանքի նկարագրության մեջ, բ) հայրենիք-Սփյուռք հարաբերություններում:

Առաջին տեսանկյունն իրավականն է: Այն հիմնականում վերաբերում է ընդունող երկրի օրենսդրությանը, հատկապես այն դրույթներին, որոնք առկա են էթնիկ փոքրամասնություններին և մասնավորապես՝ մեր խնդրո առարկա հայերին: Այս առումով փորձագետներից ստացված տեղեկատվությունը հիմք դարձավ առանձնացնելու երկու հայեցակարգ. առաջին՝ բոլոր գաղթօջախների անդամները դիտարկվում են տվյալ երկրի քաղաքացի, հետևաբար նրանք ենթարկվում են երկրի օրենսդրությանը: Միաժամանակ յուրաքանչյուր երկրի սահմանադրության համաձայն՝ նրանք դիտարկվում են որպես առանձին միավոր՝ ազգային, սոցիալական, կրոնական և համայնքային: Այս առումով ամենից բարենպաստ օրենսդրական դաշտը առկա է Լիբանանում, որտեղ հայերը դիտարկվում են որպես երկրի առանձին էթնիկ համայնքներից մեկը: Ըստ այդմ էլ հայերն ունեն ներկայացուցչություն օրենսդրական և կառավարման մարմիններում, տիրապետում են ինքնակառավարման բոլոր լծակներին: Այսպես, իրենց գաղթօջախը նկարագրելուց առաջ լիբանանահայ փորձագետները համառոտ տեղեկություն են տալիս տվյալ երկրի քաղաքական կառուցվածքի մասին: Առանձնացվում է Լիբանանի կառավարման յուրահատուկ համայնքային ձևը, և դրա հիմամբ տրվում է լիբանանահայ գաղութի կառուցվածքը, որը, համեմատած այլ գաղթօջախների, ազատական և ազգային դիմագծի պահպանման և վերարտադրման առումով ամենաբարենպաստ պայմաններում է ձևավորվել: Այսպիսով, Լիբանանի քաղաքական կառուցվածքը լիբանանահայերի համար նպաստավոր միջավայր է ստեղծում ազգային կառույցներ կայացնելու համար՝ սկսած քաղաքական կուսակցություններից, կրոնական կազմակերպություններից ընդհուպ ազգային դպրոցներ, նույնիսկ բարձրագույն կրթօջախներ, մշակութային կենտրոններ, տարբեր միություններ, մասնավորապես՝ երիտասարդական:

Իրանում հայերը դիտարկվում են որպես կրոնական փոքրամասնություն, չնայած, ըստ փորձագետների վկայության, իրանական միջա-

վայրի առօրյայում նրանք, որպես էթնոդավանանքային միավոր՝ առանձնացվում են այլ էթնիկ և դավանանքային միավորներից: Հայերն օրենսդրական դաշտում ներկայացված են այսպես կոչված քվոտային համապատասխան, և իրավական առումով վերջին տասնամյակներում նրանց իրավիճակը քիչ է փոխվել: Երկրորդը վերաբերում է մեկ այլ օրենսդրական իրավիճակի, երբ չի շեշտվում ազգային կամ ռասայական, դավանանքային խնդիրը, և բոլորը համահավասար են. համենայն դեպս պաշտոնապես հայտարարվում է այդ մասին: Դրա հետ մեկտեղ հատուկ ուշադրության է արժանանում Իրանի քաղաքական կառուցվածքը և դրա ներքո ազգային փոքրամասնությունների, մասնավորապես հայերի իրավական իրավիճակի քննարկումը իրանական հեղափոխությունից առաջ և հետո: Բացատրվում են երկրի օրենսդրության այն դրույթները, որոնք ռազմավարական նշանակություն ունեն գաղութի ինքնապահպանման գործում, և որոնք նպաստել են նրա գոյությանը: Այս համատեքստում հայերն առանձնացվում են այլ էթնիկ փոքրամասնություններից իրենց կացության, կենսագործունեության, վարկանիշի իրականության ներքո, ինչպես նաև ներկայացվում են գաղթօջախի կազմի փոփոխության միտումները վերջին մի քանի տասնյակ տարիների ընթացքում: Դիտարկվում են նաև հայերի խառնամուսնությունները: Ըստ փորձագետների՝ իրանահայերի խառնամուսնությունները հազվադեպ են, որը բացատրվում է տիտղոսակիր ազգի և հայերի միջև դավանանքային լուրջ տարբերությամբ: Նախ վերջին 20–30 տարվա ընթացքում երկրում կատարվող քաղաքական փոփոխությունները և տնտեսական դժվարությունները, ապա էթնիկ փոքրամասնությունների, հանձինս հայերի մեջ ընթացող սոցիալտնտեսական փոխակերպումները պահանջում են ավելի լայն իրավական, տնտեսական քննության ասպարեզ: Սա ոչ մի կերպ չի ազդում հայերի նկատմամբ վերաբերմունքի վրա՝ իրանահայերի ու տիտղոսակիր ազգի, ինչպես նաև այլազգիների (էթնիկ փոքրամասնությունների) հետ ստեղծված փոխհարաբերությունները փորձագետները հիմնականում դրական են գնահատում: Այս նյութը օգնում է հասկանալու, իմաստավորելու ազգամիջյան հարաբերությունների մեջ հայերի առանձնակի դիրքորոշումը, ինչպես նաև այլազգիների համեմատության միջոցով ավելի ճշգրիտ պատկերացում կազմելու համայնքին շրջապատող միջավայրի վերաբերմունքի հիմքերի մասին: Փորձագետները հանգամանակից բացատրություն են տալիս իրավիճակին և,

որ կարևոր է, իրենց կարծիքները արտահայտում այդ կապակցությամբ: Ուշագրավ է, որ նման իրավական հարցեր թե՛ Ֆրանսիայի, թե՛ ԱՄՆ-ի հայ գաղթօջախների ներկայացուցիչների մեջ չեն ծագում: Դա, ըստ երևույթին, բացատրվում է այդ երկրների օրենսդրության էթնիկ, սոցիալական, դավանանքային և այլ ինքնաարտահայտման լայն հնարավորություններով, որտեղ շեշտված չէ քաղաքացու ազգային պատկանելության հանգամանքը: Ինչ վերաբերվում Վրաստանի հայերին, ապա այստեղ իրավիճակը բավականին տարբերվում է թվարկված նախորդ երկրներից: Խորհրդային տարիների ժառանգությունը, 90-ական թվականների և 2008 թ. պատերազմական գործողությունները իր լուրջ ազդեցությունը թողեցին բոլոր բնակչության ու այդ թվում հայերի կենսակերպի, ազգամիջյան հարաբերությունների վրա: Լինելով այդ երկրի բնիկ ժողովրդի անբաժանելի մասը հայերը զգացել են այդ երկրում ընթացող բոլոր քաղաքական փոխակերպումների ծանրությունը: Այս առումով բավականին դժվար է որոշակիություն մտցնել ազգի այս հատվածի քաղաքական իրավիճակի վերաբերյալ, քանի որ փորձագետների մեծ մասը բավականին տարակարծիք են իրենց տեղեկություններում և գնահատականներում :

Այսպիսով, ընտրված համայնքների ազգային և դավանանքային իրավական խնդիրները գրեթե միանման էին այն առումով, որ մի դեպքում այն, որպես միավոր, ամրագրված էր օրենսդրությամբ և պաշտպանում էր անձի համայնքային իրավունքները, մյուս դեպքում օրենսդրությունը պաշտպանում էր անձի իրավունքները և համապատասխանորեն նրա ինքնաարտահայտման մշակութային ձևերը:

Սովորույթի իրավունքի համատեքստում, որտեղ կենցաղային մակարդակում ընդունված են որոշակի վարքի (սովորույթների) չգրված կանոններ, առանձին տեղ են գրավում խմբային դիրքորոշումները այս կամ այն անձի կամ խմբի նկատմամբ: Այն պայմանավորված է առանձին խմբի ներկայացուցիչների վարքագծի համապատասխանությամբ տվյալ միջավայրում ձևավորված սովորույթներին, կարգ ու կանոնին: Այստեղ հատկապես ուշադրության է արժանի միգրացիոն, էթնիկ կամ դավանանքային միավորը: Այս առումով հայ էթնիկ խումբը վայելում է միջավայրի հարգանքը, շրջապատը նրանց ընկալում է որպես գործույն, ազնիվ, արհեստավարժ մարդկանց խումբ, որոնք երկրում աշխուժություն են մտցնում տնտեսության մեջ, սոցիալական և մշակութային կյանքում:

Ուշագրավ է Լիբանանում ազգային խառնամուսնությունների վիճակը: Տեղեկատվության համաձայն՝ ակներև է երևույթի տարածվածությունը, որից զերծ չեն լիբանանահայերը, և այդ գործընթացն ունի արագացման միտումներ: Այս երևույթները կարելի է բացատրել լիբանանահայերի և Լիբանանի այլ էթնիկ խմբերի միջև ստեղծված հարաբերություններով և երկրում լիբանանահայերի վարկանիշով: Ինչպես այլ երկրներում, այնպես էլ Լիբանանում հայերի նկատմամբ վերաբերմունքը դրական է: Ազգի այս հատվածի անդամները հայտնի են որպես գործունյա, ազնիվ, շնորհալի արհեստավոր մարդիկ: Դրան տրվում է բացատրություն գաղութի կայացման պատմական ակնարկով, լիբանանահայերի կենսագործունեության և այլազգիների շփման առանձնահատկության նկարագրման դրվագներով: Հատուկ անդրադարձ կա հայերի՝ քաղաքացիական պատերազմի ժամանակ կատարած այսպես ասած «սխալների», որոնք որոշ չափով ազդեցին գաղութի վարկանիշի վրա, և դրա հաղթահարման երկար և ծանր ճանապարհին:

Ֆրանսիայի հայերի նկատմամբ վերաբերմունքի մասին վկայությունները սակավ են, որը խոսում է դրանց ոչ հրատապ լինելու մասին: Խնդրի լիարժեք պատկերացման համար, մեր պնդմամբ, փորձագետներն անդրադառնում են հայերի և շրջապատող միջավայրի հետ հարաբերությունների մասին գնահատականներին և տեղեկատվական սյուժեներին: Հատուկ ուշադրության են արժանի ֆրանսիացիների կողմից հայերի նկատմամբ վերաբերմունքի մասին փորձագետների կարծիքները, ինչպես նաև ազգային փոքրամասնություններին վերաբերող պետական քաղաքականության քննարկումը: Վերլուծվում են նաև այս խնդրի պետական և միջանձնային մակարդակները, և տրվում է դրանց կապը: Ինչպես այլ գաղթօջախների փորձագետները, ֆրանսահայերը ևս շեշտում են խառնամուսնությունների հանգամանքը, որոնց առկայությունը և աճի միտումները փաստում են գաղութի ներկա և ապագա ուժացման գործընթացները: Տեղեկատվությունը բավականաչափ ճշգրիտ է, քանզի ստացվել է «առաջին ձեռքից»՝ Հայ առաքելական եկեղեցու քահանայի կողմից: Քահանան նաև անդրադառնում է այս միջավայրում տիրող բարքերին, ֆրանսիացիների և մասնավորապես ֆրանսահայերի վերաբերմունքին ընտանիքի և ամուսնության նկատմամբ:

Հարկ է նշել, որ եթե Ֆրանսիայում և ԱՄՆ-ում խառնամուսնությունների տարածվածությունը վկայում է ինտեգրման և հայերի նկատ-

մամբ շրջապատի բարյացակամ վերաբերմունքի մասին, ապա Իրանի դեպքում այդ օրինակափ երևույթը խախտվում է: Դիտարկումներին համապատասխան՝ իրանահայերի մեջ խառնազգային ամուսնությունները հազվադեպ են, որը բացատրվում է տիտղոսակիր ազգի և հայերի միջև դավանանքային լուրջ տարբերությամբ: Ինչպես Սիրիայում, այնպես էլ արաբական այլ երկրներում (բացի Լիբանանից) նման երևույթի առկայությունը չի փաստում հայերի նկատմամբ տիտղոսակիր ազգի բացասական վերաբերմունքի մասին: Այսպես, նույնիսկ վերջին 20–30 տարվա ընթացքում Իրանում կատարվող քաղաքական փոփոխությունները, տնտեսական դժվարությունները և էթնիկ փոքրամասնությունների՝ հանձինս հայերի մեջ ընթացող սոցիալ-տնտեսական փոխակերպումները (որոնք պահանջում են ավելի լայն իրավական, տնտեսական ասպարեզ) ոչ մի կերպ չեն ազդում հայերի նկատմամբ վերաբերմունքի վրա: Իրանահայերի ու տիտղոսակիր ազգի, ինչպես նաև այլազգիների (էթնիկ փոքրամասնությունների) հետ ստեղծված փոխհարաբերությունները փորձագետները հիմնականում դրական են գնահատում: Մեր գրանցած նյութը լուրջ հիմք է տալիս ազգամիջյան հարաբերությունների համատեքստում իմաստավորել հայերի առանձնակի դիրքորոշումը, այլազգիների համեմատության միջոցով ավելի ճշգրիտ պատկերացնել համայնքին շրջապատող միջավայրի վերաբերմունքի հիմքերը: Փորձագետները հանգամանակից բացատրություն են տալիս իրավիճակին, և որ կարևոր է՝ կարծիքներ են հայտնում այդ առնչությամբ:

Որոշ խնդիրներ են ծագում այս առումով, երբ խոսքը ԱՄՆ-ի և Ֆրանսիայի միգրացիոն նոր հոսքերի մասին է, նամանավանդ ԽՍՀՄ-ի նախկին տարածքից եկածների մասին: Սրանց համար նոր և անսովոր է այդ երկրների միջավայրը, որոնք, ի տարբերություն ավանդական գաղթօջախներից եկածների, որոնց մեջ ավանդաբար մշակված են օտար միջավայրում ընտելացման մեխանիզմները, որոշակիորեն ապակողմնորոշված են լինում: Այս հանգամանքը ինչ-որ չափով ազդում է այդ երկրներում հայերի վարկանիշի վրա: Այսպիսով, հարցազրույցների նյութերը հնարավորություն տվեցին ոչ միայն հասկանալու հայերի կարգավիճակի գնահատականները տվյալ երկրների օրենսդրական դաշտում, այլև ստանալու հավաստի տեղեկատվություն ուսումնասիրված երկրների սովորութեական իրավունքի ներքո հայ ազգի տվյալ զանգվածների դրական վարկանիշի առկայության մասին:

Հաջորդ տեղեկատվական սյուժեները վերաբերում են գաղթօջախի կազմավորման ընթացքին: Ի սկզբանե կարելի է ենթադրել յուրաքանչյուր գաղթօջախի ձևավորման առանձնահատկությունների մասին: Դրանք կարելի է բաժանել ըստ հին-նոր, աճող-սահանջող և այլ հատկանիշների: Պարզորոշ է այն օրինաչափ իրավիճակը, երբ այսպես կոչված հին գաղթօջախը միատարր է իր ծագումնաբանական առումով ու ձևավորման ժամանակագրությամբ, իսկ նորերը բարդ են թե՛ հոսքերի կազմով և թե՛ ներգաղթի ժամանակով: Այսպես, Իրանի հայ գաղթօջախն ունի 400-ամյա պատմություն: Այդ իսկ պատճառով իրանահայ փորձագետները հանգամանալից անդրադարձել են գաղութի պատմությանը՝ ներկայացնելով Իրանի պատմության խորպատկերի վրա: Հատուկ ուշադրություն են դարձնում հայերի տեղաբաշխմանը Իրանի տարածքի վրա, որոնք, ըստ փորձագետների, ներկայումս հատվածայնացված են: Ըստ նրանց՝ դա պայմանավորված է Թեհրանի արագ աճով և ընդհանրապես իրանահայերի ողջ զանգվածի մեջ ընթացող միգրացիոն գործընթացներով: Նշվում է, որ պարսկահայ գաղթօջախը լուրջ նահանջ է ապրում: Ի թիվս բազմաթիվ պատճառների՝ մեր հարցվածներն առանձնացնում են երկու գլխավոր գործոն. 1) հայերի արագ սոցիալական փոխակերպման գործընթացները, որոնք այդ պետության սոցիալական դաշտում հեռանկար չեն տեսնում, 2) որպես առաջինի հետևանք՝ արտահոսքի մեծ ծավալները:

Որոշակի նմանություն կա Բեյրութի հայերի մեջ: Ինչպես արդեն նշվեց՝ մեր ազգի դասական հոծ զանգվածները կրում են լուրջ քանակական, հետևաբար և որակական կորուստներ: Լիբանանյան փորձագետները հաղորդում են գաղթօջախի կազմի, տեղաբաշխման, պատմական ուղու, և որ կարևոր է՝ հատուկ նշվում է գաղութի իրավիճակի լուրջ փոփոխման եզրակետը՝ լիբանանյան քաղաքացիական պատերազմը: Ըստ փորձագետների՝ ժամանակակից գաղթօջախը հետևանք է այդ պատերազմի, նշելով, որ գաղթօջախի ժամանակակից պատմությունը այսօր բաժանվում է պատերազմից առաջ և հետո: Այս պատմաքաղաքական համատեքստում է տրվում լիբանանահայ էթնիկ խմբի ժողովրդագրական կազմը, որում առանձնացվում են նրա ընդհանուր և մոտավոր քանակը, տարիքային կազմի որոշակի տոկոսային տվյալները և երկրի տարածքում նրա տարաբնակեցման պատկերը: Վերջինս լրացվում է լիբանանահայերի տարածական տեղաշարժերի ընթացքով և նշմարվող միտումներով: Փորձագետները ուշագրավ տվյալ-

ներ են հաղորդում Լիբանանի ներսում և առանձնապես Բեյրութի տարածքում կատարվող հայերի տեղաշարժերի մասին: Ցույց է տրվում նաև սիրիահայերի ներգաղթը Լիբանան, նրանց քանակական ու որակական կազմը: Մրա հետ մեկտեղ դիտարկվում են ինչպես արտագաղթի շարժընթացը և ուղղվածությունը, այնպես էլ դրա մասնակիցների սեռատարիքային և սոցիալական կազմը: Տեղեկությունները բավական ստույգ են, դրանք համընկնում են Լիբանանում մեր անցկացրած սոցիոլոգիական հետազոտության նյութերի հետ: Նման պատկեր արձանագրվում է նաև Թբիլիսիի հայերի մոտ:

Մյուս երկու ուսումնասիրված գաղթօջախների՝ Ֆրանսիայի և ԱՄՆ-ի հայության պատկերն այլ է: Դրանք մշտապես համալրվող և վերջերս մեծ թափ ստացած քանակական աճով բնորոշվող գաղթօջախներ են: Այս ամենը արտահայտվեց թե՛ ֆրանսահայ և թե՛ ամերիկահայ փորձագետների պատասխաններում: Այսպես, խորին հարցազրույցի ընթացքում փորձագետները, բացի Փարիզի հայերից, բավականին հանգամանալի տեղեկություն տվեցին Ֆրանսիայում բնակվող բոլոր հայերի կազմի և կենսակերպի վերաբերյալ: Ի դեպ, ֆրանսահայերի նկարագրության ընթացքում փորձագետների զգալի մասը հանգամանորեն կանգ է առնում համայնքի պատմության վրա: Այդ տեղեկությունները հնարավորություն են տալիս պատկերացնելու ֆրանսահայերի որակական և քանակական հատկանիշները, որոշակի ճշգրտումներ մտցնելու հրապարակում եղած նյութերի, նոր տեղեկատվություն ստանալու ընդհանուր քանակի, սոցիալական և ժողովրդագրական կազմի, միգրացիոն գործընթացների և ընդհանրապես համայնքը սնուցող հայերի հոսքերի ծագման երկրների մասին, միաժամանակ ներթափանցելու քաղաքում բնակվող հայերի յուրաքանչյուր խմբում ընթացող որակական փոփոխությունների ընթացքի մեջ: Դա վերաբերում է այդ խմբերի ծագումնաբանական այն տվյալներին, ժամանակագրությանը, որոնք գրանցում են Փարիզ տեղափոխելուց հետո, հետևաբար այն ներառում է նոր միջավայրին ընտելանալու ընթացքի իրավիճակի նկարագրման և գնահատման սյուժեները: Հարցված անձինք առանձին ուշադրություն են դարձնում ֆրանսիական կառավարության ընդհանուր քաղաքականությանը, որի խորապատկերի վրա ավելի տրամաբանական է հետևել այս երկիր եկած տարբեր խմբերի հայերի ներկա վիճակին և ընտելացման գործընթացին՝ հաշվի առնելով ժամանակի գործոնը:

Նմանատիպ կարծիքներ են հնչեցնում ամերիկահայերը, որոնց վկայությունները ցույց են տալիս Լուս Անջելեսի գաղթօջախում ավելի մեծ թափ ստացող միգրացիոն գործընթացների մասին: Սկզբից նրանք նշում են, որ գաղթօջախի ընդհանուր նկարագրությունը բավականին բարդ է հայերի թվաքանակի մեծության և աճման արագ տեմպերի պատճառով: Մեզապոլիսում բնակվող հայ էթնիկ խմբի կազմը բարդ է իր ծագումնաբանական, սոցիալական և ժողովրդագրական առումով: Այդ իսկ պատճառով փորձագետների մեծ մասը առաջին հերթին անդրադառնում է դրա ձևավորման պատմությանը: Դա բնական է, քանի որ էթնիկ խմբի ներկա կացության հիմքում ընկած են նրան սնուցող հոսքերի բնութագրերը, որոնք բազմազան են թե՛ աշխարհագրական, թե՛ ծագումնաբանական և թե՛ ժամանակագրական հատկանիշներով: Դրանք և՛ առանձնակի, և՛ համակցված կերպով մեծ բարդություն են առաջացնում քաղաքի հայ զանգվածի մեջ: Այսպես, փորձագետների մեծ մասը համակարծիք է, որ Լուս Անջելեսի գաղութը մեծացող գաղութ է այն իմաստով, որ աշխարհի բոլոր կողմերից ձգտում են այստեղ գալ թե՛ Հայաստանից, թե՛ Միջին Արևելքից, թե՛ Հարավային Ամերիկայից և Միացյալ Նահանգների տարբեր շրջաններից: Այսպիսով, Լուս Անջելեսի հայ գաղութի ծագումնաբանական կառուցվածքը կարելի է բաղդատել առանձին երկրների հետ, որոնց տարածքից քաղաքում հայերի հոսքեր են փաստագրվել: Առաջին շերտը մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը եկածներն են՝ Արևմտյան Հայաստանից և Թուրքիայից, այնուհետև՝ նախկին ԽՍՀՄ-ից: Հետագայում լուրջ հոսքեր նկատվեցին Լիբանանից և Մերձավոր Արևելքի այլ երկրներից, Պարսկաստանից, Խորհրդային Հայաստանից, ԽՍՀՄ-ի տարբեր հանրապետություններից (Ադրբեջան, Վրաստան, ՌԳ և այլն): Վերջին շրջաններում այդ հոսքերի հետ մեկտեղ Լուս Անջելես եկան այդ երկրի այլ նահանգներից և քաղաքներից, սիրիահայերը, Արգենտինայի և Վենեսուելայի հայերը: Նշված հոսքերի գալու պատճառների ընդհանրական եզրահանգումները, ըստ փորձագետների, երկու խմբի են բաժանվում: Առաջինը ելքի երկրի, տարածաշրջանի կենսագործունեության դժվարություններն են՝ պատերազմ, հեղափոխություն, էթնիկ հետապնդում, տնտեսական դժվարություն և այլ բազմաթիվ գործոններ: Երկրորդը Լուս Անջելեսի գրավչությունն է թե՛ բնությամբ, թե՛ տնտեսական բարենպաստ պայմաններով: Ինչ վերաբերում է հայ ազգի այս հատվածի կազմի այլ հատկանիշներին, ապա փորձագետների մոտ

նկատվում են տեղեկատվության որոշակի սակավություն և ընդհանրական գնահատականներ: Դրանք հիմնականում վերաբերում են հայերի քաղաքի պայմաններին հարմարվելու խնդրին և հետագա զարգացումներին:

Այսպիսով, ստացված տեղեկատվության առաջին մասը կոչված է ապահովելու գաղթօջախի բնութագրումը, տալու ընդհանուր խորապատկերը, որի ներքո արդեն կբացատրվեն յուրաքանչյուր փորձագետի կարծիքի հիմքերը, և որ շատ արժեքավոր է՝ տեղեկություններ տալու գաղթօջախում ընթացող գործընթացների մասին: Այն մենք դիտարկում ենք երեք տեսանկյունից՝ սոցիալական, տնտեսական և մշակութային: Նման մոտեցումները հիմնավորվում են մարդկային զանգվածի կենսագործունեության հիմնարար ոլորտներով: Դա հատկապես կարևորվում է էթնիկ միավորի հարցում, որը օտարազգի միջավայրում է՝ ինքնապահպանման գործառույթների բացահայտման և դրանց նկարագրման ու վերլուծության համար: Այն ենթադրում է դիտարկել խմբի կենսագործունեության բոլոր այն ոլորտները, որում արտահայտվում են այդ գործառույթները, և որոնք շաղկապվում են միմյանց հետ:

Առաջին տեսանկյունը սոցիալականն է, որը նպատակ է հետապնդում ուսումնասիրելու հայերի կենսագործունեության սոցիալական համատեքստի բովանդակային փոփոխությունները և որոշելու նրանց սոցիալական կառուցվածքի որակական հատկանիշների զարգացման ուղիները: Անհրաժեշտ է նաև պարզաբանել, թե յուրաքանչյուր երկրի (քաղաքի) պայմանները որքանով են հնարավորություն տալիս ընդլայնելու տվյալ էթնիկ խմբի ներկայացուցիչների սոցիալական (ինչպես նաև տնտեսական) առաջընթացի հորիզոնը և ծավալները: Դա կարևոր է գաղթօջախում, առանձնահատուկ տարաբնակչության և էթնիկ ինքնավարության տարբեր պայմաններում, որը հնարավորություն է ընձեռում տվյալ պետությանը՝ զարգացման միտումների որոշման տեսանկյունով: Ընթանում է դա արդյոք սոցիալական ցրման, ազգային խմբային ընկերացման կամ ընդհակառակը՝ որոշակի տնտեսական հովանու ներքո կենտրոնացման ձևով, կամ էլ այդ պայմաններում էթնիկ խումբը ձգտում է ձևավորել սեփական յուրահատուկ սոցիալական կառուցվածքը (օրինակ՝ Թեհրանի հայերը¹, որոնք կոչված են իրենց

1 Տե՛ս Սանաջյան Լ., Հայերի սոցիալական փոխակերպումները սփյուռքում.

տնտեսական պահանջանունքների բավարարմանը ու նպաստում են ինքնաբավ էթնոսոցիալական հանրության ձևավորմանը): Այսպիսով, հաշվի առնելով, որ էթնիկ խումբը առանձնահատուկ բնույթի սոցիալական համախմբություն է, առաջին հերթին կարևոր է դիտարկել էթնիկ փոփոխությունների սոցիալական բաղադրիչները: Անհրաժեշտ է հասկանալ, թե որքանով է այդ խումբը սոցիալապես համախմբված կամ տարանջատված, ներխմբային հարաբերությունները դեռևս ցանցային մակարդակում են, թե՛ ներսում գոյություն ունեն աստիճանակարգային (հիերարխիկ) հարաբերություններ: Նաև կարևոր է իմանալ, թե դրանում էթնիկ նշանակության ինստիտուտները բացակայում են, ձևավորման փուլում են, թե՛ զարգացած վիճակում են:

Առաջադրված հարցերի վերաբերյալ սոցիալական տեսությունները պատրաստի ընդունելի հայեցակարգային պատասխաններ են, սակայն նրանց մեջ բացակայում է այնպիսի նորր աստիճանիչ, որն է էթնունշակութային բնույթի յուրահատկությունը: Նման թեմատիկան հիմնականում այն հետազոտողների ուշադրության դաշտում է, որոնք առավելապես քննարկում են մշակույթի, հոգեբանության, միջմշակութային փոխազդեցությունների էթնիկ առանձնահատկությունները, որոնցում սոցիալական բաղադրիչը սակավ է ներկայացվում: Մինչդեռ համայնքի սոցիալական հատկանիշները և դրանց փոփոխման գործընթացները արդեն իսկ ազգի տվյալ հատվածի որակական էթնիկ երանգավորում ունեցող նկարագրի մասն են: Այդ իմաստով բավականին արդիական են որոշակի էթնիկ խմբում սոցիալական գործընթացների փորձարարական անդրադարձը ինչպես սոցիալական հարաբերությունների վերարտադրության պայմանների հետ ավանդական և նոր ցանցային փոխադարձ կապերին, այնպես էլ խմբի սոցիալական կառուցվածքին և այդ խմբում սոցիալական աստիճանակարգման ուղիներին:

Նշվածի համատեքստում են չորս երկրներում հարցված փորձագետների տեղեկատվական սյուժեները: Դրանք անհրաժեշտ է դիտարկել համակցված այն պատճառով, որ էթնիկ խմբի համար կարևոր են իր սոցիալական միջավայրը, որն ունի ազգային դրոշմված հատկանիշներ, նրա սոցիալ-ժողովրդագրական կազմը, որը հիմք է գաղթօջախի մեջ ընթացող ինքնակազմակերպման և ինքնակառավարման գործըն-

Հայերը սեփական և այլազգի միջավայրում. համեմատական էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, «Գիտություն» հրատ., Երևան, 2014, էջ 82:

թացների համար, ինչպես նաև տնտեսական ներուժի գնահատականը: Այդ փոխկապակցված հատկանիշները նման ձևով են ընկալվում և մեզ հաղորդվում փորձագետի կողմից: Դա կարելի է բացատրել նրա ասոցիատիվ մտածելակերպով՝ մի կողմից, մյուս կողմից՝ իրականությանը համապատասխանության փաստով: Այսպես օրինակ՝ գաղթօջախի տնտեսական ներուժն է որոշում նրա սոցիալական միջավայրը և դրան համապատասխան՝ այն կառույցները, որոնք կոչված են այդ միջավայրը պահպանելու: Կամ գաղութի անդամների սոցիալ-ժողովրդագրական կազմն է դառնում որոշիչ նրա ազգային կյանքի կազմակերպման, ենթակառուցվածքների զարգացվածության և այլ առումներով:

Այսպես, իրանահայ գաղթօջախի ընդհանուր պատկերը նկարագրելիս մեր հարցումները տվեցին այնպիսի նյութ, որտեղ հակիրճ, բայց բովանդակալից տեղեկություններ կան նրա ինքնակազմակերպման գործընթացների մասին: Այստեղ տրվեց ոչ միայն գաղութի ազգային կառավարման համակարգը, այլև որոշակի օրինակներով ցուցադրվեց նրա գործունեության բնույթը, ինչը այս հետազոտության համար բավականին բովանդակալից է Սփյուռքի ուսումնասիրման գործում: Ըստ այդմ՝ տեղեկություն է հաղորդվում իրանահայերի սոցիալ-ժողովրդագրական կազմի մասին, որը պարունակում է մի շարք ուշագրավ փաստեր և գնահատականներ: Այսպես՝ փորձագետները նշում են գաղութի տարիքային կազմի նահանջի-ծերացման փաստը և բացատրում դրա պատճառները արտագաղթով, որն էլ կապում են երկրում տիրող տնտեսական վիճակի հետ, ինչպես նաև պայմանավորում գաղութի մեջ կատարվող սոցիալական փոխակերպումներով: Վերջինիս մասին տրվում են և՛ որակական, և՛ քանակական (որը շատ կարևոր է չափագրելու առումով) տվյալներ: Առաջինը բացատրում է հայերի մեջ եղած ներկա սոցիալական սանդղակը և նրա տնտեսական բաղադրիչը, իսկ երկրորդը՝ դրանց համամասնությունը:

Իսկ լիբանանահայ գաղթօջախի ներկա իրավիճակը ներկայացնելիս փորձագետները անդրադառնում են նրա տնտեսական և սոցիալական գործընթացներին, որոնք, ըստ մեր գրառած վկայությունների, բնորոշվում են կառուցվածքային և ժամանակագրական բնութագրերով: Հարցավարներին հաղորդվել են մեծ քանակի ու բովանդակալից այնպիսի տեղեկատվական պյուժեներ, որոնք վկայում են լիբանանահայերի մեջ կատարվող տնտեսական փոփոխությունների ու սոցիալա-

կան տեղաշարժերի մասին՝ սկսած գաղթօջախի ձևավորման շրջանից մինչև մեր օրեր: Տրվում են որոշակի թվային տվյալներ հայերի սոցիալական կազմի մասին ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում:

Հակառակ դրան՝ Փարիզի փորձագետները կարծում են, որ անհրաժեշտ է նշել ազգային որոշակի համայնքային կառույցների՝ դպրոցի, եկեղեցու, մշակութային կենտրոնի ստեղծման և պահպանման խնդիրը, կուսակցական շարժումների նպաստման հարցերի քննարկումը: Վերջիններս, այսինքն՝ համայնքային ինքնակառավարման ուղղությամբ անհրաժեշտ կազմակերպությունները, ինչպես բոլոր խոշոր հայկական գաղութներում, բազմաշերտ են և բաժանվում են կուսակցական, եկեղեցական, կրթական, բարեգործական, մշակութային, մարզական և, ինչը մեզ համար հետաքրքրական ու կարևոր է, սոցիալական, մասնագիտական սկզբունքով: Պարզ և տրամաբանական է, որ Սփյուռքում այդ բազմաշերտ բոլոր կառույցները որոշակիորեն փոխկապակցված են իրար: Այսպես, կուսակցություններն ունեն իրենց մշակութային, բարեգործական, մարզական և այլ նման կառույցներ: Նույնը կարելի է ասել եկեղեցական կառույցների վերաբերյալ, որոնք, բացի կրոնական խնդիրներից, տանում են ազգային լեզվի պահպանման բեռը՝ բացելով կրթօջախներ, բարեգործական կենտրոններ՝ ամուսնության/պսակադրության, կնքման և այլ արարողական գործառույթներով և այլն: Այս տեսակետից փորձագետների տեղեկությունները ճշգրտում և լրացնում են մեր գիտելիքները ֆրանսահայ գաղութի կենսագործունեության մասին ոչ միայն փաստագրելով եղածը, այլև ցույց տալով այդ գործունեության շարժընթացը՝ իր արտահայտություններով և միտումներով: Այսպես, օրինակ, հատուկ ուշադրություն է դարձվում կազմակերպությունների այն գործողությունների վրա, որոնք նպաստում են ինչպես տվյալ գաղութի, այնպես էլ համազգային նպատակների հասանելիությանը: Նման տեղեկատվությունը թույլ է տալիս ավելի լիարժեք դարձնել մեր պատկերացումները՝ արդի Սփյուռքի դիտարկման և հետազոտման խնդիրների լուծման համար:

Ամերիկահայ փորձագետները իրենց քննարկումները գաղութի կացության մասին միշտ սկսում են տնտեսական և սոցիալական խնդիրներից: Առաջին հարցը, որ ամենաշոշափելին է և ակնհայտ փորձագետների համար, եկվորների՝ տեղի պայմաններին սոցիալապես հարմարվելու գործընթացներն են: Ըստ ամերիկահայ փորձագետների՝ եկվորները շատ բաների են հասնում, և դա հայության հարստությունն

է և պետք է ճիշտ օգտագործել հայության նպատակների իրագործման համար: Այս միտքը արժե լրացնել և ավելի իմաստավորել տեղի հայերի տնտեսական իրավիճակի մասին փորձագետների գնահատականներով: Սա կարևոր է նրանով, որ այս ամենամեծ և, ըստ ազգի տարբեր շրջանակներում ամրագրված կարծիքների, ամենահարուստ գաղութի պատկերը իրականում այլ է: Ուշագրավ է նաև տեղեկությունը ձեռներեցների միջև գործընկերության ազգային գործոնի մասին: Տնտեսական գործունեության ներկա իրավիճակը, փոփոխությունների միտումները բնորոշող հատկանիշները բավականին բազմազան են, սակայն նաև թափանցիկ՝ վերլուծության համար: Դա առաջին հերթին վերաբերում է մեզապոլիսի ներկա սոցիալական դաշտում հայերի բաշխվածությանը, այնուհետև կրթության ոլորտների փոփոխման միտումներին և, ի վերջո, գործունեության ոլորտին: Այս ուղեցույցով կարելի դատել հայերի և ներկա իրավիճակի, և ինքնության պահպանման, և տնտեսական առաջադիմության հեռանկարի մասին: Սա թերևս ամենավճռորոշ հատկանիշներից մեկն է, որը ցույց է տալիս հայերի էթնիկ կարգավիճակի և որպես առանձնակի մարդկային միավորի գոյության ու առաջադիմության հնարավորությունների հորիզոնները: Տնտեսական գործունեության սոցիալական հատկանիշի կարևորությունն ընկալելի է բոլոր փորձագետների համար, որոնք բազմաբովանդակ տեղեկություններ են հաղորդում Լոս Անջելեսում բնակվող հայերի կենսագործունեության մասին և խորիմաստ վերլուծություն անում:

Յուրաքանչյուր հոսքի պատճառները փորձագետների մի մասը բացատրում է հանգամանքների ընդհանուր և առանձնակի դատողություններով: Այսպես, մի փորձագետն առանձնացնում է Հարավային Ամերիկայից Լոս Անջելես եկած հայերի տեղափոխման պատճառները: Ամերիկահայ փորձագետները լավ տեղեկացված են տարբեր երկրներում բնակվող հայ հարուստների մասին: Ուշագրավ են փորձագետների հետևյալ դիտարկումները տարբեր երկրներից եկած հայերի տնտեսական գործունեության ոճի և ուղղվածության առանձնահատկությունների մասին: Հատուկ դիտարկվում են նաև ձեռներեցների միջև գործընկերության ազգային գործոնի փաստը, ազգային նկարագրի պահպանության հարցեր՝ տեսակետներ: Առաջին ամենակարևոր խնդիրը կապված է ազգային նշանակալի կառույցների հետ՝ եկեղեցի, դպրոց, մշակութային կենտրոն, կուսակցություններ և այլն: Այս առումով փորձագետները միակարծիք են այդ խնդիրների լուծման հաջոր-

դականության առումով՝ ըստ դրանց գերակայության: Առաջինը ազգային կառույցներն են, որոնք և պետք է հոգան ազգապահպան մնացած խնդիրների լուծումը:

Առանձին ուշադրության են արժանի փորձագետների կենսագրություններից բերված դրվագները, որոնցում արտացոլվում են օտարազգի միջավայրում ազգային կառույցների կայացման գործընթացները, և որ կարևոր է՝ դրանց աջակցող մարդկանց որակական հատկանիշները: Վերջինը վերաբերում է նման կառույցների ներքո օտար երկրում մեծացած հայերին, որոնք նոր երկիր տեղափոխվելուց հետո ձգտում են նման կառույցներ կազմակերպել նոր միջավայրում: Ըստ փորձագետների՝ համայնքի ինքնակազմակերպման ուղղությամբ կան անհատական և կազմակերպական մակարդակներ: Դրանց գործունեության գնահատականները տարբեր են, քանի որ դրանցով զբաղվում է գաղութի կազմակերպությունների մեծամասնությունը:

Երկրորդ տեսանկյունը մշակութայինն է: Այն առաջարկվում է հետևել էթնիկության վերարտադրության գործընթացների դիտարկումով: Խնդրի դրվածքը պայմանավորված է նրանով, թե ինչպես է էթնիկ խումբը ուրբանիստական միջավայրում, հոծ կամ ցրիվ բնակությամբ պայմաններում պահպանում իր ելակետային և դրանից բխող ածանցյալ բաղադրիչները և ձևավորում սեփական յուրահատուկ մշակութային արժեքները: Խիստ կարևոր է, թե մշակութային որ ոլորտներում են այդ արժեքները արտադրվում, որքանով են դրանցում առկա առաջնային և երկրորդային հատկանիշները, ինչ փոխադարձ հարաբերակցության և համախմբման մեջ են: Դրանք այն հարցերն են, որոնց պատասխանները նպատակ են հետապնդում բացահայտելու մշակութային և էթնոսոցիալական նշանակության դրոշմների (մարկյորների) ձևավորման և զարգացման մեխանիզմների փնտրտուքի ուղղությունները: Կարևոր է իրականին մոտ և նշանակալի մշակութային չափորոշիչների առանձնացման անհրաժեշտությունը, որոնք մի կողմից արտացոլում են մշակութային կյանքի հիմնարար բաղադրիչները, մյուս կողմից՝ հնարավորություն տալիս որոշելու դրանց ազգային դրոշմը:

Առաջին դեպքում անհրաժեշտ է բացահայտել առանցքային և երկրորդական նշանակություն ունեցող մշակութային երևույթները, որոնք պայմանավորում են հոծ կամ ցրիվ էթնիկ միջավայրում (սակայն այլազգ շրջապատում) ձևավորված արժեքների կառուցվածքը: Ուստի պետք է բացահայտել, թե հատկապես որ մշակութային արժեքներն են

վերակենդանանում (մենք օգտագործում ենք այս հասկացությունը, ելնելով նրանից, որ տվյալ խումբը բաղկացած է միգրանտներից և նրանց հաջորդող սերունդներից) և վերարտադրվում, որոնք են գլխավորները և երկրորդականները: Նման հարցադրումը բխում է այն ենթադրությունից, որ յուրաքանչյուր էթնիկ խումբ այս կամ այն փուլում ձգտում է կառուցել սեփական մշակութային կյանքն ամբողջական ձևով: Իսկ թե որքանով է դա նրան հաջողվում, պայմանավորված է բազմաթիվ գործոններով, ինչպես օրինակ՝ քաղաքական կառուցվածքով (անկախ պետականության, մշակութային ինքնավարության և այլնի առկայության կամ բացակայության պայմաններում), տվյալ հանրության քանակական տվյալներով, հոծ կամ ցրիվ տարաբնակեցմամբ, էթնոդավանանքային շրջապատով, ազգային իրավունքներով, ազատությամբ և բազում այլ գործոններով: Ընտրված երկրների (քաղաքների) օրինակները հատկանշական են գործընթացների ընդհանուր և առանձնահատուկ բնույթը հասկանալու առումով:

Երկրորդ դեպքում մշակութային երևույթների ազգային դրոշմը բացահայտելու համար կարևորվում է համախմբման գործընթացների ուսումնասիրման այնպիսի տեսանկյունը, որով որոշվում են որոշակի էթնիկ խմբի ենթամշակութային հատկանիշների ձևավորման բնույթը և ընթացակարգը: Դա կարևորվում է, քանի որ սոցիալական շարժընթացում և միջէթնիկ փոխազդեցության ընթացքում տեղի է ունենում սեփական ելակետային էթնիկական և սոցիալական դրոշմների տեղաշարժ դեպի սոցիալական և էթնիկական եզրայնացում: Օրինակ՝ Բաքվի հայերը (որը զգալի մեծաքանակ խումբ էր և բաղկացած էր 200–210 հազար մարդուց²) մինչև 1988–1991թթ. շարդերը³ սեփական էթնիկ հատկանիշները մեծ մասամբ գիտակցում էին ենթասոցիալական հատկանիշներում՝ առանձնացնելով աղբրեջանցիներին՝ որպես իրենց չնմանվող քաղաքային սոցիալական խավ⁴:

Ընտրված գաղթօջախների էթնոմշակութային կյանքի իրականության ընկալման համար խիստ կարևոր է որոշել, թե ազգի տվյալ հատվածում որքանով և ինչպես են ներկայանում համահայկական մշակույթի տարրերը, և որքանով են այդ տարրերը ներկայացված նրանց մշա-

2 Տե՛ս Հայերը Բաքվում, <https://hy.wikipedia.org/wiki>

3 Տե՛ս <https://hy.wikipedia.org/wiki>

4 Карапетян А.Р. Автопортрет армян: этничность в самооценках. Издательство “Титутюн” НАН РА, Ереван, 2011, с. 145

կութային հատկանիշներում: Դրա հիման վրա ենթադրվում է գտնել հայկական համայնքների դասակարգման և տիպաբանման սկզբունքներ՝ ըստ ընդհանուր և յուրահատուկ մշակութային հատկանիշների:

Այսպիսով, գաղթօջախների մշակութային կյանքի ուսումնասիրության համար առաջադրված խնդիրները նպատակ են հետապնդում ոչ միայն նկարագրել հայ հանրության վիճակը, ոչ միայն ցույց տալ տարբեր տիպի գաղթօջախներում և տարբեր միջավայրերում տեղի ունեցող գործընթացների շարժընթացը, հետևաբար նաև դրանց հեռանկարները, այլև ստանալ լրացուցիչ փորձաքարական հիմնավորում արագ փոփոխվող աշխարհի էթնիկ դրսևորումների տիպաբանության բնույթի մասին⁵:

Գաղթօջախների կյանքին լավագույնս տեղեկացված ներկայացուցիչները միակարծիք են մայրենի լեզվի առաջնահերթությունը դիտարկել որպես ազգի այդ հատվածների առանձնահատուկ մշակութային նկարագիրը պահպանելու, և որ ամենակարևորն է՝ վերարտադրելու միջոց: Այս առումով յուրաքանչյուր հայկական համայնք մեծ ուժ և եռանդ է գործադրում երիտասարդ սերնդին հաղորդակցելու մայրենի լեզվի հետ: Պատահական չէ, որ հայ ազգի ինտենսիվ տեղաշարժերի ներկա պայմաններում համազգային խնդիրներ են ծագում արևելահայերենի և արևմտահայերենի՝ Սփյուռքում դասավանդման խնդրի շուրջ: Հայկական դպրոցների և հայերենին հաղորդակցվելու պահանջը հիմնական, սակայն մշակութային խնդիրների լուծման միակ ոլորտը չէ: Եկեղեցին, մշակութային կենտրոնները, տեղեկատվական աղբյուրները և դրանց հիման վրա ստեղծվող հոգևոր ազգային բնույթի կենսակերպը հետագուոված բոլոր գաղթօջախներում ունեն ընդհանուր տրամաբանական դրսևորումներ: Նշենք նաև, որ այդ ոլորտների զարգացվածության աստիճանը բավականին տարբեր է և առնչվում է բազմաթիվ հանգամանքների հետ: Այդ իսկ պատճառով ուսումնասիրված չորս գաղթօջախների օրինակով դիտարկենք ընդհանուր և առանձնահատուկ դրսևորումները, որոնց մասին մեզ տեղեկացրեցին այդ գաղութների փորձագետները:

5 Տե՛ս Հայերը սեփական և այլազգի միջավայրում. համեմատական էթնոսոցիոլոգիական հետազոտություններ (Մոսկվայի, Թեհրանի, Լոս Անջելեսի հայ համայնքների հետազոտության նյութերի), պատ. խմբ. Կարապետյան Ռ.Ս., «Գիտություն» հրատ., Երևան, 2014:

Այսպես, պարսկահայ գաղթօջախի նկարագրությունը համալրվում է կրթության գործի կազմակերպման և մշակութային կյանքի մասին տեղեկությունների տրամադրմամբ: Ըստ իրենց՝ գաղթօջախի գոյության գերակա խնդիրն է մայրենի լեզվի դասավանդման և գործառույթի շրջանակների պահպանման ու համայնքի առանձնահատուկ ազգային-մշակութային կյանքի կազմակերպումը: Այս առումով իրանահայ փորձագետները մանրամասնորեն նկարագրում և վերլուծում են գաղութի կենսագործունեության ազգային-կրթական, մշակութային խնդիրները: Այսպես՝ նրանք տեղեկացնում են Իրանի հայկական դպրոցներում տիրող իրավիճակի մասին, որոնք երեք տեսակի են: Առաջինը աշակերտների թվի մասին տեղեկությունն է: Այն վկայում է երեխաների թվի նվազման մասին, որը բացատրվում է Իրանում ապրող հայերի քանակի ու բնական աճի իջեցմամբ: Երկրորդը վերաբերում է դպրոցների կառավարմանը, որը, ըստ որոշ փորձագետների, բավարար մակարդակի վրա չէ, քանի որ աշխատողների հավաքագրումը ոչ միշտ է մասնագիտական հիմքի վրա դրված: Երրորդը հայերենի գործառույթյան շրջանակների կտրուկ նեղացումն է, որը նույնպես կապված է գաղութի անդամների թվի նվազման հետ:

Ինչ վերաբերում է մշակութային կյանքի այլ ոլորտներին, ապա դրանք իրանահայերի իրականության մեջ ունեն երկարամյա պատմություն, և առկա են դրանց հետ կապված ավանդույթներ: Հայ Սփյուռքի ներկա և ապագա գոյակցության համար սա կարևոր օրինակ է, քանի որ Իրանի հայկական գաղթօջախն ունի չորսդարյա պատմություն, և դրա նման ձևով պահպանումը խոսում է այն մասին, որ ազգի այդ հատվածը կարողացել է մշակել ազգապահպան լավագույն մեխանիզմներ, որոնք կարող են օրինակ ծառայել Սփյուռքի այլ հատվածների համար: Գաղութի կարևորագույն ավանդույթներից է մշակութային տարածքի կազմակերպումը, որտեղ հատուկ նշանակություն ունի տեղեկատվական դաշտի զարգացումը: Այն մեծապես կապված է ազգային ԶԼՄ-ների կազմակերպման և տարածման գործընթացների հետ: Այս դեպքում, ինչպես նաև այլ ազգային բնույթի կենսակերպ ապահովելու համար էթնիկ խումբը հաշվի է առնում բնակության երկրի օրենսդրությունը ազգային փոքրամասնությունների վերաբերյալ: Այսպես, ի տարբերություն ամերիկահայ գաղութի, որտեղ հայկական ԶԼՄ-ները լիարժեքորեն ներկայացված են բոլոր ձևերով (թերթ, ամ-

սագիր, հեռուստացույց, ռադիո), Իրանում հիմնական տեղեկատվական միջոցը տպագիր մամուլն է:

Մյուս գաղթօջախի՝ Լիբանանի հայության հոգևոր կյանքի դրսևորումները փորձագետները դիտարկում են բավականաչափ բովանդակալից, քանի որ հայերենի կրթության վիճակի և մշակութային կյանքի բնույթն ու ընթացքը տրվում են որոշ դրվագների օրինակներով: Ըստ իրենց՝ Լիբանանի հայ գաղթօջախի հոգևոր կյանքը հիմնականում աշխույժ է: Ինչպես կարծում են մեր հարցվողները, լիբանանահայ համայնքում տարածված կարծիք է, որ գաղթօջախը նման է փոքր Հայաստանի և ունի իր հարմարությունները ազգային-մշակութային կյանքը լիարժեք դարձնելու և դպրոցի միջոցով ապահովելու ազգայինի ժառանգորդությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ազգային ինքնության առաջին գրավականը լեզուն է, լիբանանահայերը ջանք և միջոցներ չեն խնայում հայկական կրթական օջախներ կառուցելու և պահպանելու համար: Այդ գործընթացն անընդհատ և շարունակական է: Դպրոցների շենքերը և կահավորանքը նորոգվում և բարելավվում են, իսկ կրթական համակարգը լավ կառավարվում է: Էական է նաև, որ դպրոցների և հայոց լեզվի, գրականության, պատմության կողքին աշակերտները տիրապետում են ևս չորս լեզվի՝ դրանով իսկ դառնալով ավելի մրցակցային միջազգային «ուղեղների շուկայում»: Այս լավատեսական խճանկարը «խամրում է» աշակերտների թվի կտրուկ նվազման պատճառով: Մշակութային կյանքը բազմազան և բովանդակալից է, քանի որ իրականում գոյություն ունի երեք կարևոր հանգամանք: Առաջին՝ ազգի այդ հատվածը ամեն դեպքում հոծ բնակեցված է, և քանակը բավարար է լեզվի և մշակույթի սպառման, հետևաբար գործառույթների իրականացման համար: Երկրորդ՝ գաղթօջախն այնքան հզոր է, որ ունակ է սեփական ներքին ռեսուրսներով հագեցնելու սեփական մշակութային պահանջները: Բնականաբար, պահանջարկի առկայությունը ծնում է առաջարկ: Վերջինս գալիս է նաև այլ նոր աղբյուրից՝ հայրենիքից: Սա երրորդ հանգամանքն է: Ունենալով նման մշակութային ներուժ՝ ինչպես իր մշակույթի տարրերի «արտադրման» և առաջարկման կենտրոններով, այնպես էլ տեղում (և այլ գաղութներում) սպառման հնարավորություններով, Լիբանանի հայ գաղթօջախը դառնում է ողջ հայ ազգի հիմնական կենտրոններից մեկը: Սրանով այս գաղթօջախը այլ համայնքների և էթնիկ հայրենիքի մշակութային

և կրթական ենթակառուցվածքի հետ փոխյրացման և փոխազդեցության ցանցի մեջ է՝ բոլոր հնարավորություններով և նման գործընթացներով, որոնք կային մինչև Հայաստանի անկախությունը և ավելի զարգացան դրանից հետո: Ասվածը լրացվում է գաղթօջախում գործող դասական կուսակցություններով, եկեղեցով և բազմաթիվ այլ ազգային կենտրոններով, որոնց շուրջ համայնքը համախմբված է նաև մամուլի միջոցով՝ ներկայացված թերթերով և ամսագրերով, նույնիսկ գիտական հանդեսներով: Սրա հետ մեկտեղ գործում են հեռուստատեսության և ռադիոյի եթերաժամեր: Բավարար տեղեկություն է հաղորդվում ԶԼՄ-ների կողմից տրվող նյութերի բովանդակության մասին, որն այնքան լիարժեք է, որ հնարավոր է հատուկ վերլուծություն կատարել: Որոշ ճշգրիտ գնահատականներ են տրվում ԶԼՄ-ների նյութերի և նրանց սպառողների հարաբերությունների մասին. ակներև են առաջինի ազդեցությունը վերջինիս վրա և դրա փոփոխման միտումները: Այսպիսով, խորացված հարցազրույցի միջոցով ստացվեց արժեքավոր նոր նյութ, որը սպասում է հետագա վերլուծության:

Ֆրանսահայերի տեսակետից ազգապահպանության հարցը կապված է գաղութի ընտրանու վերաբերմունքի հետ: Ինչպես բոլոր հայկական գաղթօջախներում, Փարիզի հայ փորձագետների մեծ մասը ազգապահպան գլխավոր խնդիրը տեսնում է ազգային լեզվի դասավանդման և դրա միջոցով նրա գործակցության ապահովման մեջ: Այս առումով հարկ է նշել, որ Ֆրանսիայում բնակվող հայերի շրջանում (ինչպես նաև այլ այն գաղթօջախներում, որտեղ արևելահայ և արևմտահայ միգրացիոն հոսքեր են խառնվել) լուրջ խնդիր կա արևմտահայերենի և արևելահայերենի գործածության հարցում: Սա խառնաշփոթ է մտցնում գաղութում գործող հայերի դասավանդման խնդրում: Ազգի այս երկու հատվածների ներկայացուցիչների ներկայությունը առանձնակի երանգ է հաղորդում գաղթօջախի մշակութային կյանքին, եթե հաշվի առնենք Փարիզի հզոր կլանող մշակութային ենթակառուցվածքը և երևույթները:

Այս ամբողջի համատեքստում (քաղաքական, մշակութային, սոցիալական, տնտեսական, ժողովրդագրական առանձնակի պայմաններում և գործընթացներում) ֆրանսահայ գաղութում ձևավորվում է վերաբերմունք հայրենիքի նկատմամբ, իսկ դրա ներքո զարգանում են հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունները: Հայրենիք-Սփյուռք, մաս-

նավորապես ֆրանսահայերի համայնք-Հայաստան փոխհարաբերություններն ընդգրկում են կենսագործունեության բազմաթիվ ոլորտներ, որոնք ունեն թե՛ պետական, թե՛ իրավական, թե՛ տնտեսական և թե՛ հոգևոր բնութագրեր: Առաջինը վերաբերում է ազգային պետության ներկայությանը գաղութում:

Ամերիկահայ փորձագետների մեծ մասը օտարազգի միջավայրում ազգապահպանումը դիտարկում է հետևյալ հիմնախնդիրների լուծումներով. առաջնակարգն ազգային լեզվի պահպանումն է և դրանով հարողորակցումը գաղութի մեջ, մյուսը ազգային նշանակալի կառույցների կազմակերպումն է, երրորդը՝ համայնքային մշակույթի զարգացումը, իսկ չորրորդը հայրենիքի հետ կապի ամրապնդումն է: Չնայած այդպիսի զարգացած կրթական ենթակառուցվածքի, ըստ փորձագետների մեծամասնության՝ հիմնականում անհնար է դիմակայել ազգի այս հատվածի ուժացմանը: Այս խնդիրը թերևս ամենակարևորն է հայապահպան գործերում: Հատկանշական դիտարկումներ են արել հետազոտողները Լուս Անջելես այցելելու ժամանակ: Այն հարցմանը, թե ինչքան արժե նման դպրոցի վճարը, պատասխանը եղավ, որ շատ թանկ է և, չնայած անվճար որոշակի տեղերի առկայության, այնուամենայնիվ, անհասանելի չէ գաղութի անդամների մեծամասնությանը: Սակայն, ըստ հայկական դպրոցների տնօրենության վկայության, շրջանավարտների մեծ մասը կարողանում է ընդունվել ԱՄՆ-ի առաջատար բուհեր: Սա վկայում է այդ դպրոցների ուսման բարձր մակարդակի մասին: Իմ դիտարկումները հաստատում են մեր փորձագետները:

Լուս Անջելեսի պայմաններում, երբ միգրացիոն հոսքերը կազմված են ազգի երկու՝ լեզվական առումով արևելահայ և արևմտահայ մասերից, հայերենի դասավանդման խնդիրը բավականին լուրջ հիմքերի վրա է հայկական դպրոցներում: Ի տարբերություն Լիբանանի, որտեղ գերիշխում է արևմտահայերենը, և դասավանդման ոչ մի խնդիր չի ծագում, կամ Իրանում արևելահայերենի առկայությունը ոչ մի խոչընդոտ չի առաջացնում լեզվի դասավանդման համար, ԱՄՆ-ում մայրենիի երկու ճյուղերի բախումը ազգապահպան խնդիրն ավելի է սրում: Այս առումով կարևոր է հասկանալ, թե ԱՄՆ-ի պայմաններում որ ուղղությամբ կգնա երկու լեզուների զործածումը՝ արդյո՞ք կկատարվի նրանց մերձեցումը դասավանդման մակարդակով, թե՛ կստեղծվեն այլ իրավիճակներ էթնոբաժանման ուղով: Այստեղ շատ ուշագրավ է դիտարկել կուտակած փորձը, որը հաղորդում է դասավանդման մեջ

ընդգրկված մեր փորձագետը: Հետևելով փորձագետի մտքին՝ կարելի է հասկանալ, որ մերձեցման ուղին ամենաոպորին և բեղմնավոր ճանապարհն է: Հայերենի պահպանման և օգտագործման խթանման հաջորդ գործունք, ըստ փորձագետների, կարող են հանդիսանալ ներկա առաջադեմ տեխնոլոգիաները, օրինակ՝ համացանցի միջոցների օգտագործումը: Այստեղ կարևոր է առաջին հերթին լեզվին ծանոթանալ և դրա ներքո մեծանալ վաղ հասակից, այն ստանալ ընտանիքում և հետագայում՝ դպրոցում:

Ամերիկահայ փորձագետները լեզվի տիրապետման առնչությամբ հրեաների օրինակով իրենց դիտարկումների հետ մեկտեղ խորիմաստ հետևություններ են անում: Ըստ իրենց՝ գաղութի մշակութային կյանքը բավականին բազմազան և հարուստ է ներքին և արտաքին ռեսուրսների հաշվին: Այն, կարծիքների համաձայն, բացատրվում է ամերիկահայերի տնտեսական կարողությունների ներուժի առկայությամբ: Փաստորեն, գաղութի մշակութային ներուժը հարստացավ թե՛ որակով, թե՛ բազմազանությամբ և, ինչն էլ, առաջարկների քանակով՝ տարբեր երկրներից եկած, մշակույթի տարբեր բնագավառներում բարձրորակ կրթություն ստացած ու պատրաստված մասնագետների շնորհիվ: Այս առումով հատկանշական է, որ հայկական հոծ բնակեցված շրջաններից արվեստագետներ եկան, ընդ որում մեծ թիվ էին կազմում հայաստանցիները: Այսպիսով, Հայաստանը և հայկական դասական գաղութները, գրկվելով իրենց մշակութային վերնախավից (հետևաբար աղքատացան այդ ներուժի առումով), սնուցեցին այս նոր կազմավորվող գաղութը: Պետք է նշել նաև այն հանգամանքը, որ այս գաղութի մշակութային կյանքը բազմաշերտ է ոչ միայն նրանով, որ ավանդական բոլոր գաղութների նման այն ունի իր կառուցվածքը (դպրոց, կուսակցական, բարեգործական, եկեղեցական ու մշակութային կենտրոններ, որոնք ի վիճակի են «սպասարկել» ազգի այդ զանգվածի կարիքները), այլև եղածը համալրվում է ներքին (եկաճների) և արտաքին (Հայաստանից և մայր գաղութներից հյուրախաղով) ներուժով: Բացի դրանից, համացանցը, տեղի և Հայաստանի ԶԼՄ-ները զգալի դերակատարում են ստանձնում գաղութի կյանքում: Այժմ կարելի է ասել, որ այս գաղութի առկայությունը տնտեսական լուրջ միջավայր է ստեղծում ամբողջ էթնոսի մշակույթի զարգացման համար: Ուղղակի պետք է հասկանալ, թե այսպիսի զարգացումների շնորհիվ հայկական մշակույթը ինչ որակական փոփոխությունների կենթարկվի՝ արդյո՞ք այն

կգնա պարզունակ, սոցիալական ստորին խավերի ճաշակին համընթաց, թե՛ կունենա ավելի բազմազան, բազմաբովանդակ և բազմերանգ բնույթ: Այս ամենը, իհարկե, կախված է Հայաստանում և Սփյուռքում ընթացող սոցիալական գործընթացներից, որոնց ուղղվածությունը նշմարվում է այսօրվա երեք սերունդների համեմատական պատկերի հիման վրա:

Երրորդ տեսանկյունը հայրենիք-Սփյուռք հարաբերությունների իրավիճակի գնահատականն է: Այն բխում է այն հանգամանքից, որ Սփյուռքի պահպանման գլխավոր հենքը ազգային պետությունն է: Նրա գոյությունը և զարգացող գործընթացները արձագանքվում են Սփյուռքում ինչպես անհատական, խմբային, այնպես էլ համայնքի ընտրախավի մակարդակներով: Այդ մակարդակներին համապատասխան՝ փորձագետները արտահայտում են համայնքում ձևավորվող պատկերացումները Հայաստանի Հանրապետության մասին, որն իրականում որոշ մասի համար իրական, մյուսների համար երազած հայրենիքն է: Այս նկատառումը, որի վրա ուշադրություն ենք դարձնում, կարևորվում է երկրի կերպարի վերաբերյալ պատկերացումների տարբերակումներն ընկալելու և դրանք տիպաբանելու ուղղությամբ: Որպես հետևանք՝ տարակարծություններ են արտահայտվում հայրենիքում տիրող իրավիճակի մասին, դիրքորոշումներ են բացահայտվում երկրի ինչպես ներկա, այնպես էլ ապագա զարգացումների մասին: Բացի «դրական-բացասական» երկանդամ հակադրության, տարակարծությունների բազմության մեջ ուրվագծվում է մեկ կարևոր գաղափար, որ հայրենիքը մեկն է, նրան պետք օգնել, տնտեսապես կայացնել և ի վերջո խարսխվել նրա գոյության և հզորացման աջակցման վրա:

Դիտարկենք նշված տարբերակումները՝ ըստ առանձին գաղթօջախների ներկայացուցիչների նկարագրությունների և գնահատականների: Այսպես, Թեհրանում անցկացված հարցազրույցներում հայրենիք-համայնք հարաբերությունների վերաբերյալ դիսկուրսը բնութագրվում է գաղութի կյանքում ՀՀ պետական մարմինների հնարավոր ներկայացուցչությամբ, ՀՀ-ի (նրա քաղաքական վերնախավի) նկատմամբ համայնքում ձևավորված վերաբերմունքով, ՀՀ-ի քաղաքական և տնտեսական կյանքի վերաբերյալ պատկերացումներով և դիրքորոշումներով: Առաջինը վերաբերում է ազգային պետության ներկայությանը գաղութում: Հայկական պետության ներկայությունը գաղութի

կյանքում մեր փորձագետները դիտարկում են ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության համատեքստում: Սա, բնականաբար, ազդում է Հայաստանի ներկա խնդիրների քննարկման վրա, որի ընթացքում համայնքի ներկայացուցիչները նշում են էթնիկ հայրենիքում կատարվող գործընթացների բացասական բնույթը՝ կոռուպցիա, դեկավար խավի արհեստավարժության ցածր մակարդակ, Սփյուռքի հետ հարաբերությունների մեջ քաղաքականության ոչ մշակված հայեցակարգ, մեկնաբանվում է անհրաժեշտ գործողությունների պլանը և այլն: Տրված մեկնությունը լրացվում է իրականության փաստագրումով և առաջարկներով, թե ինչ աջակցություն կարող է ունենալ Սփյուռքը Հայաստանի հասարակական կյանքում: Մրա հիմքում հայրենասիրության ավելի բարձր զգացումն է, որն ավելի բնորոշ է Սփյուռքի հայերին՝ այսպես կոչված արդիականացված ինքնության պարագան: Հիմնականում այն միտքն է արձարծվում, որ անհրաժեշտ է մասնակցել հայրենիքի բարգավաճմանը ու դրանով իսկ նրան աջակցել՝ Սփյուռքի հայերի համար հրապուրիչ դարձնելու, պայմաններ ստեղծել հայրենադարձության համար: Սա անհրաժեշտ պայման է, եթե հաշվի առնվի, որ ուրիշ երկրում հայերը կամա թե ակամա ազգային ճնշման տակ են, և երաշխիք չկա նրանց կյանքի ապահովության համար: Քեսաբի օրինակը այս համատեքստում մտավախության տեղիք տալիս է: Եվ պատահական չէ, որ «մասնակցություն Հայաստանի տնտեսական կյանքում» թեզը կարմիր թելով անցնում է մեր ուսումնասիրած համայնքների փորձագետների բոլոր պատասխաններում: Պետք է աջակցել հայրենիքի տնտեսական զարգացմանը, քանզի նրա բարգավաճումը հույս կարող է տալ, որ մենք կկարողանանք հավաքվել: Հաղորդվում է նաև, որ անհրաժեշտություն կա հասցեագրված տնտեսական աջակցության, նշվում են ինչպես Հայաստանի տնտեսության որոշակի բնագավառներ, որոնց մեջ այս գաղութն ունակ է օգնություն ցուցաբերելու, այնպես էլ որոշակի մարդկանց՝ բարեկամների, հայրենակիցների:

Իսկ լիբանանահայ փորձագետները հատուկ ուշադրություն են դարձնում համայնքում բարեգործական գործունեությանը: Նրանք, այդ կառույցները թվարկելուց բացի, նաև հանգամանալից նկարագրում են դրանց գործունեության ոճը և կազմակերպական ընթացքը որոշակի օրինակներով: Այս քննարկումներից հետո նոր անդրադարձ է արվում Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունների այլ, ավելի ընդգրկուն խնդիրներին, որոնք ներառում են փորձագետների կարծի-

քը հայրենիքի մասին, երևակայական և իրական հայրենիքի սեփական պատկերացումները, վերաբերմունքը վերջինիս նկատմամբ և հայրենիք-Սփյուռք առնչությունները թե՛ մշակութային, թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական առումներով:

Յուրաքանչյուր գաղթօջախի բնութագրման կարևոր և բաղկացուցիչ մասն է նրա առնչությունների վիճակը հայրենիքի, Հայաստանի հետ: Այս առումով նշանակալից են հայրենիքի նկատմամբ լիբանանահայերի արտահայտած վերաբերմունքի հիմնական պոլիմերները: Տալով իրենց տեսակետները հայրենիքի մասին՝ փորձագետներն առաջին հերթին անդրադառնում են նրա աշխարհաքաղաքական իրավիճակին և անվտանգության խնդրին: Այրելով այսօրվա պայթյունավտանգ տարածաշրջանում՝ նրանք ավելի սուր են ընկալում այդ վտանգները, մանավանդ եթե երանելի հայրենիքը վտանգված է ներսից կառավարման խտտանի, դեկավարող ընտրախավի ցածր արհեստավարժության, կոռուպցիայի պատճառով: Հեռվից լավ է երևում, իսկ ներսից վտանգը չի զգացվում՝ սա գլխավոր այն միտքն է, որի շուրջ արտահայտվում է բավականին կրիտիկական վերաբերմունք երկրի նկատմամբ:

Այս համատեքստում փորձագետների մեծ մասը բովանդակալից քննարկում է ծավալում դատողությունների հետևյալ ուղղվածություններով: Առաջին հերթին առանձնացվում է Սփյուռք-հայրենիք կապերի պետական բաղադրիչը, որն ամենից կարևոր մասն է ազգի երկու հատվածների հարաբերությունների միջև: Պետական հովանավորությունը այդ հարաբերություններին լրիվ այլ լիցք է հաղորդում և որակապես նոր մակարդակի վրա դնում հայրենիք-Սփյուռք կապերը: Փորձագետները մանրամասնորեն քննարկում են ՀՀ սփյուռքի նախարարության գործունեությունը: Այդ դրվագների մեջ ակնհայտ են նախարարության գործունեության ոճը և մոտեցումները: Մյուսը Հայաստան-Սփյուռք տնտեսական կապերն են: Որպես բաղկացուցիչ և հետևանք հայրենիք-Սփյուռք հարաբերությունների՝ տնտեսական կապերը, բացի ազգային ինքնության հենքից, ունեն տնտեսական հիմնավորման խնդիր: Հիմնվելով իրենց ձեռնարկատիրական փորձի վրա՝ լիբանանահայ գործարարները լավ գիտեն իրենց շահը և այն միշտ հաշվի են առնում նոր գործ հիմնելիս: Եվ հայրենիքում գործարարություն կազմակերպելու համար, անկախ ցանկացած հայրենասիրական մղումից, անհրաժեշտ են երաշխիքներ, իսկ նման գործունեության փորձ ունեցած լիբանանահայերի կարծիքում կարծրատիպ է առաջացել, որ ներ-

կա Հայաստանում դա անհնար է: Նման կարծրատիպը իր տարածումն է ստանում և ամրապնդվում ձախողված գործերի ավելացման պատճառով: Սակայն ինչն է հետաքրքիր. ըստ փորձագետների՝ միևնույն է, ամեն ինչ պետք է անել՝ օգնելու հայրենիքի տնտեսության զարգացմանը: Եզրահանգումն այն է, որ Հայաստանի զարգացման միակ ուղին ժողովրդավարությունն է: Սա թույլ կտա Սփյուռքին մասնակցել ՀՀ արտաքին քաղաքականությանը հայրենիքի օգտին և Հայ դատի հարցերին՝ լոբբիստական գործունեությամբ: Տրամաբանական արդյունքը հայրենիք–Սփյուռք հարաբերությունների վերադարձն է հայրենիք: Այս հարցը արծարծվում է մեր ուսումնասիրած բոլոր գաղութներում, սակայն Լիբանանում ունի մեկ այլ առանձնահատուկ հնչեղություն: Այն դիտարկվում է իրական, այլ ոչ թե մտային համատեքստով: Մենք պատրաստ ենք, եթե լինեն պայմաններ: Այս մտայնությունը բնորոշ էր այս գաղութին և՛ անցյալում, և՛ 1946–1949 թթ. հայրենադարձության ժամանակ:

Ըստ ֆրանսահայ փորձագետների՝ Հայաստանի կառավարական օղակները առանձնակի ձևով և բովանդակությամբ պետք է մոտենան օտարազգի պետություններում գործող հայկական համայնքներին, հաշվի առնեն յուրաքանչյուր պետության օրենքները, աշխատեն վսաս չհասցնել գաղութին: Այս միտքը, ինչպես երևում է փորձագետների պատասխաններից, պետք է լինի հայրենիք–Սփյուռք հարաբերությունների ենթատեքստը: Միայն այդ խորապատկերի վրա պետք է կառուցվեն Հայաստանի և հայերին ընդունող երկրի պետական հարաբերությունները: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ փորձագետները հատուկ ուշադրություն են դարձնում ՀՀ սփյուռքի նախարարության գործունեությանը:

Սփյուռք–հայրենիք կապերում փորձագետները առանձնացնում են անձնական բաղադրիչը: Նկատի ունենք Սփյուռքի և Հայաստանի ներկայացուցիչների շփումների ժամանակային (երկարատև և կարճաժամկետ) կտրվածքը և վայրը (Հայաստանում, Ֆրանսիայում): Բովանդակային առումով միջանձնային շփումներն ունեն ավելի լուրջ հետևանք, քան թե պետական կամ սփյուռքյան կազմակերպությունների ղեկավարների միջև շփումները: Լինելով խիստ անձնական տպավորությունների արդյունք՝ այդ շփումների հետևանքները կախված են նախորդ փորձի և ստացված տեղեկատվության բովանդակությունից և արտահայտված դիրքորոշումներից: Այս ամենը, ըստ փորձագետների,

պայմանավորում են ֆրանսահայերի բարեգործական գործունեությունը, մասնակցության խնդիրը Հայաստանի քաղաքական կյանքում, կարծիքները Հայաստանի վարած արտաքին քաղաքականության վերաբերյալ՝ վստահությունը կառավարական ընտրանու նկատմամբ և, վերջապես, հայրենիք վերադառնալու առումով:

Վերջին ուսումնասիրված գաղթօջախը Լուս Անջելեսի հայ ազգի գանգվածն է: Ըստ փորձագետների՝ գաղթօջախում հայրենիքի հետ հարաբերությունների վերաբերյալ առկա է երկու իրարամերժ վերաբերմունք՝ բացասական-դրական: Դրա հիմքում հայրենիքի խնդիրների վերաբերյալ սուր արձագանքն է, որում վերաբերմունք է արտահայտվում թե՛ երկրի իշխանությունների, թե՛ հասարակությունում տիրող բարքերի մասին: Լուս Անջելեսի հայ համայնքում Հայաստանի մասին ընկալումներում և պատկերացումներում գործվանքով առկա է նաև հարազատ Հայաստանի կերպարը՝ անկախ նրանից, թե որ իշխանական խավն է տիրում այնտեղ: Շատ կարևոր է այն հանգամանքը, որ փորձագետները լրջորեն քննարկում են վերոնշյալ բացասական կարծիքների պատճառները, որոնք, ըստ երևույթին, ունեն ինչպես անձնական, հոգեբանական բնույթ, այնպես էլ բացատրվում են որոշ խմբավորումների շահերով: Ըստ հարցվածների՝ ՀՀ-ում կատարվող յուրաքանչյուր իրադարձություն միանգամից արձագանքվում է Սփյուռքում՝ ծնելով շատ հակասական և իրարամերժ կարծիքներ ու մեկնաբանություններ: Երկրորդ մոտեցումը պայմանավորված է Հայաստանում ստեղծված իրավիճակի քննարկման ավելի շրջահայաց բնույթով: Ոչ թե արդարացվում են բացասական երևույթները, այլ քննարկվում են պատճառները, և ելքերի որոնումներ են առաջարկվում: Այստեղ հիմնական միտքը հանգում է այն կարծրատիպին, որ «սա մեր երկիրն է, մեր հանգրվանը, և պետք է ամեն ինչ անել դուրս բերելու նրան այս վիճակից, այլ ոչ թե միայն քննադատել»: Որպես ելք այս իրավիճակից՝ փորձագետները հատուկ նշանակություն են տալիս Սփյուռք-հայրենիք կապերի միջանձնային բաղադրիչին: Ըստ իրենց՝ սա փոխադարձ կապի կարևոր խողովակ է, քանի որ ունի ցանցային բնույթ, որի դերը հեռահաղորդակցության միջոցների բոլոր զարգացման շնորհիվ էապես մեծանում է, իսկ ապագայում էլ հայապահպան գործընթացներում դառնալու է որոշիչ գործոն:

Հայաստան-համայնք փոխհարաբերությունները կարող են բովանդակել ազգի այդ հատվածների կենսագործունեության բազմա-

թիվ խողովակներ և ընդգրկել տարբեր ոլորտներ, որոնք կարող են ունենալ թե՛ պետական, թե՛ իրավական, թե՛ տնտեսական և թե՛ հոգևոր բնույթ: Դրանցից առաջինը՝ հայրենիք–Սփյուռք հարաբերությունների պետական աջակցության խնդիրը, բացի դեսպանական ներկայացուցչությունից, ընթացք ստացավ Հայաստանի կառավարության կազմում հատուկ գերատեսչության կազմակերպման շնորհիվ: Իսկ հոգևոր կապերի խնդիրն ամփոփում է ազգի տարբեր հատվածների մշակութային վերնախավերի հարաբերությունների և ներդրումային հոսքերի հետ: Սա վերաբերում է առաջին հերթին Սփյուռքի տնտեսական ներուժը ՀՀ-ի տնտեսության մեջ ներգրավելու գործընթացներին, դրա հաջողություններին և հընթացս առաջացող խնդիրներին:

Ուշագրավ են ամերիկահայերի երեք խմբի տեսակետներ: Առաջին խումբ՝ Սփյուռքը անհրաժեշտ է մասնակցի Հայաստանի տնտեսության զարգացման աշխատանքներին: Բավականաչափ առաջարկների մեծ փաթեթ է քննարկվում, որոնք, ըստ փորձագետների, հայրենիքի համար ռազմավարական նշանակություն են ներկայացնում: Երկրորդ խումբ՝ նրանք են, որ արդեն փորձել են այսպես ասած «գործ դնել» Հայաստանում, և այդ կապակցությամբ կարևորվում է նրանց ձևակերպած մոտեցումների պարզաբանումը՝ Սփյուռքի՝ հայրենիքի տնտեսական կյանքին մասնակցությամբ: Երրորդ խմբում այն ամերիկահայերն են, որոնք կարծում են, որ արդի Հայաստանում պետք չէ ներդրումներ կատարել: Այլ առաջարկներ էլ են արվում՝ հայրենիքում ծավալել բարեգործական գործունեություն:

Հաջորդ խնդիրը Սփյուռքի մասնակցության հարցն է Հայաստանի քաղաքական կյանքում: Այստեղ փորձագետների կարծիքները տարբեր են. մի մասը համարում է, որ անհրաժեշտ է Սփյուռքի ներկայացուցիչների մասնակցությունը ՀՀ քաղաքական կյանքում (ընտրելու իրավունք, քաղաքացիություն ստանալ և այլն), մյուս մասը գտնում է, որ հայրենիքի կյանքում մասնակցության իրավունքը պետք է զուգակցվի նաև պարտականություններով (ծառայություն բանակում, հարկերի վճարում և այլն): Հարցազրույց անցած որոշ անձինք կարծում են, որ կուսակցությունների առկայությունը հայրենիքում որոշ չափով ապահովում է Սփյուռքի մասնակցությունը հայրենիքի քաղաքական կյանքին: Բայց նշում են, որ անհրաժեշտ է էլ ավելի սերտացնել ներկուսակցական համագործակցությունը՝ դրանով իսկ օժանդակելով երկրի ժողովրդավարությանը: Իսկ այս համատեքստում ՀԿ-ների համագոր-

ծակցությունը նպաստող կլինի: Օրինակ է բերվում ընտանեկան և կանանց նկատմամբ բռնությունների հաղթահարումը: Վերջին խնդիրն առնչվում է հայրենադարձության հետ, որը մեծապես կախված է ՀՀ-ի նկատմամբ վստահությունից:

Ընտրված չորս գաղթօջախները բավական ներկայացուցչական են նախկին ԽՍՀՄ-ի տարածքից դուրս ձևավորված հայ Սփյուռքի ողջ զանգվածի համար, որն ընդգրկում է թե՛ արևելյան, թե՛ արևմտյան երկրներում տեղակայված ազգի մեծ զանգվածները: Յուրաքանչյուր գաղթօջախի 9–10 փորձագետից խորին հարցազրույցի միջոցով ստացվեց կարծիքների, նկարագրությունների, վկայությունների մի հսկայական նյութ: Դրա վրա հնարավոր եղավ արձանագրել ոչ միայն իրականությանը մոտ լուրջ տեղեկատվական ռեսուրս, որի հիման վրա կարելի է բացել հետազոտական լայն ասպարեզ, այլև համեմատականներ անցկացնել և դրա հիման վրա տիպաբանական խնդիրներ լուծել ուսումնասիրման համար չափազանց բարդ այնպիսի օբյեկտի համար, ինչպիսին Սփյուռքն է: Այդ իսկ պատճառով այս գլխում կատարված վերլուծական սյուժեները լրացվում են փորձագետների տեղեկատվությունների փոխլրացված տեքստերով, որոնք սեղմորեն ներկայացվում են հաջորդ գլուխներում: Ստացված նյութի առաջարկումը, որպես վերևում բերված վերլուծականի հավելում, թույլ է տալիս մի կողմից հիմնավորել աշխատանքի հավաստիությունը, մյուս կողմից հետազոտության արդյունքները ներկայացնել բնագրերով: Նման մոտեցումը թույլ է տալիս ինքնին արժեքավոր տեղեկություն պարունակող նյութը գիտական շրջանակների մեջ ներառել, ինչպես նաև արդեն իրականացված՝ Կոստանդնուպոլսի (Ստամբուլի), Թիֆլիսի (Թբիլիսիի) և Կիևի հայ համայնքներում ուսումնասիրություններից և հետագայում այլ երկրներում նախատեսված ուսումնասիրություններից ստացված և սպասվող նյութերի համադրության շնորհիվ կատարել նոր դիտարկումներ, վերլուծություններ և, վերջապես, Սփյուռքի համայնապատկերի որակական ուսումնասիրության խնդիրը լուծել:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԻՐԱՆԻ ՀԱՅԵՐԸ. ԹԵՅՐԱՆ

Ընտրված փորձագետները ներկայացնում են Թեհրանի հայերի կազմի բոլոր խմբավորումները՝ ըստ կուսակցական, սեռատարիքային և սոցիալական շերտերի: Հաշվի են առնվել մասնագիտական հատկանիշները՝ լրագրողներ, ուսուցիչներ, ազգային կենտրոնների պատասխանատուներ և այլ անձինք, որոնք ունեն համայնքում շփվելու լուրջ փորձ և դիտարկվում են գաղութում որպես ազգի այս հատվածի մասին բովանդակալից տեղեկատվություն ունեցող գիտակներ:

Փորձագետներ (բարձրագույն կրթությամբ, 30–60 տարեկան)՝ մանկավարժ, միության փոխտնօրեն, երաժիշտ, փաստաբան, թերթի խմբագիր, խմբագիր, ատենապետ:

Հարցազրույցները վարվել են 2014 թ. Թեհրանում: Հարցազրուցավարներ՝ *Նուշիկ Զարիկյան, Լուսինե Տանաշյան, Սոնա Ներսիսյան:*

Հարցազրույցների կյուբեր

Ընդհանուր պատկեր

«Առնվազն 2500 տարվա պետականություն ունեցող Իրանի ժողովուրդը սովոր է այս տեսակ կյանքի: Իրանի մեջ հնարավոր չէ որևէ հեղափոխություն կամ ընդվզում՝ թե՛ կրոնական, թե՛ քաղաքացիական, որովհետև այդպիսի պատճառ չկա, իհարկե, վերահսկողությունն էլ շատ ուժեղ է: Իրանի օրենքներում փոքրամասնություններն ունեն իրենց առանձնահատուկ օրենքները: Մասնավորապես՝ ամուսնությունը, ապահարգանքը, կտակը և կտակի մեխանիզմը, ժառանգությունը: Հիմա մեր սահմանադրության մեջ հինգ կետ կա կրոնական փոքրամասնություններին վերաբերող, որոնք ժամանակին հանգուցյալ Հրայր Խալաթյանի ջանքերով էին մտել սահմանադրություն և մնացել մինչ օրս, և մենք օգտվում են դրանցից, ու այդ հինգ կետով մի քիչ պաշտպանված ենք զգում մեզ: Յուրաքանչյուր հարց լուծված է, մնում է միայն ժառանգության հարցը: Գիտե՞ք, ըստ իսլամի, հստակ է՝ եթե քրիստոն-

յա ընտանիքում թեկուզ մեկ մուսուլման կա, ընտանիքի ողջ ժառանգությունն իրենն է, սակայն հակառակը չի կարող լինել. լավ է, թե վատ՝ դա է: Մենք ուզում ենք այս հարցը լուծել մեր կրոնի, մեր ավանդույթների համաձայն: Իսկ արյան գնի, այլակրոնների սպանության հարցերը մեծավ մասամբ լուծված են: Ամուսնալուծությունների հարցը ներքին առումով ևս լուծված է, այսինքն՝ ցանկացած ամուսնալուծություն պետք գնա մեր դատական խորհուրդ, այնտեղ հարցը լուծվի, հետո նոր այս որոշումը գնում է պարսկական դատարան, այնտեղ հաստատվում: Առաջ ղնց էր՝ ցանկացած հարց, ոչ միայն ամուսնալուծությունը, գնում էր միանգամից պետական դատարան, ու այնտեղ էր գնում միջամտությունը: Բայց էս հարցը լուծեցինք մոտ երկու տարի առաջ: Այս օրենքները հաստատվեցին քրիստոնյա փոքրամասնությունների համար, քանի որ այստեղ փոքրամասնությունները կրոնական են, ոչ ազգային, բայց իրենք, որ ասում են քրիստոնյա, հասկանում են հայերին, չնայած մնացած քրիստոնյաներն էլ օգտվում են մեր լուծած օրենքներից: Այստեղ կան նաև ասորիներ՝ որպես քրիստոնյա փոքրամասնություն, բայց մենք մի առանձին տեղ ունենք դրանց մեջ: Երևի քանակի պատճառով, բայց ոչ միայն: Օրինակ՝ մենք խորհրդարանում ունենք երկու պատգամավոր, բայց, ըստ թվաքանակի, մեզ կեսն էլ չի հասնում: Իսֆահանսն ունի մեկ պատգամավոր, բայց ողջ Իսֆահանսից տասը պատգամավոր կա խորհրդարանում: Այսպիսով, ամեն փոքրամասնություն ունի իր յուրահատուկ օրենքները: Էդ բաները էս երկրի մեջ հարգվում են: Եթե պետական դատարանում հարց ա առաջանում, որը վերաբերում ա փոքրամասնություններին, հատուկ օրենքի ենթարկված հարցերին, անպայման հարցնում ա առաջնորդարանի կարծիքը, որ ձեր կրոնի մեջ էս հարցի վերաբերյալ ինչ կարծիք կա, նրանք էդ հարցին պատասխանում են, և դատարանը համապատասխան վճիռ ա կայացնում: Մի հատ զուտ մասնագիտական հարց հանձնվել ա մի խորհրդի, առաջնորդարանի, որ նա կազմել ա մի դատական խորհուրդ, մասնագիտական հարցը հանձնվելա էդ խորհրդին, որ էդ մարդիկ չունեն լուրջ մասնագիտություն: Խորհուրդն ընդունում ա ոչ մասնագիտական որոշում, դա գնում ա դատարան, դատարանն ասում ա, որ եթե խորհուրդն է որոշել, ես համաձայն եմ»:

«Իրանահայությունը չի ճանաչվում Իրանում որպես էթնիկական ազգային փոքրամասնություն, ճանաչվում է որպես բացառապես կրոնական փոքրամասնություն: Թեև Սահմանադրության մեջ նշված է, ...

հողվածում գրված է էթնոկրոնական փոքրամասնություն: Իրանում ճանաչում են հայքրիստոնյաներ, ասորիքրիստոնյաներ: Ինքնաբերաբար գոյություն ունի էթնիկ հասկացությունը, բայց ընդհանրապես ձևակերպվում է կրոնական փոքրամասնություն: Մի հետաքրքիր պարադոքս գոյություն ունի: Այնուամենայնիվ, հայ քրիստոնյա ասելով մենակ Հայաստանյայց եկեղեցին չի ընկալվում: Ես, օրինակ, հայ կաթոլիկների շահերը փորձում եմ նույն ձևով պաշտպանել, նույնը և ավետարանական եկեղեցու հետևորդներինը, այսինքն՝ ինձ համար միննույն է՝ որպես հայ քրիստոնյաներ՝ իմ գործունեության ընդհանուր դաշտի սուբյեկտն են համարվում: Եթե ինձ դիմում եմ, անպայման իրենց հարցերն եմ փորձում իրականացնել: Մեզ մոտ 98 տոկոսը հայ առաքելական է, բայց 1–2 տոկոսի չափով՝ կաթոլիկ կամ ավետարանական, բողոքականներ կան: Ասորիներն էլ նույն խնդիրն ունեն: Իրենք էլ երեք դավանանքների են հավատում: Ասորիների մեջ ավելի մեծ է քանակը՝ 40 տոկոս, 30, 30 բաժանումը կարելի է համարել: Նրանցն ավելի խայտարդետ է, մերն ավելի հեշտացված է»:

«Իրանի հեղափոխության սկզբնական տարիներին, երբ քայլարշավի էինք դուրս գալիս, պարսիկ ժողովուրդը հարցնում էր, թե դուք քանի միլիոն եք, որովհետև համախմբված էինք: Համենայնդեպս, էն ժամանակ մեր թիվը կազմում էր 300000 հոգի, որի հիման վրա մեզ հասնում էր երկու պատգամավոր մեջլիսում, դրանից հետո, երբ վարչակարգը փոխվեց, մեզի սկսան կոչել կրոնական փոքրամասնություններ, դրանից առաջ այդպիսի բան մեզ երբեք չի ասվել, մենք բոլորս իրանցիներ էինք: Դա ինքնըստիսքյան սկսավ ժողովրդի վրա բացասական ազդել, ունաք կամաց-կամաց սկսան գնալ, աղջիկների գլխաշոր կապելուց, հագուստներից բռնած, Իրան-Իրաքյան պատերազմը և նման շատ հանգամանքներ պատճառ հանդիսացան, որ ժողովուրդն արդեն սկսավ գնալ»:

«Հայերը իրենց թվով 7–8 անգամ գերակշռում են մնացած կրոնական փոքրամասնություններից: Բայց նրանց մեջ քրեական դեպքերը, հարցերը ավելի շատ են, քան մեր մեջ: Այս քրեական գործերով հետաքրքիր համեմատություն կարելի է անել. մեզ մոտ այն խնդիրները, որ կապված են քրեական դաշտի հետ, ավելի քիչ են, քան ասորիների և հրեաների մոտ: Հայության սիրտն է, այս առումով քարոզչությունը այս համայնքում շատ է: Շուրջ 400 տարի առաջ՝ Շահ Աբասի

Ժամանակ, հայերից բացի, այստեղ են բռնագաղթել նաև վրացիներ: Հիմա, որ գնաք Ջուղայից դեպի հյուսիս-արևմուտք, էդ շրջանում կան հայկական գյուղեր, և ինչ-որ շրջանում էլ կային վրացական գյուղեր: Վրացիները ձուլվել են, մուսուլմանացել, նույնիսկ անուններն են փոխել»:

«Իսլամական երկրներում ձուլման վտանգը շատ ավելի պակաս է, քան մնացած երկրներում: Եկեղեցու ու մզկիթի տարբերությունը պահում ա, իհարկե, մեր կառույցներն ու եկեղեցին էլ մեծ գործ են արել, օրինակ՝ հարյուր տարի ա, ինչ կուսակցությունը դեր ունի այդ հարցում գաղութներում, բայց դրանից առաջ էլ գաղութները գոյատևել են ու պահպանել իրենց դիմագիծը: Անշուշտ, կրոնի տարբերությունը մեծ դեր ունի ազգապահպանման հարցում, բայց նաև մեկ այլ հարց կա. ուրեմն բնական է, անցյալի համեմատ՝ պայմանները դժվարացել են, ես հիմա երկու տղա ունեմ, մեծը 19 տարեկան ա, արդեն գինվոր պիտի գնա, և ես երկմիտ եմ իրա համար, որովհետև եթե մեր երկրում լինեիք, կուզենայի անպայման ծառայեր, բայց էստեղ ուրիշ երկրի համար, չգիտեմ... էստեղ երկու տարի է, բացի էդ, կանոն չկա, ոչ մի օրենք չկա, հիմա Հայաստանն էլ, բայց մենք ծնվել ենք այստեղ ու սովոր ենք այս կանոններին, դա մեզ չի խանգարում, ուղղակի պարսիկների մեջ մենք շատ հավաք ենք ու կազմակերպված, եթե պետք լինի՝ միանգամից միավորվում ենք, օրինակ, երեկ Քեսաբի համար հավաքվեցինք շատ արագ, ինչը չկա Ամերիկայում, ավելի թույլ է, շատ ավելի թույլ, ես միշտ օրինակ էի բերում Սիրիայի համայնքը, ասում էինք՝ նրանք ամենաուժեղ համայնքն են, բայց հիմա պատերազմը փչացրեց, էդ առումով մենք էստեղ շատ լավ ենք... համենայնդեպս, ես երբեք չեմ մտածի գնալու մասին, եթե միայն մեր թիվը շատ պակասի, օրինակ՝ հիմա մենք մեջլիսում ունենք մեր երկու պատգամավորները, բայց երբ մեր թիվը պակասի, դրանք էլ չլինեն՝ էդ դեպքում: Լրացված պատճառները էնքան կապ չունեն իրականության հետ, օրինակ՝ դու ջուր ես ուզում, նրանք վերցնում են բաժակը, լավ լվանում, նոր ջուր են տալիս: Սա պատճառաբանում են որպես կրոնական փոքրամասնության հանդեպ ոտնձգություն: Բայց այնտեղ էլ, իմ համոզմամբ, հասկանում են, որ այդ պատճառները լուրջ չեն: Հրեան թուրքերի հետ դեռ իր գործն անում է, անշուշտ, Հայաստանի վրա էլ այս աղետը վաղ թե ուշ կգա: Հայաստանի սահմանային շրջանները պետք է դատարկվեն հայությունից»:

Խառնամուսուլթյունները

«Բոլորովին, մասների վրա կարելի ա հաշվել դեպքեր, եթե հայ աղջիկ մի պարսիկ տղայի հետ ամուսնացած լինի կամ փախած լինի: Դա արդեն ընտանիքից կտրվում է, շրջապատից կտրվում է: Նման դեպքեր շատ քիչ են հանդիպում, ասենք վերջին տարիներին չեմ էլ հիշում, հիմա ասես մեկի անունը բեր, չեմ կարող հիշել... չէ, չկան: Ու մեր հայ տղերքը էնպես են աղջկերքի շուրջը կանգնած, մանավանդ հայահոծ թաղամասերում, պարսիկը իրավունք չունի հայ աղջկա կողքից անցնի, տղերքը գնում մորթում են: Սակայն ինչ վերաբերում է հայերին... մենք երբևէ մեր քարտեզային գծագրություններում Իրանի հետ տարածքային խնդիր չենք ունեցել, հետևաբար իրենք մեզի սատար կանգնում են, բայց թուրքերի հետ՝ ոչ»:

Տեղաբաշխումը

«45–50000-ը Թեհրանում ենք, 8000-ը՝ Սպահանում, հետո փոքր թվերով՝ Թավրիզում, ավելի քիչ՝ Արաքում: Հայերը հիմնականում... թերևս մինչև սրանից 50–60 տարի առաջ մեծամասնությունը եղել է գյուղերում: Դրանից հետո ա, որ սկսել են տեղաշարժվել, մի մասն էլ ներգաղթի հաշվին, հայրենադարձության համար (չնայած որոշ առճակատողներ կային կուսակցական, հակահայաստանյան), բայց մի մեծ թիվ տեղափոխվեց Հայաստան, մի մասն էլ մնաց էստեղ՝ անտեր քաղաքներում, մնացին օդի մեջ: Կազմվեցին հայկական թաղամասեր: Կարելի է ասել, 60 տարի առաջվանից մինչև հիմա փոխվեց հայության պատկերը՝ գյուղականից քաղաքային: Դրանից հետո մենք տեսնում ենք ավելի հին սերունդը, քաղաքի հարավային մասում էին կենտրոնացած (Թադեոս-Բարդուղիմեոս եկեղեցին դրա վկայությունն է), հիմա քիչ-քիչ գալիս են դեպի կենտրոն, ցրվում են»:

Միգրացիան

«Պատկերացրեք, որ նույնիսկ սաղ հայերով հավաքվենք, մեկա շրջապատված ենք 140 մլն թուրքով, մյուս կողմից էլ էս ջիոլդների սիստեմները, էդ նույն Հայասան, Կարիտասը, իրենց գործն անում են: Օրինակ, այստեղից պարսիկները չեն կարողանում էդ կանալով արտագաղթեն, հետաքրքիր է, չէ՞: Կարելի ա ընդհանրապես ասել, որ վերջին 10 տարվա կտրվածքով արտագաղթը իր որոշակի տեմպերով գոյություն ունի, և այդ պատճառով բնական աճի հակակշռում ա, և, և, և»:

տնաբար, կարելի ա ասել՝ թվաքանակային իմաստով մեր համայնքը նահանջ է ապրում: Արտագաղթի առթիվ տարբեր պատճառներ կան: Պատմականորեն մարդիկ իրանց ընտրածով, իրանց ուզածով, իրանց ցանկությամբ չեն եկել այս տարածքի վրա, բնականաբար, չեն էլ հաշտվում, չեն էլ խորապես իրենց ուղեղով, մտքով, համոզմունքներով, սկզբունքներով... չեն հաշտվում և չեն զգում, որ այստեղ, խորապես էստեղ պիտի հիմնադրվեն կամ իրանց հեռու ապագան այս տարածքում չեն պատկերացնում: Եվ հիմա մարդիկ տարբեր պատճառներով Պարսկաստան են գալիս ոչ թե նրա համար, որ իրենք են ընտրել Պարսկաստանը: Երևի պատճառներից մեկը, որ արտագաղթում են, դա է: Մյուսը, փոքրամասնությունների իրավունքները, որոնք թղթի վրա գոյություն ունեն, բայց իրականության մեջ չեն գործադրվում, իհարկե համեմատականորեն, ժողովրդին մղում է դեպի արտագաղթ: Դրան ավելանում են անձնական պատճառները, մարդանց էն ցանկությունը, որ իրենց հայրենիքում չեն ապրում, ուրեմն գոնե ավելի լավ երկրում ապրեն: Ավելի լավը տարբեր մարդկանց համար տարբեր է: Իրականության մեջ ամենամեծ վնասը մեզ ներգաղթն էր, որ կազմակերպվեց 46-ին: Ինքն իրեն երևույթը սիրում էր, բայց իրա խորքը, ես կասեի նույնիսկ աղետալի: Ամեն գյուղական մեր շրջանները քանդվեցին, որովհետև թողան իրենց համայնքները, եկան մեծ քաղաք, չհարմարվան, հետո մեծ մաս նաև քաղաքներից եկան Հայաստան, բայց էն տեղեկությունները, որ մենք ունենք, դրանց մեծ մասն արդեն Հայաստանում էլ չէ, այսինքն՝ այստեղ էլ չհարմարվան, չկարողացան հաղթահարել դժվարությունները: Արտագաղթը նաև պետք է կապել այս տնտեսական բանից: Միայն ա էն տպավորությունը, որ հայերը Իրանից արտագաղթում են ոչ տնտեսական պատճառներով: Հիմնականում տնտեսական ու սոցիալական պատճառով: Թեև էստեղ ասում են Վիեննա կամ այլ տեղ, որ դիմում են ապաստանի, սխալ ինֆորմացիա են պարտավորվում ասել, ասում են՝ մեզ էստեղ ճշման տակ են դրել և այլ: Ոչ մեկը չի համապատասխանում: Գոնե ճշումները կրոնական, ազգային կամ էդ կարգի չի: Ճշումները, բնականաբար, տնտեսական կամ սոցիալական են, ու դա վերաբերում ա բոլոր քաղաքացիներին, ոչ միայն հայերին»:

«Հայերը ահագին չափով գնում են հիմնականում Ամերիկա: Ինչու են գնում հենց Ամերիկա, որովհետև կա Հայաս կոչվող ընկերությունը,

որը ծրագրավորված ձևով տանում է մարդկանց, ինչ-որ ձևով բավարարում է նրանց կենցաղային, նյութական պահանջները՝ աշխատանքի, բժշկական առումով, և, բնական է, իրենք էլ որոշում են, թե ուր պետք է գնան: Այդպես կատարվում է հոսքը դեպի Ամերիկա: Ներգաղթ, դժբախտաբար, չկա: Կարելի է ասել, որ դանդաղորեն արտագաղթը սկսել է հեղափոխությունից առաջ, հիմա: Հիմա եվրոպական, ամերիկյան, ուսանելու հաշվին կարելի ասել, որ բավական ուսանող ունեինք այդ երկրներում, հիմնականում Ամերիկայում, Կանադայում: Իսկ դրանից հետո, հեղափոխությունից հետո, պատերազմի հետևանքով գնացել են: Առաջին տեղը, որ ես ընտանիքով կգնամ, Հայաստանն է, բացի դա՝ ուրիշ ոչ մի տեղ: Դա հիմնական գաղափարախոսությունն է, որը երբեք չի նսեմանա: Բայց այս ամենի հետ մեկտեղ ասեմ, որ կա արտագաղթ և ավելի շատ՝ դեպի Արևմուտք»:

Վերաբերմունքը հայերի նկատմամբ

«Իրանահայերը, որպես արհեստավոր կամ մասնագետ, բավական լավ համբավ են վայելում: Լավ համբավ են վայելում որպես ճշտախոս, ճշտապահ մարդիկ: Եվ սա ասում եմ ոչ միայն հայերի և մուսուլմանների համեմատությամբ, այլև մյուս կրոնական փոքրամասնությունների հետ համեմատած: Հայերին համարում են հավատարիմ քաղաքացիներ, որ երբեք չեն դավաճանում Իրանի ազգային շահերին բոլոր մակարդակների վրա: Համարում են մի հավաքականություն, ուժ, երկրի լուրջ պահերին, ամենավտանգավոր պահերին պատրաստ են մեծ անձնագոհությունների: Մուսուլմանների մեջ հայերի նկատմամբ մեծ հարգանք կա: Եվ, իմիջիայլոց, շատ են հարգում հայերին ու սիրում են մեզ, երբ որ ասեցիք դժվարություն, ես իրապես չեմ զգում, այսինքն՝ նրանք ասում են՝ հայը սուտ չի խոսում, ինչ-որ արհեստներ ունենք, հայերից են, հենց հիմա մեր պարսիկ տեսչուհին մի բաժակ ջուր առանց ասելու չի խմում, չնայած ինքն է տնօրենը: Ես համալսարան եմ այստեղ ավարտել, միակ հայն էի էդ մանկավարժության դասարանում, բայց ոչինչ, այնքան հանգիստ եմ եղել»:

Հարաբերությունները Իրանի այլազգի փոքրամասնությունների հետ

«Հայերը այս երկրում ծայրահեղորեն հայրենասեր են, նվիրյալներ, և դա նրանք շատ լավ հասկանում են: Եթե այսօր 200 պատգամավոր կա, և 190-ը պատրաստ են գումար վերցնել և դավաճանել կառա-

վարությանը, և 10 հոգի միայն չեն վարվի այդպես, ապա տասը հոգուց երկուսը մեր հայ պատգամավորներն են: Լավ վերաբերմունքը, իհարկե, պայմանավորված է նաև ազգային ընդհանուր նմանություններով: Պարսիկներն անգամ այդ փաստի վրա շատ են կանգ առնում, որ հայերը էստեղ մեզ հետ արյունակից են, ընդհանրություններ ունեն: Չափազանց սիրված են այսօր այստեղ հայերը: Երկրի գրեթե 80–90 տոկոսը հայերի արևով է երդվում: Եվ քանի որ իրանահայերի նկատմամբ սերը մեծ է, այդ խորամանկությունները այդքան էլ չեն գործում մեր դեպքում:

Բարեբախտաբար, պատմության ընթացքում, առանց որևէ մեկին անարգելու, հակառակ հրեաների կամ բահայների, նրանք փոքրամասնություն են, որոնք էս երկրում չեն ունեցել դրական անուն, չեն ուզում ասել բացասական անուն: Հայերը միշտ հարգված են եղել իրենց ազնիվ գործով, ճիշտ ժամապահությամբ, նաև հայրենասիրությամբ: Մինչդեռ նորօրյա պատերազմում տված մեր զոհերի թիվը այլ փոքրամասնությունների հետ համեմատելի չէ: Օրինակ, հրեաները 2–3 զոհ ունեն, զրադաշտականները՝ 2, ասորիները՝ 1: Հայերը միշտ արծարծվել են: Հետո նաև թվով ամենամեծ փոքրամասնությունն են: Նաև մի կարևոր տարբերություն ունեն մյուսների հետ: Իրանի աղբբեջանցիները թուրք չեն, էթնիկապես հենց իրանական հնագույն ժողովուրդ են, որ Օսմանյան կայսրության օրոք կրել են լեզվական ազդեցություն, որոշ չափով նաև՝ ցեղային կամ արյունակցական ազդեցություններ: Բայց հիմնականում իրենք իրանցի ժողովուրդ են, կապ չունեն թուրքերի հետ, նաև կովկասյան թաթարների հետ, որ այսօր ձևավորված են որպես աղբբեջանցի: Իրանի աղբբեջանցիներն ընդհանրապես հայամետ են, հայերին սիրում են, Թավրիզում, Ուրմիայում հատկապես բավականին սերտ հարաբերություններ կան բնիկ ժողովուրդների՝ հայերի ու աղբբեջանցիների միջև, մտերմություններ կան: Բայց վերջին տարիներին դրանք ազդվել են պանթուրքիստական թույներից, որ առատորեն շաղ են տալիս էդ տարածքներում, շատ մեծ պետական ֆինանսներ են ծախսում Աղբբեջանն էլ, Թուրքիան՝ առավել ևս: Հայերն Իրանում ընդհանրապես շատ ճանաչված են որպես լավ արհեստավորներ: Պարսիկները մեզ ասում են՝ դրանք օրինակելի մարդիկ են, ճիշտ են, ստախոս չեն և իրենց գործին շատ լավ են տիրապետում»:

«Անցյալ ապրիլի 24-ին մենք նախատեսել էինք ոչ հայ համայնքների համար մի միջոցառում, որ այս տարի էլ կլինի առաջիկա օրերին:

Հրեական համայնքի ներկայացուցիչները, և ասորական, և զրադաշտները նույնիսկ, որ առանձնապես պատմական իմաստով ցեղասպանությունից տուժած ժողովուրդ չեն, բայց ասորիներն ու հրեաներն էդպես են: Սրանք եկել էին և մասնակցում էին միջոցառմանը և ակտիվ կերպով, այսինքն՝ իրենց համայնքի պատգամավորներն էին եկել, իրենց համայնքի ղեկավարությունը, երիտասարդությունը և այլն: Էդ տեսակ համագործակցություններ մենք փորձում ենք իրականացնել և, կարծում եմ, կլինեն հատկապես 100-ամյակի առիթով ավելի լուրջ: Հենց քեսաբահայության հարցի դեմ բողոքի միջոցառումները շարունակվելու են, և երեկ ասորի պատգամավորը հայտնեց, որ իրենք էլ պատրաստ են մեր կողմից կազմակերպված բաներին մասնակցել՝ բողոքի ցույց կամ համահավաք: Հրեաները էս իմաստով իրենց անցյալ և այս տարվա օրացույցում ապրիլի 24-ը նշում են պաշտոնապես որպես Հայոց ցեղասպանության օր: Չի եղել էդպես բան նախկինում, հիմա մտցրել են: Փոխըմբռնումների լայն դաշտ կա: Ընդհանուր խնդիրներ էլ շատ կան, որպես կրոնական փոքրամասնություններ՝ ահագին ընդհանուր խնդիրներ ունենք: Գլխավորը մշակութային ժառանգության հարցն է: Սա նաև նախանձի բան է ստեղծում մյուս փոքրամասնությունների կողմից: Մեկ-մեկ դա արտահայտվում ա: Ավելի մտերմիկ, ընկերական բանում հրեաները, ասորիները նախանձում են: Նրանք ավելի թույլ, ասորակարգ դիրքերից են նախանձ արտահայտում: Մենք մեզ բնականաբար էստեղ շատ բարձր ենք պահում, բանի տեղ չենք դնում, բայց մեկ ա իրանց մոտ դա կա: Նախանձի հնարավորություն է տալիս նաև ադրբեջանցիներին, որոնք իսկապես հրահրումների արդյունքում մեկ-մեկ չեն էլ թաքցնում, որ հայերն իրենց ազգային մայրենի լեզուն սովորելու հնարավորություն ունեն, իսկ իրենք չունեն և այլն: Նրանց էլ արդեն թշնամական ա: Եթե ասորիներինն ու հրեաներինն էդպես մտերմիկ ա, ոչ շատ բացասական, սրանցը արդեն՝ թշնամական»:

Կազմակերպությունները

«Թեմի առաջնորդն է գերաշնորհ սրբազան Սեպուհ Սարգսյանը: Թեմն ունի պատգամավորական ժողով, խորհուրդ և, որպես գործադիր մարմին, աշխատում է թեմական խորհուրդը, որին օժանդակում են թեմական ենթախորհուրդները: Դրանք են դատական խորհուրդը, կրթական խորհուրդը, կտակակալվածային, շինարարական ֆոնդը և

մեկենասող խորհուրդը: Նրանք տարբեր ծառայություններ են մատուցում իրենց մասնագիտական ոլորտում ժողովրդին: Սա այն մեխանիզմն է, որ ծառայություն է մատուցում ժողովրդին: Գնում են արտասահման գործերի, էստեղ արդեն հենց էդ պատճառով պահանջվում է նաև կնունքի հաստատագիր, որտեղ նշվում է, որ կնքվել է հայոց եկեղեցում, եթե պետք ունես, որ ասես Իրանի քրիստոնյա ես»:

«Էստեղ մենք ստեղծել ենք 100-ամյակի հանձնախումբ, որը պիտի ցեղասպանության 100-ամյակի համար ձեռնարկներ կազմակերպի: Բայց չկան համայնքի բոլոր կողմերը ներգրավված, մարդիկ են, որոնք թեմական խորհրդում են և ի պաշտոնն ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ են: Եթե էստեղ 100-ամյակի հանձնախումբը էդպես է նշանակվում, կարող եք ասել՝ էդ մարդիկ, որ գնան Հայաստան, ովքեր կարող են լինել»:

«Եթե մեզ հետ ուզենանք համեմատել, ապա բնականաբար, մենք թե՛ քանակով ենք ավելի շատ, թե՛ կազմակերպվածությամբ: Մեզնից հետո երևի հրեաներն են, կարող ա որոշ ճյուղերում մեզնից ավելի կազմակերպված: Բայց ընդհանրապես մեզ պես մի բան են: Ասորիները մի քիչ ավելի քիչ են, զրադաշտներն էլ: Հրեաները նրանց համեմատությամբ ավելի լավ կազմակերպված են, ունեն իրենց պարսկերեն թերթը, ասորիներն էլ ունեն, զրադաշտներն էլ ունեն, բայց հրեաներին ասքի է ընկնում իր բովանդակությամբ, ավելի ակտիվությամբ: Օրաթերթ միայն հայերն են կարողանում իրականացնել: «Ալիքը» վաղեմության իմաստով երկրորդ թերթն է Իրանում տպագրվողների մեջ: Առաջինը մի պարսկերեն թերթ է, երկրորդը «Ալիքն» է»:

«Հրեաները էս իմաստով իրենց անցյալ և այս տարվա օրացույցում ապրիլի 24-ը նշում են պաշտոնապես որպես Հայոց ցեղասպանության օր: Չի եղել էդպես բան նախկինում, հիմա մտցրել են: Փոխըմբռնումների լայն դաշտ կա: Ընդհանուր խնդիրներ էլ շատ կան, որպես կրոնական փոքրամասնություններ՝ ահագին ընդհանուր խնդիրներ ունենք: Գլխավորը մշակութային ժառանգության հարցն է: Մեր միությունը ձևավորվել է, երբ հայերը ներգաղթել են Թեհրան, դեռ 50 տարի առաջ, ապա իրենց ուղղորդեցին այս քաղաքամաս, «Սիփանն» այդտեղից սկսավ իր գործունեությունը: Սկզբում ունեցել ենք ընդամենը երկու սենյակ ու մեկ հատ բակ, պատի վրա կան կառույցի նվիրատուների անուն-

ները, հետզհետե աշխատանքով, տարբեր աշխատանքներ անելով, նվիրահավաքներով եղավ այս ամբողջությունը: «Սիփանը» հիմնադրվել է այս քաղաքամասում, երբ այստեղ դեռ եկեղեցի չկար, այնպես որ դասերից հետո երեխաների դաստիարակությունը՝ ճիշտ, հայեցի, իր վրա է վերցրել մեր միությունը: Մենք չենք զանազանում մշակութային և մարզական դաստիարակությունը, երկուսն էլ կարևոր են»:

«Հումենընթամենը» Իրանում մասնաճյուղ չունի, բայց հիմնականում որպես մասնաճյուղ ներկայացնենք «Արարատը», բայց այն առանձին կառույց է, կապ չունի որևէ կուսակցության հետ: Ես ինքս նաև «Արարատի» անդամ եմ: Եթե համայնքից եք ուզում տեղեկություններ իմանալ, շուրջ 25 միություններ ունենք՝ փոքր ու մեծ: Ամենախոշորներից են «Արարատը»՝ իր անդամների թվով, տարիքով, զբաղեցրած տարածքով, ֆինանսական և այլ հնարավորություններով, «Սիփանը», «Սարգարապատը», «Նաիրին», Չհարմահալի հայ ուսումնասիրաց միությունը և այլն: Վերջին տարիներին այստեղ ստեղծված ոչ կուսակցական, ոչ Դաշնակցության համակիր «Բաֆֆի» միությունը, իհարկե, որի հիմնադիրները սիփանականներ էին, բայց որից հետո կենտրոն է դարձել խոռվյալների, ընդդիմադիրների և նման մարդկանց: Նրանք չէին ճանաչում ազգային առաջնորդարանի կառույցը և նրա օրենքները, մասնավորապես այն կետը, որով սահմանվում է, որ միության կազմավորումն ընդգրկում է բարոյական ժառանգությունն անցնում է առաջնորդարանին, ինչը պարտադիր է բոլոր միությունների համար, բայց տարիների փոխադարձ համագործակցության արդյունքում կարողացան համաձայնության գալ, և Բաֆֆին ընդունեց այդ կետը: Բոլորիս էլ պարզ է, որ բոլոր ավանդական գաղութներում էլ հիմնական ղեկավարությունը Դաշնակցությունն է, ու մենք դա չենք դարձնում մեզ դրոշակ և պատրաստ ենք ընդունել այլախոհություն, այլ հայացք, բայց ազգային հարցերում պետք է լինել համախմբված»:

Իրանահայերի սոցիալ-ժողովրդագրական կազմը

«Էսօր համայնքը մի քիչ ծերացել ա: Ծերեր կան, որ չունեն իրենց զավակները, կարիք ունեն ծերանոցում: Կամ այսօր բավական թվով մարդիկ կան, որ առաջնորդարանի օժանդակությունն են ստանում: Կան, որ փախստական են: Ես փորձեցի հաշվել այն հայ մարդկանց թիվը, որ պարսկական աղքատախնամ կենտրոններում են, մոտ 28-հոգանոց ցանկ կազմվեց: Դրանց մեջ են հաշմանդամ, մոլիներ, ծխողներ

և այլն: Կարելի է ասել, որ հայ հասարակությունը միջին կարողություններ ունի: Ունենք նաև մեծահարուստներ, որ ազդեցիկ են, օրինակ՝ Ահարոնյանի նման մարդիկ բարեբախտաբար կան: Տարբեր համասարաններում ունենք 75–80 հայ դասախոս: Շատ բարձր թիվ է, եթե համեմատենք ժողովրդի թվի հետ: Բժշկական, ֆիզիկայի, աստղագիտության ամբիոնների հիմնադիրները հայեր էին: Նրանք, ովքեր համայնքի հետ կապ չեն պահում, զարգացած են, գաղափարացված չեն, ավելի կղզիացած են: Ցավալի է, որ էդ մարդիկ կան, բայց էդքան դերակատարություն չունեն: Նրանց ներուժը գնում ա երկրին ընդհանուր:

Իսկապես, մենք դեմքեր ունեցել ենք: Հիմա ունենք երկու նման հայտնի մարդիկ, մեկը մահացավ վերջերս (Դավոտյան), մյուսը՝ մաթեմատիկոս Թումանյանը՝ Թավրիզից, որ բարձր դիրքի են ու կապված համայնքի հետ: Էլ չունենք նման մարդիկ: Էնտեղ նաև ծննդաբերության պակասն է, կամ մեր ընտանիքներում, ներկայիս, մեծավ մասամբ ունեն մեկ երեխա, ոչ ավել, դա գալիս ա երևի, մի քիչ էլ երկրի տնտեսությունից, մի քիչ էդ խանգարում ա, ինձ թվում ա, դժվար է կյանքը հիմա ավելի, բայց ինչու չէ, արտագաղթն էլ կա, հիմա էս տարվանից մեր դպրոցից երկու աշակերտ են գնացել, բայց էդպես արձանագրված տվյալ չկա»:

«Մոցիալական առումով գաղթօջախը երևի այդքան էլ չի բաժանվում երկրից: Ի՛նչ երկրում է, նույնը հայերի համար է. կան հարուստներ, միջին դասակարգ: Կարելի է ասել, բարեբախտաբար, հայ աղքատ գոնե անցյալում չի եղել, եթե եղել է, իրեն չի ցույց տվել: Գոնե վերջին 30 տարի էդպես չէ, դրանից առաջ էդպես էր, այսինքն՝ պապից թոռ, եթե հայրը մեխանիկ է, գրեթե 50 տոկոս, տղան էլ մեխանիկ էր: Հիմա ամենը ուզում են գնան համալսարան: Սկզբնական շրջանում, երբ հայերը կենտրոնացած էին, որպես քաղաքում ապրող մարդ՝ ավելի կրթյալ են եղել, հիմնականում բժիշկներ, նկարիչներ, ոսկերիչներ: Հետո երբ որ մուտք են գործում Թեհրան, արդեն, որովհետև ուսում ունի, ավելի հանգիստ է շփվում եվրոպացու հետ, ավելի լավ է անգլերենը կամ հիմնականում ֆրանսերենը, կարողանում է վերցնել իր վրա նաև մեխանիկական գործերը, գործեր, որոնք տեխնիկային են վերաբերում, հայերը կարողանում են էդ տեղը գրավել: Նույնիսկ էսօր էլ եթե պարսիկի հարցնեք՝ որտեղ կարելի ա մեքենան լավ սարքել, անպայման կասի հայի մոտ: Էդպես հայերն իրենց անունը ունեցան որպես լավ մեխա-

նիկներ, որպես թարգմանիչներ...: Ավելի շատ են մանր արհեստներ, ճարտարապետություն, զուգահեռ նաև՝ առևտրի ոլորտում, իսկ վարչական պաշտոնյաները շատ ավելի սահմանափակ թիվ են կազմում: Գիտական ոլորտում կան բավականին ուսուցիչներ, դասախոսներ, բայց հաջողված, ակնառու բիզնեսմեններ, ընկերություններ շատ քիչ թվով են: Մեր գնահատմամբ, քանի որ անցած տարիներին թեիրանահայ համայնքը ավելի նոսրացել է, հետևաբար տնտեսական առումով ևս պակասել է: Նյութապես փաստորեն իրանահայերի վիճակը ավելի է վատացել»:

«Երկիրը քանի որ կրոնապետական է, իսկ դու քրիստոնյա ես, հետևաբար անգամ չորրորդ կարգի քաղաքացի ես՝ շիա և սունի մուսուլմաններից հետո: Բոլոր ազգային փոքրամասնություններից չկա մի որևէ ազգ, որն ունենա խորհրդարանում իր ներկայացուցիչը, սակայն հայերն ունեն երկու ներկայացուցիչ: Բացի դա, հայերը հիմնականում սպասարկման ոլորտում են, իսկ եթե դիրք կամ պետական պաշտոն ես ուզում, տեղ չկա քեզ համար: Համալսարաններում, օրինակ, ամենաբարձր պաշտոնը ամբիոնի վարիչն է: 4 ամբիոնի վարիչ ունենք այսօր: Ամենագեղեցիկ երևույթն այս երկրում, որ կարող եմ դիտարկել, այն է, որ օրինակ ոտքդ հասավ ոստիկանություն կամ դատարան, ապա քո ամենամոտ պարսիկ ընկերը, ի վերջո, եթե զգա, որ դատավորի մոտ քեզանից կպարտվի, այդտեղ նոր կդիմի մուսուլման չլինելու փաստին»:

«Տնտեսապես համայնքը տկարացել է, ես կասեի մարդուժը գնացել է, արտագաղթ է եղել, կրթություն ստանալ ցանկացող երիտասարդները անմիջապես ուզում են գնալ այստեղից: Նաև հոգեբանորեն մեծ մասամբ մեր երիտասարդությունը, եթե կարողություն էլ ունի, ապա խուսափում է պետական համակարգ մտնելուց, քանի որ որպես կրոնական փոքրամասնություն, արդեն ինքն իրեն դադար է տալիս՝ մտածելով, որ չեն վերցնի, քանի որ հայ ենք: Այսինքն՝ չենք համարձակվում մտնել մրցակցության մեջ»:

«Մինչև հեղափոխությունը այստեղ մեծ արտադրողներ կային հայերի մեջ, հատկապես շինարարական, ճանապարհաշինության մեջ: Հեղափոխությունից հետո այս գործարարները լքեցին երկիրը, և հայ համայնքի դերը այս տնտեսական իմաստով մի քիչ պակասեց: Բայց

հայ համայնքի տնտեսական կարողությունը Իրանի ֆոնին դեռ կարելի է այնքան էլ ցածր չգնահատել: Ընդհանուր նյութական կարողությունները միջինից քիչ բարձր են: Բնական ընտրություն է դա. եթե միջակից ցածր կարողություններով մարդը հնարավորություն ունի գնալու, մտածում է, որ էստեղ պետք է մի կերպ ապրի, ավելի նախընտրում է գնալ Նահանգներ և այնտեղ քիչ թե շատ ավելի լավ ապրել»:

«Մեծ տեղաշարժ կա համայնքի կազմում: Ամենամեծահարուստները երկրից գնացել են, արդյունքում միջին շերտը դարձել է հարուստներին փոխարինող, իսկ միջին խավն իջել է: Այսինքն՝ այժմ միջին խավը այն խավը չէ, որ նախկինում էր միջին: Այս իմաստով կարելի է ասել, որ համայնքի քանակական կազմն է փոխվել, և այսօրվա հարուստները այն հարուստները չէին, որ ժամանակին էին, որոնք, օրինակ՝ Արարատ մարզավանի հոգսը վերցնեն իրենց ուտերին կամ մի քանի դպրոցներ կառուցեն: Այսինքն՝ բոլոր կառույցները հիմնականում այստեղ եղել են բարերարության արդյունք, բնականաբար, ժողովուրդն էլ միջին իր մասնակցությունն է ունեցել, սակայն առյուծի բաժինը եղել է մեծահարուստերինը, այն հարուստներինը, որոնք այսօր չկան: Ներկայումս այն միջին խավը, որ այսօր դարձել է բարձր խավ, նաև հոգեբանորեն կամ հենց իրենց սոցիալական նստվածքով էդ տեսակը չէ, որպեսզի լայն բացի քսակը: Թեև կան, գտնվում են բարերարներ, բայց նրանք չեն համեմատվի նախկինների հետ: Ջողայում փոքր-ինչ տարբեր է, այնտեղ կառույցն այնքան հարուստ է, որ կարիք չունի բարերարների: Այնտեղ հարստությունը կուտակվել է ժառանգաբար, իսկ այստեղ նոր ձևավորվող է համայնքը եղել, այդ իսկ պատճառով չի ունեցել այդպիսի հարստություն: Այստեղ որպես թեմ ձևավորվել է 1960 թվականից, նախքան այդ կարելի է ասել շատ փոքր թիվ է եղել Թեհրանում հայերի թիվը»:

«Ազգային ղեկավար մարմինը շատ հազվադեպ կարող է բիզնեսի ռիսկին գնալ ազգային հարստությամբ, ինչու. քանի որ, եթե անձնական հարստություն է, բիզնեսի մեջ կան շահում ես, կան պարտվում ես դու: Բսկ եթե ազգային հարստություն է, և ռիսկի ես դիմում և տանուլ ես տալիս, ապա համարվում ես ազգի դավաճան: Այդուհանդերձ, ներկայումս մեր հասարակական կյանքը հիմնականում բարերարների միջոցով է բավարարվում: Տարբեր միջոցառումների ժամանակ գումարներ են հավաքվում, թեկուզ համեստ: Բարերարության ավանդույթը

փաստորեն մնացել է, սակայն գումարները պակասելու հետևանքով է նվազել: Պատգամավորների շտաբիիվ մի քանի տարի է՝ արդեն ունենք պետական բյուջեից բաժին, որը բաժանվում է միություններին, կազմակերպությունների, դպրոցների վրա, և չի կարողանում ծախսը ծածկել: Այն ավելի շուտ մեր ներկայությունը, մեր հանդեպ վերաբերմունքն ու դիրքն է արտահայտում: Քանի որ կապիտալը սիրում է ավելի ապահով միջավայր, այդ պատճառով էլ գնացին մեծահարուստները»:

«Հայ համայնքի լինելն Իրանում հենց պետության համար է օգտակար: Այդ իսկ պատճառով շատ խորամանկ ռազմավարություն է վարում պետությունը: Հետևապես պետությունն ինքը այս համայնքի համար ամեն բան անում է, որ դժգոհ չպահի: Բոլոր պարագաներում այստեղ հայությունը ճանաչված է և որպես փոքրամասնություն մտածում են՝ պետք է գոհ մնան: Մանավանդ որ այստեղի հայության հնարավորությունները Իրանից դուրս հենց նրա շահերի ներկայացման առումով մեծ դերակատարություն ունեն: Նաև երբեմն օրենքի դասավորություններով է այդպես»:

«Ավտոմեխանիկներից սկսած՝ մինչև կադապարաշինություն, ընդհանրապես ինչ արհեստ ասեք կգտնվեն լավագույնները հայերի շրջանում, ինչո՞ւ չէ, նաև քանդակագործությունը, ոսկեգործությունը, արծաթագործությունը, ես ինքս արծաթագործ եմ, բայց հիմա շատ են պակսել հայ մասնագետները: Անշուշտ, հայերն ավելի լավն են, էդ իրենք էլ են ասում, անշուշտ, պարսիկների մեջ էլ կան լավ մասնագետներ, որոնք հայերից են սովորել իրենց գործը, դրանք հիմնականում Իսֆահանում են, դրանց բոլորի վարպետները հայեր են եղել: Հաջորդ կետը, որ ուզում եմ շեշտել, հայերին պաշտոնապես վարձատրելու հարցն է: Որևէ պետական հիմնարկում, որևէ տեղ հայը գրանցված աշխատող չէ, նշված չէ, որ այսինքն՝ մարդն այստեղ աշխատում է, այս պաշտոնի տերն է: Էդ եղել ա ընտանեկան կամ բարեկամական, մենք մանավանդ հայկական արծաթագործությունը ուրիշի չէինք սովորացնի: Դա սերնդեսերունդ փոխանցվել է, արևմտահայերը, ավելի ճիշտ՝ վանեցիները, կասեին յադօղի են ու չէին փոխանցի, ինչ-որ գաղտնիքի նման. ես, իհարկե, վանեցի չեմ, բայց իմ հայրս՝ ու խորագրությանս վարպետը, վանեցիներից են սովորել, օրինակ՝ իմ քանդակագործության վարպետը համաշխարհային համբավ ունեւ, մահացել ա, իմ հորաբորոջս տղան էր, ու ինքը տղա չունեւ, դրա համար էլ ինձ է փոխան-

ցել: Էդպես բան չկա, որ մարդն էստեղ 30 տարի կաշխատի, հետո հանգստի կգնա: Մասնագիտական, սոցիալական կազմի հետ կապված՝ պետք է ասեն, որ մեր բարձրագույն կրթության տեր մարդկանց թիվը երևի վերջին տարիներին աճի միտում է ցույց տալիս: Սա կապված է մի շարք հանգամանքներից: Ընդհանրապես, համաշխարհային պրոցեսներ կան գիտական ակադեմիական հարցերի հետ կապված, որին անմասն չի Իրանը ընդհանրապես և, բնականաբար, հայ համայնքը՝ մասնավորապես: Ես էս հարցին բավականին հետամուտ եմ, և հետևաբար բարձրագույն կրթություն ձգտումը կարելի է ասել ավելացել է: Ճշգրիտ չեմ կարող տոկոսներով ասել, բայց բավական մեծ տոկոս է կազմում բարձրագույն կրթություն ստացածների թիվը: Եթե նախկինում ավելի ձգտում կար ավելի բժշկական ճյուղեր կամ ինժեներական, հիմա էսպես տենդենց նկատվում է դեպի ավելի հումանիտար կամ հատկապես IT ոլորտ: Հայաստանում էլ էդպես է, իրավագիտություն և այլն: Էդ նույն բանը էստեղ էլ մոտավորապես գոյություն ունի»:

«Նյութական վիճակով մեծ նահանջ ենք ունեցել՝ սկսած թագավորի ժամանակներից: Այդ ժամանակ դուլարը հաշվել են յոթ թուման, գնաց-գնաց այս երեսուն տարվա մեջ դարձավ երեք հազար թուման ու դեռ բարձրանում է, հիմա արդեն ավելի արագ, եթե էն ժամանակ տարով էր բարձրանում, հիմա արդեն օրական է: Դրա մեջ, բնականաբար, մենք էլ տուժեցինք: Արժեզրկվել է պարսկական ամեն ինչը. օրինակ՝ առաջ, որ մեկ պարսկական թաս վերցնեիր գնայիր Անգլիա, Ամերիկա... կարծում են՝ սա ինչ է, մի մեծ բան է, ու թանկ վճարում էին դրա համար, հիմա ոչինչ պարսկականը գին չունի:

Սոցիալական, տնտեսական կյանքը, որ անկում ա ապրել: Ահմադի Նեժաթի ժամանակներից արդեն Իրանն ընկավ համաշխարհային որոշ գործընթացների մեջ՝ էմբարգո և այլն, և աստիճանաբար, մանավանդ վերջին 2 տարում կտրուկ վատացան պայմանները, ու հեռանկարում շատ դրական բաներ չեն սպասվում, բայց ամեն դեպքում էս նոր նախագահական ընտրությունների արդյունքում որոշ հեռանկար է սպասվում: Հայերը կարող ա որոշ իմաստով դեռ ավելի հեշտ են կարողանում կրել էդ դժվարությունները՝ սոցիալական, մուսուլմանների հետ համեմատության մեջ: Մենք հիմա չենք կարող որևէ պետական աշխատանքի անցնել, թեպետ և ուսուցիչ, էլ ուր մնաց տնտեսական ոլորտում աշխատել, սա էլ հեղափոխության հետևանքներից է, որով-

հետև ժամանակին մեզ վարկեր էին տալիս, իրավունքներ ունեինք, իրենց համար միջազգային ասպարեզում լավ քարտ էինք որպես իսլամական պետության մեջ քրիստոնյա փոքրամասնություն, իսկ հիմա պայմանները շատ վատ են, մարդիկ գնում են, և պարսիկներն էլ շատ լավ գիտեն, թե ոնց են գնում, ինչքան են մնացել, իսկ գնացողները բոլորը գնում են Ամերիկա էդ քեյսերով»:

«Մեր համայնքում ամենակարևոր պաշտոնը, որ հայ կարող է զբաղեցնի, պետական հարաբերությունների մեջ, խորհրդարանի ներկայացուցչությունն է: Իսկ դրանից բացի, աշխատում է ընդամենը մի քանի հայ փաստաբան: Բացառիկ ընդունակություններ պիտի ունենաս, որ քեզ ընդունեն որպես փաստաբան (որպես հայ): Չեն թույլ տա մի հայ դառնա դատախազ, ինչքան էլ կրթություն ունենա, տիրապետի իր մասնագիտությանը: Իրանք սա տրամաբանում են էսպես, որ իսլամը, որպես գերադաս կրոն, դու, որ քրիստոնյա ես, իսլամ չես, ուրեմն կրոնը քո հավատքը դեռ թերի է, և եթե քո հավատքը թերի է, եթե քո արյունի արժեքը համապատասխան չի մուսուլման մարդու արյունի արժեքին, դու որ դառնաս դատախազ, ինչպես ես որոշում կայացնելու մի մարդու վրա, որ իրա հավատքը քեզնից ավելի շատ է: Իրա տրամաբանական հիմքը դա է: Այդ տրամաբանությամբ մերժում են դատախազի պաշտոնը: Դատախազ դառնալու համար հստակապես օրենքն ասում է, որ դու պետք է մուսուլման լինես: Բացառիկ ընդունակություններ ցուցաբերելու դեպքում ընդամենը կարող ես դառնալ փաստաբան: Իսկ նախքան հեղափոխությունը այստեղ հայերը մեծ դիրք են ունեցել, մանավանդ նավթային ընկերությունները. այստեղ առաջին խավը անգլիացիներն են կազմել, հետո՝ մենք, և դրան կապված բավականին աշխատանքներ են արել, շատ եկամտաբեր աշխատանքներ և մեծ գործարաններ, արտադրություններ են ունեցել: Անհամեմատելի է, հիմա նավթային ընկերություններում հայ չկա, եթե կա էլ՝ ուղղակի աշխատողներ են, և, ընդհանրապես, պետությունն իր ձեռքը դրել է առաջին օղակի վրա, կրոնական հարցերն ավելի շեշտակի են դարձել, ու հիմա, եթե ուզես էլ, հնարավորություն չկա սովորական աշխատողից ավելի բարձրանալու, ինչպես նաև էլ ցանկություն էլ չկա, որ գիտես ամեն քայլին պետք է լարված, զգույշ լինես, կրոնիդ համար և այլն... Բայց ես գտնում եմ, որ հատուկ միտում չկար այս ամենի մեջ, դա ուղղակի իրենց խիստ կրոնական հայացքի արդյունք էր... Որովհետև

հարցը միայն տնտեսությունը չէ, ավելի շուտ սոցիալական ոլորտը մաքրելն է առաջնային, և էդ օրենքներն ավելի շատ իրենց վերահսկելու համար են, մենք գոնե մեր տարածքում ազատ ենք»:

«Հիմա հայերը ավելի շատ ծառայության, սպասարկման ոլորտում են, և, իհարկե, արհեստավորության մեջ: Յուրաքանչյուր պարսիկ պատրաստ է մի ավել դրամ ծախսել, բայց իր մեքենան սարքել հայ վարպետի մոտ: Այդ վերաբերմունքը հայերի հանդեպ կա, եկել է հնուց, ու մենք կարողացել ենք պահել այդ կարծիքը մեր մասին: Իրենք են ասում, որ հայերը սուտ չեն խոսում, ճշտապահ են, ազնիվ են: Ինչ որ է, հայերին այստեղ իրոք շատ լավ են վերաբերվում: Պետության կողմից էլ մեզ բավականին բարձր են վերաբերվում, նյութական օժանդակություն են հատկացնում, այսինքն՝ նման բան ուրիշ ոչ ոքի հանդեպ չեն անում: Օրինակ եմ ասում՝ նախորդ ամսում մեզ բավականին նյութական օգնություն է տրամադրել պետությունը»:

Կրթությունը

«Եթե սրանից 40 տարի առաջ հայկական դպրոցներում աշակերտության թիվը 11.000 էր հաշվվում, այսօր դրա մեկ երրորդի չափ է: Հաջորդ կետը հայկական լեզվի պաշտոնական դասավանդումն է դպրոցներում: Մենք էսօր մեր հայկական դպրոցներում հայկական լեզուն դասավանդում ենք, բայց ուրիշ առարկայի անվան տակ, կողքից: Երեխան էլ նայում է, տեսնում՝ դրա թվանշանը չի ազդում իրա արդյունքների վրա, տարվա վերջը հայերենը սովորի-չսովորի, թվանշանը ստանա-չստանա, բան չի փոխվի, շահագրգռվածություն չունի: Հետո ոչ ոք քեզնից չի հարցնում՝ դու հայերեն սովորե՞լ ես, թե՞ ոչ, թվանշան ստացա՞ր, թե՞ ոչ: Հետո դա քեզ ուրիշ տեղ պետք չի գալիս: Իսկ սա լուրջ պատճառ է ընդհանրապես հայերենը չսովորելու համար:

Էսօր մեր համայնքում գրեթե բոլոր մեր երեխեքը, եթե դիմեք, չեն կարող մեկ էջ հայերեն գրել: Իհարկե, դա ունի նաև ներհամայնքային ուրիշ պատճառներ, որը խոսում է մեր կրթական խորհրդի և մեր առաջնորդարանի մոդելի մասին: Մեր ազգային իշխանության մեջ մարդիկ պաշտոններ չեն զբաղեցնում հանուն նրա, որ իրանք ունեն համապատասխան արժանիքներ: Պաշտոններ են ստանձնում համապատասխան նրան, որ ունեն քաղաքական հակումներ: Եթե էստեղ ես աշխատում եմ որպես հաշվապահ ոչ թե նրա համար, որ ես լավ հաշվապահ եմ, նրա համար, որ ես հակված եմ է՛ն կուսակցությանը, որը ազդեցություն ունի համայնքային կառույցների մեջ»:

«Մենք ունենք հայ փոխտեսույ, իսկ տեսուչները հիմնականում պարսիկներ են, և, եթե եսասիրություն չեք համարի, մենք ենք տնօրենները, քանի որ նրանք ուղղակի ներկա են որպես պետության կողմից մարդիկ դպրոցում, եթե ոչ հիմնական աշխատանքները, ամեն բան փոխտեսուչներն են անում: Իսկ մենք ունենք նաև հայոց դպրոցներ, որտեղ և՛ տեսուչը, և՛ փոխտեսուչը հայ են, օրինակ՝ թաղամասում ունենք դպրոցներ, որտեղ հայ տնօրեններ են, օրինակ՝ Թովմասյան միջնակարգի տեսուչը հայ է, տիկին Սաթոն, որ նաև ունի հայ փոխտեսույ: Հայ փոխտեսուչը պատասխանատու է հայոց լեզվի, հայոց պատմության, կրոնի դասավանդման համար, էդ բոլորը մեր հսկողության տակ պիտի լինեն, հայ ուսուցիչների հսկողության տակ, ես պատասխանատու եմ նրանց աշխատանքին, պատասխանատու եմ աշակերտների դաստիարակության, հայեցի դաստիարակության աշխատանքներում: Տնտեսական մասը գնում է արդեն ծնողական խորհրդի հսկողության տակ, մեր հայոց դպրոցներում ծնողական խորհուրդն է... էդ ամբողջ գումարը, թռչակը, որ ստանում են, տնօրինում են ծնողները, լրիվ իրանց ձեռքի մեջ է, ու նրանք են կրթական խորհրդի հետ կապի մեջ՝ հաշիվների առումով, և տեսչուհու (պարսիկի) մոտ ոչ մի գումար չկա, էդ առումով նաև ինքը բան չունի անելու, ուղղակի առաջարկներ է տալիս կամ կապը որպես դպրոցի և պետության, եթե կան ընենց խնդիրներ, որ պետք ա լինում դպրոցին»:

«Մինչև երկու տարի առաջ ունենում էինք պետության կողմից օժանդակություն, բայց շատ չնչին, ասենք, օրինակ, տարեկան մի գուցե մի 700000 թուման, էդ էլ եթե տային, բայց չէին տալիս, օրինակ՝ մեր դպրոցի աշակերտության թիվը 202 հոգի է, ու էդ գումարն ամբողջ մեկ տարվա համար ոչինչ է, մենք դրանից միայն վճարում էինք հոսանքը, գազը, ջուրը, էլեկտրականությունը, բայց հիմա արդեն անցյալ տարվանից դա էլ չեն տալիս, իրենք գիտեն, որ հայ դպրոցներում մենք թռչակ ենք ստանում, քանի որ պարսկական դպրոցներում դա արգելված է, նկատի ունեմ պետական, ոչ շահադիտական դպրոցները, իսկ շահադիտականները ինչ ուզում անում են, քանի որ պետությանը չի կապվում, և մեծ գումարներ են ստանում, մի քիչ էլ ասենք որակը ավելի բարձր է:

Բնականաբար, մենք ունենք նույն պարսկերեն առարկաները նույն ժամերով, բայց մենք դրանցից մի քիչ կրճատում ենք, ավելաց-

նում ենք հայերենը, դա, իհարկե, օրինական է, մեր կրթական խորհուրդն ունի դրա թույլտվությունը: Այդ ծրագրի մեջ տեղավորում ենք հայերենը, տարրական օղակում (մենք ունենք տարրական, ուղեցույց և միջնակարգ օղակ՝ մինչև անցյալ տարի, անցյալ տարվանից ուղեցույցը հանել են և տարրականին միացրել մինչև վեցերորդ դասարանը՝ նախորդ հինգերորդի փոխարեն և երկու-երեք տարիներ, այսինքն մենք երեխաներին պահում ենք մինչև վեցերորդ դասարան, հետո ուղարկում ենք միջնակարգի առաջին բաժին, հետո միջնակարգի երկրորդ բաժին՝ մինչև դիպլոմը), մենք ունենք ութ ժամ հայերեն, ութ հատ 40–45-րոպեանոց դասեր, հայերեն ասելով կհասկանանք հայոց լեզու, գրականություն, կրոն, պատմություն, շարադրություն. Իսկ էդտեղ սեղմվում են պարսկերեն դասերը հայոց դպրոցներում, չի պակսում, ուղղակի մի քիչ սեղմ են պարապում: Մեզ մոտ հիմա կան աշակերտներ, որ լավ են կարդում, շատ լավը կա՝ հայ աշակերտ հայ դպրոցի մեջ, արդեն տանջվում է, որովհետև չունի մրցակից, էդ համակարգը նորմալ չի պահպանվում: Եթե համակարգը իրեն կարողանա ճիշտ պահպանել, ստեղծի մրցակցություն, հայկական դպրոցները վերջին տարիներին հասկացան, որ պիտի մասնակցեն անցկացվող օլիմպիադաներին: Եթե դու էս երկրում համակարգի մեջ ես ու չես մասնակցում էս երկրի օլիմպիադաներին... Վատ չի, մի երկու արդյունքներ կան, բայց կարող էր ավելի լավ լիներ: Հայերը մեծավ մասամբ լավ կարդացած են պարսկական դպրոցներում, որ տեղափոխես հայկական դպրոց, երևի մրցակից չեն ունենա, բայց էստեղ մրցակցության դաշտում են հայտնվում, որ փորձում են իրենց ուժերը: Հետո պետք է մրցակցեն պետական համալսարաններ ընդունվելու համար: Մրցակցությունից դուրս մնացածները գնում են երկրորդական, երրորդական համալսարաններ»:

«Հայաստանի հետ մեր ամենամեծ խնդիրն ուղղագրությունն է, տարբերությունը շատ է նեղացնում, շատ է խանգարում, անձամբ ես իմ անձնական ճանփորդություններով որ գնում եմ, ճամպորուկս լրիվ, ամբողջությամբ գիրք ա, բայց էստեղ ուղղակի չեմ կարող հանձնել աշակերտին, քանի որ նա շփոթում է, մենք էստեղ թելադրում ենք ուրիշ ձևով, բայց, այո, ինչո՞ւ չէ, մենք ստանում ենք գրքեր, իհարկե... Աշակերտների թիվն ամեն տարի նվազում է: Ցավոք սրտի, ես, ի միջի այլոց, պատգամավորական խորհրդի անդամ եմ նաև, անցյալ շրջանում

եղել են դիվանի անդամ, ներկայումս, որպես անդամ, էդ մանրամասնություններին մի քիչ ավելի տեղյակ են, ուրեմն ամեն տարի տասը տոկոսով իջնում է մեր աշակերտության թիվը, ընդհանուր համայնքում, բայց դա միայն արտագաղթը չի: Կարևոր են լեզուն, եկեղեցին, կրոնը, ընտանիքը: Այստեղ կտեսնեք երեխեքն իրար հետ պարսկերեն են խոսում, չեն կարդում, չեն ուզում մտնել միութենական կյանք: Այս առումով շատ նախանձում են Հայաստանի երիտասարդությանը, շատ լավ, համարձակ, առաջադեմ ու պահանջատեր երիտասարդություն ունենք: Ասեմ, որ ես նաև Մեջլիսի կրթական հանձնաժողովի մեջ եմ, հետևաբար գիտեմ, թե Իրանում ինչպես է անցնում: Նախաբուհական կրթությունը՝ տարրականը, միջնակարգը, ավելի լավ հիմքերի վրա է դրված Հայաստանում, ավելի լավ ա իրականացվում: Տղաս 13 տարեկան է: Եթե դուք 13 տարեկան աշակերտին համեմատում եք այստեղի 13 տարեկանի հետ, հատկապես հայ աշակերտին, զգում եք, որ տարբերությունը շատ-շատ է՝ և՛ գիտության մակարդակի իմաստով, և՛ ընդհանուր գիտելիքների բազմազանության:

Իրանի բուհական համակարգը, համալսարանական իրավիճակը ի սկզբանե բարձր մակարդակի վրա են: Դասախոսների վարձում են, չեն գրանցում: Պաշտոնական աշխատող չեն: Ծայրահեղ դեպքում՝ պայմանական համագործակցություն է: Գլխավոր պատճառն էն է, որ 18-ից է, դրա համար մակարդակը ուրիշ է: Էնտեղ դասավանդել են, էստեղ էլ տարիներ դասախոս են, եթե համեմատում ես՝ տարբերությունները շատ ակնհայտ են: Օրինակ, էստեղ առարկաներ կան որպես մասնագիտական, որ էստեղ ընդհանրապես չեն լսել էդ մասին: Հայաստանում չկա գրականություն: Էստեղ հայագիտական ամբիոնում հայոց պատմություն ու իրանահայ պատմություն են դասավանդում, հայոց պատմությունը, որ ամենածեծվածն է Հայաստանում, փորձում են, նոր մոդեռն բաներ չես կարողանում գտնել: Մանավանդ ինտերնետում մասնագիտական գրքեր հայերենով գոյություն չունեն: Չեմ էլ կարող էս հարցում մեղավոր փնտրել, որովհետև 3-միլիոնանոց պետություն է, շուկան շատ փոքր է: Ընդհանրապես մեզ մոտ չկա ընթերցանության սերը, և դրա պատասխանատուն ևս Դաշնակցությունն ա: Երբեք իրա համար համայնքի իսկական աճը և առաջընթացը իրա առաջնահերթությունը չի եղել:

Սրա արդյունքում որակագրկվել ա մեր եկեղեցին, դպրոցը, միությունը, որի արդյունքում որակագրկվել ա սերունդը: Էսօր մեր հայ

աշակերտը հայերեն չի խոսում, մաքուր հայերեն չի գրում, չի կարող կարդա: Դպրոցը որակ չունի: Մտեք հայկական դպրոց՝ թողթ բաժանեք պատահական աշակերտների, խնդրեք տասը նախադասություն շարադրություն գրի մոր համար, հետո տարեք կարդացեք դա, տեսեք բովանդակությունը, որակը, միտքը, հետո կպատկերացնեք հայկական դպրոցում մեր դաստիարակած հայ աշակերտն ինչ որակ ունի: Ինչո՞ւ, որովհետև դեկավարվում և էն կրթական խորհրդի կողմից, որը աշխատանքի և հրավիրված էն թեմական խորհրդի միջոցով, որը ընտրվել և էն պատգամավորական խորհրդի միջոցով, որին ազդում և կամ ենթարկում և Դաշնակցությունը, որը ընդհանրապես մտահոգված չէ համայնքի շահերից»:

«Երբեմն որոշ հարցերի մասին ես ինքս կողմ եմ պարսկերեն լեզվով խոսել, որ ասելիքը տեղ հասնի, եթե դա բխում է ազգային շահերից, բայց պարսկերեն էլ կիրթ խոսա: Իսկ եթե ո՛չ հայերենդ և հայերեն, ո՛չ պարսկերենդ և պարսկերեն, ընկերուհիդ պարսիկ և, 100 տարի հետո լավ պատկեր չենք ունենա: Հայաստանի ներկայությունը մեր ուսումնական համակարգում գոյություն չունի, չի ունեցել անցյալում: Հայ գրականությունը գալիս էր սահմանափակ, մեկ-երկու խանութ կար:

Իսկ հայ դպրոցում ինչ որ կարելի էր՝ դրվում էր, իսկ դասագրքերը արվում էին հին տարբերակով, պահվում էր հին ուղղագրությունը՝ մեսրոպյան, քաղաքական պիտակավորում տալով հայ գրականությանը, մշակույթին: Վերջին շրջանում փորձ արեցին մեր թեմական խորհրդի կողմից... փորձեցին հայ դասագրքերը կազմել՝ հաշվի առնելով հայաստանյան փորձառությունը: Բայց փայլուն բան չի ստացվել, բավական սխալներով, քերականական նույնիսկ:

Դժբախտաբար, հայ դպրոցի մակարդակի ցածր լինելը ազդում է, որ հայերի ներկայությունը պետական համալսարաններում, բուհերում ունենք հատ ու կենտ հայ ուսանողներ: Ոչ պետական համալսարաններում՝ իրենց մակարդակով երկրորդ, երրորդ կարգի համալսարաններում, շատ ունենք: Բայց ուսուցիչները ցածր մակարդակ ունեն, որոնց ընդունողները ընտրում են իրենց թայֆայական, բարեկամական շրջանակից: Դպրոցներն էլ դասակարգված են, կան որ քննությամբ են ընդունում աշակերտներին, որոշներն ավելի գումար են ստանում: Մեր դպրոցները, կարելի է ասել, որ պետական դպրոցներից մի քիչ ավելի

գումար ստանում են, որոշ պաշտպանվածություն են ունենում և՛ պետական կողմից, և՛ ազգային կառույցի կողմից: Բայց արդյունքում վարչականորեն ճիշտ չեն վերաբերվում դպրոցի հետ, աշակերտության հետ:

Մենք պարսկախոս չենք: Ընտանիքում հայը հայի հետ խոսում է հայերեն, բայց աղավաղված հայերեն: Պարսկերեն բառապաշարն ավելի է շատանում, հայերեն բառապաշարը պակասում է: Դպրոցներում դասավանդման համակարգը, եթե ճիշտ ձևով դրվի...: Մանկապարտեզից մինչև նախակրթարան և տարրական կարգի ա ստեղծել հայերեն բառապաշարը: Մեր կրթական համակարգի մեջ մասնագետ չունենք: Երկրի մասշտաբով ունենք մանկավարժություն, լեզվաբանություն սովորած անհատներ, բայց չեն ներառվում մեր կրթական համակարգի մեջ: Ոչ մասնագետ անհատներն են աշխատում համակարգի մեջ: Էսօր հայ ընտանիքներ կան, որ չեն վստահում մեր հայկական դպրոցների որակին, իրենց երեխային տանում են պարսկական դպրոց: Ասում է՝ երեխաս պիտի գնա հայկական դպրոց, հայերեն չսովորի, պարսկերեն էլ լավ չսովորի: Թող գնա պարսկական դպրոց, պարսկերենը լավ սովորի, հայերենն էլ իր իմացածի չափ տան մեջ կբավարարի: Սա բխում է նրանից, որ եթե դուք լավ ուսուցիչ եք, ձեզ չեն ներգրավում հայկական դպրոցում, ներգրավում են նրանց, որ իրենց հակվածությունն ունեն քաղաքական, կարևոր չի, որ լավ չի դասավանդում»:

Մշակութային կյանքը

«Պարսկաստանում հայերը իրենց հետ ունեցել են նաև իրենց քաղաքակրթությունը հատուկ, էս հատուկ քաղաքակրթությունը, տարբերությունը պարսկականի հետ ու նաև նմանությունը, իր հետ բերել են հայերը: Մարդիկ հայերին բարձր են դասել մշակութապես, իրենց ունեցած...: Թարգմանության արվեստն առաջին անգամ հայ մարդն է այս երկիր բերել, թատրոն հայ մարդն է առաջին անգամ հիմնադրել: Թատրոնի մեջ առաջին անգամ կանայք խաղացել են՝ կնոջ ու մարդու դերերում: Հետո սովորեցրել են, որ նրանք նաև խաղան:

Հայերի ներկայությունը երկրի տարբեր պատմական շրջաններում տեղի ունեցած հեղափոխություններում, ասենք սահմանադրական հեղափոխություն, նաև տարբեր պատերազմներում, հայերի ներդրումը կապի և այլ սիստեմների մեջ այնքան հզորացված է տար-

բեր տեղերում, և ամեն տեղ ներկայություն կա, որ ինքնաբերաբար, մեկը եթե հայտնվում է, հարգանք է առաջանում: Մենք հեղափոխությունից առաջ... եթե պարսկական որևէ ֆիլմ էկրան էր գալիս, չէր կարող հայ մարդու անուն չլիներ, նույնը տելեվիզիոնի մեջ, տարբեր-տարբեր տեղեր: Պարսիկ ժողովրդի համար առաջին դասագիրքը հայն է ստեղծել: Բայց այժմ էստեղ ամեն հարցերը՝ սոցիալ-տնտեսական, մշակութային և այլն, բոլորը հայապահպանության ավանդական մեխանիզմից են կախված: Հայապահպանության սիստեմը հիմնված է փակ համակարգի տեսության հիմքերի վրա, այսինքն՝ սիստեմը գետտոյացնում էս, որպեսզի պահես քո ազգային ինքնությունը: Սա գործել ա երևի մինչև անցյալ դար: Երբ որ արդեն հաղորդակցական միջոցները իրենց... հսկայական թռիչքներ են տեղի ունեցել, ինֆորմացիայի փոխանակման մեծ մեխանիզմներ են առաջացել, փակ սիստեմը ընդհանուր դինամիկ միջավայրում սկսում է փլուզվել, մանավանդ, եթե համառում էս փակ պահել: Բաց սիստեմն ա կարողանում զարգացում ապրել: Օրինակ, բաց սիստեմին դուք Հայաստանում նայեք որպես խորհրդային ենթահամակարգ, թե ինչպես երաժշտության բնագավառում ջազի պայթյունի արդյունքում Հայաստանում ծրագրային երաժշտություն ա...»:

«Մենք ազգովի կարծես կորցրել ենք մեր որակները՝ բարդ սիստեմ ունենալու էդ որակները կորցրել ենք: Եվ հիմա իրանահայ համայնքը հայապահպանության գործը դեռ էն նախկին իներցիայով ա իրականացնում: Չգիտենք՝ բաց ենք, փակ ենք: Ես բաց սիստեմ նկատի չունեն հարաբերությունների մի հսկայական ոլորտ պարսիկների հետ և այլն, դա եթե լինի, մեջտեղից կգնանք, բայց մշակութային իմաստով մենք շատ բան ունենք ասելու: Արվեստի բազմաթիվ ճյուղերի ավանգարդները հայեր են եղել:

Իրանի մշակութային աշխարհում մեծ դինամիկա կա, և պետք է բացվես: Օրինակ, մենք բազմաթիվ ազգային-հայրենասիրական երգեր ունենք, բայց մի հատ երգ իրանական հայրենասիրության մասին մեր բոլոր երգերից ավելի մեծ փիլիսոփայություն ա փոխանցում լողդին: Մենք էդ մակարդակի երգ չենք կարողացել հորինել: Եվ սա ինչի մասին ա խոսում, որ մենք փոքր ենք, փակ ենք, և զարգացում չի արձանագրվում: Օրինակ՝ մեր թատրոնն արդեն մահացել է, իրանահայ թատրոնը, որ ժամանակին այս երկրում ավանգարդ ենք եղել: Ես

առաջարկել են էստեղ հայկական դպրոցների աշակերտներին էքսկուրսիա տանել պարսկական թատրոն, որ եթե հայկականն էլ չեն մատուցում, գոնե թատրոնի մշակույթ ձեռք բերի, հասկանա՝ ինչ ա թատրոնը, և եթե սիրի ու ուզենա, արդեն հայկականը կստեղծագործի: Արդեն երիտասարդությունը թատրոն չի գնում, հատկապես դրամա, միայն անմակարդակ կոմեդիա, իրանահայ համայնքի կատակային բան, գնա՛ մի քիչ հոհոա: Մի քիչ տարբեր են պարարվեստը և երգը: Երգչախմբեր, երգիչներ են գալիս Հայաստանից, դա սրահը լցնում ա: Հայ երաժշտությունը դեռ պահպանում ա իրա գրավչությունը, թեև ռաբիգմաբիզները խառնվում են, բայց ես ռաբիզներն էլ եմ սիրում, թող գոնե եղ ձևով»:

«Հաջորդ պահանջը, որ միշտ դնում ենք, հայկական հեռուստաալիքն է, որ մենք կարողանանք մեր դերակատարությունը տարբեր առաջադիմությունների մեջ գոնե..., այսինքն՝ հարաբերությունների մեջ սերտացման նպատակով: Այսինքն, եթե մի օր անպայման հայկական համայնքին տրամադրվի հայալեզու հեռուստաալիք, մենք էդտեղ չենք ուզում տարակարծությունների դաշտն ընդլայնել, մենք անպայման ուզում ենք խոսել միավորման մասին, մշակույթների սերտացման, համագործակցությունների մասին:

Օրինակ, ազերիները երբեմն որոշ նահանգների որոշ հեռուստաալիքների մեջ ունեն որոշ ծրագրեր, որը տրվում է հենց ազերի լեզվով կամ թուրքերենով: Բայց նման հնարավորություն չկա հայերի համար: Ոչ մի հեռուստաալիքում հայկական որևէ հաղորդում չունենք կամ հայալեզու երբևէ ֆիլմ, ծրագիր, գրույց չունենք: Որոշ թեմաներ կան, որ ժողովուրդը և կուսակցությունը նույն կարծիքի են: Օրինակ՝ ապրիլ 24-ը: Թեև իրենք փորձում են ապրիլ 24-ն էլ դաշնակացնել, «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքով, էդ ամեն անցյալով կարելի ա մտածել, թե ինչ քաղաքական ուղղություն ունի, ինչ տրամաբանություն ունի, հետո որ մահանում ա, Հրանտ Դինքի նկարն առնում են ձեռը, որ Դինքին դաշնակացնեն:

Ապրիլի 24-ի համահավաք են կազմակերպում բոլոր քաղաքական ուժերի ջանքերով, բոլոր կառույցների հնարավորություններով ու ջանքերով, ազգային բյուջեն ծախսում են: Համահավաքին վերջը ֆիդայական դաշնակցական երգեր են երգում, դաշնակացնում են համահավաքը: Հաջորդը մշակույթի շաբաթն է, որ կազմակերպվում է բոլորի

կողմից: Նախ և առաջ, մամուլի հրատարակվելը Սփյուռքում ինքնին ... է, որովհետև էստեղ Հայաստան չէ: Երբ որ հայկական հողատարածքից դուրս ես հայկական մամուլ տարածում, ինքնաբերաբար հայ մշակույթը, հայ գիրը, հայ գրականություն ես տարածում: Դրանով ինքնաբերաբար քարոզում ես, հայկական, հայաստանյան լուր ես տալիս հայ մարդուն, հայ մարդկանց միջև հայկական կապ ես պահում, հայ մշակույթի, հայ լեզվի, հայ գրի պահպանման կարևոր դերակատարություն: Պարսկաստանում կինոյի, պարի, թատրոնի, երաժշտության հիմնադիրներն էլ հայերն են: Այսօր այդ դաշտը արդեն հայերը չունեն»:

ՁԼՄ-ները

«Դրա կողքին էսօրվա նաև նոր հասկացողությամբ ինտերնետային կայքէջերի ներկայությունը կա: Դժբախտաբար, մեզ մոտ չկա հեռուստատեսություն, բայց ուղի՞ր կա, որ պետական է, բայց հայերեն ինչ-որ ծրագրեր կան: Որոշ չափով ներկայացնում է հայկական մշակույթը: Այսօր արդեն կան նաև հայաստանյան կանալները, դժբախտաբար իրենց որոշ այլանդակություններով հանդերձ, բայց այդուհանդերձ, բավական ազդել է մեր համայնքի վրա: Կարող եմ ասել բավական փոխվել է, մինչ այդ մեր համայնքում կասեի շատ-շատ բարբառներ ունեինք, հիմա սկսել են բոլորին միատեսակ դարձնել: Մինչ էդ դերակատարում ուներ մամուլը: Հիմա նոր սերունդը, դժբախտաբար, նույն համակարգի հիվանդության հետևանքով, էսպես չի տիրապետում հայերենին, ավելի շատ հանգիստ է խոսում պարսկերեն: Հանդիպեք դպրոցականների հետ և իրենց հետ փորձեք խոսել հայերեն, իրենք կլսեն, կփորձեն հասկանալ, հետո նաև հայերեն պատասխանել, բայց եթե իրենք իրար հետ են խոսում, աղավաղված հայերեն է, պարսկերեն էլ չի, խառնաշփոթ է: Դա որտեղից է գալիս: Հա, մի մասը երկրի ազդեցությունն է, բայց մեծ մասն էլ մեր համակարգի մեջ է: Եթե մարդիկ ճիշտ ձևով չեն սովորում հայերեն, ինչու պիտի մեր նախկին սերունդներն ավելի լավ հայերեն իմանան, քան նոր սերունդը, երբ որ...

«Ալիքը» հիմնադրման օրից ծառայում է դաշնակցական կարիքներին, բայց մենք սկսել ենք շատ փոքր մասշտաբներից, նույնիսկ շենքը շատ փոքր էր ու անմխիթար, բայց աստիճանաբար լավացանք, ու հիմա ամեն բան նորմալ է, ունենք մեր տպարանը, որովհետև մենք, բացի պարբերականից, իրականացնում ենք տարբեր նյութերի տպա-

գրություն՝ գրականություն, գովազդային, նույնիսկ Հայաստանից են պատվիրում, իհարկե, նաև պարսկական նյութեր ենք տպում, եթե հարկ կա: Մա արդեն որպես բիզնես, քանի որ միշտ էլ հավելյալ ֆինանսավորման կարիք կա: Ասեմ, որ վերջերս մեր պարբերականներում սկսել ենք նյութերի պարսկերեն տպագրություն»:

«Թագավորի ժամանակ արևմտամոլությունը շատ էր, և այդ ֆոնին ազգային հարցերը մոլվում էին երկրորդ պլան, իսկ հիմա համեմատությամբ ասեմ, որ թագավորի ժամանակ «Ալիքը» ցրվում էր ամսական 1000 հատ, իսկ հիմա՝ 50000 հատ, որովհետև այն ժամանակ այնքան շատ բան կար կարդալու, անելու...պարզ է, չէ՞: Էս կողմը պետք դիտել դրական: Մեծահասակներն ավելի շատ, որովհետև երիտասարդները դժվարանում են կարդալու հարցում: Մի ժամանակ մենք որպես բողոք փակեցինք մեր դպրոցները, ու դա մեծ փասա հասցրեց մեր երիտասարդներին, այնքան, որ հիմա հայերեն կարդալը երիտասարդության ամենակարևոր խնդիրն է դարձել»:

Հայրենիք-համայնք հարաբերությունները վերաբերում են ազգային պետության ներկայությանը գաղութում:

«Երբ Սփյուռքի նախարարությունը ստեղծեցին, դա շատ լավ ընդունվեց, մի քիչ Սփյուռքն զգաց, որ իրեն բանի տեղ են դնում: Ժամանակին խոսում էին, որ խորհրդարանում պետք է Սփյուռքից մարդիկ լինեն, բայց, իմ կարծիքով, եթե մենք դուրսն ենք ապրում, չենք կարող ներքին քաղաքական որոշումներ կայացնել, բայց մի մոդել պետք է մտածել, ընդունել: Օրինակ՝ երկքաղաքացիությունը լավ որոշում էր, դա եթե մի տասը տարի առաջ ընդունեին, ավելի լավ կլիներ: Սփյուռքի նախարարությունը տալիս է դեսպանատանը, նրանք էլ կրթական խորհրդին, ու նրանք մեզ են փոխանցում, ուղղակի մեզ՝ ոչ, օգտագործում են ուսուցիչները, մեր գրադարանում ունենք, բայց ուղղակի աշակերտին չենք տալիս, պատճառը միայն ուղղագրությունն է: Բայց մենք ծրագրեր, ինչո՞ւ չէ, մենք վերապատրաստման դասարաններ ունենք, տարին մեկ անգամ հենց Սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված՝ ամռանը երեք, թե երկուսուկես ամիս գնում, ուսուցիչներն էստեղ վերապատրաստվում են ու գալիս են այստեղ»:

«Ես կառաջարկեմ գոնե Սփյուռքի նախարարությունը իրա կապը անկախ պահի գոնե կառույցների հետ: Երբ Սփյուռքի նախարարու-

թյունը գալիս շփվում և առաջնորդարանի հետ, առաջնորդարանը ազդված և մեկ կողմի տնօրինությանը: Երբ որ դեսպանությունը շփվում և առաջնորդարանի հետ մենակ, այսինքն՝ Դաշնակցության և իրեն ենթարկված կառույցների: Ինքը չի շփվում էն մարդկանց հետ, որ չեն ենթարկվում զուտ Դաշնակցությանը, թեև համայնքային տարբեր միջոցառումներում ունեն իրենց ներդրումը և համագործակցությունը: Էսօր մեր պետությունն էլ նույն գործն ասում: Փոքրամասնություններին հատկացված պետական բյուջեն, որ ամեն տարի տալիս աս, առաջին մեկ-երկու տարին տվավ առաջնորդարանին, որ նա բաժանի կառույցներին, հետո տեսավ առաջնորդարանն արդար չի բաժանում, հիմա արդեն ամեն կառույցին տալիս և իրան: Էդ ավելի արդար աս»:

«Համայնքի այս կառուցվածքը չի արդարացնում: Եթե չես հարում Դաշնակցությանը, մտնում ես սև ցանկի մեջ: Եվ եթե Սփյուռքի նախարարությունը շփվում է իրենց հետ, իրենք չեն թողնում, որ շփվի սև ցանկի հետ: Այստեղ համահավասար կամ հակակշիռ քաղաքական ուժ չկա: Եվ գերիշխող ուժն անում է այն, ինչ ձեռ աս տալիս իրա քաղաքական շահերին, այլ ոչ թե ազգային: Եվ ժողովրդի հարգանքն ու վստահությունն է պակասում ազգային իշխանությունների հանդեպ: Փազլի կտորների սման պատճառներն օղակ են դառնում, և համայնքը թուլանում է: Սփյուռքի նախարարությունը պետք է էլքեր փնտրի, մանավանդ էն համայնքներում, որտեղ գոյություն ունի մեկ գերիշխող քաղաքական ուժ: Հակառակ ձայնին լսելու մեխանիզմ պետք է մշակվի: Եթե էսօր Հայաստանի Հանրապետությունը, Սփյուռքի նախարարությունը կարողանա էդ մեխանիզմը ճշտի, որ Սփյուռքն էլ մեկ քաղաքական ուժ աս, որ գերիշխում աս, Սփյուռքի նախարարությունը կարողանա գերիշխող ուժի հակառակորդների ձայնն էլ լսի... որ նա անկախ շփվի նախարարության հետ, նամակ ուղարկի, հրավիրի: Օրինակ՝ հայրենիք են հրավիրում, ասում են ամեն համայնքից 10 հոգի գան: Եթե էդ հրավերն էթում աս առաջնորդարան, առաջնորդարանն իրա ուզած 10 հոգուն ընտրում աս, ուղարկում, ասում աս էս Թեհրանի հայ համայնքն աս: Էսօր էս համայնքի մեջ գոյություն ունի 3-4 իրավաբան, փաստաբան: Հայաստանից իրավաբանների հրավեր աս գալիս հայ իրավաբանների տարեկան սեմինարի, առաջնորդարանն ինձ չի տեղեկացնում: Ես դա համարում եմ Սփյուռքի նախարարության մեղքը: Մենք էսօր հայ համայնքի մեջ մարդիկ ունենք, որ որակով, կրթությամբ, մտային կարո-

դությունով, օժանդակության ցանկությունով կարող են Հայաստանի ցանկացած նախարարությանը խորհուրդներ տալ: Դա շատ հանգիստ անտեսվում ա: Եթե պատահաբար ձեզ չհանդիպեի, ձեզ չէին փոխանցի իմ տվյալները, որ հանդիպեք ինձ հետ: Եվ կասեիք, որ ամեն ինչ լավ է, մեզ լավ ընդունեցին, հյուրասիրեցին, լավ խոսքեր ասացին հայ համայնքի մասին:

Շփվեք բոլոր կառույցների հետ: Թե չէ՝ ձեզ կժպտան, կընդունեն, բայց իրական պատկերը համայնքի չեք հասկանա: Եթե ցանկանում ես պատգամավորական ժողովի պատգամավոր դառնալ, որքան էլ պատրաստված լինես, անպայման կուզեն, որ քաղաքական ներկայացուցիչ լինես, էստեղ օրակարգ դառնան իրենց ուզած թեմաները, քվե ստանան իրանց ուզած որոշումները, որ հետո հիմնավորեն, որ ամեն ինչ օրինական ա»:

«Թեհրանում անհրաժեշտություն կա Սփյուռքի նախարարության ներկայացուցչի ներկայության: Սակայն պետք է լինի գործնական: Օրինակ՝ Սփյուռքի նախարարությունը ունի կայքէջ, որով կապ է պահում բոլոր համայնքների հետ: Բացում ենք այդ էջը՝ իրանահայության մասին ոչինչ չկա: Մի երկու խոսք «Ալիքից», մնացած ոչինչ չի ներկայացված: Եթե այդ ներկայացուցիչը Թեհրանում լիներ, ապա իր ասելիքը կունենար: Ամեն միություն տարվա մեջ 3–5 միջոցառում, եթե ոչ ավելի, ունենում է, եթե ամենքից մի 5 տողով զեկուցվեր այնտեղ այդ նախարարության ներկայացուցչի կողմից, ապա արդեն կլիներ տեղեկություն: Միությունն էլ, տեսնելով, որ իրեն անդրադարձել են Հայաստանում, կսկսի ավելի ոգևորված գործել: Դրա պատճառով է, որ գնալով խամբում են համայնքի միությունների միջոցառումները, մասնակիցների նույն դիմագիծն է, չի թարմացվում և նորացվում: Այդպես չպետք է լինի: Սփյուռքի նախարարությունը պիտի կարողանա ընդգրկել սփյուռքյան ակտիվ կյանք նրանց, ում մենք չենք կարողանում ընդգրկել՝ տնտեսական, ազգային, ճարտարապետական նկրտումներով: Յուրաքանչյուր մարդ իր մասնագիտությամբ կարող է ձգվել դեպի Հայաստան: Կարծում եմ՝ այդ համաժողովների գաղափարը (ոսկերիչների, իրավաբանների ...) շատ լավ էր, պետք է, որ ավելի հաճախակի դառնան: Անընդհատ հավաքներ պետք է արվեն՝ ուսուցիչների, երիտասարդների, և այն, թեկուզ փոքր մասշտաբով, բայց պետք է: «Արի տունը» հրաշալի ծրագիր է, որը, սակայն, պետք է ավելի կատարելա-

գործել, հարմարացնել: Օրինակ՝ հասակակից աղջկան տանել իրեն հասակակից աղջկա ընտանիք, սա արդեն հարմարեցում է, քանի որ այստեղի կրոնում մեծացող աղջկան եթե տանում ես մի ընտանիք, որտեղ տղա է ապրում, արդեն այդ աղջիկն իրեն անհարմար է զգում, և դա ստիպում է նրան էլ չդիմել այդ ծրագրին: Սփյուռքի նախարարության անելիքը հիմնական՝ մեծ համայնքներում գործող ներկայացուցիչ ունենալ, որպեսզի Սփյուռքի ձայնը փոխանցվի Հայաստան»:

«Հայաստանի բախտը չպետք է լինի բախտախնդիր մարդկանց ձեռքում, թեկուզ դրանք լինեն պետական գործիչներ, թեկուզ կարողացած լինեն պետական լծակներին ձեռք զցել: Պետությունը պետք է վաստակի վատահոյությունը քաղաքացիների. եթե 20 տարի ուներ ժամանակ և չի վաստակել, նշանակում է էստեղ ինչ-որ խնդիր կա: Էսօր Հայաստանում ժողովուրդը գիտե՞ք ինչից ա անհանգիստ՝ անարդարությունից: Ինչ հայապահպանում: Էսօր Հայաստանը դատարկվում ա: Մենք ինչպե՞ս կարող ենք Սփյուռքին ասել՝ եկեք Հայաստան: Տիկին Հրանուշն ինչպե՞ս է ասում՝ ժողովուրդ, եկեք հայրենիք: Մեկն ասի, որ դրանք գան՝ ի՞նչ պիտի անեք: Ասում եք՝ արի տուն, բայց տնավորներին թողել եք դուրս»:

«Եթե մենք էս հարցերին չնայենք, չենք կարող: Մեր էս համայնքի ներսը մարդիկ կան, որ մի տեղ աթոռ, պաշտոն ստանան, բայց նույն սխալը չպիտի կրկնենք: Եթե էսօր Հայաստանը կամ Սփյուռքի նախարարությունն ուզում ա էս մեթոդով աշխատել, ես կառաջարկեմ փող չվատնեն, Երևանի երկու դպրոց Հայաստանում ավելացնեն, աշխատեն, մենք չենք նեղանա, բայց էս ինչ որ անում ա, արդյունք չունի: Վերջերս Սփյուռքի նախարարությունից հրավեր էր մի ժողովի, որտեղ նախապես հայտագիրը պատրաստ ա: Էսպես մենք տեղ չենք հասնի: Մեր էներգիայի մեծ մասը պետք է ծախսենք այլ բանի»:

«Նաև կուզեի շեշտել Սփյուռքի նկատմամբ քաղաքականություն մշակելիս Հայաստանի կառավարությունը չկրկնի նախորդ սխալները: Որպես նման օրինակ՝ կարելի է բերել հայրենադարձության կազմակերպման ժամանակ, երբ հաշվի չէր արվել դրա հետևանքները գաղութների համար: Այսպես, իրանահայերի ներգաղթ Հայաստան որ կազմակերպվեց 46-ին, իրականության մեջ ամենամեծ վնասը մեզ հասցրեց: Ինքն իրեն երևույթը սիրուն էր, բայց իրա խորքը, ես կասեի՝

նույնիսկ աղետալի: Ամեն գյուղական մեր շրջանները քանդվեցին, որովհետև թողան իրենց համայնքները, եկան մեծ քաղաք, չհարմարվան, հետո մեծ մաս նաև քաղաքներից եկան Հայաստան, բայց էն տեղեկությունները, որ մենք ունենք, դրանց մեծ մասն արդեն Հայաստանում էլ չէ, այսինքն՝ այնտեղ էլ չհարմարվան, չկարողացան հաղթահարել դժվարությունները:

Եվս մեկ հարց կա, որ Սփյուռքի նախարարության պարտականությունն է: Սփյուռքի առաջնահերթությունն ինչ ա, Սփյուռքից ինչ ենք սպասում: Հիմնական բանը հայապահպանությունն է, որ Սփյուռքը կարողանա իրեն հայ պահել: Հիմա Սփյուռքը բաղկացած ա տարբեր գաղութներից՝ նախկին Խորհրդային Միություն, Միջին Արևելք, Եվրոպա, Ամերիկա: Իսլամական Միջին Արևելքի համայնքները մի քիչ ուրիշ ձևի ա, բայց հիմնականը բոլորի մոտ հայապահպանումն ա: Պետք է իմանանք, որ մշակույթն ինչքան դեր ունի էդտեղ, պետք է իմանանք, որ հայապահպանումն ինչ կետերից ա բաղկացած. արդյոք միայն հայերեն սովորելով կարո՞ղ են հայ լինել, արդյո՞ք հայկական հարցի հետապնդումն է հայ լինել: Սա շատ կարևոր ա: Մե տեղ կրոնն ա կարևոր, մե տեղ...: Սփյուռքի մեջ հայ մարդը իր իրավունքների, իր իդեալների, ասում ենք հայկական հարց, դա հայապահպանում ա, եթե Սփյուռքում խոսում ենք Արևմտյան Հայաստան, խոսում ենք եղեռն, դա ամենը հայապահպանում ա»:

Հայաստանի մասին պատկերացումները

«Հայերն այս երկրում շատ հայրենասեր են, Հայաստանը սիրող են, և վերջին կետ տեսնում են իրենց համար Հայաստանը: Եթե 15–20 տարի առաջ լինեիք այստեղ, կտեսնեիք, որ Հայաստանի օրենքների առումով չպաշտպանված լինելը, տնտեսական կացությունը այս համայնքի վրա էլ ազդել է: Տպավորություններն իսկապես փոխվում են, մասնավորապես որ էստեղի և Հայաստանի միջև կապը կա: Կան ընտանիքներ, որ տարին երկու-երեք անգամ գնում են Հայաստան, և իրենց տպավորությունները փոխվում են: Բայց սրա կողքին այն հիմնական քարոզչությունը, որ տարվում է Հայաստանի նկատմամբ, այն է, որ Հայաստանը մեր հայրենիքն է, մեր երկիրն է: Իմ ուսուցիչն ինձ ասում էր՝ երեք սերունդ, որ փոխվի, Հայաստանը ոտքի կկանգնի, բայց պետք է դիմանալ երեք սերունդ: Տեսեք, ես Հայաստանում թե դասավանդել եմ... երկու տարբեր մասնագիտություն ունեմ, բազայինը ինժեներա-

կան կրթությունն ա, իսկ երկրորդը՝ պատմություն, և Հայաստանում էս գծով դասավանդել եմ. և՛ պատմության գծով ուսանող եմ եղել, և՛ երեխաներս էլ էստեղ արդեն դպրոց են հաճախում: Դրա համար իրավունք եմ վերապահում ինչ-որ համեմատություն անցկացնելու: Նախաբուհական կրթությունը Հայաստանում ավելի լավ հիմքերի վրա է դրված»:

«Հայերը սիրում են, շատ ենք սիրում, մենք շատ ավելին ենք սենց ջիղ դնում Հայաստանի համար, որ վայ, մեր երկիրն է, վայ, մեր Մասիսն է, վայ, մերն է, քան Հայաստանի հայերը, իհարկե, ոչ բոլորը, էդպես է: Մենք, անձամբ ես, Հայաստան գալիս եմ, ինձ ասում են՝ էս ինչ լավ եք հայերեն խոսում, ասում ենք, որովհետև հայ ենք, չեն հավատում, ես դա նկատել եմ: Եթե հայրենիքը մեր կարիքն ունենա հաստատ... հիմա գուցե մի քիչ վատ ա էս, որ մեզ ասում են՝ ինչո՞ւ չեք տեղափոխվում, ասում եմ, որ ամուսնուս աշխատանքն այստեղ է, ասում են՝ էստեղ հանգիստ ես ապրում, դրա համար էլ չես գալիս, արի էստեղ, դժվար ապրի, բայց մենք ծնվել ենք այստեղ, մեծացել ենք, գործ ենք դրել այստեղ, ու մեր տարիքը չի ներում քանդել ամեն ինչ ու գնալ, այսինքն՝ էնպես չի, որ ստեղ հեշտ ա, էստեղ դժվար, բայց սիրում ենք հայաստանցիներին էլ, ուղղակի նրանք եթե մեզ վատ չվերաբերվեն, ավելի լավ, մենք մի քիչ նեղանում ենք դրանից: Օրինակի համար ասեմ, որ պարսկահայերը շատ են օգնում Հայաստանին, բայց երբեք ոչ մի տեղ ո՛չ գրվում, ո՛չ ասվում է այդ մասին, միշտ Ամերիկայի, միշտ Ռուսաստանի հայերն են երևում ձեզ մոտ, պարսկահայերն ընդհանրապես վերջինն են, չգիտեմ ինչու: Օրինակ՝ անցյալ շրջան դիվանի անդամ էի, ներկա եմ եղել, Լեոնաձոր մեր պատվիրակության հետ գնացինք, սահմանամերձ գյուղ, էստեղ իրանահայ մի կնոջ օժանդակությամբ ամուսնու հիշատակին մի դպրոց հիմնվեց, ամբողջ սարքավորումներն էստեղից նվիրատվություն եղավ, տրակտորներ, չգիտեմ էլ ինչ, էստեղից բանվորներ տարան՝ քարերը մաքրեցին, ջուր քաշեցին: Դրանք ամենը մի օգնությունա եղել, կամ գազը, բայց չգիտես ինչու մեր անունը քիչ են հոլովում»:

«Հայաստանը մեր բոլորիս տունն է, դուք չեք պատկերացնի, մենք այստեղ ապրում ենք մեր եռագույնով, մեր գերբով, նույնիսկ այն օրերին, երբ այստեղ դաշնակցականներին մատնում էին, այն հույսով, որ մի օր Հայաստանը անկախանալու է, և այստեղից մի խումբ միություն-

ներից, կազմակերպություններից, որոնց անունը չեմ կարող նշել, շատ մարդիկ են գնացել և՛ Ղարաբաղյան պատերազմին, և՛ քաղաքական հեղափոխություններին: Հիմա, որ Հայաստանի իշխանությունները կանչում են՝ արի տուն, չեմ ուզում վիրավորել, բայց արժանի են, սկսած Տեր-Պետրոսյանից մինչև հիմա, ում գլուխը կտրես, ոչինչ չես փոխի, այսինքն՝ հարցը արմատապես պետք է փոխվի: Վարչակազմը, արդարադատությունը պետք է անկախ լինեն: Ես եթե գնամ Հայաստան, ինչը պիտի քաշի ինձ որպես հայ մարդ: Նախ և առաջ՝ հզոր տնտեսությունը, նորմալ օրենքների երկիր է, դատական իշխանություն, օրենսդիր իշխանություն, դրանք բոլորն իրար հետ են: Հայրենիքն ուզում ենք դեպի իրեն քեզ կանչի, դրա համար պետք ունի գրավչության: Գրավչությունը միայն Հանրապետության հրապարակը չէ: Դա տուրիստական գրավչություն է: Հայ մարդու համար գրավչությունը, որ գալիս են, պիտի կարողանա աշխատի, ընտանիք պահի: Այսօր դա գոյություն չունի: Հայաստանցին դա չի հասցնում անել, անգամ համալսարանի դասախոսները, էլ չասենք հասարակ ժողովրդի մասին: Էնտեղ կան մարդիկ իրենց յուրահատուկ սեփականաշնորհումներով, իրենց մոտեցումներով: Էստեղից շարժվելու համար մարդուն որոշակի հույս պիտի ցույց տաս, այդ հույսը դժբախտաբար չի երևում»:

«94–95-ից հետո որոշ աշխուժություն ստեղծվեց պարսկահայ համայնքից դեպի Հայաստան, բայց շատ արագ նա կտրվեց: Էսօր, իհարկե, կան պարսկահայեր, որ գալիս են, հիմնականում Երևանում, բայց դա էն չի, որ պիտի լինի: Կան հայաստանյան ներքին խոչընդոտներ՝ մաֆիական գետնից սկսած՝ վերջացրած մինչև պետական չստեղծվող դյուրությունները, որ կարող են հայ մարդուն պահել Էստեղ: Մյուսը, էդ մարդը, որ Էստեղ ապրում ա, ուզում ա գնա այլ երկիր, որ հանգիստ ապրելու հնարավորություն ունենա: Անկախ ամեն ինչից՝ Էստեղ ունեցել է որոշ սեփականություն կամ խանութ, կամ գործ, հանգիստ ապրել ա, կարողացել ա իր եկամուտով ապրի և ունեցել ա ապագայի իր ստանալիք կենսաթոշակը: Էսօր էպիդեմիայի նման տարածվել ա մարդկանց մոտ շարժում, որ գնան, ու էդ շարժումից դեպի Հայաստան չկա, ամերիկյան ու եվրոպական ուղղվածություն ունեն: Չենք կարող աչքներս փակել ու չասել, որ այնտեղ լավ հնարավորություններ կան: Նորմալ տնտեսություն ա, մարդիկ գնում են, տեղավորվում են, չեմ ասում փայլուն գործերով են զբաղվում, զբաղվում են պիցցա բա-

ժանելուց՝ սկսած մինչև գետին լվանալ և այլն: Եթե Հայաստանում կստեղծվեն նորմալ, օրենքով պայմաններ, հայ մարդը կգնա Հայաստան: Մարդուց միայն հայրենասիրական ոգով Հայաստան շարժվել պահանջելը ճիշտ չի:

Մեր դպրոցներում հայոց պատմություն է դասավանդվում: Պատմությունն էդ տեսակ դասավանդելը մարդկանց մոտ թույն ա առաջացնում, կտրում ա հայրենիքից: Իսկ եթե դու քո հայրենիքը չես սիրում, օտարը հողը ոնց կսիրես: Օտար հողում ասում են՝ մենք էստեղ հյուր ենք, իրենցն ա, ինչ ուզում են անեն: Բայց էստեղ մենակ իրենցը չի, դու էստեղ ապրում ես 400 տարի, իսկ նախնիները դարեր ապրել են այստեղ: Ո՛վ է ասում, որ դու իրավունք չունես: Եթե էս երկրի համար դու արյուն ես տվել, ուրեմն քո արյունը հավասար է մյուսի արյան հետ: Հեղափոխությունից հետո երկար տարիներ տևեց, մինչև կարողացանք ապացուցել, որ հայի արյունը նույնն է, ինչ որ մուսուլմանինը:

Բայց այս հարցում ով որքան է մեղավոր: Մենք մեր մեղքի բաժինն իրավունք չունենք թաքցնելու: Եթե դու չես պահանջում, իշխանությունը քեզ իրավունք չի տա: Հայաստանում էսօր հաստաբազուկ անխելք մարդիկ գիտեն՝ ոնց կառավարել երկիրը, մարդիկ թող ցույց չաւեն»:

Մասնակցությունը Հայաստանի կյանքին

«Ես հիմա հաճախ եմ լինում Հայաստանում, համեմատած էստեղի՝ շատ լավ է, իհարկե, Եվրոպայում էլ Հայաստանից են առաջ: Մենք ունենք հայաստանավարտ ուսանողներ: 15–17 տարի առաջ բավական աղջիկներ ավարտան մանկավարժական, որևէ մեկը մեր դպրոցներում չվարձատրվեցին: Իրենք գնացին ուրիշ մասնագիտությամբ զբաղվելու: Հայ մարդը Սփյուռքում, նամանավանդ Միջին Արևելքում, Հայաստանի շուրջը մնալու, Հայաստանին հզորացնելու...»:

«Լավ բան էր սկսվել մի քանի տարի առաջ դեպի Հայաստան գալու և բարձրագույն կրթություն ստանալու, որ, ցավոք, չշարունակվեց, և դրա մեջ կա հետևյալ պետական արգելքը, որ եթե Իրան ա գալիս, Հայաստանի շատ բուհերի դիպլոմը չի անցնում կամ անցնում է պայմանականորեն, այսինքն՝ պետք է քննություններ հանձնել նոր և այլն: Ոչ միայն հայերը, շատերն են գնացել Հայաստան, մեծ թիվ են կազմում էդ ուսանողները՝ պարսիկ, ադրբեջանցի և այլն: Ես էլ եմ մեր ակադեմիայում ավարտել: Ամեն դեպքում, հիմա չկա էդ, պակասել ա:

Բնականաբար, քաղաքական ևս, բայց գիտեք, մի բան, որ մեզ մոտ զգալի ա ու երևում ա, Հայաստանում արդեն իրենք իրենց քաղաքականության մեջ բավականին խնդիրներ ունեն, այսինքն՝ մեր միջամտությունը միգրացե այնքան էլ նպատակահարմար չի: Բայց ինչու չէ մենք ունենք բավականին քաղաքագետներ և այլ լավ մասնագետներ, որ բնակվում են Հայաստանում, և էդ կուսակցական առումով ամբողջությամբ կապի մեջ ենք, ու դասախոսություններ են հաճախ կազմակերպվում այստեղ՝ Հայաստանից եկած քաղաքագետների հետ»:

«Իրանահայ համայնքի մասնակցությունը հայ-իրանական հարաբերություններում զուտ քաղաքական կամ միջպետական հարաբերություններում երևի էդքան տեսանելի չէ: Առաջին հայացքից էդպես մասնակցություն երևի չի նշմարվում: Բայց ունի իր երկրորդական նշանակությունը, այսինքն, երբ որ համայնքը կազմակերպված է և այլն: Պատկերացրեք, օրինակի կարգով ասեմ, պետական պատվիրակություն գալիս ա այստեղ, պետական առաքելությամբ և նպատակով, իսկ հետո կողքից այստեղ համայնքում հյուրընկալվում է, կամ Իրանի պետական պատասխանատուները հատուկ նպատակով էս պատվիրակությանը բերում են հայկական միություններ, եկեղեցի և այլն: Եվ սրա տպավորությունը միանգամից տարբեր է լինում: Եվ իհարկե, մեջտեղում լինում են բավականին խոսակցություններ, մտքերի փոխանակում, որոնք անուղղակի ազդում են էդ հարաբերությունների վրա: Էդ իմաստով իսկապես մեծ նշանակություն ունի իրանահայ համայնքը, և կարողանում ենք մենք Հայաստանի համար անել այն, ինչ հնարավոր է: Փորձում ենք դրական բաներով: Թեև ասեմ, որ պետությունը հայության և Հայաստանի նկատմամբ բավականին դրական է և՛ պատմականորեն, և՛ հատկապես հիմա, և սա կապ չունի, թե ով է նախագահը կամ ռեժիմը: Դա Իրանի պետական քաղաքականությունն է Հայաստանի և հայության նկատմամբ: Ինչո՞ւ եմ ասում Հայաստան և հայություն, որովհետև երկու հարթություններ են: Պետությունն ունի իր մշակված դոկտրինը, այսինքն՝ նա կարողանում է հասկանա, թե Հայաստանը, ինչպես հարևան, կարևոր հարևան, ոչ միան բարիդրացիական սկզբունքներով է մոտենում Իրանին, այլ նաև որպես մի երկրի, որն ունի ատոմային, միջուկային տեխնոլոգիա: Միշտ իրենք ընդգծում են, որ մեր բազմաթիվ մուսուլման հարևանների համեմատությամբ քրիստոնեական Հայաստանն ունի հատուկ տեղ և դիրք: Իսկ հայու-

թյանը նրանք մոտենում են որպես պատմականորեն հարևան ազգ, հայության միջոցով փորձում են մի շարք իրենց քաղաքական խնդիրները լուծել համաշխարհային բեմի վրա: Եվ իհարկե, որպես հարուստ պետական փորձ ունեցող համակարգ, Իրանի պետությունը էդ հնարավորությունները բաց չի թողել երբեք և հիմա էլ փորձում է ռեսուրսներին նայել ավելի դրական աչքով: Հետևաբար, Հայաստանի ու հայության նշանակությունը շատ մեծ է: Էս ընդհանուր նպաստավոր ոլորտում, իհարկե, մենք՝ իրանահայերս էլ ակտիվ ենք փորձում մեզ պահել: Օրինակ՝ Քեսաբի հարցով մենք բան արեցինք, և, հայության հետ կապված պահով, պիտի ասեմ, որ Իրանի պետությունը, օրինակ՝ քեսաբահայության հարցով, ունի իր հատուկ դիրքորոշումը, մտահոգությունները և հնարավորություն է տալիս, որ իրանահայությունը իր ձայնը միացնի մյուսներին:

Քեսաբի վիճակը մանրամասնությամբ քննարկվեց, և նաև ես էլ իմ խոսքի բաժնում հատուկ շեշտեցի, որ ՀՀ նախագահը անմիջական ռեակցիա տվեց և հարց հնչեցրեց, հետո ամբողջ դիվանագիտական կորպուսը ՀՀ-ի, Ազգային ժողովը պատվիրակություն ուղարկեց, մի խոսքով, էս միասնական մթնոլորտն ստեղծվեց: Եվ բավականին, ես կարծում եմ, դրական փորձ էր սա, որ մենք կարողանանք ևս մեկ անգամ ապացուցել համազգային կամքը և միաբանությունը: Մենք կարողանում ենք հաճախ նաև պրոյեկտներով հանդես գալ Իրան-Հայաստան հարաբերություններում: Ասեմ, որ ՀՀ-ից եթե նախարարներ, բաներ են գալիս, լավ ավանդույթ է ձևավորվել՝ անպայման դիմում են հայության և կրոնական փոքրամասնության պատգամավորների հետ հանդիպման: Մեջլիսում այս կապակցությամբ արդեն մի քանի հանդիպումներ են տեղի ունեցել:

Ասեմ նաև, որ իմ կողման՝ պրն Ռոբերտ Բեգլարյանը, և ես Իրան-Հայաստան բարեկամության խմբի անդամ ենք, Բեգլարյանը փոխնախագահն է այդ խմբի: Իհարկե, այդ խումբը միայն Իրան-Հայաստան բարեկամության խումբ չի, մինևույն Սփյուռքի կուսակցական գանգավածը ցանկություն ունի Հայաստանում իշխանության մեջ լինի, ոչ կուսակցական Սփյուռքը նման ցանկություն չունի: Այսօր դրսում ցանկացած կուսակցություն ուզում է ունենալ մասնակցություն, եթե այսօր նրանցից ցանկացածին էլ դիմես, կգա մեծ սիրով իշխանության գլուխ Հայաստանում: Բայց մի խնդիր կա այստեղ: Յուրաքանչյուր մարդ, ով գտնվում է տվյալ հողի վրա, նա իրավունք ունի տնօրինելու երկրի ճա-

կատագիրը: Օրինակ՝ այսօր մենք ունենք երկքաղաքացիության օրենք, երկքաղաքացին նստած է Թեհրանում, ինչքանով այդ մարդը բարոյական իրավունք ունի մասնակցելու Հայաստանի նախագահական ընտրություններին: Նա ապրում է Թեհրանում, այստեղ օգտվում ամեն ինչից, ծառայում է Թեհրանին, ինչպես պետք է նա... կարող է նա իրեն թույլ տա գնալ և Հայաստանի նախագահի համար ձայն տա: Եթե ես այստեղից մի որևէ քաղաքական ռիսկի դիմեմ Հայաստանի համար, միևնույն է, չեմ պատժվելու, ինչքանով է դա ճիշտ:

Իրանահայերի մեծ մասը նախքան Ամերիկա գնալը փորձում է գալ Հայաստան, ինչ-որ իմաստով, գոնե տեղեկությունների իմաստով մտածեն էն մասին, որ կարող են Հայաստանում ինչ-որ բան հաստատել և այլն: Բայց գիտեք, Հայաստանում էլ սոցիալ-տնտեսական վիճակը էսպիսին չի: Մանավանդ պարսկահայերի համար, ես որովհետև էնտեղ ապրել եմ շուրջ 8 տարի, ընտանիքս դեռ էնտեղ է, չեն էլ պատրաստվում վերադառնալ, բայց Հայաստանում կա նաև խտրականության ահավոր վիճակ: Խտրականություն ոչ միայն քաղաքացիների միջև, այլ նաև դրսեցիների: Պարսկաստանից հայեր, որ գնում են էնտեղ, հաստատ բողոք ունեն: Նրանք, որ ավելի դիմացկուն են, ավելի շան երես ունեն, մի քանի անգամ դեռ դիմանում են, իսկ նրանք, ովքեր չունեն, ամեն դեպքում թողնում են և ահավոր հուսալքված անվերադարձ կերպով թողնում են, հեռանում են դեպի Ամերիկա: Ահագին պարսկահայերի գիտեմ, որ Հայաստանից են գնացել: Դրանց վիճակն ամենավատն է, որովհետև նրանք արդեն ծայրահեղ հուսահատությամբ են գնացել»:

Մասնակցություն Հայաստանի տնտեսական կյանքում

«Սա կախված չէ Հայաստանի իշխանություններից: Բայց իշխանություններն էնքանով են մեղավոր, ինչքանով որ չեն փորձում գոնե մի բան անել կամ շատ քիչ են փորձում: Բայց եթե նույնիսկ լավ իշխանություններ էլ լինեին, էլի մենք էս նույն պրոբլեմները կունենայինք:

Հայաստանցին չի ընդունում սփյուռքահային, սփյուռքահայն իր մեջ ունի ներքին խնդիրներ՝ լիբանանահայ, պարսկահայ: Հայաստանցին ունի գյումրեցու, երևանցու խնդիր, դարաբաղցու հատկապես: Տնտեսական կյանքի մասին մեր դիտարկումները հիմնված են անհատական փորձառության վրա: Եթե ուզենանք մի փոքր պատմական անդրադարձ անենք, ապա պետք է ասեմ, որ սփյուռքահայության հա-

մար, ինչու ոչ նաև իրանահայության համար, Հայաստանի ընկալումը առասպելական է եղել, զգացական: Դա պատճառ դարձավ, որ առաջին քայլով բոլորը փորձեցին մոտենալ դեպի Հայաստան, ներդրումներ կատարել, ընտանիքներ տեղափոխվեցին և այլն: Բայց երկու հիասթափության փուլ ունեցան, առաջինը բնականաբար դժվար տարիներն էին, որ բոլորի համար էին դժվար, և զուգահեռ դրան՝ Հայաստանում կարծես շուկայական հարաբերությունները՝ քիչ ավելի անկաշկանդ մոտեցումով: Այս իսկ պատճառով շատերը տուժեցին: Նաև զուգահեռ դրան՝ իրանցի, այսինքն՝ ոչ հայ առևտրականները վսաս հասցրին իրանահայությանը, մեկը այն, որ ծանոթ չէին մթնոլորտին և միջավայրին և անորակ ապրանքներով Հայաստանի սպառողներին հուսալքեցին և հուսահատացրին, և մյուս կողմից՝ այդ տնտեսական հարաբերությունները, որ հիմնված չէին իրավական հարմար դաշտի վրա (խախտումներ, չարաշահումներ), երևան եկան: Իսկ այժմ իրանահայերը ավելի զգոն են մոտենում: Թեպետ բոլոր գործարարներն էլ, ինձ թվում է, ցանկություն ունեն Հայաստանում ինչ-որ գործ դնելու, և շատերն էլ անում են: Ամենահաջող բնագավառը, որ եղել է անցած 10–15 տարիներին, հավանաբար բնակարանաշինությունն էր, շինարարությունը: Այլ բնագավառներում իրանահայերը հազվադեպ են հաջողվել Հայաստանում:

Իհարկե, Հայաստանը քայլ առ քայլ ավելի է զարգացնում բիզնես միջավայրը, ստանդարտները բարձրացրել է, ինչը Իրանում չի եղել: Ենթադրենք հարկային դաշտը, Իրանում ավելի շատ ճկունություններ կան, որոնցով կարող են հարկից փախնել ժողովուրդը: Բայց նաև հարաբերությունների առումով զգում են, որ ավելի հեշտ է: Հայաստանում հարկային պատասխանատու պաշտոնյան ավելի կարծր է մոտենում հարաբերություններին: Եթե մտածենք, որ հարկային դաշտում խարդախություններ կան, կաշտակերություն կա, ապա նույնն էլ Իրանում կա: Բայց գուցե գոեհկությունը պակաս է, կարողանում է իրանահայը լեզու գտնել, և ճշումը ավելի քիչ է էստեղ՝ թե՛ ֆինանսապես, թե՛ բարոյավարչական տեսանկյունից: Իսկ Հայաստանում իր վրա ավելի մեծ ճշում է գործադրվում:

Այսօր Հայաստանում բիզնես գրանցելը շատ ավելի հեշտ և արագ է, քան Իրանում, սակայն հետո շատ ավելի մեծ դժվարություններ են առաջանում: Իրանում այդպես չի, և մենաշնորհներ չկան, շուկան ահռելի մեծ է, և տարբերակները շատ են, մենաշնորհային մթնոլորտը

չկա: Պաշտոնապես չունենք, մի՞թե Առևտրային պալատն է: Ինչպես Հայաստանում է մենաշնորհային, էստեղ էլ ով Առևտրի պալատի անդամ է, նա էլ կկարողանա կազմակերպել իր գործունեությունը առևտրի ոլորտում: Առանձին անհատ ներդնողի անհաջողության պատճառ կարող է լինել ուսումնասիրված շուկայի բացակայությունը: Շուկան իբրև ինստիտուտ դեռ չի ձևավորվել: Բայց մի խնդիր կա այստեղ: Յուրաքանչյուր մարդ, ով գտնվում է տվյալ հողի վրա, նա իրավունք ունի տնօրինելու երկրի ճակատագիրը: Օրինակ՝ այսօր մենք ունենք երկքաղաքացիության օրենք, երկքաղաքացին նստած է Թեհրանում. ինչքանով այդ մարդը բարոյական իրավունք ունի մասնակցելու Հայաստանի նախագահական ընտրություններին: Նա ապրում է Թեհրանում, այստեղ օգտվում ամեն ինչից, ծառայում է Թեհրանին, ինչպես պետք է նա... կարող է նա իրեն թույլ տա գնալ և Հայաստանի նախագահի համար ձայն տա: Եթե ես այստեղից մի որևէ քաղաքական ոիսկի դիմեմ Հայաստանի համար, միևնույն է, չեմ պատժվելու, ինչքանով է դա ճիշտ: Սակայն ժամանակին ներգաղթյալներին ինչպես վերաբերվեցին, ինչպես կթան կովի: Մարդիկ գալիս էին Հայաստան մեծ գումարներով, բայց նրանց խաբեցին տարբեր ձևերով: Իսկ Միացյալ Նահանգները ինչ քաղաքականություն ուներ. տանում էր քաղաքական դժգոհներին: Եվ այն մարդիկ, որոնք Պարսկաստանում ավելի քան 400 տարվա կարոտով եկել էին Հայաստան, տեսան, թե ինչ պայմանների մեջ են հայտնվել: Եվ փոխարեն էս ամենը կարգավորվի, ավելի է վատանում: Երբ Հայաստանում պետականությունը հաստատվում է, այն պետք է ծառայի պետության նպատակին և ոչ թե անդամների նպատակներին: Պետականությունը ազգային նպատակի պետք է ծառայի: Հայաստանում, ցավոք, դա վերջին տեղում է: Հայաստանում այսօր չկա վերահսկողություն խաբեությունների նկատմամբ. դա պետք է իրականացնի Հայաստանի նախագահը»:

«Եթե մարդը վստահում է հայրենիքին ու, վերցնելով իր ունեցածը, գնում է հայրենիք, ապա հայրենիքը պետք է հոր պես տիրություն անի: Չի կարելի, որ ինչ-որ մեկը՝ գործարար կամ կյանքի վաստակ ունեցող մեկը, ամեն ինչ վերցնի գնա Հայաստան, ներդրում անի այնտեղ և 5 տարի հետո կորցնի ամեն բան: Չի կարելի այսօր հայաստանցի մարդու նկատմամբ այդ պատկերացումը ստեղծել: Տարիներ շարունակ պայքարած հայաստանցու մասին այսօր խաբեբայի, ստորի և գո-

դացողի պատկերացում ունեն դրսում:

Հաճախ մարդիկ հարցնում են՝ ինչ անել, երբ ուզում են գնալ Հայաստան ներդրում անելու: Լավ, ինչպես վարվի մարդը, եթե նա գումարը վերցնում գնում է Հայաստան, ապա այդ գումարը պետք է երաշխավորված լինի: Մարդը պետք է կարողանա աշխատացնել այն, մի քանի հոգու աշխատանք ստեղծի, ինքն էլ իր ընտանիքը պահի և շահի էդտեղից: Այդ պրոցեսի տևականությունը երաշխավորված չէ: Հայաստանում մարդը գնում է, գործ է դնում, աշխատացնում է, ապրում է, սակայն կողքից որոշները պիտակավորում են, թե հարի՜ք սփյուռքահայ է, այդ արտահայտությունը չի ասում հասարակ քաղաքացին, ժողովուրդը, հայաստանցի պաշտոնյա պատասխանատուն չի ասում, Հայաստանի մի չորս «խարոշիներն» են ասում: Բայց այդ «խարոշին», որ այդ վնասը հասցրելա, կարող է լինել ցանկացած ոլորտում՝ պետական համակարգում լինի, չինտելիկ լինի և այլն: Եվ դա ի վերջո արժեզրկում է պետականությունը: Այստեղ եթե մարդիկ դեռ չեն արտագաղթել, միայն Հայաստանի հույսով են: Հուսով են, որ մի օր Հայաստան կվերադառնան, երբ օրինական դաշտը կպարզվի մարդկանց առաջ»:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԵՐԸ՝ ԲԵՅՐՈՒԹ

Փորձագետներ (բարձրագույն կրթությամբ, 30–60 տարեկան)՝ Հայ դատի գրասենյակի աշխատակցուհի, հայկական դպրոցի մանկավարժ, բարեգործական միության գրասենյակի աշխատակից, Հայ առաքելական եկեղեցու եպիսկոպոս, կուսակցական գործիչ, լրագրող, մանկավարժ, Լիբանանի Կաթողիկե Մեսրոպեան վարժարան, ձեռնարկատերեր, հայկական թերթի տնօրեն:

Հարցազրուցավարներ՝ *Լուսինե Տանաջյան, Սոնա Ներսիսյան:*

Հարցազրույցները վարվել են 2015 թ. Բեյրութում, Անջարում և Լիբանանի այլ հայաշատ վայրերում:

Հարցազրույցների կյուբեր

Ընդհանուր պատկեր

«Լիբանանը համայնքային դրուածքով և սահմանադրութեամբ երկիր է: Այստեղ ուրիշ ձևով դեմոկրատիա կայ: Համայնքների միջև ինչոր հաւասարակշռութիւն պահպանելու ճիգով պատրաստուած տրամադրութիւն է, այլապէս եթէ հաւասարակշռութիւնը խախտուի, ուրեմն բախումների, պատերազմի կը գնան: Արուեստական վիճակ է, համեմատութիւնները խախտուել են, և քրիստոնէութեան թիր յուագած է: «Թաւֆ»ի սահմանադրութեամբ իրաքանչիւր համայնքի իրաւունքներ են տրուած, և համայնքները, իրենց տրուած իրաւունքներու համաձայն, իրենց կեանքը վարել ներքին օրէնքներով: Հայերու իրաւունքները միւս համայնքներու իրաւունքներէն կը տարբերի: Որքան մեծ է համայնքը, այնքան աւելի իրաւունքներ ունես: Որքան քիչ ես, այնքան յուագում են իրաւունքներդ: Բայց կրօնական մեր իրաւունքներուն մէջ գրեթէ համահաւասար ենք: Որպէս կրօնական համայնք, մեր հարցերը մենք ենք լուծում, և պետութիւնը ճանաչում է այդ իրաւասութիւնները: Պէտք է յիշել նաև, թէ Լիբանանի սահմանադրութեան մէջ նշուած է, որ նախագահը

պետք է Մարոնի համայնքէն ըլլայ, վարչապետը՝ Իսլամ սիննի համայնքէն...: Նախ աշխարհագրական գետնի վրայ Լիբանանը փոքր երկիր է և 10000 քառակուսի քիլոմետր: Իսկ մենք որպէս հայութիւնը յստակ շրջաններու մէջ կեդրոնացած էինք, քիչ մը սկսանք ընդարձակուիլ: Ափ մը հող մըն է Լիբանանը, սա իր մեծ առաւելութիւնը ունի: Այստեղ մշակոյթը, դաստիարակութիւնը տարբեր է, մեր ապրած ոճը տարբեր է, փոքր Հայաստան է, բայց հողը լիբանանեան է»:

«Լիբանանահայ գաղութը չի նմանիր Միջին Արևելքի այլ գաղութներու, ամէն իմաստով՝ թէ թուային, քաղաքական, ընկերային կազմուածքով: Լիբանանը Միջին Արևելքի մէջ ունի իւրայատուկ դիմագիծ, որովհետև եթէ նկատի ունենանք միւս գաղութները՝ Սուրիան, Թեհրանը, Եգիպտոսը, Իրաքը (որոնք մեծ թիւ կը ներկայացնէին), այս բոլոր երկիրները ունեցած են այսպէս կոչուած դիկտատորական ռեժիմներ, որոնք հնարաւորութիւն չեն տուած հայ գաղութներու քաղաքական ազատութիւն ունենալու, այնպէս, ինչպէս Լիբանանը: Մենք այստեղ որպէս համայնք մեր դիրքն ու տեղը ունինք: Լիբանանի արաբ ժողովուրդը մեզ կը յարգէ ու լաւ ընդունած է, և ազատութիւն ունինք ամէն գետնի վրայ աշխատելու: Լիբանանը համայնքային դրութեամբ երկիր է, ուր համայնքները ներկայացուած են խորհրդարանէն, կառավարութենէն, բոլոր պետական մարմիններէն ներս: Այսինքն՝ սահմանադրութիւնը կը պահպանէ իւրաքանչիւր գաղութի իրատւոյնները: Եւ որովհետև համայնքային դրութիւն է, Լիբանանի հայ համայնքը տարիներու ընթացքին, յատկապէս 1924-էն ետք, երբ Լիբանանի հայերը Լոզանի դաշնագրի հիմամբ դարձան Լիբանանի քաղաքացիներ, ինչպէս միւս բոլոր քաղաքացիները, մինչ օրս կը վայելեն նոյն իրաւասութիւնները, այսինքն՝ տարբերութիւն չկայ արաբի, հայու, ասորիի միջև: Մենք Լիբանանի խորհրդարանի մէջ ունինք երկու հայ պատգամաւորներ: Ունինք նախարար, բարձր կարգի մարդիկ, ընդհանուր տնօրէններ: Գաղութը որովհետև գաղութ է, հակառակ անցած քաղաքացիական պատերազմին, ունեցանք թիւի նուազում: Եթէ այդ օրերուն գաղութը կը հաշուէր 250000, այսօր այդ թիւը մտաւորապէս իջած է կէսի, բայց հակառակ այս բոլորին գաղութը բոլոր մակարդակներու վրայ աշխոյժ է՝ համեմատած այլ գաղութներու: Պուրճ Համուտը Սփիւքահայուն բարբախտն սիրտն է, որովհետև նաև Պուրճ Համուտէն արտադրած ենք մարդոժ, հայթայթած ենք մտաւորականութիւն, ազգային գործիչներ, թերթերու

խմբագիրներ...: Մինչև Լիբանանի քաղաքացիական պատերազմը (1975–1976) Լիբանանը կը համարուէր իսկապէս ամենաուժեղ ու ամենահարուստ համայնքը՝ իր կառավարութիւններով ու դրուածքով: Արտասահմանի և Սփիւռքի բոլոր գաղութներուն մէջ, որպէսզի այնտեղ հայապահպանման գործունէութիւնը ծաւալի, զարգանայ՝ Լիբանանի մարդուժ (քատրեր) կը սպասէին, և անոնք ալ կը մեկնէին: Սփիւռքի բոլոր գաղութները անխտիր, առանց ունէ մէկը նեղացնելու, հակառակ որ ունեցած են իրենց տեղական ուժերը, սակայն և այնպէս միշտ դիմած են Լիբանանին, որպէսզի օգտուին Լիբանանէն: Օրինակ՝ Լիբանանի մէջ 70 հայկական վարժարան կար և 50000–60000 աշակերտութիւն: Լիբանանի գաղութի խօսքը, ձայնը, կարողութիւնը մշտապէս լսելի էին, բոլորը ծանօթ էին Լիբանանի գաղութի մասին: Հայապահպանման գործընթացին նաև կը նպաստէ քաղաքական ներկայութիւնը»:

«Այսօր ևս Լիբանանը կը նկատուի Սփիւռքի ամենաուժեղ գաղութներէն մին, նաև պէտք է ըսել, թէ Սփիւռք հասկացութիւնը նոյնպէս սկսաւ փոխուիլ: Առաջ երբ Սփիւռք ըսէինք, կը հասկնայինք Միջին Արևելք, Եւրոպա, Հիւսիսային և Հարաւային Ամերիկա, իսկ այսօր աւելցած են Ռուսաստանը, Արևելեան Եւրոպան: Այլ խօսքով՝ Սփիւռքի աշխարհաքաղաքական պատկերը փոխուած է: Այդուհանդերձ, լիբանանահայութիւնը քանակի հետ միասին կորսնցուց նաև որակը, և հետզհետէ որակի պակասը զգալի կը դառնայ և վաղը աւելի զգալի պիտի դառնայ զանազան պատճառներով: Քաղաքը չունի երէկուայ մտաւորականութիւնը, չունի քաղաքական պատրաստուած տարրերը, չունի այն հայ ուսանողութիւնը, որ հայապահպանման գործին մէջ նախանձախնդրութիւն ցուցաբերէ:

Լիբանանը, համայնքային երկիր ըլլալով, բոլոր պետական սպասարկութիւնները համայնքներու վրայ բաժնուած են: Մենք, իբրև համայնք, մեծ սպասարկութեան ծառայութիւններ չունինք մեր ձեռքը, բայց իբրև օրինակելի, խաղաղաբեր և խօսակից համայնք, բոլոր համայնքներուն հետ մենք ալ կ'օգտուինք: Պէտք է ըսել, որ լուրջ աշխատանք կայ բոլոր մակարդակներու վրայ, որպէսզի այդ յարաբերութիւնները կայուն կեդրոն ունենան, բայց երկրին և Միջին Արևելքի ընդհանուր մթնոլորտը չի նպաստեր, որ քրիստոնէայ իբրև համայնք հեզասահ գործընթացը քալէ: Սուրիոյ պատերազմի հետևանքով բուսական ընտանիքներ կորսնցուցինք: Մենք քիչ մը աչքաբացութիւն ունինք: Ու-

նինք ծնողներ, որոնք սուրիահայ են, բայց շատոնց Լիբանան հաստատուած են»:

Ժողովրդագրական կազմը

«Երբ ընդհանուր թիւի մասին պիտի խօսինք, այդ թիւը պէտք է տարբերի 100000–120000 միջև, տրուած ըլլալով, որ Լիբանանի մէջ մարդահամար գոյութիւն չունի: Բայց մօտաւոր կերպով կրնամ ըսել, թէ այս թիւին 35%-ը երիտասարդներ են (15–30 տարեկան), 15%-ը երեխաներ են, իսկ 50%-ը՝ ծերունիներ: Տարաբնակեցման մասին՝ նախապէս մեր շրջանը աւելի հայաշատ շրջան էր, իսկ այսօր խառն է օտարներով, ինչ-որ մտահոգութիւն է մեզի համար: Սուրիացիներ, այլ համայնքներու անդամներ մեր շրջանին մէջ կ'ապրին, որովհետև մեր շրջանները շատ աւելին ու ազծախսելի են, քան միւս շրջանները: Լիբանանն ալ կացութեան պատճառաւ միշտ հարց դրուեցաւ հայութեան կեցուածքը, թէ որ քաղաքական կողմին մաս կը կազմէ: Վերջերս արաբ սուրիացիներ հաստատուեցան Պուրճ Համուտի հայաշատ շրջաններս, և այսպիսով Պուրճ Համուտը վերածուեցաւ առևտրական կեդրոնի, ինչ-որ անյարմարութիւններ ստեղծեց: //Ներքին տեղաշարժ կայ, Պէյրութ քաղաք շատ թանկ միջավայր է ապրելու համար: Այսօր երիտասարդների դժուար թէ ապրին Պէյրութի մէջ, և որքան Պէյրութից հեռանում էք, մի քիչ աւելի մեղմանում են գները: Հետևաբար, շարժում են դէպի այն կողմերը, որտեղ մատչելի են, և աւելի ընդարձակ կեանքի պայմաններ կան»:

«Լիբանանի մէջ ընդհանրապէս ներքին տեղաշարժ կայ, խճողուած միջավայրից գնում են մի քիչ աւելի էժան միջավայր, որտեղ աւելի հեշտ է ապրել: Այստեղի լիբանանցիներու մէկ մասը սուրիացի են, և շատեր իրենց սուրիացի ըլլալու փաստը սկսան օգտագործել, հետևաբար, սկսան երթալ և գալ Սուրիա, իբրև թէ Սուրիայէն ևոր դուրս ելած են, որպէսզի կարողանան ճամբորդել: Այո, թափը նուազած է, որովհետև կարելիութիւնը չկայ: Իսկ եթէ կարելիութիւն ըլլայ, ես ձեզի կը վստահեցնեմ, որ մէկը չմնար: Կը մնան այն մարդիկը, որոնք կը մտածեն, որ Լիբանանի գաղութը պէտք է պահուի, այլապէս մարդ չի մնար»:

Տեղաշարժեր

«Երբ 1970 թ. պատերազմը եկաւ, մեր ժողովուրդին մօտ անգամ մը այդ վախը, սարսափը վերարթնացաւ: Դեռ 50 տարի անցած էր Մեծ

եղեռնին, և այն վերապրած սերունդը տակալին ողջ էր: Մեծ թիով արտագաղթ տեղի ունեցավ այդ թուականներուն, և այդ պատճառ, որ գաղութը պարպուի իր մարդուժէն՝ ըլլայ հասարակական, ընկերային, մշակութային և յատկապէս տնտեսական, որովհետև այսօր կ'արտագաղթեն անոնք, որոնք իրենց նիւթական պայմանները կը ներեն և կը կարողանան վերահաստատուիլ Գանատային, Ամերիկայի և Աւստրալիայի նման գաղութներու մէջ: Վերջին տարիներուն, նամանաւանդ 2011-էն, երբ որ 10000–12000 սուրիահայեր Լիբանան եկան, բնականաբար, ընկերային որոշ տեմոկրաֆիկ խախտում եղաւ: Տնտեսական տագնապը շատ մեծ ազդեցութիւն ունեցած է մեր ընտանիքներու և ընկերային կարգավիճակի վրայ, և այս մէկը որոշ շփոթ մը ստեղծած է գաղութային ուժականութեան վրայ: Երիտասարդութեան մօտ որոշ արտագաղթի ոչ մեծ ալիք մը կը զգանք դէպի Ամերիկա, արաբական երկիրներ՝ մանաւանդ անգործութեան պատճառաւ»:

«1970-ականներու սկիզբը, եթէ մէկը պիտի մեկնէր Լիբանանէն կամ մտածէր հաստատուիլ Միացեալ Նահանգներ, իսկ շատ քիչ մասը կը մտածէր հաստատուիլ Գանատայի և Աւստրալիայի մասին: Բայց պատերազմի պատճառով նոր արտագաղթ մը սկիզբ առաւ դէպի այլ տարածքներ, և սա բնական սովորոյթ դարձաւ: Միւս կողմէ Միջին Արեւելքէն ներս ծայրայեղ ահաբեկչական շարժումներու թափանցումը և անոնց կեցուածքն ու վերաբերմունքը քրիստոնէայ փոքրամասնութիւններու նկատմամբ, ստիպուած շատեր Միջին Արեւելքէն կը գաղթեն: Օրինակ՝ Սատտամ Հիւսէյնի իշխանութեան ժամանակ քրիստոնէաներու թիւը 1.700000 կը հաշուէր, իսկ այսօր դժբախտաբար 200000 է: Յորդանանի և Եգիպտոսի մէջ նոյնպէս թիւը նուազած է, իսկ Սուրիոյ մէջ ամէն բան քանդեցին: Լիբանանի մէջ քաղաքական անորոշութիւն կը տիրէ, թէ ապահովական և թէ տնտեսական գետնի վրայ: Երբ այս ահաբեկչական շարժումները խուժեն Լիբանան, վստահաբար հայկական շրջաններու մէջ պիտի թափանցեն: Որոշ մտահոգութիւն կայ, որ ապագան ինչ պիտի ըլլայ: Մեր սերունդի մարդիկ կրնայ ըլլալ հաշտունիւն այստեղ մնալ, բայց մենք չենք փափաքիր, որ մեր գաւակները հոս մնան: Մարդիկ կան, որ առաջ երբ իրար հանդիպէինք, կը հարցնէինք, թէ ինչպէս էք, իսկ այսօր մեր առաջին հարցը կ'ըլլայ՝ «գաւակդ դրտեղ պիտի դրկես»: Այս անորոշութիւնն է, որ պիտի ստիպէ լիբանանահայութեանը, որ նոր դռներ զարնէ: Մարդիկ կան, որոնք կը ծրագրեն Նյու

Զլանտ տեղափոխուիլ: Երկիրը ապահով չէ, որ կարենանք հաստատական ընել, որ ապագան այստեղ է: Շատ պիտի փափաքէինք հոս մնալ, բայց պայմանները կը թելադրեն ուրիշ քայլերու դիմել»:

«Այժմ կան դժբախտաբար արտագաղթի միտումներ: Շրջան մը դադրած էր արտագաղթի երևոյթը, բայց Սուրիոյ պատերազմի սկսելէն ի վեր արտագաղթի ալիքը դարձեալ սկսաւ դէպի Ամերիկա և Գանատա: Այսօր արտագաղթը նոյն թափով չէ, որովհետև այստեղ մնացող մարդիկ երկու խնդիր ունին: Կամ այն է՝ չեն կրցած վիզա ստանալ և կամ նիւթական միջոցներ չեն ունեցած՝ դուրս գալու և այլ երկրի մէջ վերսկսելու համար: Երիտասարդներն են, որոնք կը գաղթեն, ոմանք այնտեղ կը հաստատուին և կամ այդտեղէն ուրիշ երկիրներ կը մեկնին: Այսօր իսկ մեր հայ աղջիկները պատրաստ են աշխատելու՝ եթէ դուրսը գործ գտնեն: Մանաւանդ ինտերնետը մեծ հնարաւորութիւն կու տայ երիտասարդներուն, որպէսզի անելի հեշտութեամբ արտասահմանի մէջ գործ գտնեն և կապ պահեն այլ ընկերութիւններու հետ: Կայ նաև արտահոսք աշխատանքի բերմամբ, երիտասարդները յատկապէս, որոնք մասնագիտութիւն ունեն, այսօր Լիբանանում գործ չլինելու պատճառով արտագաղթում են և գնում են Արաբական ծոց, ոմանք դէպի Եւրոպա, Ամերիկա: Իսկ ուրիշները անելի հեռաւոր վայրեր են տեղափոխուում, որոնք մշտական ձևով հաստատուում են: Ջախջախիչ մեծամասնութիւնը Գանատա է, շատեր յաջողեցան Միացեալ Նահանգներ գաղթել, Գերմանիա, Հոլլանտա, Աստորալիա, Շուէտ: Դէպի Հայաստան էլ գնում են, բայց այսօր առաւելաբար սիրիահայերն են, ովքեր դէպի Հայաստան են գնում: Շատ փոքր թիւ կայ, որ կ'ուզէ Հայաստան հաստատուիլ, և փափաքը մեծ է: Լիբանանի այս անապահով և տնտեսական վիճակը մարդոց կը ստիպէ, որ ուրիշ տեղ տեղափոխուին: Շատեր կը մտածեն Հայաստան հաստատուիլ, բայց քանի որ Հայաստանի մէջ ֆինանսի, ընկերային և գործի խնդիր կայ, մարդիկ այլ երկիր կը գաղթեն: Արտագաղթելու թափը շատ նուագած է, որովհետև կարելիութիւնները շատ նուագած են: 80 տոկոսը վերադառնալու տրամադրութիւն չունի»:

«Գաղթել փափաքող մարդիկը իրենց ընտանիքի հետ կը գաղթեն: Կը գաղթեն այնպիսի տեղ, որտեղ բարեկամներ, ազգականներ ունին, որպէսզի իրենց դիրքութիւն ընծայուի և կարելիութիւն ստեղծուի թղթաբանութեան առումով: Այսինքն՝ նախասիրութեան հարց չէ, այլ

որտեղէն կարելի է վիզա ձեռք բերել: Կրնամ ըսել, թէ գաղթել փափաքողները ատլի կը մեկնին Ամերիկա և Գանատա, քան Եւրոպա, որովհետև այնտեղ բարեկամներ ունին և կրնան իրենց օգնելու վիզա ստանալու հարցով: Երբ Գանատա կը մեկնին, լիբանանցին լիբանանցիին շատ շուտ կը գտնէ: Այնտեղ Լիբանանի այդ հաճոյքը չկայ, ստիպուած պէտք է իրարու հետ շփուիլ՝ եկեղեցի յաճախելով, ակումբ հաւաքուելով...: Ես, օրինակ, կրնամ ըսել, իմ դասընկերներս 30 հոգի էին, այսօր Լիբանանի մէջ անոնցմէ միայն 3–4 հոգի կայ: Այն դասընկերներս, որոնք դուրս են և նոյն տեղը կը բնակին, ընդհանրապէս իրարու հետ են և առիթը կը ստեղծեն գոնէ տարին անգամ մը իրարու տեսնեն: Բայց այնքան որ ես հասկցած եմ, այնտեղ չկայ այդ մթնոլորտը, որ մարդիկ իբրև ընտանիք, իբրև հարազատներ, իբրև ընկերներ անպայման պէտք է իրարու կողքին մնան: Կրնայ ըլլալ փափաքը, բայց պայմանները չեն թոյլատրեր, որովհետև մարդոց տուները, գործի տեղերը իրարմէ շատ հեռու են: Մինչդեռ Լիբանանի մէջ մենք կրնանք 1.5 ժամուայ ընթացքին մէկ ծայրէն միւս ծայրը երթալ: Այսինքն՝ մենք լիբանանահայերս մէկ աշխարհագրական գիծի վրայ կ'ապրինք և կրնանք իրարու հետ շփուիլ, բայց այնտեղ չկայ: Նորէն կը կրկնեմ, փափաքը կայ, ջերմ յարաբերութիւններ ստեղծելու ցանկութիւնը կայ, բայց պայմանները չկան»:

Խառնամուսնութիւններ

«Կայ այլ երևոյթ մը ևս՝ օտար ամուսնութիւնը: Մեր ժամանակ՝ 35–40 տարի առաջ, օտար ամուսնութիւնը ընդունելի չէր, իսկ այսօր այդ պարզ երևոյթ է: Մէկ խօսքով՝ այսօր փոխուած են մեր ազգային փառքերն ու ասանդոյթները: Հետզհետէ սկսած ենք տեղի տալ: 2005 թուականին վիճակագրական տուեալներու համաձայն՝ ամուսնութեան 50 տոկոսը խառնամուսնութիւն էր և ահագանգ հնչեցնող թիւ էր: Եթէ մայրը հայ է, կը նշանակէ թէ կէսը հայ է, առանց սեռական խտրութեան, և իրենք մեր հարազատներն են: Մենք գիրենք ընդունելով մեր վարժարանէն ներս, իրենց մէջ հայկական զգացում կ'առաջացնենք, կը ծանօթացնենք մեր մշակոյթին և լեզուին հետ: Երբ գիրենք կը կոչենք կէս հայեր, շատ կը վիրաւորուին, որովհետև այնքան լաւ հայերէն կը խօսին, որ իրօք գարմանալի է: Հետևաբար, մենք պէտք է հաշտուինք գալիք հանգրուանին հետ և ըստ այնմ ծրագրենք: Օտար ամուսնութեան երևոյթն ալ կայ և օրըստօրէ ատլի շատ կը բազմանայ: Հայե-

ըը անշատուած չեն երբեք և սերտ կապ ունին Լիբանանի այլ արաբ համայնքներու հետ: Նախապէս մեր մեծ հայրերը բացարձակապէս կապ չէին հաստատած միւս համայնքներու հետ, անշուշտ կ'աշխատակցէին իրարու հետ, բայց ոչ իբր ընկեր և բարեկամ: Հիմա այդպէս չէ, բոլորովին պատկերը փոխուած է: Այսօր հայը ինքզինք լիբանանցի կը զգայ և բնաւ օտար չի զգար ինքզինք արաբ շրջանակէ ներս: Այսպիսով տարբեր պատկեր մը ձևատրուած է: Համեմատաբար այլ գաղութներու, Լիբանանի մէջ ձուլուելու վտանգը ատելի դանդաղ է: Սա չի նշանակեր ձուլում չկայ: Ունինք խառնամուսնութիւններու բարձր տոկոս, նախապէս չունէինք, բայց վերջին 10–15 տարիներու ընթացքին թիւը բարձրացած է: Խառնամուսնութիւնները ընդհանրապէս արաբ քրիստոնեաներու հետ տեղի կ'ունենան: Ասոնք բոլորը ժողովուրդին մէջ հարցադրումներ առաջացուցին, և ձևով մը մեր ժողովուրդն ալ այն համոզումին եկաւ, որ մենք այլևս լիբանանցի ենք և Լիբանանի մշակութիւն մէջ մտնենք, մեր լիբանանցի ըլլալը պէտք է արտայայտենք»:

Գաղութի ազգային կառույցներ

«Ընդհանուր առմամբ, բարեկեցիկ գաղութ մըն է և լաւ կազմակերպուած է: Բոլորը մեր ժողովուրդը վաստակով, տեսիլքով ստեղծուած կառոյցներ են: Ակումբներ, մշակութային կեդրոններ ունենք, այդ բոլորը եղել են, որպէսզի մեր ժողովուրդը կեանքը երկարաձգեն և հարստացնեն ազգային արժէքներով: Այս բոլորին նորից նոր հասկացողութեամբ պէտք է նայենք: Եթէ պէտք է նորոգենք, պէտք է վերանորոգենք, որպէսզի կարողանան մեր ժողովուրդի պէտքերին ծառայեն, այնպէս, ինչպէս որ պէտք է: Ունինք մեր երեք կուսակցութիւնները, առաջնորդարանները և բարեգործական միութիւնները: Այդպիսիք են՝ հայ երեք յարանուսնութիւնները՝ Առաքելական, Կաթողիկէ և Աւետարանական եկեղեցիները, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, Հնչակեան և Ռամկավար կուսակցութիւնները, «Համազգային» մշակութային միութիւնը, մամուլը, բայց և այնպէս այս գործօնները իրենց նախկին ազդեցութիւնը չունին: Եթէ հարց մը կայ, որուն շուրջ ամէն մարդ միատեսակ կը մտածէ՝ այդ ալ Հայ դատի գրասենեակն է: Այս գրասենեակը Միջին Արևելքի գրասենեակն է, լաւ յարաբերութիւններ ունի բոլոր կուսակցութիւններուն և համայնքներուն հետ, բոլորը կը դիմեն և ոչ մէկուն միջև տարբերութիւն կը դնէ: Հայ դատի գրասենեակը գրասենեակներ ունի տարբեր երկիրներու մէջ և կը գործակցի ամէն մա-

կարդակի վրայ արտաքին աշխարհի հետ, քարոզչությունը արաբական աշխարհի համար է, և ոչ թե ներքին քարոզչություն է, որ կ'ընէ: Շրջաններու գրասենեակները ընդհանրապէս այդ ներքին քարոզչութեամբ կը զբաղին: Գրասենեակը ընդհանրապէս կը համագործակցի լրատուամիջոցներու, ուսումնասիրական կեդրոններու, համալսարաններու, ակադեմական և քաղաքական շրջանակներու հետ: Հայ դատի գրասենեակը աշխատանքը կը ծաւալի Հայոց ցեղասպանութեան ճանաչման, հայ ժողովուրդի իրատունքներու ձեռքբերման ոլորտներու մէջ, ինչպէս նաև կը տրամադրէ հայերէն, արաբերէն և այլ լեզուներով արխիւներ: Կը փորձէ լրատուական, մշակութային լաւ յարաբերութիւններ ստեղծել Հայաստանի և արաբական աշխարհի միջև: Օրինակ՝ 100-ամեակի առթիւ մենք Հայաստան ուղարկեցինք տարբեր արաբական լրատուամիջոցներ, որոնք հարցազրոյցներ և ծրագիրներ մշակեցին ու պատրաստեցին: Լիբանանը միաժամանակ այն տեղն է, որտեղ կան արբանեակային լրատուամիջոցներու գլխաւոր գրասենեակները՝ Ալ Ճազիրան, Ալ Մայատին, BBC Arabic և այս գրասենեակները ընդհանրապէս մեզի կը դիմեն յատկապէս Հայոց ցեղասպանութեան վերաբերող նիւթերուն շուրջ»:

«ՀԲԸՄ բարեգործականը Լիբանանի մէջ լաւ դիրք ունի և յարգուած է բոլորին կողմէ, ունի 3 վարժարաններ, որոնք ուսումնական գետնի վրայ մեծ յաջողութիւններ ունին, 4 լեզուներ կը դասաւանդուին, իսկ շրջանաւարտները բոլորն ալ կ'ընդունուին լիբանանեան զանազան համալսարաններ: ՀԲԸՄ-ն կուսակցական միութիւն մը չէ և քաղաքական կողմնակցութիւն կամ դիրքորոշում չունի, ունի երիտասարդներու միութիւնը՝ ՀԵԸ-ն (Հայ Երիտասարդաց Միութիւնը), որ ունի հսկայական երիտասարդական շարժումներ, ունի իր պարաօլիմպիկ, փողերախումբը: Ունի թարմանատուներ, ասպետներու միութիւն, տիկնանց համախմբութիւններ, կրթական յանձնախումբ, որ դպրոցներու սատար կը հանդիսանամ, ունինք շրջանակային յանձնախումբ, մշակութային, թատերական և մարզական հանձնախմբեր...: Մէկ խօսքով՝ ապակուսակցական ըլլալը ՀԲԸՄ-ի համար իրապաշտութիւն և առաւելութիւն է:

Այստեղ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի առթիւ ամէն օր կար մշակութային միջոցառում՝ կազմակերպուած իւրաքանչիւր համայնքի, կուսակցութեան և կամ կազմակերպութեան կողմէ:

Սփիւռքի երեք գլխատր կուսակցությունները, որոնք մեծ դերակատարություն ունին Սփիւռքի տարածքին, ունին իրենց ենթակառուցները: Այդ ենթակառուցները՝ մարզական, մշակութային, կը գործակցին Սփիւռքի այլ ենթակառուցներու հետ: Կայ նաև եկեղեցական կապը, որը կը գործէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանիին ներքոյ: Թեմերու իրարու հետ գործակցութիւնը այլ յարաբերութեան եղանակ է: Իսկ այս բոլորէն անկախ միջհամայնքային առումով այնքան ալ համագործակցութիւն չկայ: Շատ պաշտօնական»:

«Մեր մտայնութեան մէջ «հանոցային» հոգեբանութիւն մը կայ: Օրինակ, ենթադրենք Լիբանանի «Համազգային» մշակութային միութիւնը միջոցառում մը կազմակերպած է, եթէ պիտի համագործակցի այլ կազմակերպութեան մը հետ այս ծիրէն ներս, այդ վստահաբար պիտի ըլլայ Միացեալ Նահանգներու իր քոյր միութեան հետ: Այսինքն՝ բարեկամական կապեր կան, բայց միջմիութենական յարաբերութիւնը այնքան ալ խորացուած չէ: Նոյնն է պարագայն կուսակցական գործակցութեան և համագործակցութեան: Իւրաքանչիւր համայնք ունի իրեն յատուկ մտահոգութիւն և առաջնահերթութիւն: Լիբանանի առաջնահերթութիւն լրիւ ուրիշ են, ինչ որ Միացեալ Նահանգներու և այլ գաղութներու: Սակայն այս բոլորին մէջ միակ տուժողը հայապահպանումն է: Եթէ այսօր մեր կուսակցությունները իրենց առաջնահերթութիւնը դարձուցած են Լիբանանի քաղաքական իրավիճակը և իրենց ամբողջ ներդրումն ու գործունէութիւնը կեդրոնացուցած են տեղական ուժերու յարմարութիւն քաղաքականութեան, վստահ եղէք, որ այդ կուսակցութիւնը չի կրնար դերակատարութիւն ունենալ հայապահպանման, Հայ դատի հետապնդման գործընթացի մէջ: Բացառութիւնները յարգելի են, անշուշտ: Բարեբախտաբար, այսօր ունինք կառույցներ, որ կը պայքարին այս գծով»:

«Սփիւռքի տարածքին մէջ կան քաղաքական կուսակցությունները, և իւրաքանչիւր կուսակցութիւն իր հերթին ունի իր մարզական, մշակութային, բարեսիրական կազմակերպությունները: Երեք հիմնական կուսակցություններն են Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, Հնչակեան և Ռամկավար կուսակցությունները: Կայ բարեգործական հաստատութիւնը: Դաշնակցութիւնը ունի Համազգայինը, ԼՕԽ-ը (Լիբանանի Օգնութեան Խաչը), ՀՄԸՄ-ն: Հնչակեան կուսակցութիւնն ալ նոյնպէս ունի բարեսիրական միութիւն, ՀՄՄ, «Նոր Սերունդ» մշակութային միու-

թիւնը: Ռամկավարներն ալ ունի «Թէքէեան» մշակութային միութիւնը և մարզական միութիւնը: Դաշնակցութիւնը ընդհանրապէս ամենաշատ համակիրներ ունեցող կուսակցութիւնն է Լիբանանի և Սփիւռքի տարածքին մէջ: Մշակութային առումով 3 կուսակցութիւններն ալ աշխոյժ են, և քիչ մըն ալ մրցակցութիւն կայ»:

Կապը այլ համայնքների հետ

«Այո, տարբեր դասախօսներ, արուեստագէտներ կու գան Սուրիայէն, Եգիպտոսէն և Հայաստանէն, բայց այնքան ալ սերտ չեն: Տեղական գաղութը ամէն մարզէ ներս իր մասնագէտները ունի, և կը պատահի, որ Ամերիկայէն դասախօսներ, քաղաքագէտներ ելոյթ կ'ունենան այստեղ: Իսկ վերջին տարիներուն Հայաստանէն ունեցանք բազմաթիւ դասախօսներ, պատմաբաններ, արուեստագէտներ: Բարեգործական այլ հայ համայնքներու հետ մշտապէս կը համագործակցինք, բայց ուրիշ երկիրներու այլ կազմակերպութիւններու հետ՝ ոչ այնքան: Մեր գաղութը ինքնաբաւ է, և կարծես այնքան ալ կարիքը չենք զգացած դուրսէն շատ մը մարդիկ հրաւիրելու: Լիբանանը միշտ բաց է նորութիւններու և պատրաստ է հիւրընկալելու իւրաքանչիւր մասնագէտ հիւրի և հայորդիի: Լիբանանը միշտ ալ այլ հայ գաղութներու մարդոժ տրամադրած է: Դուրսի երկիրներու մէջ կազմակերպութիւններու, կուսակցութիւններու ղեկավարները, դպրոցներու տնօրէնները ընդհանրապէս լիբանանեան ծագում ունեցող հայեր եղած են»:

«Գաղութներու հետ մեր կապը շատ լաւ են, և ընդհանրապէս հարց մը չունինք: Նկատի պէտք է ունենանք, որ Կիլիկեան աթոռը ձեռով մը սփիւռքեան եկեղեցին կը ներկայացնէ, և Կիլիկեան աթոռը ունի իր թեմերը: Կուսակցութիւնները՝ Դաշնակ, Հնչակ, Ռամկավար, և ունին իրենց շրջաններու մասնաճիւղերը և իրենց մասնաճիւղերու հետ համագործակցութիւնը շատ սերտ է: Եկեղեցին իր թեմերով կապուած է միւս գաղութներուն: Իսկ կուսակցութիւնները իրենց մշակութային և քաղաքական կազմակերպութիւններով կապուած են գաղութի միւս ամբողջութիւններուն: Օրինակ՝ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի առթիւ մենք, որպէս 100-ամեակի մարմին, ուզեցինք շրջանային համագումար մը ընել: Կապուեցանք Միջին Արևելքի մեր բոլոր շրջաններուն, բոլորը անխտիր անվերապահ արձագանքեցին, ներկայ գտնուեցան, և իրօք սքանչելի համագումար մըն էր, որ ունեցանք Լիբանանի մէջ: Այսինքն՝ բարեբախտաբար, անցնող 50 տարիներուն մենք կրցանք

շրջանցել մեր կուսակցական տարբերությունները, ինչ որ շատ կարևոր է: Պետք է ըսել նաև, թե Սովետական Հայաստանն ալ իր դերակատարությունը ունեցաւ այս գաղութներու տարբադադրումին, կամ էջմիածնական և Կիլիկեան թեմերը գաղութին մէջ երկուութիւն ստեղծած էին, այսօր կրնամ ըսել, որ այս բոլորը վերացած են: Այժմ շատ ատելի ներդաշնակ գործունէութիւն կայ, համերաշխութիւն, հանդուրժողականութիւն կայ, իրար հանդէպ ներողամտութիւն կայ:

Մեր առջև բացուեցաւ աշխատանքի հորիզոն մը, որուն մէջ կը ներառուէին բոլոր կողմերը, երեք համայնքները՝ Առաքելական, Կաթոլիկ, Աւետարանական, երեք կուսակցութիւնները՝ Դաշնակցական, Հնչակեան, Ռամկավար, բարեսիրական միութիւնները...: Ասիկա եղաւ 2004-ին: Իսկ 2011-ին կազմուեցաւ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի յանձնաժողովը, և այս յանձնաժողովը նոյն առաջարկը ներկայացուց բոլոր գաղութներուն, որ քով-քովի պիտի գաք և պիտի կազմէք 100-ամեակի վերաբերեալ ծրագիրներ: Ես, որքան որ գիտեմ, սեպտեմբերին ժողով մը տեղի պիտի ունենայ, որուն ընթացքին այս հարցը պիտի արծարծուի, և պիտի առաջարկուի, որ այս յանձնաժողովները հետայսու կոչուին խորհուրդ, Հայոց ցեղասպանութեան խորհուրդ, որ պիտի շարունակէ աշխատանքները: Մենք տեսանք, թէ ինչպիսի դժուարութիւններու մատնուեցանք 100-ամեակը կազմակերպելու համար: Ինչ կ'առաջադրենք: Այստեղէն կը բխի գալիքի 10 տարիներու ծրագիրը, և հոս այլևս պիտի գանք միասնաբար իբրև արբանեակներ ու բոլորուինք Հայաստանի շուրջ: Այսպէս պէտք է ըլլայ գալիք մեր գործունէութիւնը: Այլևս այլ 100-ամեակներու մասին պէտք չէ խօսիլ: 100-ամեակը պէտք է մեր գարթօսքը, վերածնունդը, վերաշինութեան ըլլայ: Հայաստանը պէտք է շատ բան կատարէ, որպէսզի շրջանցէ այս մեզի կլանող, սահմանափակող Ցեղասպանութեան ճանաչման հարցը»:

Գաղութում ընթացող տնտեսական և սոցիալական գործընթացները

«Այս ժողովուրդի երևի ապահով 20 տոկոսը ուղղակի չքաւորութեան պայմաններու մէջ է, այսինքն՝ աղքատութենէն վար վիճակի մէջ է: Սօտաւորապէս մնացեալ 35 տոկոսը, օրապահիկով ապրող մարդիկ, բայց եթէ չաշխատին՝ կրնայ ըլլայ յաջորդ ամիս անօթի մնան: Միւս 30 տոկոսը միջին դասակարգն է, հարուստ չեն, բայց ինքնաբաւ են, ինքնաշարժ ունին, հարկաբաժին ունին: Մեծ մասը դրամատուներու հետ

վարկերու խնդիր ունին: Իսկ վերջին 15 տոկոսը բարեկեցիկ մարդիկ են, գործարար և լաւ դիրքեր զբաղեցնող մարդիկ են, որոնք ունին ջուրի մատակարարման, հիւթի, սառնարաններ արտադրելու գործարաններ, ինչպէս նաև ճաշարաններ: Այս մարդոց մէկ մասը, որոնց իրենց բարերարութիւններով կը պահեն համայնքին կառոյցները:

Հայերը, Մեծ եղեռնէն ետք, երբ Սուրիայէն Լիբանան հասան, նախ զանազան արհեստներու մէջ նետուեցան: Առևտուրի մէջ մտան, ներդրումներ կատարեցին, փորձառութիւն ձեռք բերին: Պէտք է ըսել, թէ Լիբանանի տնտեսական մակարդակով լաւ դիրքի հասան՝ թէ՛ արհեստի և թէ՛ պիզնէսի բնագաւառներէն ներս: Պէտք է ընդունիլ, որ հայը ուր որ ալ գտնուած է, աշխատասէր է եղած: Եւ լիբանանահայը իր ճակտի քրտինքով տեղացիին յարգանք պարտադրեց՝ ըլլայ անիկա ճարտարագիտութեամբ, բժշկական ոլորտի մէջ: Լիբանանահայը երբ նախաձեռնութիւն մը վերցնէ, միշտ յարգանք թելադրած է և յաջողած է: Այսօր երկրի վիճակը այնքան լճացած և սառած է, որ երկրի մէջ սպաստողական վիճակ կը տիրէ: Այսինքն՝ այսօրուայ դրութեամբ առևտուրը, արհեստը այնպէս չեն, ինչպէս որ երէկ էին: Ատոր համար մարդիկ պարտքերու մէջ են և դրամատուներու պարտական են: Այդ պատճառաւ իրենց ունեցումածքը կը ծախեն, կը գաղթեն, կրճատումներ կը կատարեն, բայց միշտ ու միշտ լաւատեսութեամբ կը մօտենան այս իրավիճակին՝ յուսալով երկրի վիճակը պիտի բարեփոխուի: Որքան որ այս անորոշութիւնը երկարի, այնքան տնտեսական առումով տեղ քայլի մէջ պիտի մնանք: Այս կը տիրէ ոչ թէ միայն հայերու մօտ, այլ Լիբանանի մակարդակով: Նախաքայլեր առնելու միջավայր չմնաց: Երևակայացէք, եթէ առաջ արտածումներու Սուրիոյ ճամբով պիտի ըլլային, դժբախտաբար, այսօր փակ է: Եթէ ծովային ճանապարհով պիտի ըլլային, շատ թանկ է: Այլ խօսքով, առևտրական, արհեստագիտական և տնտեսական գետնի վրայ այս վիճակը կը տիրէ, որ գուգորդուած է երկրի քաղաքական իրավիճակին հետ»:

«Նախկինում ընդհանրապէս ժողովուրդին 80 տոկոսը ուղղակի ձեռային աշխատանքով կը զբաղէին, այսինքն կօշկակարութեամբ, պղնձագործութեամբ, դերձակութեամբ, ոսկերչութեամբ կը զբաղէին, ճաշ կը պատրաստէին: Այսինքն՝ երեք տիպի մարդիկ կային: Մարդիկ, որոնք առանձին կ'աշխատէին ու կ'արտադրէին (հնակարկատ, նպարավաճառ): Կայ տակալին փոքր գործարաններ, որտեղ 5 աշխատատեղ կա-

յին, որոնք կօշկակարությամբ և ոսկերչությամբ զբաղուած են: Այդ օրերուն կային բարեկեցիկ մարդիկ, ովքեր գործարաններ ունէին և զբաղէին երկաթագործութեամբ, գորգագործութեամբ, կտորի գործով, ուտեստեղէնի և պահածոյի վաճառքով: Իսկ ուսեալների թիւը քիչ եղած է: Այս բոլորը կը վերաբերի 50 տարի առաջուայ լիբանանահայ կեանքին:

Այսօր պատկերը ամբողջապէս տարբեր է: Այդ ձեռային աշխատանքները այսօր վերացած են, և իրենք իրենց արժէքը կորսնցուցած են, որովհետև արդիականացումը այնպիսի տեղ հասցուցած է, որ մարդիկ ձեռքով աշխատելով տեղ չեն հասնիր: Նոր սերունդը ընդհանրապէս աւելի դէպի համալսարանական ուսում և վարչագիտական աշխատանքներու մղուած է: Այդ դէպքում ունինք բազմաթիւ բժիշկներ, ճարտարապետներ, ճարտարագէտներ, իրաւաբաններ, ֆինանսական գործի և IT-ի մասնագէտներ, ինչպէս նաև կան երիտասարդներ, որոնք կը զբաղին հոգեբանութեամբ, գրագիտութեամբ, թղթակցութեամբ և հաղորդակարութեամբ: Այսինքն՝ մեր երիտասարդութեան մէկ բաժինը ուսանելու փափաքը ունին: Հիմա, վերջին 15 տարիներու ընթացքին ուսանիլը նուազած ու դժուարացած է, որովհետև ուսումնավարձերը թանկ են: Մէկ բաժինը ուղղուած է դէպի տեխնիկական ոլորտ, բայց համալսարանի կրթութիւն չէ դա: Մէկ խօսքով՝ այսօրուայ համեմատութեամբ արհեստաւորներու թիւը նուազած է՝ ի նպաստ ուսանողներու: Մարդիկ, ովքեր իրենց արհեստները ժառանգած էին իրենց ընտանիքէն, այսօր չկայ, որովհետև առաջ արդիւնաւէտ և շահաբեր էին այդ արհեստները, իսկ այսօր՝ ոչ: 30–40 տարիներ համալսարանական շատ քիչ երիտասարդներ կը գտնուէին, որոնք կը ցանկանային պետական կառոյցներու, նախարարութիւններու մէջ աշխատիլ, այսօր այդ թիւը աւելի է: Այո՛, թէկուզ նման կառոյցներու մէջ աշխատավարձերը ցածր են, բայց ապահով են: Կարևոր կէտ մը ևս: Կայ այն հոգեբանութիւնը, ինչպէս Հայաստանի մէջ, թէ պետական կառոյցներու մէջ աշխատելով՝ մարդիկ կոռուպցիայի միջոցով աւելի կը հարստանան: Տնտեսական իմաստով՝ լիբանանահայ գաղութը բաւական ծանր վիճակներէ անցաւ յատկապէս քաղաքացիական պատերազմէն ետք: Նախապէս այդպէս չէր, բարեկեցիկ էր, մեծամասնութիւնը կրնար հանգիստ ապրիլ մինչև 70-ականներու սկիզբը»:

«Մենք միշտ կը խօսինք նախքան պատերազմը և պատերազմէն յետոյ: Հայութիւնը 1915–1970 թթ. այստեղ ապրեցաւ, իր վերածնունդը

ապրեցաւ և անկէ յետոյ ունեցաւ ուրիշ փորձառութիւն մը: Հայերը լաւագոյն դերձակներն էին, կօշիկ կարողները, պայուսակ շինողները, ոսկերիչները, այն, ինչ որ «արտիզանալ» աշխատանքն էր, անպայման հայն էր այն կատարողը: Երբ պատերազմը սկսաւ, արտագաղթ եղաւ, և մեր լաւագոյն մարդիկը առաջին գաղթողները եղան: Մինչ այդ լիբանանցին սորված էր հայ վարպետներու աշխատիլ, համագործակցիլ: Լիբանանցիք միշտ ըսած են, թէ արուեստի, նկարչութեան, ոսկերչութեան մէջ հայերը միշտ առաջին կարգին մէջ են եղած: Իրենք երբեմն հպարտութեամբ կ'ըսեն, բայց երբեմն այս բոլորը նախանձ կը ստեղծէ: Եւ եթէ մրցանքներ տեղի կ'ունենան, եթէ մասնակիցներէն երեքը հայ են և մէկը լիբանանցի, իրենք այնպէս կ'ընեն, որ տեղացիին տան մրցանակը: Հայերու արժանիքը և արուեստի իւրայատկութիւնը տեսնելի է: Իրենց արուեստագէտներէն շատեր ազդուած են մեր արուեստագէտներէն և կը փորձեն կապկել: Հայերու վարպետ ըլլալը թէ՛ արուեստի և թէ՛ արհեստի մէջ անվիճելի է: Իսկ հիմա հայերը նոյնպէս ոսկերչութեամբ և առևտուր կը գրադուին»:

«Գաղութը ունեցած է շատ լաւ անձնատրութիւններ, մեծահարուստներ, գործատէրեր, որոնք մեծ ներդրում ունեցած են Լիբանանի տնտեսական ոլորտէն ներս, յատկապէս 50–70-ականներուն, բայց սակայն յետոյ անոնք ալ արտագաղթեցին: Իսկ այսօր տնտեսական իրավիճակը շատ ծանր է, ասոր վրայ աւելցաւ Սուրիոյ պատերազմը, սուրիահայ մեր քոյրերն ու եղբայրները Լիբանան հաստատուեցան (մօտաւորապէս 20000), որոնք բեռ եղան մեր գաղութին վրայ: Երբ գաղութ կ'ըսենք, մենք մէկ կողմ չենք հասկնար, այլ եկեղեցի և կազմակերպութիւն, բարեսիրական հաստատութիւններ...: Արդէն Լիբանանը տնտեսական ծանր պայմաններու մէջ էր, իսկ սուրիացիներու գալուստը Լիբանան շատ աւելի ազդեց տեղացիներու վրայ՝ անգործութեան առումով: Մէկ խօսքով՝ պատերազմի և տնտեսութեան պատերազմի պատճառով արտագաղթը վերսկսաւ: Հայը երբ չի կրնար գոյատևել այս պայմաններու մէջ, բնականաբար կ'արտագաղթէ: Օրինակ՝ Եգիպտոսի գաղութը շատ լաւ գաղութ էր, բայց 60-ականներուն, Ապտուլ Նասէրի օրերուն, մեծահարուստները թողեցին և հաստատուեցան Գանատա և Ամերիկա: Նոյնպէս ալ Հաֆէզ Ալ Ասատը, երբ փորձեց սեփականացնել գործատէրերը, մեծ թիով հայեր արտագաղթեցին: Լիբանանը այդպէս չէր, որովհետև Լիբանանը ժողովրդավար երկիր է՝

համեմատաբար արաբական միւս երկիրներուն: 50-ական թուականներէն սկսեալ Լիբանանը մշտապէս պատերազմի մէջ էր: 58-ին, 59-ին պաղեստինցիներուն հետ, 74-ին, 82-ին իսրայէլեան ներխուժում, յետոյ մինչև 90-ականներ...: Այս պատճառներով գաղութը մեծապէս տուժած է: Քաղաքական իմաստով ալ տուժած են, որովհետև եթէ մինչև 70-ականներ մենք թիւ կը ներկայացնէինք լիբանանեան մակարդակով, ինչպէս նաև քրիստոնէութեան թիւը նուազեցաւ, և մուսուլմաններու թիւը աճեցաւ, այդ բոլորը պատճառ հանդիսացան, որ մենք տուժնք»:

«Լիբանանի տնտեսութիւնը հիմնուած է տուրիզմի և առևտուրի վրայ, իսկ առաւել ևս հայերը դրամատնային ոլորտի մէջ զարգացած են, այսինքն՝ պետութիւնը չի կրնար քու բանկային հաշիւդ իմանալ՝ առանց դատական վճիռի: Հայերն ալ օգտուած են այս երևոյթէն: Այսօր թէկուզ քիչ մը փոխուած է այս դրութիւնը: Լիբանանը դրամատնային իմաստով զարգացած է, որովհետև միւս արաբական դիկտատոր երկիրներու քաղաքացիները Լիբանանի բանկերու մէջ դրած էնա իրենց դրամները, ասիկա պատճառ դարձած է, որ Լիբանանի պիզնէսը միշտ զարգանայ, ինչպէս Ջուիցերիոյ պարագան: Ասիկա պատերազմէն առաջ էր: Բայց ահաբեկչութեան (terrorism) պատճառով Արևմուտքը որոշ պատժամիջոցներ սահմանեց, այդ պատճառով դրամատուները սկսան բացուիլ, այսինքն՝ այսօր Ամերիկեան կրնայ գիտնալ քու հաշիւդ: Այս բոլորը ազդեցին տնտեսական վիճակին վրայ:

Տեղասպանութենէն ետք, երբ հայերը Լիբանան եկան, իրենց հետ բերին իրենց արհեստները, որոնք Լիբանանի մէջ գոյութիւն չունէին: Հայերը նշանաւոր էին ոսկերչութեամբ, կաշիէ գործով, նկարչութեամբ...: Անոնց զարկ տրուեցաւ, և հայեր օգտուեցան այս բոլորէն: Այդ օրերուն եթէ պիտի փնտռէիր լաւ կօշկակար, դերձակ, նկարիչ, ոսկերիչ՝ անպայման պիտի երթայիք հայու մօտ: Լիբանանցիին այս գործերը չէր կրնար ընել, հիմա է, որ սկսած են այս գործերով զբաղուիլ: Որովհետև հայը, երբ կ'արտագաղթէր, տեղացի իսլամը հայուն տեղը կու գար աշխատելու:

Սկիզբի շրջանին հայերը ատլի արհեստաւոր եղած են և գերազանց դիրքերու հասած են: Այսօր արհեստներու ոլորտը պակասած է ժողովուրդներէ ներս, օրինակ՝ կօշկակարութիւնը, դերձակութիւն...: Առաջ մարդիկ դերձակի մօտ կը կարուէին իրենց նախընտրած հա-

գուստները, իսկ այսօր պատրաստ կարող են որևէ մէկ խանութ անել: Նոր սերունդը հակուած է անելի ուսման և անելի կը մասնագիտանայ իր նախընտրած ծիրէն ներս՝ ըլլայ անհկա երկրաչափութիւն, փաստաբանութիւն, բժշկութիւն, տնտեսութիւն...:

Նախկինում լիբանանահայերու 10%-ը միայն համալսարանական կրթութիւն ունէր, իսկ այսօր՝ 90%-ը: Հայ ժողովուրդը որ ճիւղի մէջ ալ ըլլայ՝ կը յաջողի իր աշխատասիրութեամբ և յամառ կամքով: Արհեստաւոր էր և յաջող էր, բայց արհեստաւորի մակարդակին վրայ չմնաց և ինքզինք անելի վեր հանեց: Արհեստաւորներու զուակներ այսօր արդէն բժիշկ են, փաստաբան, ճարտարապետ: Թէկուզ արհեստաւորներու թիւը պակասած է, բայց հայ արուեստագէտներու թիւը շատցած է: Շատ նշանաւոր գծագրիչներ, երգահաններ, խմբավարներ ունինք»:

«Հայերն ընդհանրապէս պետական կառոյցներու մէջ չեն աշխատիր և կը նախընտրեն իրենց սեփական գործը, պիզնեսը ունենալ: Կարելի է դա հայերու սովորութեան մէկ պատճառը ըլլայ: Նախկինում ընդհանրապէս մեր մեծ հայրերը չէին ձգտեր պետական մարմիններու մէջ աշխատիլ, որովհետև մանաւանդ արաբերէն լեզուն լաւ չէին տիրապետէր, իսկ այսօր հայ երիտասարդը սկսած է ներառնուիլ պետական աշխատանքներու և կազմակերպութիւններու մէջ, որովհետև արաբերէն լեզուն լաւ գիտէ, և այդ, լիբանանեան սահմանադրութեան համաձայն, մեր իրաւունքն է: Հայ ըլլալը երբեք արգելք չէ պետական մարզ մտնելու և բարձր պաշտօններու հասնելու և կամ ստանձնելու համար: Բայց ըստ երկրի սահմանադրութեան՝ երկրի նախագահը պէտք է ըլլայ Մարոնի համայնքէն ներկայացուցիչ...: Բայց ընդհանրապէս պէտք է ըստէ՝ արգելափակումներ չկան հայ ազգի նկատմամբ»:

«Յետպատերազմեան շրջանին, կարող եմ ասել, թէ գաղութը երկու խաւերի վերածուեց, միջին դասակարգ չմնաց, մնաց համեստ դասակարգ և վերնախաւ: Վերնախաւի մարդիկ իրենց աշխատանքները ունեն թէ՛ էստեղ և թէ՛ այլ երկրներում, գնում-գալիս են: Համեստ խաւը ընդհանրապէս բանուոր դասակարգն է, որ իր առօրեայ ապրուստի համար աշխատում է: Եթէ պայմանները թոյլատրում են, գործ կայ՝ աշխատում են: Իսկ եթէ գործ չկայ, ուրեմն տնտեսապէս վատ վիճակի մէջ են:

Գործ չկայ այսօր այստեղ: Երիտասարդութիւնը ապրուստ ապահովելու համար էստեղ չի, Արաբական ծոցի երկրներ առաւելաբար գնում

են նև Երոպա, նև ուրիշ երկրներ, չեն գաղթած, ժամանակաւորապէս աշխատանքի համար գնացել են: Լիբանանը փոքր շուկա է, մասնաւոր արտադրութիւններ չունի, դրուածքը *touristic* է՝ ճաշարաններով, զուարճութիւններով տեղերով, և այս բոլորը մեծ աշխատանքներ չեն ապահովեր: Մի խօսքով՝ համեստ խաւը աւելի է, քան վերնախաւը: Այս բոլորը կայ նաև ...տուրիստիկ գաղթականները, որոնք ժամանակաւորապէս կամ մնայուն այստեղ են մնալու, նրանք էլ չգիտեն, բայց մեծամասնութիւնը ժամանակաւոր էստեղ բնակութիւն է հաստատել: Նրանք էլ երկու դասակարգի բաժանուած են: Ոմանք արդէն պիզնես ունեն, և ոմանք ալ օրապահիկ են ապրում, մինչև որ դուր բացուի և գնան այլ երկիր:

Հայերը ընդհանրապէս արհեստներով ճանչցուած են՝ ոսկերչութիւն, գորգագործութիւն, կօշկակարութիւն...: Բայց վերջին տարիներուն, երբ տեխնիկան կը զարգանայ և աւելի պանքի, դրամատնային ծառայողական սպասարկութիւնները կը զարգանան, մեր երիտասարդութիւնը սկսած է իր ուսմամբ դէպի այդ ոլորտի մէջ հմտանալ: Այսօր եթէ ուզենք արագ ակնարկով մը նայինք, մենք շինարարութեան մէջ որոշիչ դեր ունինք Լիբանանէն ներս: Մեծ հաստատութիւններ կան, որոնց նախաձեռնողները հայեր են: Տնտեսական իմաստով իբրև գործարարներու սենտիքայի և այլ սենտիքաներու մէջ հայերը մեծ աշխատանքներ կը տանին»:

Ծրջապատի ընկալումները հայերի սկատմամբ

«Լիբանանցիները ընդհանրապէս հիացմունքով ու յարգանքով կ'արտայայտուին հայերու մասին: Օրինակ՝ Հայոց ցեղասպանութեան առթիւ մեր կազմակերպած քարոզարշաւը, որը միասնականութեան ցուցանիշ էր: Լիբանանահայը միշտ աչքի ինկած է իր աշխատասիրութեամբ, ճարտարութեամբ, մանաւանդ ձեռարուեստի ծիրէն ներս: Մենք նշանաւոր ոսկերիչներ, նկարիչներ, հագուստի տիզայներներ ունինք: Լիբանանցին կը զգայ, թէ հայը յաջողած ազգէ Լիբանանի մէջ, յաջողածներու խումբին կը դասուի: Իսլամ համայնքները և քրիստոնէաները տարանջատուած են տարբեր շրջաններու մէջ: Վերջին 20 տարիներուն լիբանանցի քրիստոնէաները շատ աւելի դրուատիքով կը խօսին հայերու մասին: Իսլամները նոյնպէս գիտեն հայերու մասին, որ հայերը ուսումնաստենչ, աշխատասէր, օրինակելի ժողովուրդ են: Հայերը բոլորիկ եկան Լիբանան, թիթեղածածկ տուններու մէջ ապրեցան, բայց այսօր արդէն վերածաղկած են: Արաբ լիբանանցիները կը տեսնեն, թէ 50 տա-

րիներու ընթացքին հայերը բացարձակ ոչնչությունէն ինչեր ստեղծեցին, շքեղ տուներ ու խանութներ ունեցան, և մեծամասնութիւնը լաւ վիճակի հասաւ: Մէկ խօսքով՝ կապերը բարի դրացիական են»:

«Ոչ միայն Լիբանանի մէջ, այլև Միջին Արևելքի մէջ կարող եմ ասել, թէ հայութեան նկատմամբ բացառիկ բարեացակամ տրամադրութիւն կայ: Մեզ նախորդող սերունդները պարկեշտ աշխատանքով ու կեանքով ապրած են: Այո՛, իբրև գաղթական եկած են այստեղ, ոչ միայն իրենց կեանքն են վերականգնել, այլև կանգնել են, կեանք են տուել տեղական տնտեսութեան և շատ մը ոլորտներում, որոնց համար տեղացիք երախտապարտ են: Օրինակ՝ պաղեստինցիք էլ գաղթել են և մինչև այսօր բան չեն տուել համարեա Լիբանանին և կամ Միջին Արևելեան այլ երկրներին, այլ ՄԱԿ-ի և կամ ուրիշ կազմակերպութիւնների հաշուին են ապրում: Հայը այդ հովանատրութիւնը չի ունեցել, իր աշխատանքով եկել է և իր կեանքն է վերականգնել այստեղ, հաստատուել է, կառոյցներ է ստեղծել և նպաստել տեղական կեանքի վերելքին: Տեղացիք այդ չեն կարող մոռանալ, և Հայոց ցեղասպանութեան 100-ամեակը լաւագոյն առիթն էր, որ մեզ շրջապատող միւս ժողովուրդները լսէին, թէ ինչ են ասում և մտածում մեր մասին, և առիթները ստեղծուեցին պետական բարձրագոյն մակարդակով և տեղական մակարդակով, և իրենք էլ արտայայտուեցին այն, ինչ որ կարծում էինք, որ պիտի ասեն: Եւ սա մեզ չի վերաբերում, այլ Հայաստանին է վերաբերում: Իրենք էլ գիտեն, որ այլևս Հայաստան կայ, և իրենք ալ գնում-գալիս են Հայաստան, շատերը պիզնետ են դրել, շատերն ալ միջպետական յարաբերութիւններ են մշակում Հայաստանի հետ և փոխադարձ շահեր ունեն: Իրականութեան մէջ պէտք է ըսել, որ մեր համբար այնքան լաւ եղած է, որ շատերու նախանձի պատճառը դարձած ենք: Մեր բոլոր կենցաղովը՝ ըլլայ ստեղծագործութեամբ, աշխատասիրութեամբ, բարոյական ընտանիքի հասկացողութեամբ, իբրև ազգային հաւաքականութիւն ժողովուրդ, այս բոլորը կու գան մեզ իւրայատուկ դարձնելու Լիբանանի գաղութին մէջ: Իրենք գիտեն, որ կրնանք արաբերէն լաւ խօսիլ կամ արաբական մշակոյթը սիրել, բայց իբրև ազգ և իբրև ամբողջութիւն մեզի համար մնացած է եկեղեցին, դպրոցը, մշակոյթը... այլ խօսքով՝ մեզի համար առաջնահերթութիւն են, և առիկա իրենք կը գնահատեն: Լիբանանը համայնքային դրութեամբ ստեղծուած է, ունինք մարոնիները, տիւրքիները, շիաները, ասորիները, հայերը: Իրա-

քանչիւր համայնք ունի իր ներքին օրէնքները և այդ օրէնքներով կը կառավարուի, հակառակ որ մենք բոլորս Լիբանանի օրէնքի ենթակայ ենք, բայց մենք միաժամանակ ենթակայ ենք մեր ներքին համայնքի օրէնքներուն: Իրենք կը հիանան մերինին վրայ, որովհետև մենք կարողացած ենք այդ իւրայատկութիւնը պահել: Եւ Լիբանանի մէջ թերևս տարբերելով միւս գաղութներէն, մեզի համար ատելի դիրքին եղած է այդ ինքնութիւնը պահպանել՝ յատկապէս Լիբանանի իւրայատկութիւնը նկատի ունենալով: Օրինակ՝ Ֆրանսայի և Ամերիկայի պարագային նոյնն է, քաղաքացի ըլլալը ամէն բան վեր է: Լիբանանի մէջ այդ լիբանանցի քաղաքացին դժբախտաբար նախ մարոնիթ է, տյուրզի է, շիա է, հայ է և յետոյ լիբանանցի: Ասիկա ճշմարտութիւն է: Մեր որքան ալ փորձենք ըսել, թէ մենք լիբանանցի ենք, բայց ամէն մէկուն խորքը երբ նայիս, իր ինքնութիւնը կը տեսնես»:

«Այստեղ՝ Լիբանանի մէջ, հայերը իբրև լաւագոյն քաղաքացիներ առաջին դիրքի վրայ կը գտնուին: Այսինքն՝ բոլոր մեզ սիրող և չսիրող լիբանանցիներու վկայութեամբ, մենք աշխատասէր, ստեղծագործ, հաւատարիմ, անկեղծ և ուղղակի չխաբող մարդու համբաւ թողած ենք: Նաև մենք այդ համբաւը յաջողած ենք ունենալ, որովհետև Լիբանանի քաղաքացիական պատերազմին, մենք՝ իբրև հայութիւն, մերժած ենք բոլոր կուսակցութիւններով մէկ մաս կազմել այդ պատերազմին՝ այս և կամ այն կուսակցութեան դէմ կողմնորոշուելով և կամ դէմը ըլլալով: Այդ արդիւնք էր մեր «չէզոք քաղաքականութեան»: Այդ օրերուն, եթէ ուզէինք անցնիլ անցարգելներէն, եթէ զիտնային, որ հայ ենք, հեշտութեամբ կը թողէին: Մենք նաև այդ համբաւը շահած ենք մեր կուսակցութեան՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շնորհիւ: Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն մշտապէս իր ժողովուրդին բոլոր խնդիրներուն կողքին է եղած, և իր խնդիրները լուծած է: Եւ ժողովուրդը այս կուսակցութեան նկատմամբ կոյր վստահութիւն ունի, և այստեղ բնակող ժողովուրդին 80 տոկոսը այս կուսակցութեան քաղաքական ուղեգիծին հետևող ժողովուրդ եղած է: Եւ մենք՝ իբրև կուսակցութիւն, երբ մեր քաղաքական համաձայնութիւնները, ընտրական դաշինքները կը գոյացնենք ու կը կնքենք, և երբ մենք խօսք կու տանք, որ Աւօ Կիտանէանին կողքին ենք, կը նշանակէ՝ մենք անոր կողքին ենք: Քուէարկութեան ժամանակ մեր 80 տոկոսը քուէարկողները իրենց ձայնը կու տան Աւօ Կիտանէանին: Ասի մեր վարկը շատ կը բարձրացնէ, ըսելով որ

մենք մեր խօսքը յարգող ժողովուրդ ենք, և մեր ժողովուրդը ընդհանրապես իր քաղաքական ղեկավարութեան հետևող ժողովուրդ է: Իսկ այն մարդիկը, որոնք մեր ձայնը չեն ստանար, մեզ ոչխարներու կը նմանցնեն, ոչխար կը կոչեն, կ'ըսեն, թէ տեսակէտ չունինք...:

Ինչպէս որ ըսի, որ հայը մեծ համբաւ ու յարգանք կը վայելէ Լիբանանի մէջ: Եթէ մէկը գործ պիտի վստահուի, և եթէ հայ և լիբանանցիներկայացած է, այդ գործը հայուն կը վստահին: Բայց կան փոքր թիւով տեղացի լիբանանցիներ, որոնք հայերուն չեն սիրեր: Նոյնիսկ լսած եմ, որ մարդիկ հայեոյած են մեզ, թէ «ինչո՞ւ այդ նաւը մեզ այստեղ Լիբանան բերաւ, թէ ինչ գործ ունիք դուք այստեղ, դուք կ'որոշէք...»: Այս խօսքերը ըսողները առաւելաբար քուէարկութեան ժամանակ տուժող, ջրաղթող, տգէտ կողմերն են: Այսօր եթէ մենք Սփիւռքի մէջ կարողացած ենք պայքարիլ, գոյատևել, այդ եղած է շնորհիւ Լիբանանի, Մուրիոյ, Պարսկաստանի գաղութներուն:

50 տարի առաջ, երբ եկանք այստեղ, չէինք գիտեր արաբերէն, արաբական մշակոյթին ծանօթ չէինք, ստիպուած իրարու հետ շփուած ենք, որուն իբրև արդիւնք մտերմացած ենք: Հիմա այդպէս չէ: Հիմա դժբախտաբար շատ բաց ենք, այնքան որ մեր ամուսնութիւններու 40 տոկոսը խառնամուսնութիւնն է, իսկ մեր զաւակներու 40 տոկոսը օտար վարժարաններ կը յաճախէ: Այսօր տկարութիւնը ունինք մեր հայկականութիւնը պահելու թափը շարունակել: Այսօր կարելի է հայու հանդիպիլ, որուն անունը հայկական է, բայց հայերէն չի կրնար խօսիլ, որովհետև ծնողներէն մէկը հայ չէ և կամ հայկական դպրոց չէ յաճախած: Տակաւին շատերու մօտ կայ այն քաղքենիական հոգեբանութիւնը, որ մեր զաւակները պէտք է ուղարկել օտար վարժարաններ, որովհետև այնտեղի շրջանաւարտներու ապագան շատ անլի փայլուն կրնայ ըլլալ, և օտար մարդոց հետ շփուելով՝ կրնայ ըլլալ այդ մարդիկը կրնան ապագային իրենց օգտակար դառնալ»:

«Լիբանանահայութիւնը մէկ սխալ ունեցաւ. 1958 թուականին, երբ քաղաքական կողմին մաս կազմեցինք, ատիկա պատճառ դարձաւ, որ հայութիւնը շատ վաասէ: Անկէ յետոյ, մեր քաղաքական ղեկավարները հասունութիւն ունեցան ըսելու համար, թէ այս պատերազմը, որ տեղի կ'ունենայ Լիբանանէն ներս, լիբանանցիին պատերազմը չէ: Հետևաբար, մենք որ կողմն ալ անցնինք, պիտի ծառայենք որպէս գործիք միսին ձեռքը: Ուրեմն, հայը մնաց միշտ չեզոք, և ատոր համար ալ Լիբա-

նանի պատերազմի ժամանակ լիբանանահայ տղաք, առևտրականներ, որոնք ուտելիք կը փոխադրէին, որմէկ կողմն որ անցնէին՝ ըլլայ անիկա արևելեան կամ արևմտեան կողմէն, իրենք անցնելու ազատութիւնը և դիրութիւնը ունէին: Գիտէին, որ հայերը քաղաքական գործօն մը չէ, ատոր համար հայերը շատ յարգուած էին: Իրենք ուզեցին այս պատերազմին անպայման հայկական կողմին ներառել, սակայն եկեղեցին, քաղաքական կուսակցութիւնները հասունութիւնը ունեցան քով քովի գալու, կողմնորոշուելու, որ ոչ մէկ քաղաքական հոսանքի պիտի մասնակցին: Եւ ատիկա ձևով մը փրկեց կողմ ըլլալէ և ֆիզիքական վնասներ կրելէ»:

Կրթութիւն և մշակութային կյանք

«Փորձում ենք մեր ասանդական հասկացողութիւններով, բայց նոր պայմաններով մեր համայնական կեանքը աշխոյժ վիճակի մէջ պահել: Սովորաբար մեր համայնական կեանքը ապրում ենք մեր եկեղեցիների, դպրոցների, ակումբների, կառոյցների մէջ և մեր միութենական շրջագծի մէջ: Ուզում ենք մեր ունեցած 4 փոքր վարժարանները, որը գտնուում են Պուրճ Համուտի մէջ, տեղափոխել մի արդիական համալիրի մէջ և նաև այդ համալիրի կողքին ունենալ արհեստից մասնագիտական վարժարան: Անցեալում մեր դպրոցներն ու եկեղեցիները թաղի մէջ էին, և դպրոցը երեխաների համար ապահով միջավայր էր: Ամէն մարդ այք էր պահում քո երեխայի վրայ, որովհետև հայու հարազատն էր: Ժամանակի ընթացքին, ինչպէս Հայաստանի մէջ, նոյնպէս ալ Լիբանանի մէջ ալ մշակոյթի սէրը կը պակսի, գրականութեան հանդէպ հետաքրքրութիւնը ատելի նուազած է, բայց մնացած մարզերուն մէջ՝ ըլլայ մարզական, քաղաքական, տնտեսական, միշտ ներկայութիւն ունեցած ենք»:

«Լիբանանի մէջ ունիք ատելի քան 25 դպրոցներ, որտեղ ամէն ինչ կը դասաւանդուի՝ հայ լեզու, գրականութիւն, հայոց պատմութիւն...: Հայ երիտասարդը իր երկրորդական վարժարանէն յետոյ համալսարան կը յաճախէ, այնտեղ կը հանդիպի բազմաթիւ օտար երիտասարդներու, անոնց հետ կ'ընկերանայ և կ'ամուսնանայ: Ամերիկեան համալսարանի բժշկագիտական, ճարտարագիտական մարզերը նկատի պիտի ունենայինք տարուայ լաւագոյն ուսանողներու անունները պատին վրայ կը դնէին: Այդ ցանկին վրայ 8 հոգին մեր հայ ուսանողները կ'ըլլային: Կարգ մը դպրոցներ փակուած են արտագաղթի պատճառով,

հայկական դպրոցներու մէջ աշակերտութեան թիւը նուազած է: Ունինք մեծ թիւով հայ աշակերտներ, որոնք օտար վարժարաններ կը յաճախեն: Լիբանանի միւս համայնքները նման երևոյթ չունին և եթէ ունին՝ շատ քիչ է թիւը համեմատած հայ աշակերտութեան հետ: Լաւ ուսանողներու թիւ ունինք համալսարաններու մէջ: Հայկական կրթական հաստատութիւնները աւելի աժան ուսումնավարձերով ուսում կը ջամբեն, քան այն դպրոցները, որոնց ուսումնավարձերը 10000–15000 տոլար են: Ես նկատի չունիմ այն աշակերտները (որոնց թիւ շատ քիչ է), որոնք կը յաճախեն պետական վարժարաններ, որտեղ անվճար է, և անոնք նիւթական չգոյութեան պատճառով այնտեղ կը յաճախեն: Մեր դպրոցները՝ ըլլայ անիկա Առաքելական, Կաթողիկէ և Բողոքական, ընդհանրապէս այդ ջբառը ընտանիքներուն անվճար ուսում կը տրամադրեն: Հայ դպրոց յաճախող աշակերտին համար ամէն պայմաններ ստեղծուած են, որպէսզի ինք չայլասերուի այլ մշակոյթներէ: Այն ընտանիքները, որոնք իրենց զաւակները օտար դպրոց կը դրկեն, քաղքենիացած հոգեբանութենէն տարուելով կ'ուղարկեն իրենց զաւակները, և ոչ թէ աւելի աժան ուղարկելու ցանկութեամբ: Մեր կառոյցներու մէջ կարելի է առանց ոչ մի դահեկան վճարել, եթէ իսկապէս այդ երեխան ջբառը ընտանիքի զաւակ է: Այսօր մեր ազգային դպրոցներու մակարդակը շատ բարձր է, և մեր ուսանողները պետական քննութիւնները ընդհանրապէս լաւ ու յաջողութեամբ կը յանձնեն:

Ունինք տակաւին մեր սորակառոյց Համալիրը, որտեղ համախմբելու ենք մեր աշակերտութիւնը, որպէսզի անոնք օտար դպրոցներ չյաճախեն: Այս համալիրը նոր տեխնոլոգիաներով պիտի օժտուի: 29 հայ վարժարաններ գոյութիւն ունի Լիբանանէն ներս՝ տարբեր համայնքներու պատկանող: Բոլորն ալ լաւ դիրքի վրայ են և լաւ ուսում կու տան հայ աշակերտին: Կրթական մարզէն ներս մեր աշակերտութեան թիւը հայկական վարժարաններուն մէջ 15000 էր: Ես ապի կ'ըսեմ, որովհետև միշտ Ուսումնական Խորհուրդի մէջ եղած եմ: Այսօր հայկական վարժարաններու աշակերտութեան թիւը 5000 է, դժբախտաբար այդպէս է: Մեր դպրոցներու մէջ 4 լեզու կը դասաւանդենք: Ծնողներ յաճախ կը դիմեն, որ հայ լեզուն մեր դասացուցակէն հանենք և աւելորդ բեռ կը համարեն հայ լեզուն: Ներկայի հայ ծնողներ այլևս գաղթականութեան այն ծնողները չեն, որոնց գոյատևման պայքարը կար: Իսկ հիմա այդ փափաքը կամ պայքարը նուազած է, անցած է, և այնքան ալ կարևոր չեն տեսներ հայ լեզուն: Շաբաթական միօրեայ հայ լեզուի դասաւան-

դուրսիները և ամառուայ խտացեալ դասընթացները բաւական կը համարեն»:

«Լիբանանի Կաթողիկէ Մեսրոպեան վարժարանը հիմնուած է 1939 թուին, և արդէն 75-ամեակը բոլորած ենք: Սա լիբանանահայ կրթական առաջատար վարժարան է: Նուագագոյնը թուային առումով, այսինքն՝ ամենաշատ թիւ ունեցող վարժարանն է: Այս համալիրին մէջ գոյութիւն ունին զոյգ վարժարաններ՝ Մեսրոպեան երկրորդական վարժարան և Մեսրոպեան Արուեստից վարժարան: 2014–2015 կրթաշրջանին աշակերտութեան թիւն է 798 աշակերտ, իսկ Արուեստից վարժարանը ունի 405 աշակերտներ: Անձնակազմը 160 անձերէ կը բաղկանայ: Մեր մօտ աշակերտները կ'ընդունուին 1.5 տարեկան սկսեալ մինչև Պաքալորիա (12-րդ): Մեր մօտ կրթական ծրագիրը 15 տարիներու կ'երկարի: Երկրորդական ուսումը 3 տարի է՝ 10–11–12 դասարաններ: 12-րդ ասարտական դասարան է: Ունինք նաև մանկապարտէզ՝ բողբոջ, կոկոն, ծաղիկ: Իսկ վերջերս նաև ունեցանք մանկամտօր, ուր կ'ընդունինք 1.5 տարեկան մանուկներ: Աշակերտութեան թիւի առումով ունեցանք ելևէջ: Այսինքն՝ վերջին 15 տարիներու ընթացքին առաւելագոյնը ունեցած են 851 աշակերտներ, ետքը գաղթի մը հոսանք մը այսպէս յառաջացաւ, իջանք 760-ի, բայց հիմա վերստին բարձրացանք 800-ի: Մենք ֆրանսական թեքումով վարժարան ենք, այդ պատճառով չկրցանք սիրիահայ աշակերտ ընդունիլ, որովհետև անոնք, որոնք Հաւլէպէն կու գան, ընդհանրապէս անգլիական թեքումով վարժարաններ են: Հետևաբար, կարողացայ ընդունիլ միայն մանկապարտէզ յաճախող աշակերտներ, որոնք իրենք այնտեղ նոր ֆրանսերէն կը սորվին: Աշակերտութեան 93 տոկոսը հայ է, իսկ 7 տոկոսը օտար ամուսնութեան արդիւնքն է, այսինքն՝ կամ հայրը հայ է և կամ մայրը: Կ'ըսուի, թէ որքան հայկական վարժարաններու մէջ աշակերտութիւն կայ, եթէ ոչ նոյնքանը, բայց բաւական բարձր թիւով օտար վարժարան յաճախող հայ աշակերտներ ունինք: Օրինակ՝ որ հայ տղան ամուսնացած է արաբ կնոջ հետ: Կրնայ ըլլալ իրենց զաւակը հայկական դպրոց դրկեն, բայց երբ երեխան դպրոցէն տուն կը վերադառնայ, տանը իր դասերը ուզէ սորվիլ, մայրը չի կրնար իր զաւկին դասերուն նային, որովհետև հայերէն չի գիտեր: Ստիպուած իրենց զաւակը կ'ուղարկեն այլ արաբական վարժարան: Կան երիտասարդներ, որոնց հայրը կամ մայրը հայ չեն և օտար դպրոցներ կը յաճախեն, անոնք, սակայն, կը յաճախեն միու-

թիւններ, ակումբներ և գերծ չեն մնար հայ մշակութային կեանքէն: Ընտանիքն ալ այս ծիրէն ներս մեծ դերակատարութիւն ունի: Մանաւանդ որ Լիբանանի մէջ սկսած երևոյթ մը, որ հայ ծնողներ իրենց գաւակները օտար վարժարան կ'ուղարկեն և իրենց գաւակները հեռու կը պահեն հայ մշակոյթէն: Պատճառը օտար ամուսնութիւններն են: Հայերու կայ նաև այն հոգեբանութիւնը, որ օտար վարժարան յաճախելը և կամ օտար միջավայրի մէջ ըլլալը շատ ատելի լա է: Որովհետև օտար վարժարանները համեմատաբար հայ վարժարաններու ուսումնաւարձերու հետ շատ ատելի թանկ է: Հետևաբար, հարուստ հայ ծնողները կը մտածեն, քանի որ թանկ է՝ ուրեմն ատելի լա է: Հայ դպրոցին ջանքած ուսուսմը և մշակութային արժէքները անփոխարինելի են»:

«Հայ դպրոց յաճախող աշակերտութեան թիւը նուազած է: Դպրոցին մէջ ալ դժբախտաբար չմնացին այն հաւատաւոր ուսուցիչները, որոնք մեր ժամանակուայ ուսուցիչներն էին: Երբ մեր ուսուցիչները դասարան կը մտնէին, իրենց համար հայերէնի պահը վերացում էր: Մեզի չէին նստեր քերականութիւն չէին սորվեցներ, այլ կը խօսէին հայութենէն, մեզի կը կարդային բանաստեղծութիւն և այդ բանաստեղծութեան ընթերցանութեան ընդմէջէն մեր հոգին ջերմացնող նիւթերու մասին կը խօսէին: Հոն է, որ դուն կը տեսնես, որ ուսուցիչդ որքանով կ'սայրի այդ հայութիւնը և անոր մէջ կը տեսնէ իր պատկերը: Մայրը կու գայ, յետոյ կու գայ ուսուցիչը: Կենսական գործօնը այս երկու միջավայրերն են:

Նախապէս մայրն էր դաստիարակում երեխուն, այսօր մայրը հարկադրաբար աշխատանքով է զբաղուած, այնքան ալ ժամանակ չունի երեխային տրամադրելու համար: Հետևաբար, դպրոցներու կարևորութիւնը ատելի է շեշտուելու, պայմանաւ, որ մենք ալ ճիշտ ձևով արժէտրենք դպրոցները: Մեր դպրոցները միայն վկայական, գիտելիք չեն տալիս: Մեծ դժուարութեամբ ենք պահում ազգային դպրոցները, միլիոններ են ծախսում, նոյնիսկ պարտք ենք անում, որպէսզի ազգային արժէքներ փոխանցուեն մեր երեխաներին: Եթէ դպրոցը չկայ, չկանք նաև մենք: Շատերը խորհում են, որ առանց հայերէնի էլ կարելի է հայ լինել, բայց առանց հայ հոգիի ես հայ չեմ կարող տեսնել: Հայ հոգիէն ներս թափանցելու համար հայ լեզուն բանալի է»:

Մշակութային կյանք

«Ունինք կուսակցութիւններ, միութիւններ և ակումբներ, որտեղ հայ ծնողը կ'ուղարկէ իր գաւակը ատելի հայօրէն մեծնալու և դաստիա-

րակուելու: Այս բոլորին կողքին կը գործեն մշակութային միութիւնները, որոնց գլխատըր նպատակն է անոր ներսիդին դրոշմել հայ մշակոյթը, հայ արուեստը, նկարչութիւնը...: Հետևաբար, Լիբանանի մէջ հայ ընտանիքը տակաւին կը շնչէ, կը պահպանուին հայ ասանդութիւնները և սովորոյթները: Անկախ մշակութային միութիւններէն, որոնք գործող են, և օրըստօրէ անոնց աշխատանքը կը բարգաւաճի, կան անհատ մարդիկ, որոնք ունին երգչախումբեր, պարախումբեր, կան քանդակագործ և նկարիչ անհատներ...: Երբեմն այնքան շատ կ'ըլլան մշակութային միջոցառումները մէկ շաբթուայ մէջ, որ կը զգանք, որ խճողուած ենք: Բարեբախտութիւնը այն է, որ այս միջոցառումներու ընթացքին Հայաստանէն կը հրաւիրուին տարբեր հիւրեր, ըլլան անոնք պարախումբեր, երգչախումբեր, թատերական խումբեր, արուեստագէտներ, որպէսզի մէկ կողմէ այդ ելոյթները թէ՛ մեր ժողովուրդին և թէ՛ օտարին, միւս կողմէ նաև Հայաստանէն կու գան պարուսույցներ, զծանկարիչներ, ձայնամարզութիւն ընողներ...: Մենք ալ, իբրև ռատիօկայան, մեր դէրը ունինք այդ մշակութային ոլորտէն ներս, որովհետև մենք երգ ու երաժշտութիւն կը սփռենք: Երգ ու երաժշտութիւն սփռելու մեր գործը քիչ մը դժուար է, որովհետև մեր ռատիօկայանին պարագային մեր առաքելութիւնը այն է, որ մենք հայ երաժշտութիւնը պէտք է պահենք հայկական format-ին մէջ և զիջումներ չանենք: Այսինքն՝ ռապիզ հնչեղութեամբ, թրքական երանգներով երաժշտութենէ հեռու պահենք մեր ռատիօկայանը, այդ երգիչները մեզ մօտ չհրաւիրենք, անոնց PR-ը չկատարենք: Սակայն մենք կը հրաւիրենք մարդիկ, որոնք կը խօսին մշակութային միջոցառումներու մասին, այսպիսով մենք կը քաջալերենք զիրենք»:

«Լիբանանի մէջ գոյութիւն ունի երկու ռատիօկայան՝ մերը և «ռատիօ Սևանը»: «Ռատիօ Սևանը» բարձրորակ ռատիօկայան է և ունի իր սկզբունքները: Ես գիտեմ, որ անոնք լաւ մրցակիցներ ու մասնագէտներ են և իրենց գործը լաւ կը կատարեն: Այդ իմաստով, կայ նաև Համազգայինը, որ իր պարի, նկարչութեան, երգի, արուեստի դպրոցները ունի: Այս միութիւնը, անկախ իր աշակերտներու ելոյթներու ցուցադրութենէն, իր միջոցառումներուն համար դուրսէն հիւրեր կը հրաւիրէ: Երկու անգամ Համազգայինի և Բարեգործական միութեան միջև համագործակցութիւն մը եղաւ: Հետևաբար, ուր որ երթաք, որուն հետ ալ հանդիպիք, ըլլայ անիկա ղեկավար, արուեստագէտ և կամ մշակոյթի

գործիչ, բոլորին մեկնակետը կամ Լիբանանէն և կամ Սուրիայէն եղած է: Այսինքն՝ այս 2 գաղութներն են, որոնք կը պահեն Սփիտքը և Սփիտքը իրենցնով կը շնչէ: Մենք կը շարունակենք մեր աշխոյժ կեանքը, ճիշդ է, մենք ալ տնտեսական և ապահովական դժուարութիւններէ անցած ենք և կ'անցնինք, սակայն չեն գիտեր, Լիբանանի մէջ գաղտնիք կայ, որտեղ հայը հայ կը պահուի, մշակոյթը, արուեստը, կուսակցական գաղափարական դէմքը կը պահուի:

Այս բոլոր ազդակները մեծ օղակ մըն են, որպէսզի մենք կարենանք հայապահպանման գործը տանիլ: Անշուշտ պաշտօնական տօները իրենց մեծ դերը ունին՝ Ապրիլ 24, Ս. Զատիկ, անկախութիւն, Ծնունդ: Օրինակ՝ Ամերիկայի մէջ Յունուար 5-ին և 6-ին արձակուրդ չեն առներ, բայց Լիբանանի մէջ պետական արձակուրդ է և ամէն տեղ կը գոցուի: Մեր թատրոնը, մեր երգարուեստը, մեր երաժշտական մասնագիտական բաժինը կը գերազանցէին Լիբանանի տեղական ուժերը բոլոր մարզերու մէջ: Եւ նոյնիսկ կրնամ ըսել, թէ մեր հայ թատերագէտները՝ Վարուժան, Խտշեան, Պերճ Ֆազլեան, Սադաման... եկան արաբական թատրոնին իրենց ներդրումը բերելու: Երէկ, իրօք, մշակութային եռուն կեանք ունէինք, իսկ այսօր մշակութային կեանքը այնքան ալ եռուն ու բեղուն չէ: Համազգայինը, ՀԵԸ-ն, ՀԲԸՄ-ն մինչ օրս կարողութիւն ունին վառ պահելու երկրի մշակութային կեանքը՝ իրենց զանազան միջոցներով՝ գրական, երաժշտական, թատերական, նկարչական ցուցահանդէսներով: Հայկազեան համալսարանը, հակառակ կրթական հիմնարկ ըլլալով, իր ներդրումը ունեցած է մշակութային բնագաւառէն ներս՝ իր հարուստ գիտաժողովներով և միջոցառումներով: Այո, թէկուզ լիբանանահայ գաղութը մտահոգ է իր ապագայով, այն իրենք կը շարունակեն պայքարիլ այդ հոսանքին դէմ՝ հաւատալով, որ ամէն բան պիտի բարելաուի, և իրենք պիտի շարունակեն իրենց դերը հայապահպանման գործընթացին մէջ: Արաբական մշակոյթը այնքան ալ տպաւորիչ չէ մեր հայ երիտասարդին համար, որքան ամերիկեանն ու երոպականը: Բարեգործական միութիւնը ունի երիտասարդական, թատերական, պարաօմբային իր միութիւնները, ուր հայ երիտասարդը առիթ ունի առնչուելու հայ մշակոյթին հետ»:

«Մշակոյթի առումով լիբանանահայութիւնը ունի հարուստ և աշխոյժ մշակութային կեանք: Ներքին մշակութային կեանքը շատ աշխոյժ է, Հայաստանի հետ յարաբերութեամբ անելի աշխուժացել է, յաճախ

նկարչական ցուցահանդեսներ են տեղի ունենում, տարբեր արուեստագետների աշխատանքները ըմբռնվում ենք էստեղ: Սուտ չխօսեմ, հայաստանցիների նման օտար մշակոյթներին շատ չենք բացուել: Այդ մէկը պակասում է: Թերևս այն պատճառով, որ մենք Սփիւռք ենք, արդէն շատ ենք բացուել օտարներին մշակոյթին, ուրեմն ատելի մենք մեր մէջ մեր աշխատանքներով հարկադրաբար կցկուում ենք: Բացառութիւն է, որ վերջին 20 տարիներին Հայաստանի հետ այս յարաբերութիւնները մեզ չեն վախեցնում, ատելի հանգիստ ենք, թէև մէկ-մէկ վախենում ենք, որովհետև Հայաստանից էլ մէկ-մէկ վլասս է գալիս (կատակով՝ արևմտահայերէնը քայքայեցիք): Ձեր լեզուամտածողութիւնը շատ է ազդել մեր լեզուամտածողութեան վրայ, մէկ-մէկ ձեզ ենք մեղադրում, մենք էլ իրատուք ունենք: Կարծում եմ, թէ Հայաստանում էլ լեզուն գոհ է: Այսօր, Սփիւռքահայերը չեն խօսում մաքուր, յստակ արևմտահայերէն, որովհետև հայաստանեան հեռուստաալիքները կան, ինչը ազդում է նրանց վրայ: Օրինակ՝ անձին հետաքրքիր է, իսկ հիմա հետաքրքիր ամէն ինչին էլ ասում են: Որտեղի՞ց եկաւ այս մէկը: Միջոցառում ի՞նչ է նշանակում: Բաւեր, որոնք մեզ մօտ գոյութիւն չունէին: Մենք այս բոլորը փոխարինող շատ ատելի ընտիր, գեղեցիկ բառեր ունենք: Մեր բառապաշարը խեղճացաւ: Հայաստանում ոչինչ չեն անում այս կացութիւնը դարմանելու համար: Մենք հոգսեր ունենք, Սփիւռքում հայերէնը պէտք է պահպանենք, առանց հայերէնի մենք սնանկանալու ենք, և այս իմաստով Հայաստանը պէտք է մեզ օգնի, օժանդակի, նպաստ բերի մեզ: Եթէ նոր բառեր չենք կարող յօրինել, ստեղծել՝ նոր կեանքին յարմարուելու համար, պէտք է հայերէն բառերով օժանդակի, ոչ օտարամուտ բառերով: Վերջապէս մենք Սփիւռքում չենք կարող լեզուի կաճատ պահել: Նոր սերնդի հայերէնի բառապաշարը շատ է խեղճացել:

ՁԼՄ-ները

«Լիբանանի համայնքը ունի 3 հիմնական թերթեր՝ «Ազդակ», «Արարատ» և «Զարթօնք» օրաթերթերը: Իւրաքանչիւր թերթ կը պատկանի կուսակցութեան մը և ձևով մը այդ կուսակցութեան քարոզչութիւնը կը կատարէ: Դաշնակցութիւնը ունի «Ազդակը», Հնչակեանը՝ «Արարատը», իսկ Ռամկավարը՝ «Զարթօնքը»: Կան նաև այլ պարբերաթերթեր, որոնք համայնքներու կը պատկանին: Բարեգործականն ունի իր «Խօսնակ» պաշտօնաթերթը: Դրանք ունեն յստակ բանաձևուած, կադապարուած մտքեր, որոնք կ'արտայայտուի լուրերու և յօդուածներու

մեկնաբանման ժամանակ: Առայսօր, դժբախտաբար, մամուլին մեջ այլամերժություն գոյություն ունի, և շատ հազուադեպ կը հանդիպիք այն երևոյթին, որ երբ այլ միութեան մը կամ կուսակցութեան մը միջոցառումը ուրիշ թերթի մը մէջ լոյս տեսնէ:

Իսկ քաղաքական գետնի վրայ իրաքանչիւր թերթ իր հայեցակէտով կը վերլուծէ ներլիբանանեան և համասփիոքեան երևոյթները: Բայց այսօր աւելի լուրջ խնդիր կայ: Նախապէս մեծ սերունդը ընթերցատէր էր, իսկ այսօր մամուլը շատերու համար թողոյթի կտոր է, և մամուլը մեծ անկում կ'ապրի: Բոլորը ինտերնետի վրայ իրենց ժամանակը կը վատնեն, տեղեկատուութիւնը շուտով ինտերնետի միջոցով կը ստանան, և այսպիսով թերթը լուրերու առումով ժամանակավրէպ կը դառնայ: Թերթերը պարտաւոր են ամէն օր լոյս ընծայել իրենց հերթական թիւը: Սա մեծ ծախս է թէ՛ տպագրական և թէ՛ աշխատավարձի առումով:

Բոլոր թերթերը կ'անդրադառնան թէ՛ հայկական, թէ՛ արաբական և թէ՛ միջազգային անցուդարձերուն, ինչպէս նաև համահայկական և համազգային թեմաներ կը քննարկեն: Օրինակ՝ «Ազդակի» առաջին էջին վրայ կը գտնէք թէ՛ հայաստանեան և թէ՛ լիբանանեան կարևոր լուրեր, ներսի էջերը ընդհանրապէս տրամադրուած են միւս հայ գաղութներուն ու միջոցառումներուն: Թերթերը ձևով մը օրկաններն են, որոնք քաղաքական, պատմական, գաղափարական, կնոջական, մշակութային հարցերու կ'անդրադառնան: Պէտք է նշել նաև՝ թերթերը ընդհանրապէս քաղաքական դիմագիծ ունին: Թերթերը քաղաքացիական պատերազմէն առաջ աւելի շատ քանակով լոյս կը տեսնէին, քան հիմա՝ տնտեսական, ապահովական, քաղաքական պատճառով:

Մեր երեք աւանդական կուսակցութիւններն ալ ունին իրենց թերթերը: Ունինք երկու ռատիօկայան և բազմաթիւ պարբերաթերթեր: Մամուլը մեր բոլորին մաս կը կազմէ, բայց անկեղծ ասեմ, չէ այն, ինչ որ է: Ընթերցողների թիւը նուազել է, հաւես չունեն երկար բան կարդալու, ֆեյսպուքային մշակոյթ է ստեղծուել, և մենք այդ բոլորից դուրս չենք: Այսօր Հայաստանի մամուլը ներկայ է մեր կեանքին մէջ, նրանք, ովքեր մօտիկ են, հետևում են նաև հայաստանեան մամուլին: Մի քիչ հետաքրքրութիւնների աշխարհը ընդարձակուել է, եթէ ժամանակին «Ազդակը», «Զարթօնքը» և «Արարատը» տեղական և միջազգային լուրերուն կ'անդրադառնային, այսօր մեր տրամադրութեան տակ ունինք միջազգային մամուլը և շատ աւելի հաղորդում է այն, ինչ որ մարդ ու-

զում է քաղել: Մենք փորձում ենք մեր մամուլը պահել, փորձում ենք այժմէականացնել այնքան, որքան կարելի է, սակայն նոր կերպեր փնտռելու և գտնելու ընթացքի մէջ ենք, որովհետև մամուլը վերջին ժամանակներին էնքան մեծ փոփոխությունների և վերիվայրումների ենթարկուեց, որ այսօր Ամերիկայի նման զարգացած միջավայր մը ինքը փնտռողների մէջ է և չգիտի, թէ վաղը ինչ տեղի պիտի ունենայ մամուլի աշխարհին ներս: Այո, մեր 3 մամուլները կուսակցական մամուլներ են, իրաքանչիւրը ներկայացնում է տարբեր քաղաքական մտածումներ, բայց երեքն ալ բարեբախտաբար կա: Մենք կը սփռենք թէ հայերէն և թէ արաբերէն լեզուով, որովհետև պետական արտօնագիր ստացած ենք, և այդ արտօնագիրը ստանալու համար պէտք է քու յայտագիրներուդ ծրագիրներուդ որոշ մէկ մասը ոչ հայերէնով ըլլայ: Այս իմաստով մենք ունինք թէ հայ և թէ արաբ ունկնդիրներ, ինչ որ շատ ատելի լաւ է: Որովհետև վերջին հաշուով լրատուամիջոցը, ռատիօն, մամուլը կը ծառայեն քու գաղափարներուդ քարոզչութիւնը կատարելու: Մենք կը փորձենք կարելի եղածին չափ լիբանանահայ գաղութի բոլոր խաւերը հետաքրքրող ծրագրեր ունենալ: Այդ երկու նպատակ կը հետապնդէ. առաջին՝ պահել գիրենք հայկական մթնոլորտի մէջ, և երկրորդ՝ որ այդ մարդիկը եթէ կարողանաս կապել քեզի, միաժամանակ քու կուսակցական քարոզչութիւնդ յաջողութեամբ կատարած կ'ըլլաս: Մենք կարողացանք Սփիւոքի տարբեր գաղութները իրար կապել: Ինտերնետի միջոցով կը հասնինք ամէն տեղ, միաժամանակ դուրսի, Հայաստանի մէջ եղած միջոցառումները, լուրերը կը դարձնենք լիբանանահայ ունկնդրին սեփականութիւնը՝ Սփիւոքի և Հայաստանի մէջ կապ մը ստեղծելով: Մեր լուրերը հայերէնով և արաբերէնով անպայման կ'անդրադառնան թէ լիբանանեան, թէ հայաստանեան և թէ միջազգային լուրերուն: Այսպիսով, մենք լիբանանցիին կը հրամցնենք մեր հայաստանեան իրադարձութիւններն ու խնդիրները: Օրինակ, մենք ամէն առաւօտ կը կապուինք մեր լիբանանահայ պատանիներու հետ, որոնք կը մասնակցին Հայաստանի մէջ տեղի ունեցող համահայկական խաղերուն, և մեր ունկնդիրները իրազեկ կը պահենք, թէ ինչ կը պատահի: Այսպիսով, կապ մը կը ստեղծենք Սփիւոքի և Հայաստանի միջև: Մենք կը կարծենք, թէ անկախ երգ ու երաժշտութիւնը պահելու իր մակարդակին վրայ, կը փորձենք հայկական ոգի ներշնչել և կապ հանդիսանալ հայրենիք-Սփիւոք յարաբերութեան: 60 տարիներ առաջ մամուլը շատ ատելի ազդեցութիւն ունէր, քան այսօր: Ընթերցողներու թիւը շատ

եր, իսկ այսօր տպագիր մամուլ ընթերցողներու թիւը շատ ատելի նուագած է: Այսօր հայ երիտասարդը համացանցի միջոցաւ ամէն բանի մասին տեղեակ կ'ըլլայ, նոյնիսկ այսօր տպագիր թերթերը ունին իրենց ելեկտրոնային կայքերը, որոնց միջոցաւ թերթերու խմբագրութիւնները իրենց հերթական թերթի բովանդակութիւնը հասանելի կը դարձնեն իրենց ընթերցողներուն:

Այսօր թերթերը տնտեսական դժուարութիւններու դէմ յանդիման կը գտնուին, և այս պատճառով թերթերու տպաքանակը պակասած է: Այսօր միայն ծերերն են թերթ ընթերցողները, առաւել ևս երիտասարդութիւնը գրաւելու համար՝ պէտք է թերթերու լեզուն շատ ատելի մատչելի ըլլայ հայ երիտասարդին համար, որովհետև այսօրուայ սփիւռքահայ հայուն հայերէնը դժբախտաբար այնքան ալ զօրաւոր չէ: Մեր թերթերու խմբագիրները ընդհանրապէս հին սերունդի ներկայացուցիչներ են և, դժբախտաբար, կը սիրեն ծանր բառեր օգտագործել: Ընդհակառակը՝ պէտք է ձեռքազատիլ անկաններ, երկարապատում նախադասութիւններ օգտագործել: Թերթերը կարելի է ունենան ընթերցողներու մեծ թիւ միայն ընտրութիւններու ժամանակ՝ իմանալու համար տուեալ կուսակցութեան կողմնորոշուածութիւնը, իսկ քաղաքական հայկական լուրերը այսօր երիտասարդը ոչ միայն կրնայ համացանցէն ստանալ, այլև «Վանայ ձայն»-նէն, «Ռատիօ Սևան»-էն...»:

«Դուք այժմ կը գտնուիք «Արարատ» թերթի խմբագրատան մէջ: Թերթը կը պատկանի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան: Հիմնուած է 1937-ին: Միօրեայ թերթ է, ունի կուսակցական-քաղաքական ուղղուածութիւն: Թերթը ունի մշակութային, ազգային, քաղաքական, կնոջական, մարզական էջեր: Թերթը 4 էջեր է կը բաղկանայ: Ունինք տարբեր երկրներէ յօդուածագիրներ, որոնք միայն «Արարատի» համար կ'աշխատին: Ամէն տարի յատուկ բացառիկներ կը տպագրուին՝ Ապրիլ 24-ի և Նոր Տարուայ առթիւ: Ասկէ դուրս, այս տարի մեր երիտասարդութեան համար նոր ծրագիր մշակեցինք: Շաբաթը 1 անգամ «Արարատ» թերթի խմբագրատան մէջ կը կազմակերպուին լրագրողական դասընթացքներ երկրորդական վարժարան յաճախող մեր այն աշակերտներուն համար, որոնք հայ գիրն ու մշակոյթը կը սիրեն: Այս ծրագիրը անվճար է և հայապահպանման գործընթաց է:

Ամէն մէկ թերթ իր գաղափարական ուղղուածութիւնը ունի և իր ընթերցողը ունի: Մարդիկ կը փնտռեն իրենց թերթը: Մենք այստեղ ու-

նինք յատուկ բաժանորդագիրներ, որոնց թերթը մեր ցրուիչներու միջոցաւ կը հասցուի իրենց տուները: Առաւելաբար ծերունիները կ'ընթերցեն թերթը, իսկ երիտասարդներ յաճախ կ'այցելեն մեր online կայքը: Այնքան կ'ուրախանամ, երբ մեր երիտասարդները «Արարատ» թերթի յօդուածները իրենց Facebook-ի վրայ share կ'ընեն: Եղած են, որ յօդուածներ 2000-ի մօտ ընթերցողներ կ'ունենայ, այդ կախեալ է հետաքրքրական յօդուած է կամ ոչ»:

Եկեղեցի

«Եկեղեցին իբրև հոգևոր և ազգային կառոյց լուրջ անելիք ունի, և պէտք է ընդունինք, որ Ցեղասպանութիւնից 100 տարի յետոյ եկեղեցւոյ ներկայութիւնը ժողովուրդի առօրեային մէջ բացակայել է, թուլացել է: Եկեղեցին պէտք է միջոցներ գտնի, որպէսզի ժողովուրդի առօրեային մէջ ներկայութիւն դառնայ, ինչպիսին էր անցեալին: Նախապէս թաղին սիրտը մէկ եկեղեցին էր, միւս մասը՝ դպրոցը: Այո՛, եկեղեցւոյ մէջ թաղում, պսակ, ծէս, պատարագ, խորհուրդներ տեղի կ'ունենան, սակայն եկեղեցին իբրև ներկայութիւն ժողովուրդի առօրեային մէջ թուլացել է: Կենսքի պայմանները փոխուեցին, բայց եկեղեցին մնաց աւանդական, որովհետև ամենաաւանդական, ամենահին կառոյցն է: Եկեղեցին ներուժ ունի ինքզինք նորոգելու:

Այսօր Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, Կաթողիկներու պատրիարքական աթոռը, Աւետարանական համայնքի ներկայացուցչութիւնը, երեք աւանդական կուսակցութիւնը, Բարեգործական միութիւնը լաւ կազմակերպած են լիբանանահայ գաղութը: Բոլորս ալ նահանջի մէջ ենք, բայց տակաւին ներկայութիւնն ենք, ուժգին և կազմակերպուածութիւն կայ: Եկեղեցին հաստատուն է, վարժարանների ցանց մը կայ, տակաւին գրական մրցակցութիւն կայ, այս բոլորը տուեալներն են, որ հայը հայ պահէ: Այս բոլորը միաժամանակ Լիբանանի քաղաքական սահմանադրական դրութեան արդիւնքն են, և մենք Լիբանանի գլխաւոր 7 համայնքներէն մէկն ենք: Մէկ խօսքով՝ մեր ներկայութիւնը այստեղ մեծ իմաստ և նշականութիւն ունի, և մենք մեր ուրոյն տեղը գրաւած ենք: Քաղաքական լուրերը այնքան ալ չի հետաքրքրեր, որովհետև այսօր բոլորս մեր հեռախօսներու միջոցաւ վայրկեան առ վայրկեան կը տեղեկանանք քաղաքական իրադարձութեանց մասին: Ընթերցողները անելի հետաքրքրուած են ազգային նիւթերով, ներքին համայնքային լուրերով...»:

Հայաստան-Սփյուռք փոխհարաբերություններ

«Մեզի համար հայրենիքը երազ էր: Ասոնք խօսքեր ու լոզունգներ չեն, յատկապես Միջին Արևելքի հայերուս համար, որովհետև մենք աշխարհաքաղաքական իմաստով անելի մօտ ենք Հայաստանին և մօտ ենք Թուրքիոյ, հետևաբար՝ ուրիշ ձևով, հաւանաբար հարագատ կ'ընկալենք: Անկախութենէն յետոյ եղաւ, ընտանիքներ փոխադրուեցան, բայց ոչ մեծ թիւով: Իսկ քաղաքական իմաստով այնքան ալ մեր վրայ չազդեց, որովհետև մենք սովոր ենք խառը վիճակի մէջ ապրելու: Երբ որ Լիբանանէն պիտի փոխադրուիք Հայաստան, կը նշանակէ դուն տուն-տեղ պիտի ձգես, պիտի ծախես և պիտի փորձես Հայաստան հաստատուիլ: Մինչդեռ երբ Ամերիկա կամ Եւրոպա փոխադրուիս, տեղի պետութիւնը կ'օգնէ քեզի, պարտաւոր է քեզի համար ամէն բան հոգալու: Եթէ ամէն ինչ ծախենք, հաստատուինք Հայաստան, յաջողութիւն եթէ չգտնես և Լիբանան վերադառնաս, այստեղ Լիբանանի պետութիւնը չի կրնար քեզի օգնել և հետևաբար ձախողութեան մատնած կ'ըլլաս քու կեանքդ:

Անցեալին մենք Հայաստանէն դուրս էինք, և շփման միջոցները այդքան հեշտ չէին մեզ համար: Ուրեմն մեզ համար երագական աշխարհ էինք ստեղծել, մոռացել էինք նոյնիսկ, որ Հայաստանն ալ երկիր է իր ժխտական և դրական երեսներով: Որովհետև մենք իսկապէս իտէպ, երևակայական աշխարհ էինք ստեղծել և մեզ համար սրբութիւն սրբոց էր, որուն մասին սխալ բան չէր կարելի ասել: Անկախութիւնից յետոյ, երբ շփման առիթները անելացան, մարդիկ որոշ հոգեկան վերիվայրումներ ապրեցին, բայց ի վերջոյ հիմա իրականութիւնը գիտեն, և Հայաստանը իր թերութիւններով և առաւելութիւններով մեզ համար մեր գոյութեան գրաւականն է, պարտաւոր ենք սիրել Հայաստանը, և Հայաստանով պայմանաւորուած է մեր կեանքը: Հիմա անելի իրապաշտ ենք: Գիտենք, թէ առանց Հայաստանի Սփիւռքը չի կարող գոյատևել, Հայաստանն ալ պէտք է լաւ իմանայ, որ առանց Սփիւռքի տկար է, իր համար կեանքը հեշտ չէ, մանաւանդ մեզի համար մեծագոյն դժբախտութիւնն է, որ հայրենամերձ կոչուող այս գօտին հայութիւնից դատարկուի: Անցեալին մի փոքրիկ քարոզչութեամբ կարող էինք ասել՝ բոլոր թողէք և գնացէք դէպ Եւրոպա, Ամերիկա, հեշտ էին պայմանները: Ընդհակառակը, պայքարով և տագնապով գաղութները այստեղ պահուեցին, որպէսզի այս գաղութները հայօրէն ապրին: Այս-

քան կատոյցներ, կեդրոններ ստեղծուեցին, որովհետև այստեղ Հայաստանի առաջին պարիսպն էր: Հիմա կեանքի պայմանները փոխուեցին, չգիտեմք այս բոլորը մի ձևով ուրիշ տեղ պիտի կարողանանք հանել կամ ոչ, բայց հայ ժողովուրդը իր գոյութան համար պայքարող է և ամէն ինչ կը փորձէ: Տայ Աստուած այս գօտին քիչ մը խաղաղուի, և մեր ալ կեանքը խաղաղուի և ապագային կարողանանք նոր ծրագրերով մենք մեզ վերանորոգել Հայաստանի իսկ աջակցութեամբ:

Հայաստանի մէջ, այո՛, հիմնուեցան քանի մը խորհուրդներ, Ցեղասպանութեան 100-ամեակի յանձնաժողովը, մշակութային յանձնաժողովը... Բայց նորէն այս յանձնաժողովներու մէջ երկար տարիներու, գալիք տարիներու ծրագիր չէ որ կը մշակուի, և ասիկա պատճառ կը դառնայ, որ ինչպէս սուրիահայերու ներկայութիւնը այսօր հարց կը ստեղծէ, և մենք այդ հարցին լուծումը չենք գտած, չենք մտածած, ցոյց կու տայ նաև մեր անհեռատես քաղաքական մտքի բացակայութիւնը: Այս բոլորը ինչ ցոյց կու տան:

Ներքին ընկերատնտեսական հարցեր կան, որոնք Հայաստանի պետութիւնը ի վիճակի չէ լուծելու: Ինչպէ՛ս կրնան Սփիւռքին հասնիլ: Մեզի համար ներելի չէ ո՛չ կոռուպցիան, ո՛չ ծուլութիւնը: Մենք 600 տարի ազգային քաղաքացութեան ինքնութիւն ունենալէ զրկուած էինք և առիթը չէինք ունեցած: Հիմա որ ունինք, ատիկա պէտք չէ բզբտենք: Մենք ժամանակ չունինք ուրիշ բաներով զբաղելու, եթէ ոչ հայրենաշինութեամբ: Ազգային-քաղաքացիական մարդը կերտելու, ասոր մէջ Հայաստանը շատ մեծ դերակատար է: Այսօր բոլոր պետութիւնները ունին իրենց մտաւորական տարրը՝ տնտեսագէտ, քաղաքագէտ, լեզուագէտ...: Այս բոլորը մաս կը կազմեն այն «էլիթին», որ երկրի ապագան կը գծէ: Այդ ներուժը պէտք է օգտագործեն, այսինքն՝ Սփիւռքը: Արդէն մեր թիւը փոքր է, մեր սահմանները օրըստօրէ կը նեղնան, արդէն Հայաստանի Հանրապետութեան թիւը կը պակսի, այսինքն՝ ինչ պէտք է ընել, որ այս մարդիկը սթափին, զգաստանան, ամչանան, վախնան ապագայէն, բայց ըստ երևոյթին վախցող ալ չկայ: Չարենցը իր «Պատմութեան քառուղիներով» բանաստեղծութեանը մէջ գրած է. «Երբ չեն գծել ոչ մի խոհ գալիք սերնդների համար»: Այնքան գեղեցիկ նկարագրած են մեր առաջնորդները, և մինչև այսօր այդ խօսքերը որքա՛ն կը սագին մեր դեկավարութեանը նաև դժբախտաբար: Այս է մեր տխուր իրականութիւնը, բայց մենք պէտք է վեր ելլենք: Նախ պէտք է յետադարձ ակնարկ մը կատարել: Երբ Հայաստանը խորհրդային վար-

չակարգի իշխանութեան տակ կը գտնուէր, Սփիւքի մէջ բնեռացում մը գոյութիւն ունէր՝ կան Հայաստանի հետ և կան Հայաստանի դէմ հոգեբանութեամբ: Եկա ժամանակը, երբ անդրադարձանք, որ այդ կարգախօսները մեզ տկարացուցին: Այսօր մենք բարերախտաբար ունինք ազատ և անկախ Հայաստան: Բայց այսօր ինչ է փոխուած: Սկզբնական շրջանին խանդավառութիւնը մեծ էր, սակայն երբ մեր ժողովուրդը Հայաստան այցելեց, յուսախաբուեցաւ: Այսօր այդ յուսախաբութիւնը չկայ, այսինքն՝ երբ Հայաստան կ'երթամ, գոհ կը վերադառնամ, որովհետև երկիրը բարգաւաճած է՝ անկախ առկայ խնդիրներէն: Այսօր երբ ուզես Հայաստան երթալ և վաճառականութիւն ընել, կարգ ու կանոն կայ: Հիմա, ամռան շրջանին, լիբանանահայերու 25 տոկոսը Հայաստան է՝ այցելութեան, ճամբարներու ու համահայկական խաղերուն մասնակցելու համար: Լիբանանահայ նորապսակ գոյգէր իրենց մեղրամիսը կ'անցընեն Հայաստանի մէջ: Մէկ խօսքով՝ վերադարձողը դարձեալ կ'ուզէ Հայաստան այցելել: Եթէ Հայաստանի դեկավարութիւնը քիչ մը աւելի հետաքրքրուի Սփիւքով, շատ աւելի մարդ կ'այցելէ ու կը հաստատուի Հայաստանի մէջ: Այսօր, երբ վստահ ըլլամ, որ ինծի բաւարարող գործ կրնամ գտնել Հայաստանի մէջ, մէկ վայրկեան նոյնիսկ չեմ մտածեր ու կը հաստատուիմ: Պարոն Ծառուկեանը բարեգործութիւնը թէկուզ տարբեր ձևով մեկնաբանուեցաւ, սակայն դրուատելի արարք էր: Ընդհանրապէս Սփիւքն է, որ կ'օգնէ հայրենիքին, բայց այսօր հայրենիքէն անհատ մը սուրիահայութեան կը փորձէ օգտակար դառնալ: Այսպիսի յարաբերութիւններ և այցելութիւններ աւելի ևս կը մտերմացնեն ու կ'ամրապնդեն մեր յարաբերութիւնները: Մենք բացայայտ կերպով կը տեսնենք Հայաստանի ներքին քաղաքական վիճակը և հայրենիք-Սփիւք փոխյարաբերութիւնը: Ինչ-որ տեղ այս յարաբերութիւնները պէտք է կերտուին համոզումներու վրայ և ոչ անհատներու նկատմամբ ունեցած համակրութեան և հակակրութեան վրայ: Դժբախտաբար, այս յարաբերութեան մէջ գոյութիւն ունին անձնական շահերը, և վերացած են համընդհանուր շահերը: Հայաստանի այս մօտեցումը մէկ կողմէ կը խրտչեցնէ, և ոչ ալ անհանգստութիւն կը պատճառէ՝ ներհայաստանեան և համասփիւքեան տարողութեամբ:

Բառական աշխոյժ է Հայաստան-Սփիւք յարաբերութիւններու ոլորտը: Որպէս Ազգային առաջնորդարան՝ յատկապէս կրթական մակարդակի վրայ ենք փորձում յարաբերութիւնները աշխուժացնել: Տարբեր կառոյցներ, կազմակերպութիւններ տարբեր աշխատանքներ ու-

նեն Հայաստանի հետ: Բայց որպէս գաղութ՝ յարաբերութիւնները շատ են սերտացել, մանաւանդ ամառային եղանակին ամենասիրելի և ամենամօտ տեղը Հայաստանն է: Մեծամասնութիւնը փորձում է երեխաների համար միջոց ստեղծել, որպէսզի Հայաստանում անցկացնեն իրենց ամառային արձակուրդը:

Ինչ կը վերաբերի կուսակցական, եկեղեցական, քաղաքական ու մշակութային կապերու մասին, այդ կապերը շատ աւելի ուժեղ են: Մեր կուսակցութեանը գլխաւոր կեդրոնը կը գործէ Հայաստանի մէջ, այսինքն՝ մեր գլխաւոր ժողովներուն համար յաճախ կ'երթանք Հայաստան: Մեր ռատիօկայանը այլ հայաստանեան ռատիօկայաններու կապեր ունի: Հայաստանի մէջ կը գործէ մեր կուսակցութեան «Երկիր Մետիա» հեռուստաընկերութիւնը: Գոյութիւն ունի նաև անձնական առևտրական կապ: Կ'ենթադրեմ, որ եթէ Հայաստանը աւելի մեծ կարելիութիւններ ունենար, վաճառականական գետնի վրայ աւելի զարգացում կ'արձանագրէինք: Եկեղեցական յարաբերութիւնները լաւ ընթացքի մէջ են: Քիչ են այն մարդիկը, որոնք չեն այցելած Հայաստան:

Սփիւռք-հայրենիք կապերի պետական բաղադրիչը

Հայաստանի պետութիւնը մեզի հնարաւորութիւն կու տայ, որպէսզի միասնաբար մտածենք, ծրագրենք և գործենք: Ամենախօսուն ապացոյցը 12 ապրիլ 2015-ն է, երբ Հայաստան, Սփիւռք, եկեղեցականութիւն միասնաբար հաւաքուած էինք Վատիկանի մէջ և համայն աշխարհը ցնցեցինք: Այս մէկը պէտք է օրինակ դառնայ, որ եթէ իսկապէս ամենայն անկեղծութեամբ և խոր համագործակցութեամբ մենք հրաշքներ կրնանք գործել, բայց վստահութեան հարցն է այստեղ:

Սփիւռքի հետ յարաբերութիւնը այնպէս դասաւորուեցաւ, որ այսօր Հայաստանի մէջ գոյութիւն ունի Սփիւռքի նախարարութիւնը: Սփիւռքի նախարարութիւնն է, որ այսօր Սփիւռքի բոլոր միաւորներու և կառոյցներու փոխյարաբերութեան առանցքն է: Այս առանցքին փոխյարաբերութիւնը Սփիւռքի և կամ անհատներու հետ ինչպէս կ'ընթանայ, քիչ մը պէտք է վերատեսութեան ենթարկուի ու վերանայուի: Ես չեմ տեսած «Հայերն այսօր» պարբերականին մէջ, որ օր մը, գոնէ Սփիւռքէն 3-5 անհատներ չպարզկատրուին: Այսինքն՝ վաղը պէտք է փնտռել, թէ ո՞վ Սփիւռքէն չէ պարզկատրուած: Բայց այդ պարզկատրուողները արժանի են այդ պարզկատրման: Այսինքն՝ եթէ Սփիւռքի նախարարութիւնը այսօր պիտի գնահատէ անհատի և կամ կառոյցի մը

ծառայությունը ու վաստակը, արդեօ՞ք պետք է այսքան ազատամիտ ու լայնախոհ ըլլալ օրական 5–6 մետալներ բաժնել: Խնդիրը չկենդրոնացնենք Սփիոթքի նախարարութեան վրայ: Ես նաև քաջ գիտեմ, որ Սփիոթքի նախարարությունը իր նիւթական հնարատրություններով շատ անելին լաւ կը գործէ, ինչ որ պետք է գործել:

Որևէ նախաձեռնություն նիւթական, պլուտոէ կը պահանջէ: Մեզի յաճախ կ'ըսեն, որ միայն ճանապարհաճախսը դուք պիտի հոգաք, իսկ կենցախը մենք կ'ապահովենք: Նայեցէք մտայնութեան տարբերություն կայ: Նոյնիսկ Սփիոթքի մէջ լիբանանահայը և սուրիահայը նոյնը չեն: Իրենց շաղուածքին և կենցաղին մէջ տարբերություններ կան: Օրինակ՝ լիբանանցին չ'երթար և Սփիոթքի նախարարութենէն չի խնդրեր, որ երթայ հանրակացարանի մէջ մնայ, այլ պիտի ուզէ լաւ տան և կամ պանդոկի մէջ մնալ: Բայց Սփիոթքի նախարարությունը իրենց ունեցած միջոցներով կը փորձեն մեզի օգտակար դառնալ: Մեր կողմէ ալ քիչ մը շփացածություն և անելոք պահանջկոտություն կայ: Ես կը հաւատամ, որ եթէ մեխանիզմը, հանգոյցը քակուի, և մենք յաճախակի այցելենք Հայաստան, գործակցիլը պիտի դառնայ վարակիչ, և մնացած խոչընդոտները պիտի դառնան երկրորդական: Այս բոլորը կամք և համոզում կ'ուզեն:

Նախաձեռնություններու չափազանցությունը մեզ մօտ այն տպաւորությունը կը ձգէ, որ պետութեան և հայրենիքին համար եկէք քիչ մը ծախսեցէք և վերադարձէք: Այս տպաւորությունն ալ տիրապետող է: Որովհետև մենք կը տեսնենք երկու շաբաթ անգամ գիտածողով, համաժողով, խորհրդաժողով մը կազմակերպուած է: Կը կարծեմ, որ քիչ մը չափազանցուած է և կարելի է քիչ մը նուազեցնել և համակարգել, որպէսզի այն տպաւորությունը չթողու, որ մենք ձեր դրամին կարիքը ունինք: Բայց մարդ պետք է ճշմարտությունը խօսի:

Սփիոթքի նախարարությունը աշխոյժ նախարարություն է: Տիկին Հրանուշ Յակոբեան ամէն տեղ է և անձնուէր, անխոնջ նախարար է: Կը խորհիմ, թէ հսկայական քայլեր կատարեց Սփիոթք-հայրենիք կապը անելի ևս խորացնելու, մօտեցնելու համար, իսկ գալիք տարիներուն այդ համագործակցությունը անելի ևս պիտի ընդարձակուի: Միակ խոչընդոտը արևմտահայերէնի և արևելահայերէնի առկայությունն է: Կուզենք մեր ուսուցիչները Հայաստան վերապատրաստումի ուղարկել, սակայն լեզուի հարցն է: Երբ դպրոցներէն ներս մեր զաւակներուն արեւելահայերէն գրականություն կու տանք, որպէսզի կարդան, ուղղագրա-

կան և լեզուական դժուարությանց դէմ յանդիման կը գտնուին, և արևմտահայերէնը իրենց մօտ կրնայ խաթարուիլ: Պէտք է հասարակ յայտարար մը գտնել այդ ուղղութեամբ, որպէսզի համագործակցութիւնը աւելի լաւ ստացուի: Սփիւռքի նախարարութիւնը, վստահ եմ, որ Սփիւռքի կարիքները գիտէ: Մենք Հայաստանի պետութենէն նիւթական աջակցութիւն չենք ուզեր, այլ՝ բարոյական: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետութիւնը պէտք է սատար կանգնի Սփիւռքի ծրագիրներուն, մանաւանդ Լիբանանը չի նմանիր Սփիւռքի այլ գաղութներուն: Օրինակ՝ հայերէնի գրականութեան գրքեր պէտք է պատրաստուին մեր հայ աշակերտներուն համար նոյնինքն մեր սփիւռքահայ մասնագէտներու կողմէ, կամ համակարգչային ծրագիրներ, որոնք կառավարութեան հովանաւորութիւնը կը պահանջեն: Այլ խօսքով՝ Սփիւռքի նախարարութիւնը պէտք է գիտնայ Սփիւռքի կարիքները և դուրս գայ սովորութիւն դարձած կարծրատիպերէ և ձևականութիւններէ:

Լիբանանի մեր բարեգործական հաստատութիւնը ունի իւրայատուկ ծրագիր: Ամէն տարի մեր վարժարաններու աշակերտներէն 20 ուսանողներ մեր ֆինանսատրամաբ կը մեկնին Հայաստան: Այս ծրագրին նպատակն է ծանօթացնել մեր աշակերտութիւնը մեր հայրենիքին հետ և կապ մը ստեղծել մեր մայրենի հողի հետ: Այլ խօսքով՝ Սփիւռքի նախարարութիւնը տեսականէն պէտք է առարկայական, գործնականի անցնի: Նախարարութիւնը ընդհանրապէս մեր վարժարաններուն, կազմակերպութիւններուն, կառոյցներուն հետ e-mail-ով կը կապուի և կամ անձերու միջոցաւ: Նախընտրելի պիտի ըլլար, որ նախարարութիւնը անմիջական յարաբերութիւն մը ստեղծէր՝ կապուելով տուեալ հաստատութեան տնօրէնին, պատասխանատուին և կամ ղեկավարին: Դիմումագիրներու կարծրատիպերէն պէտք է դուրս գայ: Սփիւռքի նախարարութիւն ինչ հիմքի վրայ ընդհանրապէս տարուայ լաւագոյն կրթօճախը կ'ընտրէ...:

Ըստ իս, մինչև այսօր մենք մեր կարիքների համաձայն մեր լուծումները առաջադրել ենք և այդ ուղղութեամբ աշխատել ենք: Սփիւռքի նախարարութիւնը կարող է օժանդակել մեր ճիգերին, կարող է նորութիւններ առաջարկել մեզ մեր ունեցած տագնապների դիմաց, բայց չի կարող մեր կեանքը կառավարել: Այո, մենք հայ ենք, բայց տարբեր երկրների քաղաքացիներ ենք, և այլ երկրների քաղաքացիներ լինելով՝ Սփիւռքի նախարարութիւնը չի կարող վարել մեր կեանքը: Մեր փոխադարձ բարեացականութեան իրբև արդիւնք գործակցութիւն պէտք է լի-

նի մեր ազգային ինքնության պահպանման և զորացման գործընթացին մէջ: Սփիւռքի նախարարութիւնը մեզի աջակից պէտք է ըլլայ: Որքան մխրճովի մեր ներքին հարցերում, ինք կը դառնայ անզօր: Որքան մեր ներքին հարցերից դուրս մնայ, այնքան ակելի կը դառնայ հզօր:

Սփիւռքում մենք ունենք մեր կառոյցները, որոնք իրենց ժողովականներով, աշխատանքներով իրենց կեանքն է վարում: Ամէն կառոյց հասկանում է և իմանում, թէ ինչ են իր ունեցած կարիքները: Եւ այդ բոլորին համար կան տարբեր յանձնախումբեր, որոնք ղեկավարում են Սփիւռքի նախարարութեան կողմից: Այդ յանձնախմբերի ժողովների ընթացքին պարզում են իրաքանչիւր գաղութի ունեցած դժուարութիւններն ու կարիքները: Հայաստանը իրբն պետութիւն, եթէ լրջութեամբ լսէ Սփիւռքի ներկայացուցած կարիքները և այդ կարիքներուն համար փորձէ մեզի աջակցելու միջոցներ գտնել, անպայմանօրէն կը գտնեն այդ միջոցները: Կամեցողութիւն և հնարատրութիւն հասկացողութիւնները մի քիչ պէտք է մօտեցնել: Մեր ներքին հարցերում Սփիւռքի նախարարութիւնը անհատապէս չգիտեմ ինչ անելիք ունի: Պարբերաբար լաւ է Սփիւռքի նախարար մեր ունենալը, որպէսզի մեզ լսէ, երբեմն մեզ քննադատէ, երբեմն գնահատէ, բայց այդ սահմաններում: Ձևով մեր հայրենիքի հետ կապն է, որը ղեկավարելու հարց չկայ, որովհետև մենք արդէն կամատրաբար դէպի հայրենիք նայում ենք մեր կարիքների համար, ուրիշ աղբիւր էլ չունենք դիմելու: Դիմացը եթէ կամեցողութիւնը կայ, ինչ որ կայ՝ օգնում է մեզ: Ուսուցիչներ, դասագրքեր պատրաստելու, ուսանողներ, մարդուժ պատրաստելու կարիքներ ունենք, ոչ թէ համալսարաններու մէջ, այլ իբրև հայ, հայ մտածողութեամբ, հայ արժէքներով, հայոց պատմութեան գիտութեամբ: Մաշունց Սփիւռքը, և սա նորմալ է 100 տարիներ յետոյ, բայց մինչև հիմա մենք մեր մարդուժը պատրաստեցինք և հայրենական զգացումներով պատրաստեցինք և ոչ միայն տեղական: Բայց յստակ է, կեանքի պայմանները փոխում են, հողից դուրս մարդուժ պատրաստելը, մշակոյթ պահելը, արժէքներ պահպանելը էնքան էլ հեշտ չի: Մինչև 20, 10 տարիներ առաջ ասում էինք, թէ դու հայ ես, պատմութիւն ունես, այդ պատմութեամբդ ուրախացիր, հպարտացիր, այդ բոլորը անում էինք: Իսկ հիմա կեանքի պայմանները փոխուեցին, յարաբերութեան եղանակը փոխուեց: 20 տարիներ առաջ մարդիկ շատ բան չգիտէին աշխարհից, այսօր աշխարհը մեր տրամադրութեան տակ է: Այսօր երեխան պէտք է Հայաստան երթայ, պէտք է զգայ այն ուժը, որ հողէն կարելի է քաղել, հողի վրայ մշակոյթի հետ

շփման մեջ մտնի, իր ազգակիցներին տեսնի, նրանց տազնապներին ծանօթանայ, ռազմավարութեան պակաս կայ: Այն մեծ Capital-ը, որ մենք ունինք Սփիւոքին մէջ՝ հայրենասիրութիւնն է: Ես ձեզի կրնամ քանի մը օրինակներ տալ, որոնք այսօր պատրաստ են վերադառնալու հայրենիք, հայրենի հողին վրայ տուն շինելու, գերօյէն սկսելու և իրենց կեանքը հոն ապրելու, որովհետև մենք կը հաւատանք, որ մեր գոյութեան նպատակը վերջիվերջոյ պիտի ծառայէ հայրենիքին, և ամբողջ սերունդներ այս գաղափարաբանութեամբ դաստիարակուեցան, որ ի վերջոյ մեր նպատակը Սփիւոքի մէջ հայ մնալ՝ հասնելու համար հայրենիքին, ըլլալու համար հայրենիքին մէջ, և այն հողը, այն հայրենի տունը, որ մենք կորսնցուցինք Արևմտեան Հայաստանի մէջ, ատոր փոխարէն մենք այն պիտի վերագտնենք հայրենի հողին վրայ: Այս ծրագիրներու և մտքերու փոխանակումը Սփիւոքի նախարարութիւնը ինքը մտահոգ է աւելի այսօր անմիջական իր կարիքներով և հարցերով, բայց հեռակայ ծրագիրներ չեն մշակուիր: Երբ Հայաստանի մէջ Հայկական Յեղասպանութեան 100-ամեակի յանձնաժողովի հանդիպումը տեղի ունեցաւ, նոյնիսկ հոն մեր ծրագիրները կը տեսնենք որ շատ կարճատես են: 100-ամեակի առթիւ Հայաստանի պետութիւնը շատ բաներ կրնար ընել, բայց պէտք է փորձ մը ընել, որովհետև ինքը որպէս պետութիւն իր ժողովուրդին հանդէպ համարատու է ազգային պահանջատիրութեան հարցին գծով: Ինք նաև համարատու է Սփիւոքի հանդէպ, որովհետև եթէ կ'ուզէ Սփիւոքի հետ համագործակցիլ կամ ուզէ Սփիւոքի տէրը դառնալ, պարտաւոր է նաև Սփիւոքի հարցերով զբաղելու: Դժբախտաբար, ատոր բացակայութիւնը շատ զգալի է:

Հայաստանը 20-ամեայ անկախութիւն ունի, նոր է, և այն, ինչ որ ժառանգեց Սովետի օրերէն, դժբախտաբար Սովետի օրերուն ժառանգած հոգեբանութեամբն ալ վերաբերացաւ անկախ Հայաստանի հետ, և ատիկա պատճառ դարձաւ, որ այսօր Հայաստանի պետութիւնը չըլլայ այն, ինչ որ կրնար ըլլար, եթէ մենք չմտենայինք այդ հոգեբանութեամբ: Ամէն մէկը իր բաժինը յափշտակելու երևոյթը, յուսախար ըրաւ հայ ժողովուրդը, այն ժողովուրդը, որ մաս չի կրնար այդ վերնախաւին: Այդ ժողովուրդը կ'ապաւինի օրէնքին, խաղաղութեան, արդարութեան: Արդարութիւնն ու խաղաղութիւնը միշտ տկարին համար եղած են, զօրաւորը այդ բոլորին կարիք չունի: Ինքը իր անարդար կեցուածքով արդէն յաղթած է: Ուրեմն, Հայաստանի և արտասահմանի մեր հայրենակիցները յուսախար եղան: Մենք 100 տարիներ շարունակ հայրենիք

երազեցինք: Մեր ամբողջ մշակոյթը, գրականութիւնը, երգը, մեր գոյութիւնը իմաստաւորուած էր հայրենիքով: Սփիւռքահայ երբեմն միամիտ, շատ իտէալիստ, հայրենասէր կը նկատուի դիմացէն, բայց մեզի այդպէս չէ: Մեզի համար մեր գոյութեան համար միայն հայութիւնն է:

Սփիւռքի նախարարութիւնը ևս այդ կապերու սերտացման մէջ մեծ դեր ունի: Երկքաղաքացիութիւնը նոյնպէս շատ կարևոր հանգամանք մըն էր համայն հայութեան համար, որ իսկապէս շօշափելի դարձուց այդ հայ ըլլալու զգացումը: Նախարարութիւնը բազմաթիւ ծրագիրներ ու միջոցառումներ կը կազմակերպէն, որոնք չեն գոհացներ սփիւռքահայուն, որ իր տան մէջ նստած է: Բայց և այնպէս կը գոհացնէ այն երիտասարդ սփիւռքահայուն, որ «Արի տուն» ծրագրին կը մասնակցին: Այն երիտասարդին, որ մշակութային մարզի մէջ փոխարարութիւններ ունի և զանազան կազմակերպուած նախաձեռնութիւններու և մրցոյթներու կը մասնակցի: Այստեղ կան թեր ու դէմ տեսակէտներ: Կայ տեսակէտ, որ կը գնահատէ տարուած աշխատանքը: Տեսակէտ ալ կայ, որ կ'ըսէ, որ այդ բոլոր նախաձեռնութիւնները, որոնք կը կատարուին՝ երիտասարդներու, լրագրողներու Հայաստան այցը, Հայաստան-Սփիւռք խորհրդաժողովները պարզապէս երևոյթ են, որոնք միայն միջպետական յարաբերութիւններ կը ստեղծեն: Ըստ իս, Սփիւռքի նախարարութիւնը կարողացաւ Հայաստանը ծանօթացնել լիբանանահայուն: Այս բոլոր նախաձեռնութիւնները ծանօթացման և յարաբերութիւն ստեղծելու վրայ բացառիկ են, բայց աւելի խորք չկայ, կրնայ ֆինանսական կարելիութիւն և միջոց չկայ: Եթէ նոյնիսկ ձևական են (չեմ կարծեր, որ այդպէս է), սակայն բաւարարող են: Տիկին Հրանուշ Յակոբեանին դերակատարութիւնը նաև մեծ է, որովհետև իր նկարագիրը կ'օգնէ որ իր ներկայութիւնը տիրական ըլլայ: Պէտք է գործնական քայլեր առնուին, որպէսզի մենք կարողանանք զգալ, որ իսկապէս Սփիւռքի նախարարութիւն է և ոչ թէ Սփիւռքի մէջ Հայաստանի քարոզչութիւնը կատարող նախարարութիւն: Իմ անձնական կարծիքով՝ Սփիւռքի նախարարութիւնը Սփիւռքի հարցերով զբաղող նախարարութիւն չէ տակաւին, այլ Հայաստանը Սփիւռքին ներկայացնող: Սփիւռքն ալ իր խնդիրները ունի՝ հայապահպանում, հայ լեզու...: Կրնայ ըլլալ ժամանակի և կարելիութիւններու խնդիր է, և յուսով եմ ժամանակի ընթացքին կը լուծին այդ խնդիրները: Օրինակ, պարոն Ծառուկեանը պատրաստակամութիւն յայտնեց, որ տարեկան 20 Սփիւռքահայ ուսանողներու ծախսերը հոգայ: Մենք շատ ուրախա-

ցանք, երբ այս բոլորը լսեցինք: Սակայն մեր լիբանանահայ ուսանողությունը Երևանի համալսարանի ու անոր համակարգի մասին բան մը չի գիտեր: Այժմ մեր հիմնական աշխատանքն է՝ երթալ Հայաստանի ֆրանսական, ամերիկեան համալսարաններ և Կրթութեան նախարարութիւն, որպէսզի խմբակ կազմենք, բերենք Լիբանան և այցելենք դպրոցներ ու բացատրենք, թէ մենք այս ինչ մասնագիտությունները ունինք, մեր վկայականները այս ինչ երկիրները կը ճանչնան: Սփիւքի նախարարութիւնը անլի գործնական պէտք է ըլլայ այս ուղղութեամբ, բայց դարձեալ չեն ուզեր մեղադրել: Հայրենիքը հզօր է Սփիւքով, Սփիւքը հզօր է հայրենիքով: Այս օղակը պէտք է անքակտելի մնայ, և, իրապէս, շնորհիւ Սփիւքի նախարարութեան այսօր հայրենիք-Սփիւք յարաբերութիւնը և կապը լաւ վիճակի մէջ են: Սփիւքի նախարարութեան հովանաւորութեամբ, այս ամռան մեր սկաւտներն ու պարախումբը Ծաղկածորի ճամբարի մէջ հանգստացան: Մեր երիտասարդները չէին ուզեր վերադառնալ:

Հայաստան-Սփյուռք տնտեսական կապերը

Վերջերս սփիւքահայերը իրենց ամառային արձակուրդը կ'անցնեն Թուրքիոյ տարբեր շրջաններու մէջ, որովհետև աժան է: Ինչո՞ւ Հայաստանի ղեկավարութիւնը այլ միջոցներ չեն ձեռնարկեր, որպէսզի հայերը անլի յարմարաւտ գներով իրենց արձակուրդը անցընեն իրենց հայրենիքին մէջ: Նոյնիսկ հայաստանաբնակ հայերը իրենց արձակուրդները կ'անցնեն Թուրքիոյ մէջ: Սա համահայկական մտահոգութիւն է: Երբ մէկը ուզէ business դնել Հայաստանի մէջ, մեզի խորհուրդ կու տան ըսելով, թէ եթէ մաֆիային հետ չհամագործակցիս, քեզի դուրս կը դնեն, կը սնանկացնեն, կ'ոչնչացնեն: Ես կը խորհիմ, որ չափազանցուած խօսքեր են, որովհետև շատ յաջողակ սփիւքահայեր կան, որոնք այսօր Հայաստանի մէջ ներդրում կատարած են և լաւ դիրքի վրայ կը գտնուին: Ես կը խորհիմ, որ եթէ մարդիկ քիչ մը լաւ ուսումնասիրեն, քիչ մը հմտութիւն ունենան, որոշ փորձառութիւն ունենան, վստահաբար յաջողութիւն կ'արձանագրեն հայրենիքի մէջ: Բայց հայրենիքի մէջ հող և բնակարան գնելու գաղափարը և համոզումը օրէ օր կը զարգանայ և կը տարածուի:

Նոյն անձները, որ «Կենտրոն» հեռուստաընկերութենէն կը խօսէին: Պետրոսը ըսաւ, թէ ամէն մէկ սփիւքահայ «Արի տուն» ծրագրին 1000 տոլար նուիրէ: Սփիւքահայը ընդվզեցաւ: Ես եկայ և Հայաստանի

մեջ 400000 տոլարի ներդրում ըրի: Ես ուզեցի այստեղ գործատեղի բանալ, որպէսզի իմ Հայաստանի եղբայրներս գործ ունենան և աշխատին, բայց այդ գործատեղին չէք ապրեցներ: Այո՛, Սփիւռքի նախարարութիւնը բան մը կ'ըսէ, բայց ռէալիստ չէ: Ինչո՞ւ համար ամէն մէկ սփիւռքահայ պէտք է 1000 տոլար տայ, երբ որ կրնայ 3 սփիւռքահայ կանչել և ըսել իրենց՝ այստեղ գործարան բացէք:

Անցեալ տարի Հայաստան եկած էի: Ատոյով Արմաւիր գացի և տեսայ ամայութիւն, խեղճութիւն, դատարկութիւն: Սիրտս կտոր-կտոր եղաւ: Այո, Երևան կու գաս և քիչ մը կ'ուրախանաս, բայց Հայաստանը միայն Երևան չէ: Այդ ժողովուրդը ինչպէ՛ս պիտի ապրի այդ գիւղերուն մէջ, երբ գործ չունի, շուկայ չկայ: Եղբայր, ստեղծեցէ՛ք, առիթը տուէ՛ք: Սուրիահայերու վկայութիւնները, որ մեզի այնքան ալ դրական արձագանքներ չհասան: Շատերը օգտագործեցին հայրենիքը, որպէսզի ուրիշ երկիր գաղթեն, նոյնիսկ իրենց հայկական անձնագիրէն հրաժարեցան և ուրացան իրենց ինքնութիւնը:

Հայաստանի իշխանութիւններու փոխյարաբերութիւնը ներհայաստանեան և սփիւռքեան առումով պէտք է վերանայոյի ու վերադիտարկուի: Օրինակ, երբ այսօր Լիբանանի մէջ բողոք և ցոյց կ'ըլլան, մենք կը գրենք, թէ Լիբանանի մէջ պատերազմ և բռնատիրութիւն կայ, արդէտք նոյնը կարելի է գրել Հայաստանի մասին: Երբ նման բան գրենք, խօսինք ու հրապարակենք, անմիջապէս մեզ կը զգուշացնեն: Այսօր պէտք է Հայաստանի մէջ տիրէ ժողովրդավարութիւն: Միայն ժողովուրդի մէկ խաւը պէտք չէ միայն բարեկեցիկ ապրի, այլ բարեկեցիկ ապրիլը բոլորին արդար իրատունքն է: Խօսքի ազատութիւն պէտք է ըլլայ, ժողովուրդը պէտք չէ լռէ, այլ իր ձայնը բարձրացնէ: Մէկ խօսքով՝ երբ կ'ուզենք Սփիւռք-հայրենիք յարաբերութիւնը ճիշդ հունի վրայ դնել՝ պէտք է ժողովրդավարութիւն և ժողովրդավար պետութիւն ունենանք: Ատկէ ետք է, որ պէտք է խօսիլ այդ փոխյարաբերութեան զարգացման մասին՝ ըլլայ անիկա հայապահպանման և Հայ դատի հետապնդման գործընթացին մէջ: Տարիէ տարի կը զարգանայ ու ան կ'արձանագրէ: Խօսուն ապացոյցը հիմա է, երբ Հայաստանի մէջ կը կայանան Համահայկական խաղերը, և բազմաթիւ լիբանանահայեր կը մասնակցին: Տարիէ տարի խանդավառութիւնը կը զարգանայ, չնայած ի գին մեծ գոհողութիւններու, որովհետև դժբախտաբար նաև օդանավային թռիչքը հոսկէ Երևան շատ թանկ է: Այս ուղղութեամբ մենք դեսպանատան հետ խօսած ենք, բայց դեսպանատունը ոչ մէկ բան չի կրնար ընել: Այս մէկը մեծ խոչընդոտ է, այլապէս շատ անելի լիբանա-

նահայեր կ'այցելէին իրենց հայրենիքը: Օրինակ մը տամ: Երէկ Զմմա-
նու վանքի ուսանողները Հայաստան էին և հետևեցան Սփիւքի գար-
գացման դասընթացքներուն և վկայագիրներով վերադարձան: Երբ որ
տողոց հետ շփման մէջ էի, հաւատացէք, արցունքը իրենց աչքերուն մէջ
էր, հայրենիքով գինովցած են, հմայուած են և իրենց հայրենիք այցը
յետայսու յաճախակի ըլլայ:

Բարեգործական ոլորտ

Ըստ մեզի՝ կարևոր չէ, թէ ո՞վ է Հայաստանի ղեկավարութիւնը, այլ
կարևորը հայրենիքն է, մեզի համար հայրենիքը ամէն բանէ վեր է: Այ-
սօրուայ իշխանութիւնը կայ ու կ'երթայ, վաղը ուրիշը կու գայ: Մենք,
որպէս բարեգործական միութիւն, միշտ սատար կանգնած ենք մեր
հայրենիքի կողքին: Մենք այդպէս մեծցած ենք ու դաստիարակուած
ենք: Բարեգործական միութիւնը հսկայական ներդրում կատարած է
Հայաստանէն և, ինչ իշխանութիւն ըլլայ, Հայաստանի գլուխը իր բարե-
գործական աշխատանքները շարունակելու է, որովհետև այդպէս եղած
է պատմութեան ընթացքին, նոյնիսկ Սովետական Միութեան ժամա-
նակ: Մեզի համար ներքաղաքականութիւնը այնքան ալ կարևոր չէ, որ-
քան մեր հայրենիքի բարգաւաճումը: Կ'ուզենք մեր զաւակները հպար-
տանան իրենց հայրենիքով, իրենց հայրենիքը բարգաւաճ տեսնեն ու
երբեք չընկրկին: Ամենավտանգատը երևոյթը հետևեալն երևոյթն է,
երբ սփիւքահայ առողջ քննադատող մտքի կը փորձեն մարել ու լռեց-
նել պարզևատրելու և պատույ գիր տալու ճանապարհով: Այս բոլորէն
անդին կայ հայապահպանման լուրջ հիմնահարց թէ՛ Սփիւքի և թէ՛
Հայաստանի մէջ: Ինչն է պատճառը, որ մինչ օրս Հայաստանի մէջ ռու-
սերէնը ամէնուր կը տիրէ, երբ արդէն Սովետական Միութիւնը կործա-
նուած է: Մենք Սփիւքի մէջ շարունակ կը քարոզենք, թէ հայը պէտք է
իր հայրենիքը վերադառնայ, իսկ միւս կողմէ Հայաստանի հայը կ'ար-
տագաղթէ օտար ափեր: Ո՞ր պիտի քննարկուին այս հարցը: Անշուշտ,
Հայաստանի մէջ: Բայց պէտք է քննարկեն առողջ միտք ունեցող մար-
դիկը, որոնք խօսք և ըսելիք ունին: Եւ ոչ թէ հաւաքուին, վարագոյրի
դեր ստանձնեն և ապագային ոչ մէկ արդիւնք ունենայ:

Սփյուռքի մասնակցութիւնը

ՀՀ-ի արտաքին քաղաքականութիւնում

Հայաստանի անկախութիւնից յետոյ թէ՛ այս կուսակցութիւնները և
թէ՛ մեր ժողովուրդը իր վարած կեանքի պատճառով ենթահող պատ-

րաստեց Հայաստանի արտաքին քաղաքականության համար: Եւ լաւ է, որ ներդաշնակուին Հայաստան-Սփիոք քաղաքական աշխատանքները, որովհետև չնոռանանք, որ մենք, իբրև ժողովուրդ, միայն անցեալի պատմութիւն չունենք, նաև ապագայի հեռանկարներ, իտէպներ ունենք, Հայ դատ ունենք, որը այսօր Հայաստանի արտաքին քաղաքականության մեկնակէտն է: Հայաստանի կառավարութիւնը այդ Հայ դատը չի կարող վարել, և Սփիոքն ալ չի կարող այսուհետև տանել: Երկար ժամանակ Սփիոքը իր խենթութեամբ, միջոցներով Հայ դատի աշխատանք տարաւ Սփիոքի մէջ համաշխարհային մակարդակով: Հիմա լաւ է, որ Սփիոք-Հայաստան միատեղ ճիգերով այդ Հայ դատի աշխատանքը շարունակուին տարբեր աւելի մասնագիտացած, պետական հովանաւորութեամբ, բայց աւելի ներդաշնակ ճիգերով, որովհետև Հայաստանը թէկուզ չնչին կարողութիւնների պէտք ունի, մենք էլ Հայաստանի կարողութիւններին կարիքն ունենք, որպէսզի պատմութիւնից մեզի կտակուած Հայ դատի աշխատանքները չքենք, ընդհակառակը՝ հասցնենք տեղը, և տուեալներ կան, որ մեր ժողովուրդը այս հարցը իր ճիգերով ի վերջոյ լուծման պիտի հասցնէ, այդ հաւատքով ապրել ենք և չենք կարող այդ հաւատքից հրաժարուել և ուրիշ հաւատք որդեգրել: Այդ հաւատքով 100 տարիներ ապրել ենք սփիոքեան պայմաններում և այդ հաւատքով էլ ապագային ենք նայում: Եւ կարծում ենք՝ միատեղ ճիգերով շատ աւելի մեծ ճանապարհ կտրելու ենք և հասնելու ենք լուծման հանգրուանին:

Երկրորդ իմաստով՝ ազգային քաղաքականութեան տեսակէտով, մենք Հայ դատի հետապնդման աշխատանքին պէտք է միացեալ ըլլանք, ինչպէս Ցեղասպանութեան յայտարարութեան մէջ մի էինք, ինչ որ գօտեպնդիչ և այդ նշանաբանով գալիք տարիները ատոր զարգացումը տեսնենք:

Սփիոքը պէտք է ներգրաւուի յատկապէս արտաքին քաղաքականութեան մէջ: Չնոռանանք, որ փրոթոքոյներու ստորագրութեան ժամանակ մենք ինչ ձայն բարձրացուցինք, և հոն մեծ ճեղք մը յառաջացաւ հայրենի պետութեան և Սփիոքի միջև: Նոյնիսկ Սփիոքը մի քանի մասերու պիտի բաժնուէր: Բարեբախտաբար, այդ բոլորը բոլորեցինք և առաջ գնալ: Սփիոքը պէտք է ներգրաւել Հայաստանի արտաքին քաղաքականութեան մէջ, ինչն չէ, նաև ներքին, սոցիալական, ընկերային, տնտեսական և այլ բնագաւառներէն ներս: Երանի թէ գայ այն օրը, երբ վերանան «սփիոքահայ», «հայաստանահայ» բառերը: Երբ Հա-

յաստանը 70 տարիներ շարունակ ինքն իր որոշումը կայացնելու կացութեան մէջ չէր, Սփիւռքը կարողացաւ պահել այդ հայկականութիւնը, ցեղասպանութեան և մեր իրաւունքներու հետ առնչուած հարցերուն մէջ ալ մեծ դերակատարութիւն ունեցաւ: Ես կը կարծեմ, որ պէտք է տեղ մը դրուի սփիւռքահայուն: Բայց մենք այստեղ նստած չենք կրնար հայաստանցիին ճակատագիրը որոշել: Այդ մարդուն համար կենսական է, որ Հայաստան-Թուրքիա սահման բացուի, որպէսզի իր գործը լուանայ: Իսկ մենք այստեղէն չենք կրնար ըսել, որ պէտք չէ Թուրքիա երթալ, Թուրքիա գացողին կը դնենք, կը մորթենք...: Բայց ընդհանուր քաղաքականութեան մէջ պէտք է տեսակէտ ունենալ և ատոր ձևաւորումը պէտք է գտնել: Օրինակ, մենք կրնանք մեր ձայնը հասանելի դարձնել մեր կուսակցութեան խողովակով Ազգային ժողովին մէջ, բայց ընդհանրապէս ամէն մարդ կուսակցական չէ: Մենք պէտք է զգոյշ ըլլանք, և պէտք չէ մեզի տրուի այն իրաւունքը, որ մենք որոշենք Հայաստանի գագի գինը:

Վերադարձ հայրենիք

Հայաստանի հակաքարոզչութիւնը շատ զօրատր է՝ ըլլալ անիկա սոցիալական, ընկերատնտեսական գետնի վրայ, և չեն թոյլատրեր, որ հայրենիքի մէջ հաստատուինք: Որո՞նք կը հաստատուին: Անոնք, որոնք այստեղ ակամայ այլընտրանք չունին, անոնց համար հայրենիքը շատ լաւ է: Շատ քիչերն են, որոնք կ'ուզեն Հայաստան հաստատուիլ: Իմ տեղեկութիւններուս համաձայն՝ անոնք, որոնք սիրապէս զօրատր են, կը փորձեն երթալ Հայաստան և ներդրում ունենալ Հայաստանի մէջ: Ունիմ մօտիկ բարեկամներ, որոնք վաղուց հաստատուած են Հայաստան, և այսօր լաւ դիրքի վրայ են: Հոսքի իմաստով պարբերական հոսքեր կան, բայց ոչ մնայուն հոսքեր կան: Երկքաղաքացիութեան բաւական մեծ դիմում կայ: Միջին Արևելքի մէջ տիրող վիճակը մանաւանդ լիբանանահային և սուրիացիին ստիպեց, որ երկքաղաքացիութիւնը ստանայ և աւելի ապահով զգայ ինքզինք: Մէկ խօսքով՝ ապահովութեան իբրև երաշխիք կը դիմէ երկքաղաքացիութեան և ոչ թէ ազգայնասիրութեան:

Դէպի Հայաստան ընդհանրապէս հոսք կազմակերպուած չէ, անձնական նախաձեռնութիւններով կ'ըլլան: Ոչ Հայաստանի պետութեան կողմէ ուղղակի քաղաքականութիւն մը կայ այդ իմաստով և ոչ ալ Լիբանանի պետութեան կողմէ, հակառակ, որ մշակութային և կրթական

համաձայնագրեր գոյություն ունին երկու պետություններու միջև: Բայց երկու պետություններն այ, նկատի ունենալով իրենց տեղական, տնտեսական, միջազգային պայմանները, չեն զարգացուցած այդ մեկը: Ապազգային հիմնական մեր աշխատանքը այդ է:

Ի՞նչ է պետք անել

Հայաստան-Սփիոք կապը պետք է անդին գործնական ըլլայ: Իրաքանչիւր գաղութ իր պայմանները ունի, և այս բոլորը պետք է նկատուի առնուի՞ն Հայաստանի պետութեան կողմէ, և ըստ այնմ քաղաքականություն մշակուի: Այստեղ մեծ դեր ունին դեսպանատուները: Այսինքն՝ եթէ Կիպրոսի գաղութը փոքր գաղութ մըն է, իսկ Լիբանանի գաղութը մեծ գաղութ մըն է, և Յունաստանի գաղութը միջակ գաղութ մըն է: Հայաստանի հետ կապը առաջին հերթին, որ պետք է մտածել, կը մտածել, որ արուեստագէտ պետք է հրաւիրել իր երկիր, որպէսզի այդ շփումը ունենայ: Արուեստագէտներու վրայ պետութեան կողմէ վերահսկողություն չկայ: Եթէ երգիչ մը 50000-ով Ռուսաստանի մէջ կ'երգէ և նոյնանման գումար Կիպրոսի գաղութէն կ'ուզէ, չկայ մեկը, որ իրեն ըսէ, որ այս գումարը այս գաղութէն չ'ուզուի: Եթէ ուշադրութեամբ նայինք Հ1, «Արմենիա» և այլ հայկական հեռուստաընկերություններու ծանուցումները, կը նշմարենք, որ հայ երգիչները անլի նախկին Խորհրդային Միութեան երկիրներու կը շրջագային, քան Սփիոքի աջ գաղութները: Այս բնական ընթացք է, որովհետև անոնք այնտեղ անլի կը վճարուին: Անբնական է այն իմաստով, որ պետությունը ինքը պետք է հովանաւորէ կամ մղէ այդ արուեստագէտներուն, որպէսզի այցելեն այն գաղութները, որոնք իսկական բարոյական նեցուկի կարիք ունին: Դետությունը պետք է կայ հաստատել այդպիսի գաղութներու ղեկավարութեան հետ և դէպի Հայաստան շրջապտոյտներ կազմակերպել և իրենց կարողութեան համաձայն՝ գիներ սահմանուի: Այս բոլորը մատնանշածներս Սփիոքի նախարարությունն ու դեսպանատուները կրնան կազմակերպել: Այս կապերու չգոյությունը կրնայ ժխտական անդրադարձ ունենալ, երբ որ կը զգան, որ երգիչները միայն վճարող գաղութներ կրնան երթալ, և ան որ չի կրնար երթալ՝ ուրեմն կը զրկուի: Հարուստ և աղքատ վիճակ կը ստեղծուի:

Միւս երեսը հայազիտական մարդու պատրաստելու իմաստով Հայաստան-Սփիոք կապը պետք զօրանայ: Թէ՛ փոքր և թէ՛ մեծ գաղութներու համար անխտիր ամառնային դասընթացները անլի պետք է

շատնան, ինչու չէ՝ նաև պետությունը կրնայ համագործակցիլ տեղի առաջնորդարաններու և միություններու հետ և այն դասընթացները կազմակերպել ոչ թէ Հայաստանի, այլ տուեալ գաղութին մէջ:

Հայաստան և Սփիւռք յարաբերությունները կը կարծեն, որ ամէն մակարդակի վրայ կան, նոյնիսկ քաղաքական գետնի վրայ, բայց պէտք եղածին պէս չեն դժբախտաբար: Սպասելի էր, որ Հայաստան անելի աշխուժ յարաբերություններ ունենար Միջին Արևելքի երկիրներու հետ, մանաւանդ Լիբանանի գաղութին հետ՝ ըլլայ անիկա տնտեսական, քաղաքական, ընկերային, մշակութային... որովհետև ի վերջոյ այս յարաբերությունները փոխադարձ փորձառություններու իմաստով շահեկան են, Սփիւռքը՝ իր փորձառութեամբ, և Հայաստանը՝ իր նոր փորձառութեամբ: Բնական է, որ Եւրոպան այլ խոստումներ կը ներշնչէ նորաստեղծ պետութեան մը համար, Եւրոպան անելի յանդիմանաբար հնարաւորություններ ունի, Հայաստանը անելի կրնայ օգտուիլ Եւրոպայէն, Ամերիկայէն, բայց Միջին Արևելքն ալ կրնայ լաւ փորձ մը ըլլալ, յարաբերութեան հիմք մը ստեղծել Հայաստանի համար, որ չեղաւ դժբախտաբար: Այո՛, փոխադարձ այցելություններ տեղի ունեցան տարբեր ոլորտներու մէջ, բայց անոնք գործնական քայլերու մէջ չդրուեցան:

ԳԼՈՒԽ ԶԻՆԳԵՐՈՐԴ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՅԱՅԵՐԸ. ՓԱՐԻՉ

Ինչպես Լոս Անջելեսում իրականացված հետազոտության ժամանակ, Փարիզում ևս փորձագետներն ընտրվել են նաև ըստ իրենց ծննդավայրի հատկանիշների: Հաշվի է առնվել, որ ներկա Ֆրանսիայի գաղութի կազմում կան այդ երկրում ծնվածներ, Պոլիսից, Լիբանանից և Հայաստանից եկածներ: Սրանք ամենախոշոր խմբերն են: Կան նաև նախկին ԽՍՀՄ երկրներից արտագաղթած սակավաթիվ հայեր, որոնց գոյությունն այնքան որոշիչ չէ գաղութի կենսագործունեության և ներքին համագործակցության մեջ:

Փորձագետներ. ծնված են Ֆրանսիայում, Հայաստանի Հանրապետությունում, Պոլսում, Լիբանանում: Տարիքային սանդղակը՝ 30–60 տարեկան, կրթությունը՝ բարձրագույն, աշխատավայրը՝ Ֆրանսիայում Հայաստանի դեսպանատուն, Փարիզի Հայ առաքելական եկեղեցի՝ քահանա, Մխիթարյան միաբանություն՝ տնօրեն, Հայ մշակույթի կենտրոն՝ աշխատակից, գործարար, Հայկական ռադիո՝ տնօրեն, Բարեգործական հիմնադրամ՝ աշխատակից:

Հարցազրուցավարներ. *Մյուզաննա Բարսեղյան, Սոնա Ներսիսյան, Լուսինե Տանաջյան:*

Հարցազրույցները վարվել են 2016 թվականին Փարիզում:

Հարցազրույցների կյուբեր

Ընդհանուր պատկեր

Փարիզում կա 100–200-հազարանոց հայկական համայնք, նաև առնվազն 20 հազար անլեզալ հայ, որ հայ չի ներկայանում: Այստեղ չկա ԱՄՆ-ի նման հին ու նոր Սփյուռք տարաբաժանումը, միմյանցից շատ հեռու, թե հիմնականում իրար հետ, կապը պահում են: Չորս տարի առաջ կար այդ տարաբաժանումը, հիմա էլ կա, անհնար է չլինի, որովհետև այսօրվա հին համարվածները ժամանակին այստեղ նոր են

եղել և շատ հյուրընկալ պայմաններում չեն ապրել: Ֆրանսիայում հայերը ապրում են սկսած 1910–1920 թվականների միջակայքում: Առաջին սերունդ հայերը հաստատվեցին այստեղ մինչև ցեղասպանություն. նրանք Փարիզում 30–40 ընտանիք առևտրականներ էին, ուսանողներ ու մի քանի արկածախնդիրներ: Այստեղ կա շատ փոքր հատված, որը մինչև ցեղասպանությունը եղել է, այսինքն՝ մտավորականներ, առևտրականներ:

Ըստ մեկ վկայության՝ «Փարիզի հայերու մեծամասնությունը ընդհանրապես եկած են Արևմտեան Հայաստանէն: Օրինակ՝ հայրս վանեցի է, իսկ մայրս՝ մանիսեցի»): Մյուսը վկայում է՝ «Հայրս, մայրս, և առաջին սերունդը, որ այստեղ էր, նրանք էին, հետո մենք եկանք, հետո 70 թվականից Լիբանանից եկան, հետո՝ Պարսկաստանից: Այլ խոսքով՝ Խարբերդից, Իզմիրից, Պոլսից եկող հայերի մեծ մասը, որոնք կան, հին համայնք չակերտավոր կոչվածի, Մարսելի նավահանգիստ իջած հայերն են, որոնց մի մասը մնացել է Մարսելում, մի մասը ուղիղ Ռոն գետի առանցքով գնացել Լիոն, Բալանս, մի մասն էլ եկել է Փարիզ: Այսինքն՝ հայերի մեծամասնությունը այդ գծի վրա է՝ Մարսել-Լիոն, Մարսել-Նիս, Լիոն-Բալանս-Գրենոբլ և դեպի մայրաքաղաք: Այդ վայրերում մոտավոր հաշվարկներով 100–150 հազար հայկական ծագում ունեցողներ պետք է լինեն, դրանք երեք գլխավոր հայաշատ տեղերն են, ինչից ելնելով, համայնքային կառույցները հայերի թիվը նշում են կես միլիոն, որը ո՛չ պաշտոնական է, ո՛չ գիտական, ո՛չ էլ հետազոտական բազա ունի, դա ընդհանուր գիտակցությունն է, որ մենք այսքան ենք: Նաև ֆրանսիական իշխանությունների գիտակցությունն էլ է այդ, որ մոտավորապես այդքան են, ինչը կազմում է երկրի բնակչության մոտավորապես մեկ տոկոսը: Սա մի կողմից դեմոգրաֆիկ իմաստով շատ քիչ բան է, բայց քաղաքական առումով այդ մեկ տոկոսը իրենց նախագահական ընտրությունների հարցն է լուծում: Հայերի այս մասից զատ, կա նաև սիրիահայերի, թուրքահայերի 60–70-ականների հոսքը, և սիրիահայ, լիբանանահայ՝ այդ 50–60–70-ականների հոսքը:

Հիմնական խումբը առաջին հոսքն է, ածանցյալ խմբերը արդեն Սիրիայից, Լիբանանից եկածներն են, քաղաքացիական պատերազմի ժամանակ՝ 70-ականներին: Իսկ ահա Իրանից շատ չեն: Ընդ որում, Սիրիայից և Լիբանանից, որոնք գնացել են նաև Թուրքիա, Քեմալի ռեֆորմներից հետո, հույս ունենալով, որ վերախնտեզրվելու են Թուրքիայում, սակայն զգալով, որ ազգային ինքնագիտակցությունը հայը չի

կարող պահպանել այստեղ, հետ են եկել: Այսինքն՝ Թուրքիայից 60–70-ականների եկածները հիմնականում այդ հայրենադարձներն էին դեպի Թուրքիա: Հիմա Միրիայից հոսք կա, բայց շատ քիչ, 3-րդ կամ 4-րդ փոքր հոսքը Սովետական Միության վերջին տարիներին երկրից դուրս եկածներն են, որոնք հնարավորություն են ունեցել, և արդեն 90-ականների հայաստանցիների խումբն է: Կան տեղեր, որտեղ հայաստանյան համայնք է միայն, քաղաքներ կան, որոնք այդ շահավորից դուրս են և այստեղ միայն նոր եկվոր հայերի խմբեր կան: Մի քանի քաղաքներ կան, մեծ մասամբ Փարիզից մի քիչ հյուսիսային շրջաններում և արևմտյան՝ Մոնպելյեյում, Թուլուզում, Լիլում, այստեղ ավելի շատ նոր հայեր կան, հին հայերի քանակը 10 ընտանիքից ավել չի լինի: Փոքր քաղաքներում էլ իրենք շատ ավելի ինտեգրված են, այսինքն՝ հին համայնք կոչվածը չկա, ոչ էլ շատ կազմակերպություններ կան, և հենց 10–15 ընտանիքից ավել է լինում, արդեն նոր համայնք է դա»:

«Նանսի քաղաքը հայերու համար Ֆրանսայի մեջ կորսուած շրջան մըն էր, ուր կարող էիր գտնել միայն 2 հայ ընտանիք: Այսօր կ'ըստի, որ 6000 հայեր ունինք այստեղ ապրող, ովքեր Հայաստանէն գաղթած են: Նանսի քաղաքի բնակչութիւնը 100000 կը հասնի: Այնտեղ հիմնուած են հայկական շաքաթօրեայ դպրոց, ակումբ և այլն: Չեմ կրնար ըսել Հայաստանէն գաղթողներու թիւը, որովհետև իրենք անլի կորսուած (անյայտ) շրջաններու մեջ բնակուոթին հաստատեցին առաջին իսկ օրէն: Գաղթող հայաստանցիք ոչ թէ իրենք որոշեցին այդ շրջաններու մեջ ապրիլ, այլ ֆրանսական կառավարութիւնը ինք զիրենք ցրուեց, որպէսզի անոնք այնտեղ բնակուոթին հաստատեն: Այսպիսով՝ քսան տարիներ առաջ հայերը հաստատուած և բոլորուած էին Փարիզի, Լիոնի և Մարսէլ քաղաքներուն մեջ: Հիմա բոլորովին ցրուած են»:

«Ձուլման վտանգի հարցում այդ առաջին սերունդը հիմա արդեն գոյութիւն չէր ունենա իր հետագա սերունդով, եթէ չլինէին անընդհատ հոսքեր այստեղ, սկզբում թուրքահայերն են եկել, հետո մի սերունդ թուրքահայեր, պոլսահայեր հիմնականում, նրանք, ովքեր որ ցեղասպանութեան չէին ենթարկվել, բայց ճնշումների տակ էին, 20-ականներին նորից պոլսահայեր են եկել, վերջում, սկսվել է լիբանանյան պատերազմը, այդ սերունդն է եկել, ապա սկսվել է պարսկական հեղափոխութիւնը, մի փոքր սերունդ պարսկահայեր են եկել, սկսվել է սիրիա-

կան պատերազմը, մի սերունդ էլ եկել է, հիմա հայաստանցի հայերն են գալիս: Բայց եթե նախորդները միագաղափար, միատարր էին, լեզու, ուղղագրություն, ոճ, հայաստանցիները երևի 180 չասեմ, բայց 90 աստիճան տարբերվում են, և դրանով է, որ չեն ընկալվում իրենք այս համայնքի մեջ: Նորեկ հայաստանցիների մասին պատկերացումները այստեղի ավելի հին սերունդների մոտ դրական չեն, կախված սոցիալական, բարոյական կարգավիճակից, մի քիչ էլ հայաստանցիների կեցվածքից: Շատերը վախենում են, հայաստանցիները շատ տաքարյուն են և կովարար: Հայաստանցի հայերը թղթաբանական խնդիր ունեն, ուսում ստանալու համար, բայց եթե կա, ես չգիտեմ մի հայաստանցի հայ, ով որ չցանկանա սովորել, մարդիկ միլիոններ են ծախսում, որ գան Ֆրանսիայում սովորեն, Հայաստանից թեկուզ, կամ դրամաշնորհներ են ունենում, այսինքն՝ ջանք են թափում սովորելու համար, բայց Ֆրանսիա պետությունը նաև լավ մոդել ունի, կարծեմ Հայաստանն էլ ուներ Սովետական Միության ժամանակ, տեխնիկումներ են դրանք՝ 6 ամսից մեկ տարվա ընթացքում նեղ մասնագիտական բաներ ես ստանում, գործարաններում աշխատելու կամ ամենապարզ օրինակը բերեմ. մարդ է, որը դպրոցականների ընդմիջման ժամերին, երբ որ նրանք դուրս են գալիս, որ փողոցը անցնեն, նա կանգնում է և փողոցը փակում է, մինչև երեխաները անցնեն, և նա պետք է դրա համար կուրս անցնի, նա պետք է իմանա լեզուն, պետք է կարողան հետ բերել երեխային, եթե շեղվում է ճանապարհից, սա ամենափոքր նրբությունն էմ ասում»:

«Հայաստանցի հայերը համայնքային կեանքին միշտ դուրս մնացած են և երբեք չեն շաղուած: Չեմ գիտեր ինչու, կարծես իրենք նախընտրած են չշաղուիլ և մաս կազմել միութենական շարքերէն ներս: Սկզբնական շրջանին մաս կը կազմեն միութենական կեանքէն ներս, բայց երբ կը սկսին ինքնուրոյնանալ, այդ ատեն կը սկսին հեռանալ հայկական շրջանակներէ, կ'ուզեն ֆրանսացիի պէս ըլլալ, թերևս ալ ատելի, որպէսզի յաջողին: Առանց գիտակցելու իրենք համոզուած են, որ իրենց յաջողութիւնը ոչ թէ համընկնելու մէջ է, այլ լուծուելու, ձուլուելու մէջ է: Մենք յստակ տուեալներ չունինք, թէ անցնող 20 տարիներու ինչքան հայեր եկած ու գացած են, քանի՞ ուսանողներ ունինք դպրոցներէն ներս և այլն: Այլ խօսքով, հայաստանցիներու մէջ միատրում մը չեմ տեսած, այլ ցիրուցան եղած են: Բեյրութահայերի նման զգույշ չեն, այ-

սինքն՝ այստեղի հայերը և տարբերվում են: Դեմքին նայելով՝ կարող եմ ասել, որտեղից է: Երբեմն նկատելի է նաև մեկը մյուսին չընկալելը, չհասկանալը, խորշելը ինչ-որ տեղ, այո, գոյություն ունի այդ պատճառը: Մենք Ֆրանսիայում ենք ծնվել, և եվրոպական մտածողություն ունենք, նրանք որ Լիբանանից էին, տարբեր էին, Հայաստանից նույնպես: Դժվարությունը այն է, որ պետք է բոլորս նույն համայնքի մեջ ապրեինք, հիմա նրանք, որ առաջին սերունդն էին, ինչպես որ ես, հայրիկս, բավականին ցրվում են հիմա Ֆրանսիայի մեջ, ամուսնության կամ այլ պատճառով, հիմա լիբանանցիները եկան և հայաստանցիները, և կարող ենք ասել, որ համայնքը լայն է Ֆրանսիայի մեջ, մոտ կես միլիոն, բայց ինչ տոկոսը որտեղ է, չեմ կարող ասել»:

«Շատ են խառնամուսնությունները, բնական է դա, 50 միլիոնի մեջ ընդամենը 500 հազար հայ ենք, և դրանից խուսափել հնարավոր չէ, կոպիտ ասած, օվկիանոսի մեջ մի բաժակ ջուր ենք, ամենամեծ համայնքներից մեկն ենք, ի դեպ, բայց ամեն դեպքում, մոտավորապես նույնքան բնակչություն կար, սկզբունքորեն եթե վերցնենք, Սիրիայում և Լիբանանում, բայց ինչն է խնդիրը, Լիբանանում և Սիրիայում ապրող հայը ոչ հային համարում է իրեն օտար և թշնամի, քանի որ նա մահմեդական է և արաբական մշակույթի կրող, և տարբու էր առաջացել, իսկ ահա այստեղ եկողը եղբայրական պետություն է գալիս, քրիստոնեական պետություն է գալիս և իրեն ընկալում է այս մշակույթին հոգեհարազատ, հետևաբար այդ պատճառները չկան, մանավանդ որ համայնքը այդ խնդիրը չի դնում առաջին իսկ սերունդներից սկսած: Տոկոսային հարաբերությամբ ես եթե տարեկան անում եմ մոտավորապես 100 պասկադրություն, 100-ից առնվազն 80-ը խառնամուսնություններ են, բաժանումները չեմ կարող ասել, որովհետև դրանք մեզ չեն հասնում, բայց Ֆրանսիական վիճակագրությունը, որ թերթերում իմ աչքով ընկել է, 50–60 տոկոս է: Արդեն տարվա մեջ մոտ ութ այլակրոն մարդու հետ պսակ եմ կատարել, իրենք դավանափոխ են լինում իրենց ցանկությամբ, մենք չենք կարող այլ ազգի հետ պսակ անել, բայց դա նշանակում է, որ մենք չենք ցանկացել մարդկանց նեղացնել, բայց դա մեզ ցավ է պատճառել, բայց եթե այլակրոնությունը կա, կհաղթի նա, ով ավելի ուժեղ է իր հավատքի մեջ: Եթե նկատել եք այս պարազայում, եթե աղջիկը հայ է, ընտանիքը փրկված է, մոր գենը լավ է աշխատում: Երեխաներն են ուզում առանձնանալ, թե ծնողները, որովհետև 18 տա-

րեկանից հետո, երեխաներին տրվող ընտանեկան հարկը մեծանում է, մանավանդ եթե աշխատում են, իրենք էլ ձգտում են ազատության: Որ ֆրանսիացին ապրի ծնողների հետ, դա չլաված բան է»:

«Մարդիկ այստեղ սովորաբար ամուսնանում են արդեն բաժանվելու գաղափարը մտքների մեջ ունենալով, նախ կյանքը այնքան թեթև է իրենց մոտ, որ նախաամուսնական ամեն տեսակի հարաբերություններ ունենում են, և ամուսնությունը ցանկություն է իրար հետ երկար ապրելու, և արդեն 4–5 տեսակի ամուսնության մակարդակ ունեն ֆրանսիացիները: Այսինքն՝ այդ ավանդական մտածողությունը չկա երիտասարդների մոտ, որ լեզուն նույնը լինի, կրոնը նույնը լինի և ազգությունը: Կախում ունի՝ որտեղ կը բնակին: Օրինակ, Փարիզի մեջ բնակչուող հայ ընտանիքները յաճախ առանձին կը մնան: Իսկ անոնք, որոնք փոքր քաղաքներու մեջ կ'ապրին՝ Մադսեյ, Վալանս, Ալֆոդիլ և այլն, ուր հայկական միությունները շատ են և ուժեղ: Մթնոլորտ մը կը ստեղծուի, որը նպաստատու է հայապահպանման գործընթացին: Վալանսի և Մադսեյի 15 տոկոսը հայեր են: Վալանսի մեջ 30 հայկական միություններ կան: Այնտեղ հայկական ընտանիքը տակալին կը պահպանուի: Բայց դժբախտաբար, խառնամուսնությունները շատցած են, և հայեր ֆրանսացիներու հետ կ'ամուսնանան»:

Մյուս հարցը, որի վրա ուշադրություն են դարձնում փորձագետները, համայնքի հարաբերություններն են այլ համայնքների հետ. «Այլ համայնքների հետ հարաբերություններ կան, բայց կազմակերպությունների միջոցով, օրինակ՝ եկեղեցին կարող է ուրիշ թեմի հետ կապ ունենալ, բարեգործական մասնաճյուղերի հետ կարող է կապ ունենալ, բժշկական միությունը կարող է այլ բժշկական միությունների հետ կապ ունենալ, անձնական կապեր, այսինքն՝ ընտանիքները... կան ընտանիքներ, որոնք բարեկամներ ունեն այլ երկրներում, և ինչ-որ կերպ կապ է հաստատվում: Ֆրանսիային սովոր մարդը դժվար է հարմարվում Ամերիկային: Ամերիկյան մի քիչ կոշտ հասարակարգով երկիր է, քան Ֆրանսիան: Հայապահպանության և հայկականության խնդիրը Ֆրանսիայի դեպքում այն է, որ այստեղ հստակ պետական մակարդակով իրենց ողջ քաղաքականությունը, իրենց հանրապետական արժեքները հիմնված են նրա վրա, որ մարդկանց ըստ ծագման հիմքը չեն էլ ուսումնասիրում, և այդ հիմքը որպես փաստ չեն էլ ընդունում: Այստեղ համայնքայնությունը գոյություն ունի, սակայն պետությունը ինքը ու-

ժեղ մարտնչող հակահամայնքային է և աչք չի փակում համայնքների գոյության վրա, այսինքն՝ Ֆրանսիայում էթնիկ ռեգիստր չկա, այստեղ էթնիկ մեծամասնություն չկա, հետևաբար էթնիկ փոքրամասնություն էլ չկա: Կան, իհարկե, հեռավոր գյուղերում, որտեղ ֆրանսիացի են համարվում բաց մաշկ և մազերի գույն ունեցողները, մի քիչ թույլը արդեն ֆրանսիացի չէ, բայց պետությունը այդ մոտեցումը չունի, իրենք այս պահի դրությամբ էթնիկ իմաստով այնքան խառնված են իրենք իրենց մեջ, որ այդ մոտեցումը հակառակ կողմով կարող է աշխատել և ի վնաս իրենց կարող է լինել»:

«Հայերու հանդէպ շատ լաւ տպաւորութիւն կայ: 1925-ին, երբ հայերը Ֆրանսա եկան, տեղացիք վատ տպաւորութիւն ունէին իրենց նկատմամբ: Սկիզբը միշտ այդպէս կ'ըլլայ: Կ'ըսէին, որ հիւանդութիւններ պիտի բերեն, թոյլ են, մաքուր աշխատանք չենք կրնար կատարել...: Այս պատկերը Համաշխարհային երկրորդ պատերազմէն յետոյ փոխուեցաւ: Այսօր, կրնամ ըսել, թէ ֆրանսացիները շատ լաւ տպաւորութիւն ունին հայերու մասին, որովհետև հայերը իրենք զիրենք արդարացուցած են: Կ'ըսեն, թէ աշխատասէր ազգ են, են համախմբուած, են համերաշխ են: Իսկ ուրիշներ հայերն ու հրեաները նոյն գծի վրայ կը դնեն, պատճառաբանելով, որ իրենք միշտ իրարու հետ կ'ապրին: Տեղացի ֆրանսացիները մեծ յարգանքով կը տածեն ֆրանսահայերու նկատմամբ, որովհետև հայերը ինտեգրացումի ամէնէն լաւագոյն օրինակն են: Հայերը 80 տարիներ, երբ Ֆրանսա եկան, հիմնեցին, աշխատեցան և մաս կազմեցին ընկերակցութեան մէջ: Այլ խօսքով, հայերը երբեք ֆրանսացիներու հետ հարց չունեցան, այլ ընդհակառակը՝ համակերպուեցան: Միշտ պահեցին հայ մշակոյթը, իրենց ինքնութիւնը՝ ինտեգրուելով հասարակութեան հետ: Հայերը համեմատելով արաբական երկիրներէն եկող գաղթականներու հետ՝ ֆրանսացիք հայերուն դրական օրինակ կու տան: Կ'ուզեմ նշել նաև, որ այն բնիկ ֆրանսահայերը, որոնք վաղուց են այստեղ, եկող հայաստանցիներուն համար կ'ըսեն, թէ իրենց միջև տարբերութիւն կայ: Տեղի ֆրանսացիները, որոնք լաւ տպաւորութիւն ունին հին հայերու հետ, երբ կը տեսնեն եկուորներուն, կամաց-կամաց իրենց տպաւորութիւնը կը սկսի փոխուիլ: Բայց ես տարբերութիւն մը չեմ տեսներ իրենց միջև»:

«Ընդհանրապէս, լավ պատկեր ունեն, և միշտ ասում են, որ հայերը լավ ինտեգրվել են Ֆրանսիայի մեջ և լավ են ընդունվել ֆրանսիա-

ցիների կողմից: Ֆրանսիացիները տարբերություն չեն դնում, բայց հասկանում են, նորերը որ գալիս են, շատերը առանց թղթի են, բայց հիմնականում պահպանում են հարաբերությունները»:

«Հայերի մասին շատ բարձր... դե դրա մեջ մեծ ներդրում ունի Ազ- նավուրը, երկրորդ, երևի թե Ֆրանսիայի մեղավորության զգացումն է Հայոց ցեղասպանության, Կիլիկյան Հայաստանի տապալման գործում իրենց մասնակցության, պատմության առաջ այսպես գլուխ են խոնար- հել, երրորդ, չեն կարող հայերի հանդեպ լավ չլինել, որովհետև 500 հա- զարը քիչ ձայն չէ, ընդ որում, 500 հազարը պաշտոնական տվյալներ չեն»:

Տնտեսական իրավիճակը և սոցիալական կազմի մոտավոր պատկերը

«Լիբանանն էլած հայերու պարագային, անոնք էլած են դրա- մով և այստեղ իրենց գործը հիմնած և շարունակած են: Ոմանք երիտա- սարդ ժամանակ էլած են ուսման համար և յետոյ այստեղ մնացած են, գործ հիմնած են և այսօր լաւ վիճակի մէջ են: Մէկ խօսքով՝ բոլոր շեր- տերու մէջ հայերը ներգրաւուած են»:

«Ինչու են ասում, որ հայ համայնքը ամենալավ ինտեգրվածն է, ֆրանսահայերի ամբողջությունը երևի ուղիղ մասնաբաժնությամբ Ֆրանսիայի բնակչության սիստեմն է ներկայացնում: Համայնքային կան իհարկե երևացող հայեր, որոնք շուրփիզնեսի, նորաձևության, քա- ղաքականության ոլորտում շատ հաջողակ են, բայց իրենցով չենք կա- րող ընդհանուր կարծիք կազմել: Սկզբի հայերը արհեստագործներ էին, որովհետև առաջին սերունդն էր դա: Այն ոլորտներում, որոնք երևա- ցող ոլորտներ են, բնականաբար, հայերը որ կան, տաղանդավոր են: Դե մարդիկ եկել են այստեղ ոչ լավ օրից, այդ պարագայում ցանկա- նում է այստեղ ավելի լավ ապրել, քան Հայաստանում, և դիմում է ինչ- որ միջոցների, որոնք խրախուսելի չեն, բայց ձեռքներս դնենք խղճնե- րիս, ասենք, որ երբ մարդը ինչ-որ մի կետի հասնում, կայանում է, ինքը կանգ է առնում այդ գործի մեջ, խոսքը գնում է գողությունների, խաբե- ությունների մասին, ստացվում է, որ օրվա հացն է պատճառը: Ուրեմն այստեղ սերնդափոխությունը ապահովում է համայնքի հարատևու- թյունը, հետևաբար, եթե այդ սերունդը չլիներ, այդ ուծացումը վաղուց կլիներ, մի անգամ, երբ որ խոսք էր գնում, որ ֆրանսիացի մեկի մոտ,

որը ուղն ու ծուծով ֆրանսիացի է... և, ի դեպ, «ֆրանսիացի» գաղափարը սոցիոլոգիայի տեսանկյունից ուսումնասիրած կլինեք ինչ է նշանակում, մարդ կարող է լինել սևամորթ, անունը Աբդուլլահ, բայց ինքը ֆրանսիացի է, դա թղթի խնդիր է ընդամենը՝ ֆրանսիացի համարվելը: Այստեղ, երբ որ մարդիկ մուտք են գործում, ոչ ֆրանսիացի, դա իրենց համար այն բարձրակետն է, որին պետք է հասնեն, և դրա համար է ամբողջ պայքարը, որ մղում են այս երկրի ներսում, դա լինի հայ կամ այլազգի, և այդտեղից ձևավորվում է կաստայականություն: Նրանք, ովքեր վերևում են, արիստոկրատներն են, ես, որ մեկ տարվա թուղթ ունեմ, այստեղ վասալիկ եմ, նրանք, ովքեր թուղթ չունեն, ստրուկներ են: Դա արդեն ուղիղ համեմատական է սոցիալականին. եթե դու աշխատանք չունես, նշանակում է տուն չունես և այլն»:

«Իսկ այն մասը, որը իրեն ինտելիգենցիա է համարում, չի ուզում մյուսների հետ շփվել, իրեն առանձնացնում է շատ ուժեղ ձևով, այսինքն կա դիստանցիա իրար մեջ, օրինակ՝ գրողները, երգիչները, լրագրողները կամ ընդունենք պաշտոնյաները»:

«Շատ բժիշկներ կան, շատ իրավաբաններ կան, շատ առևտրականներ, երևի ամենաշատը իրենք են, մի ժամանակ հատկապես Թուրքիայից եկածները շատ են զբաղվել տեքստիլով, բայց հիմա այն դուրս է եկել, քանի որ Չինաստանը անմրցունակ շուկա է ստեղծել ողջ աշխարհում, իսկ թե ինչու Հայաստանում տեքստիլ չկա, ես հարցը տվեցի էկոնոմիկայի նախարարին, երբ որ մեզ մոտ էր, ասաց, որ միայն հումքը բերելը Թուրքիայի ապրանքի գինն ունի և այլն: Շատ նորեկ հայեր աշխատում են շինարարության մեջ, մեծ մասամբ հատկապես անգրանցում աշխատանք են իրականացնում և անվտանգության մեջ: Մի քանի հայեր կան, որ ունեն շինարարական կազմակերպություններ, ընդգրկում են նոր աշխատողներ՝ սևով, որը իրենց ձեռք է տալիս հարկ չվճարելու տեսանկյունից, և կան նաև հայեր, ովքեր ունեն անվտանգության ծառայությունների պատրաստման իրավունքներ և այլն, այդտեղ է, որ հայերը կարողանում են գրանցվել, դասի չգնալ և նման բաներ: Օրինակի համար իմ ծնողները որ եկան, ուզեցին, որ իրենց երեխաները ուսում ունենան, և շատերը բժիշկ, փաստաբան կամ ինժեներ էին, բայց հիմա, որ նորերը գալիս են, մեկ ոլորտ չկա, որ կարող ենք դա ասել, բայց հին սերնդի մասին կարող ենք ասել, որ նրանք կրթության մակարդակը բավականին բարձրացրին: Մի քիչ վատ ապրողնե-

րի զանգվածը, եթե ըստ Ֆրանսիայի ընդհանուր դեմոգրաֆիայի վերցնենք, հավասարակշռում է նոր եկած ոչ լեզվախոսներով, ոչ լավ ապրուստ ունեցողները, իսկ մնացած մասը, սկսած ուսուցիչներից մինչև հարուստ բիզնեսմեններ, այդ ամբողջ շերտը կա: Իսկ արդեն քաղաքական դաշտում Պատրիկ Դևեյանն է, որ, բացի պատգամավոր լինելուց, Օլդ Սենի դեպարտամենտի նախագահ է, որը միավորում է 10-ից ավելի քաղաքներ, և Ֆրանսիայի ամենազարգացած դեպարտամենտն է, իսկ Եվրոպայում 3-րդը, եթե չեմ սխալվում, նաև Մարտին Վասալը, որոնք երկուսն էլ այս տարի եղել են Հայաստանում, չնայած Պատրիկ Դևեյանը ամեն տարի է այցելում և նաև տնտեսական ներդրումներ է իրականացնում, այսինքն՝ Օլդ Սենը կես միլիոնի ներդրում է ամեն տարի անում Տավուշի մարզում: Մարտին Վասալն էլ իր դեպարտամենտով է ակտիվ կապերի մեջ, բացի դա՝ կան հայ քաղաքապետեր, փոխքաղաքապետեր, օրինակ՝ Լիոնի փոխքաղաքապետն է հայ, Մարտին Վասալը Մարսելի փոխքաղաքապետն է, նաև Դիդիե Փարաքյանը, որը նորաձևության մեջ է շատ հաջողակ: Փարիզի շրջակայքի փոքր քաղաքներում ևս հայ փոխքաղաքապետեր կան, Փարիզը բաժանված է 20 շրջանների, որոնցից յուրաքանչյուրն ունի իր քաղաքապետարանը, 5-րդում, 9-րդում հայ փոխքաղաքապետեր կան, այսինքն՝ քաղաքական դաշտում հայերը ներգրավված են այնքան, ինչքանով բոլորը: Երաժշտության ոլորտում, Շառլ Ազնավուրից սկսած, բոլորը գիտեն, որ հայերը տաղանդավոր են, Միշել Լեգրան, Լիս Սարյան, Սիլվի Վարդան, նոր սերնդից՝ Պատրիկ Ֆիորին, Ալեն Թերգյանը, որը հայտնի պրոդյուսեր է և Ֆրանսիայի կինոակադեմիայի նախագահն է, այսինքն՝ Սեզարի նախագահն է, ու շատ ազդեցիկ է կինոբիզնեսում և մշակույթում: Բիզնես դեմքեր էլ կան, իհարկե, բայց ոչ շատ հարուստների թոփ տասնյակում, որովհետև այստեղ բիզնես դաշտը շատ կոնսերվատիվ է: Բայց հայերի ներգրավվածությունը դրական է, ու երևացող հայերը, որպես կանոն, զնահատված ու սիրված են»:

«Թե՛ լիբանանցիներու և թե՛ պոլսահայերու պարագային, անոնք վարպետ ոսկերիչներ էին: Երբ Ֆրանսա եկան, իրենց գործը շարունակեցին: Բայց երբ գործ գտնելու դժուարութիւն կայ, անձը իր մասնագիտութեամբ չի փնտռեր, այլ ուրիշ գործ մը կ'աշխատի՝ իր ապրուստը ճարելու համար և ընտանիքը պահէ: 80-ականներուն հիւսքի գործը բաւականին տարածուած և պահանջուած էր: Գրեթէ բոլոր աշխատա-

նոցները հայերուն ձեռքն էր: Այս 15 տարի տևեց, և հայեր լուսապէս աշխատեցան, որովհետև Չինաստան սկսաւ աժան գնով վաճառել հագուստները»:

Համայնքի կազմակերպությունների մասին

«Այստեղ համայնքային կազմակերպվածությունը շատ ավելի լավ է, քան մյուս երկրներում, օրինակ կա SSAF-ը, որը ֆրանսահայ կազմակերպությունների համակարգող խորհուրդն է, բնականաբար, քննադատությունները շատ են, շատ կառույցներ կան, դրա մեջ չեն մտնում, սակայն փաստը այն է, Ֆրանսիայում կա մի կազմակերպություն, որը կազմակերպություններին կապում է իրար հետ: SSAF-ի մեջ մտնում են և՛ դաշնակցականները, և՛ հնչակյանների կառույցները, և՛ AGBU-ն, և՛ հայկական հիմնադրամը, և՛ երեք եկեղեցիները՝ կաթոլիկ, առաքելական, ավետարանչական, որոնք, Ֆրանսիայի դեպքում... այս եկեղեցիները ավելի համերաշխ են, դե Հայաստանում մի քիչ այլ է, հատկապես ավետարանչականների դեպքում: Համակարգող խորհրդի կազմը եթե նշենք, դրանք երեք կուսակցություններն են, ռամկավարները ավելի թույլ են, որովհետև տարրալուծվել են ՀԲԸՄ-ի մեջ, բայց երեք ավանդական կուսակցությունները, երեք եկեղեցիները կարևոր մշակութային օջախներ են, այդ բոլորը կարելի է ասել միավորված են, մարտնչելու տեղը գտել են՝ խորհուրդն է»:

«Տնտեսությինը իմ բնագաւառս և մասնագիտութիւնս չէ, բայց կրնամ ըսել, թէ այստեղ «Ժեռույիզ» միութիւն մը կայ, որը կազմուած է ֆրանսահայ գործարարներէ: Անոնք Հայաստանի հետ սերտ կապ ունին, գործնական ծրագիրներ կը մշակեն: Այսպիսով, հայերը մեկ խոսափող ունեն»:

«SSAF-ի համանախագահները՝ Արա Թորանյանը և Մուրադ Փափազյանը, համարվում են խոսնակ, այսինքն՝ շատ դեպքերում իրենց կարծիքի հետ կարող են համաձայն չլինել մյուս կուսակցությունները, ժողով անեն, իրենք քննադատությունները լսեն կամ ընդունեն, բայց Ֆրանսիայի իշխանական ներկայացուցիչները՝ նույն նախագահը, ընդունում է համանախագահներին: Նախագահի օգնականը հասարակական հարցերով իրենց ընդունում է խորհրդակցությունների և նման հարցերում: Սա փաստորեն երկակի է, իրենք համայնքի համար պատասխանատվություն չեն կրում, համայնքն էլ իր հերթին ամեն ինչ չի

անի այնպես, ինչպես իրենք են ուզում: Կազմակերպվածության առումով իրենք կարողանում են ներկայանալ, իսկ անհամաձայնություններն իրենք իրենց ներսում են լուծում»:

«Այստեղի կուսակցությունները խիստ տարաբաժանված են, և կապը բավականին հեռու է, անգամ թշնամական: Եկեղեցին ներքաշած չի այդ ամենի մեջ, այսինքն՝ եկեղեցին դրանից տուժում է, որովհետև իրենք դրանից խորշում են եկեղեցու հետ որևէ հարաբերություն ունենալ, աջակցություն ցուցաբերել հարկ եղած դեպքում: Կաթոլիկները, բայց ոչ հայ կաթոլիկները, հայերի մեջ Հայ առաքելականն է, 90 և ավելի տոկոս հայ առաքելականներն են, բայց այն մակարդակի, ինչ որ Հայաստանում է: Եկեղեցին ամեն կիրակի լեցուն է, ուրիշ օրեր եթե պատարագ անես, 10 հոգուց ավել մարդ դժվար հավաքվի, որովհետև զբաղված են, կամ չի հետաքրքրում մարդկանց, կիրակին տարբեր է, տարբեր մոտիվացիաներով մարդիկ կարող են գալ եկեղեցի, բայց մեծ տոներին ասեղ գցելու տեղ չկա, սկզբունքորեն այս կիրակի այդպես պետք է լինի: Արտաքին քաղաքականությունը համարում են զրո, այստեղ արտաքին քաղաքականության բուն կրողը Սփյուռքն է, և նա էլ պետք է լինի, որովհետև մեր արտաքին հիմնական քաղաքականությունը, ցավոք սրտի, 100 տարի է ցեղասպանության վրա է կանգնած, բայց եթե Հայ դատի հարցը հանենք, Սփյուռքը կքանդվի, իր ամբողջ ողնաշարը դրա վրա է, կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները դրա շուրջ են աշխատում, և միայն ապրիլի 24-ին կարող ես այստեղ 50–60 հազար հայ մեկտեղ տեսնել, երբեք այլ տեղ չեք տեսնի այդքան հայ համախմբված, անգամ Ազնավուրի համերգին»:

«Հայկական լոբբի կոչվածը շատ վատ է աշխատում, սա իմ անձնական կարծիքն է, ասում ենք կա, բայց մեր աչքին չի երևում, հրեաների մոտ այդ շերտավորումները գոնե իրենք ցույց չեն տալիս, մենք շատ շերտավորված ենք, և դա ստեղծում է շատ խնդիրներ, որ այդ լոբբին պետք է լուծեր, մենք վերջիվերջո պետք է գիտակցենք, իրար ձեռք բռնենք, օրինակ՝ անցյալ տարի՝ ապրիլի 24-ին, սովորաբար 4 մեծ միջոցառում է տեղի ունենում, ամենամեծը երթն է՝ Կոմիտասի արձանից մինչև անմար կրակ, Շանգեյիզեի կողմերը մոտավորապես, երկրորդը պատարագն է հայկական եկեղեցում, պատարագով է սկսվում, կեսօրին պատարագ ենք անում, հետո գնում ենք ցույցի, երրորդը՝ 23–24-ի մոտակա կիրակի օրը պատարագ են մատուցում հայ կաթոլիկները

Նոտողը դամ հայկական եկեղեցում, և չորրորդը, որը ցեղասպանության հետ կապ չունի, բայց հայ զինվորի արձանի մոտ կրակ վառելն է, ինքը գաղափարաբանորեն հանուն Ֆրանսիայի գոհված հայ զինվորների համար է, բայց այնպես ենք դասավորել, որ այդ օրերին ուշադրությունը բևեռենք այս հանգամանքի վրա, ժողովուրդն էլ շատ լինի, շատ հավաքվի, դա Ֆրանսիային դուր է գալիս, որ ինքը սիմվոլիկ քայլ է անում, և ժողովուրդը հետաքրքրված է դրանով: Անցյալ ապրիլի 24-ին այս 4 մեծ միջոցառումները կարելի է ասել խաչածնվեցին սաստիկ կերպով, ժողովուրդը չիմացավ ուր գնա և ինչ անի, ամենամեծ խնդիրն այն էր, որ կիրակի էր այդ օրը, և կիրակի օրը անմար կրակին կրակ վառելը արգելվում է, խնդիրն այն է, որ հայկական պատարագը, որը սովորաբար լինում էր ժամը երեքին, տեղափոխվեց առավոտյան 11-ին, նույն օրը «Նոտող դամը» ասաց, որ ժամը երեքին պատարագ է, իսկ նույն ժամին SSAF-ը կազմակերպեց երթը, հիմա մարդը չգիտի՝ պատարագի գնա, թե երթի գա... և այսպիսի իրավիճակներ: Հաղորդակցման մեխանիզմը չաշխատեց, մեկը մյուսի հետ չհավաքվեցին քննարկելու, թե ինչպես անեն, որ ապրիլի 24-ին և՛ պատարագի մասնակցեն, և՛ ցույցի գնան, և՛ որ SSAF-ի նախագահը բոլոր տեղերում կարողանա մասնակցություն ունենալ, սակայն չեղավ, և հասկանալի է, որովհետև մեկը մյուսին չի հարգում, չի սիրում, եկեղեցուն բանի տեղ չի դնում»:

«Նույն պատասխանը կու տամ: Ընդամենը 4 դպրոց ունինք: Իսկ կազմակերպությունները կը գործեն շատ աշխույժ կերպով, բայց նաև կը հանդիպին նոյն մշակութային դժուարության: Ես կը կարծեմ, որ մասնակցողներու թիւը մշակութային և կամ եկեղեցական կեանքէն ներս քիչ է: Տարբեր ձևով կը մօտենան հարցերուն: Մեր երիտասարդութիւնը գրաւելու դժուարութիւն ունինք, որովհետև կեանքը փոխուած է, ապրելու ձևերը փոխուած են: Մեր ժամանակ կազմակերպութեան մէջ կը մտնէիք, ինքնանուիրումով կը գործէիք: Միջոցները շատ սահմանափակ էին, աշխատելու ձևերը սահմանափակ և տարբեր էին, կէսը արևելեան մօտեցումով, կէսը՝ ֆրանսական, այսինքն՝ խառնուրդ բան մը կար: Այսօր, երիտասարդները, որոնք կ'ապրին երոպական շրջանակի մէջ, իրենց մօտեցումը, հարցերու բռնելու ձևը բոլորովին տարբեր է: Կը կարծեմ, որ մեր կազմակերպությունները այս հոլովոյթը դեռ չկրցան մարսել:

Այս պատճառով է, որ երիտասարդ ներգրաւելը որևէ մէկ կազմակերպութեան մէջ շատ դժուար է: Խօսքս 30 տարեկան երիտասարդներ

րու մասին է: Աւելի փոքր տարիքի երիտասարդներ յաճախ կը մասնակցին միութենական կեանքին, բայց երբ կը սկսին կեանքի ու գործի ասպարէզ նետուիլ, գործի բերումով կը սկսին աւելի շփուիլ ֆրանսացիներու հետ: Այստեղ մեծ խոչընդոտ մը կը յառաջանայ: Անոնք այլևս չեն կրնար երկու ձևով մասնակցութիւն ունենալ: Այդ պատճառով կը հեռանան հայկական միութենական կեանքէն և կը սկսին համագործակցիլ ու շփուիլ տեղացի ֆրանսացիներու հետ: Ա՛յս է մեր դժուարութիւնը: Եթէ կարողանանք 30–40 տարեկան երիտասարդները ներգրաւել մեր ազգային կեանքէն ներս, շատ լաւ քայլ մը կատարած կ'ըլլանք: Գաղութին մէջ կար գրասենեակ մը, որը կազմուած էր չորս միութիւններու կողմէ: Այն կը գործէր գաղթականներուն օգնելու համար: Այդ միութիւններն են աղքատախնամը, կապոյտ խաչը, բարեգործականը և եկեղեցին: Ցանկացած հարցով գաղթականները կարող են դիմել այս գրասենեակ և համապատասխան օգնութիւն կը ստանային թէ՛ թղթաբանական և գործի գոնելու առումով: Անշուշտ, խելքը գլուխը մարդիկ կան, ինչպէս մեր ուսանողներէն Փաթրիկ Տէմիրճեանը, որ այս քաղաքի մարզպետն է: Տարին գոնէ մէկ անգամ 5000000 հազար նուէր կը քընէ Տաուշի ջրանցքներուն: Այդ պատճառով ֆրանսացիներ իրեն դիտողութիւն սկսան ընել, թէ ինչու հայերուն կ'օգնես: Իսկ անոնց պատասխանեց, թէ ան բոլորին ալ կ'օգնէ: Փաթրիկը ամէնէն երևելի երեսփոխանն է: Նշեմ, թէ Շառլ Ազնաւուրը մեր աշակերտն է եղած»:

«Անցեալ օր ազերիները կամուրջին վրայ ցոյց կ'ընէին կոր: Անոնց ի պատասխան՝ հնչակեանները հաւաքուեցան և ցոյցի գացին: Դաշնակցականները «Նոր Սերունդ» երիտասարդական միութիւնը ունին: Անոնք ալ դրօշակներ առնելով կ'երթան և իրարու կը ծեծեն: Յիմար-յիմար բաներ: Թրքական դրօշակը վարելով՝ ինչ կ'ընես կամ ինչ կը հասկնաս: Ամենաանկիրթ բանն է այդ: Ժողովուրդը ինչ կապ կամ սխալ ունի»:

«CCIF» անունով կեդրոն մը կայ, որ ինքը գաղութի աշխատանքները կը կազմակերպէ, և որուն մէջ մենք չկանք: Ամենահինը, ամենահեղինակատր և ամենաօրինաւոր հաստատութիւնը ըլլալով, որը հիմնուած է ֆրանսական պետութեան կողմէ, դժբախտաբար չէ ներգրաւուած «CCIF»-ի մէջ: Մարաշցիներու միութիւն, տարբեր թաղականութեան խորհուրդներ ներառնուած են»:

Կրթական գործընթացը

«Դպրոցի լեզու՝ արևմտահայերենի և արևելահայերենի խնդիրը Փարիզի մեջ, ամենօրեայ 2 դպրոցներ կան, իսկ Մարսելի մեջ՝ 1, որը շատ ուժեղ հայկական վարժարան մըն է: Հայկական դպրոցների աշակերտների թիվը 2000-ից չի անցնում, և կան 7 ամենօրյա դպրոցներ, որտեղ աշակերտների թիվը մի քիչ ավել է»:

«Ամենօրյա դպրոցները, որտեղ կարևոր է հայապահպանութեան գործընթացը, ինչպես նշեցի, աշակերտների թիվը 2000-ից չի անցնում, ինչը կեսմիլիոնանոց համայնքի պայմաններում շատ քիչ է, այսինքն՝ դժվար է ասել, թե ինչպիսին է հայկական դպրոցների վիճակը Ֆրանսիայում, և կարծիք կազմել, թե ինչ կրթություն ունեն, կամ ինչ հայապահպանման արժեքներ ունեն ֆրանսահայերի երեխաները: Բուն Փարիզի մեջ մենք չունենք հայկական դպրոց, ունենք այս մեկ եկեղեցին, բայց ունենք հայաշատ 4 մեծ քաղաքներում՝ իրենց քաղաքապետով: Այդ 4 քաղաքները ունեն իրենց եկեղեցիները և ունեն նաև դպրոցներ հայկական: Հայկական մեկօրյա դպրոցներ գործում են նաև Փարիզում, օրինակ՝ AGBU-ի դպրոցը, առանձին անհատական դպրոցներ էլ են գործում, կան նաև եկեղեցուն կից դպրոցներ, օրինակի համար այստեղ մեր մայր եկեղեցին արդեն տասնամյա կլինի, փորձում է կիրակի օրերը դասեր կազմակերպել, այն էլ միայն պատարագի ժամերին: Կիրակի օրերը դպրոցը գործում է, բայց բավականին թույլ մակարդակի վրա է, և հոգևոր հովիվը կիրակնօրյա դպրոցով չի կարողանում զբաղվել, որովհետև այն պատարագի ժամերին է լինում: Այստեղ արդեն կա սոցիալական խնդիր, այսինքն՝ մարդիկ այստեղ շատ խնայում են իրենց ժամանակը, հատկապես ինչը, որ վերաբերում է արձակուրդներին և ազատ օրերին, և երբ որ ծնողը գալիս է պատարագի, չի պատրաստվում մեկ ժամ ավել սպասե, որպեսզի իր երեխան այստեղ մնա, և շատ ծնողներ պատարագի էլ չեն մնում: Բայց սովորաբար այնպես ենք նախատեսում, որ երբ որ ծնողը պատարագի գնա, երեխան գնա դասի, գաղափարը լավ է, բայց եթե մեկ հովիվ ավել ունենայինք այստեղ, ավելի կազմակերպված կլիներ: Այդ հարցը ես փոքրիշատե լուծելու համար այս տարվանից ձեռնարկեցի հոգևոր դաստիարակության դասընթացներ ամսվա մեջ երկու չորեքշաբթի օր, արդեն երկու դաս ունեցել են, բայց 100–200-հազարանոց ֆրանսիական համայնքում դպրոցին մասնակցելուն արձագանքել է ընդամենը 6 երեխա, սա

է իրավիճակը այստեղ, այսինքն՝ հարցը ոչ թե հոռետեսաբար, այլ իրատեսաբար եմ փորձում ներկայացնել:

Այսպիսի դպրոցի փորձ արդեն մի տարի կա կողքի քաղաքում, որը փարիզյան շրջան է, որտեղ 10–20 երեխա է հաճախում, և դրական միակ բանը այն է, որ ուսուցիչները ճիգ են գործադրել արևելահայերեն ուսուցում ապահովել, որովհետև այստեղ իսպառ բացակայում է, հիմնականը արևմտահայերեն խոսքի վրա է, իրենց էլ կարելի է հասկանալ թե ինչու արևմտահայերեն, որովհետև նախ 100 տարի է արևմտահայերենն է այստեղ խոսվել և գերիշխել, երկրորդ, որովհետև այդ լեզուն մտնող լեզուների շարքում է արդեն, և պետք է փայփայել այն: Ես կողմ եմ, որ այստեղ արևմտահայերենը պահպանվի, իմ երեխան ինքը հայկական դպրոց է գնում, մեր տնից մոտ 30 կիլոմետր հեռավորության վրա, անշուշտ, մեզ հարմար է, որովհետև ավտոբուսը այստեղ է գալիս և նրան տանում է, բայց լավագույն դպրոցն է: Դեռևս 1800-ականներից Հունաստանի Սալոնիկ քաղաքից հիմնադրված մի դպրոց է, որ հետո Թուրքիա, եթե չեմ սխալվում՝ Պոլիս է շարունակել իր գործունեությունը, իսկ ցեղասպանությունից հետո տեղափոխվել է Ֆրանսիա, Մարսել, իսկ 1920-ականներից հաստատվել է Փարիզում: Այսինքն՝ արևմտական տեղափոխություն է կատարվել, բայց իմ կարծիքով լավագույն դպրոցն է, որովհետև ես իմ երեխայի վրա էլ եմ զգում, նա մանկապարտեզային տարիքի է, բայց նա դպրոցում խոսում է արևմտահայերեն, ուսուցիչներ ունեն արևելահայերենի տիրապետող, հավանաբար որպեսզի դյուրացնեն ուսուցիչների և աշակերտների սկզբնական շփումը, բայց ուսուցումը կատարվում է արևմտահայերենով, հիմա եթե մի օր ես ծառայությունս վերջացնեմ Ֆրանսիայում, գիտեմ, որ ինքը դժվարություններ կունենա, բայց գոնե տառաճանաչ կլինի: Գոնե ուղղագրության մակարդակով, այսինքն՝ գոնե դասական ուղղագրությունը այստեղ սովորի, ի դեպ, դա մի խնդիր է, որը Հայաստանում չեն պատկերացնում, ես էլ չէի պատկերացնում՝ որքան կարևոր է ուղղագրության հարցը, և այստեղ էլ չեմ պատկերացնում, թե Հայաստանում ինչու չեն պատկերացնում, որ դա կարևոր է: Մյուս հարցը՝ դպրոցների հետ կապված. այո, ասում ենք հայկական դպրոցներ են, որովհետև դեկավար կազմի մեջ հայեր կան, բայց դպրոցները միատարր լինելու իրավունք չունեն Ֆրանսիա պետության մեջ, դա համարվում է ռասիզմ, դպրոց գիտեմ, որ անգամ արաբ աշակերտ կա, հավանաբար քրիստոնյա, չգիտեմ, որ ապրում է մոտակայքում, այդ դպրոցները

վճարովի են, այսինքն՝ մասնավոր դպրոց են համարվում, մինչև մանկապարտեզի առաջին երեքից վեց տարին առաջնորդվում են հիմնականում հայերենով, որից հետո անցնում են ֆրանսիական ծրագրի, և հայերենը մնում է որոշակի տարիքի սահմանում, որպես օտար լեզու: Արդեն դպրոցները չեն զարգացնում երեխաների մոտ հայոց լեզուն, որովհետև երեխան հայոց լեզվի դասին կարող է հայերեն խոսել, բայց մյուս 6–7 ժամը ֆրանսերեն է խոսում, ինքը ընկերների հետ ֆրանսերեն է շփվում, դպրոցում, դասամիջոցին և այլն, բայց այդ դասին Մասիս, նուռ, տոլմա, բաստուրմա, այսպես ոչ հայկական բառեր են ասում, սիմվոլիկ այսպես, որովհետև երբ նրանք դպրոցը ավարտում են, սիմվոլային մակարդակի են մնում: Լավ կողմ կա, մեծ մասը, որ դպրոց են գնացել, ասում են, որ հասկանում են հայերեն, բայց դժվարանում են խոսել, կոմպլեքսավորվում են, միջավայրն է դա: Մարդը, որ աշխատանքի գնաց, գիտի որ հայի ռեստորանում կամ խանութում է աշխատում, կարող է հայերեն խոսել, բայց սա, իհարկե, լուրջ խնդիր է: Հայերի 90 տոկոսը ձգտում է ունենալ կրթություն, ինչը վերաբերում է Ֆրանսիայում ապրողներին առհասարակ. նա, ով հնարավորություն ունի, այլևս Ֆրանսիայում ուսումը չի շարունակում, առաջին ուսումից հետո ձգտում են Ամերիկա, Շվեյցարիա, Անգլիա, որովհետև այնտեղ աշխատանք գտնելու լայն հնարավորություններ ունեն և ավելի բարձր կրթություն կարող են ստանալ: Երկուսն էլ հնարավոր է, տասը տարի չկար Սփյուռքի նախարարությունը, բայց միությունները կային, այստեղ կյանքը ավելի է ետում, այսինքն՝ ոչ ոք Սփյուռքին չի վստահում, մի ուրիշ խնդիր է սա, որ վերջերս բացահայտվեց. տարիներ շարունակ ՀՀ-ն փորձում է դեսպանության միջոցով ֆրանսահայ դպրոցները կցել Կրթության և գիտության նախարարությանը, պատճառաբանելով, որ հրեական օրինակն են վերցնում, որ պետությունը կկարողանա հավասարը հավասարի հետ խոսել այս պետության հետ, և ինքը կանի ծրագրեր, որ հայերենը շատանա, հայ գրականությունը, հայոց պատմությունը: Սփյուռքը դրան չի համաձայնվի, որովհետև Հայաստանի թե կրթամակարդակը..., դասական ուղղագրության խնդիրը, որը Հայաստանը չի կարողացել լուծել, դեսպանությունը ասում է, որ այսօր դպրոցները դատապարտված են կորստյան, աշակերտ չի գնում, թանկ է, հեռու է և այլն, բայց չգիտեմ՝ ՀՀ-ն ինչ երաշխիքներ է տալիս, որ ինքը պիտի կարողանա լուծի, Հայաստանում չի կարողանում, իսկ Սփյուռքում 3–4 անգամ մեծ ծախս է դա»:

Մշակութային կյանքը

«Ընդհանրապես, Արևմուտքի, բայց մասնատրապես Ֆրանսայի մեջ ֆրանսական մշակոյթը այնքան ուժեղ է և գրաւիչ, որ մեզի՝ ֆրանսահայերուս համար շատ դժուար է հակազդել և չէր կարելի հակազդել, որովհետև մշակոյթը շատ կարևոր և ընդունելի է: Հայերս չունինք որևէ մշակութային քաղաքականութիւն, որ մեզի կ'արտօսէ թէ՛ ֆրանսական մշակոյթէն օգտուիլ և թէ՛ հայկական մշակոյթը պահպանել: Այլ խօսքով՝ մէկը միւսը կը ճգնէ: Օրինակ՝ Ֆրանսայի մեջ ունինք ամենօրեայ 4 դպրոցներ և ընդամենը 1000 աշակերտ: Ասով չես կրնար լեզուն պահպանել»:

«Ֆեյսբուքում, օրինակ, խմբեր կան, որ ինֆորմացիայով կիսվում են, միջոցառումներով շատ ակտիվ են, բայց կրկին ակտիվ է փոքր մասը, մեծ մասը հայկական ծագում ունեցող ֆրանսիացիներ են, որոնք սիրում են Ֆրանսիան և իրենց լիարժեք քաղաքացի են համարում և որոշ չափով գիտեն, որ հետաքրքիր արմատներ ունեն և շատ չեն խորանում, որովհետև Ֆրանսիան ինքը մղում է դրան, և եթե ուզում ես լինել լավ ֆրանսիացի, շատ կապված չպետք է լինես քո արմատներին: Մշակութային գետնի վրայ Հայաստանէն յաճախ կը հրաւիրուին մշակութային ներկայացուցիչներ՝ երգչախումբեր, պարախումբեր, երգիչ, ինչպէս նաև մտատրականներ: Գաղութի կազմակերպութիւնները այս բոլորը ընդունելու կարօտը ունին:

Մշակութային հոլովոյթը Սփիտքի երթալով սկսած է տկարանալ: Մեր բուն շունչը Հայաստանէն կու գայ: Շատ տխուր մը վիճակ մըն է սա: Կրնամ ճիշդ հակառակը ըսել: Հայաստանէն գաղթողները այստեղ նաև կը ստեղծեն նոր մշակութային շունչ մը: Կը ստեղծուին պարախումբեր, երգչախումբեր և թատերախումբեր, որոնք խորքին մեջ նոր և հին սփիտքահայերու միացումն են: Կան շատեր, որոնք հայ են, բայց հայերէն չգիտեն, սակայն նման ֆրանսահայեր երբեք չեն մոռնար իրենց արմատները և պարտականութիւնները, Հայ դատը...: Ունինք երիտասարդներ, որոնք հայերէն չենք գիտեր, բայց Հայ դատի պաշտպաններ են և հայապահպանման գործընթացի մեջ ակտիվ գործունէութիւն ունին: Հայաստանի հայերը երբ Ֆրանսա կը գաղթեն, իրենց հետ նաև հայերէն լեզուն կը բերեն: Այսպիսով, կորիզներ և օջախներ կը ստեղծուին, որտեղ հայերէն լեզուն կը պահպանուի: Որքան հայեր եկած են, չեմ գիտեր: Շատ երիտասարդներ կը տեսնեմ, ովքեր ֆրան-

սերէն կը խօսին, բայց մէկ անգամէն կը սկսին մաքուր, սահուն հայերէն խօսիլ: Ես այս լսելով՝ կ'ուրախանամ և կը հպարտանամ: Այսպիսով նոր հոսանք մը կը ստեղծուի, անշուշտ, եթէ նոր գաղթողները չձուլուին: Ապագան դա ցոյց կու տայ: Մեր ծնողները, երբ Ֆրանսա եկան, փորձեցին իրենց ինքնութիւնը պահպանել: Անոնք իրենց կամքով չեկան, այլ պարտադրանքով դուրս ելան իրենց հողերէն: Մինչդեռ այն հայերը, որոնք կամովին գաղթած են Ֆրանսա, կը փորձեն ինտեգրուիլ և ֆրանսացի դառնալ: Իսկ Պարսելոնայի հետևանքով, որտեղ միութիւն մը կայ, որ կը համախմբէ Հայաստանէն գաղթած հայերը, մշակութային միջոցառումներ և լեզուական դասասանդեանց աշխատանքներ կը տանի: Այլ խօսքով՝ փորձը կայ և ձևաորոշած միութիւն մըն է»:

«Այնպէս է ստացվում, որ մեկը մյուսի հետ հեռավորությունը պահում է, ես շատ քիչ հայաստանցիների գիտեմ, որ մասնակցում են ինչ-որ միջոցառման, որին մասնակցում են այստեղի արվեստագետները, և շատ քչերին գիտեմ այստեղի ծնված մեծացած կամ թեկուզ դրսից եկած և երկար տարիներ այստեղ ապրող, որ հայաստանցիների հետ գնում են Արմենչիկի համերգին պարելու: Կա «Նոր Հառաչ» թերթը, որը ամենատարածված հայալեզու թերթն է, հիմա իրենք փորձում են մի քանի էջ ֆրանսերեն դնել, քանի որ հայալեզուների թիվը նոսրանում է այս համայնքի ներսում. սա ամենաառատ տպվող թերթն է, երկօրյա է, «Նուվել դը Ադմենին» էլ վատ չի տպագրվում, բայց կարծեմ, սա ամսաթերթ է:

Երիտասարդներ կան, մի թերթը մի ընտանիքի համար է, դրա համար բարդ է ասել, թե ով է կարդում այն: Կարծեմ մոտ 500-ի հասնող բաժանորդագրություն կա: Հիմա փորձում են կայք կազմակերպել օնլայն, ավելի հասանելի երիտասարդներին: Ասեմ ձեզ՝ կարդալու մշակույթը Ֆրանսիայում չափազանց զարգացած է, մարդիկ շատ զրազետ են այստեղ, կա այդ մշակույթը: Դժբախտաբար մամուլը փոքրանում է, մենք առաջ օրաթերթ ունեինք՝ «Հառաչը», հիմա «Նոր Հառաչն» է, բայց նույնը չէ, և նոր սերունդներից շատերը հայերեն չեն կարդում, ես էլ եմ դժվարությամբ կարդում, օրինակ, եթե հեռուստաալիք լինի, վստահ չեմ, որ շատերը կդիտեն, ռադիո կա նաև»:

«Ֆրանս Արմէնի», «Նուվէլ Արմէնի» և «Նոր Յառաչ»: Ասոնք մեր հիմնական թերթերն են: «Ֆրանս Արմէնին» երկլեզուով է, «Նուվէլ Արմէնին» միայն ֆրանսերէնով է, իսկ «Նոր Յառաչը» հայերէնով է, բայց

շաբաթական դրույթեամբ հատուած մը ունի, որը ֆրանսերէնով է: Երեք ռատիօներ ունինք, որոնք կը գտնուին Փարիզ, Լիոն և Վալանս: Իսկ «Ռատիօ FM»-ը այսօր կը սփռուի թէ՛ Փարիզի, թէ՛ Մարսէյի և թէ՛ Նիսի վրայով: Դժբախտաբար, լրատուական միջոցները փոխուեցան: Աւանդական մամուլը այսօր կը տարածուի անմիջապէս համացանցով: Մարդիկ չեն կրնար ամիսով սպասել թերթին: Այս երևոյթը լուրջ ազդեցութիւն ունի թերթերու ապագային վրայ: Այս թերթերէն մէկը ունի իր տպագիր ամսագիրը և իր կայքէջը»:

«Նուպարեան գրադարանը կը պատկանի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ): Այս գրադարանը հիմնուած է 1928-ին Պօղոս Նուպարի կողմէ: Այս գրադարանը ունի 43000 գրքեր, թերթեր, արխիւներ: Կան այնպիսի թերթի հաւաքածոներ, որ չէք կրնար գտնել նոյնիսկ Երևանի գրադարաններուն մէջ: Արխիւներու մէկ մասը Պոլիսէն եկած է Պատրիարքարանի կողմէ, որովհետև անոնք մեծ արժէք կը ներկայացնէին և մանաւանդ Հայկական ցեղասպանութեան կը վերաբերէին: Օրինակ՝ 1913 թուականին հայկական բնակչութեան վիճակացոյցի բնագիրը այստեղ կը գտնուի: Անտոնեան իր ամբողջ կեանքը նուիրած է այս հետազոտութեան և հաւաքած է վերապրողներու վկայութիւնները, որ այստեղ կը գտնուին: Ասոր համար նախկին գրադարանի տնօրէն՝ Ղևոնդ Գէորգեանը, որ յայտնի պատմաբան է և Ցեղասպանութեան մասնագէտ, գործածած է այս հարուստ նիւթերը: Ուրեմն, այս գրադարանը բացառիկ գրադարան մըն է հայութեան համար: Լրագրողներ, հետազոտութիւններ կատարողներ, ծագումով հայեր ուսումնասիրութեան համար միշտ մեր գրադարանը կ'այցելեն:

Մենք գրքեր, գիտական հանդէսներ կը տպագրենք, ցուցահանդէսներ կը կազմակերպենք: Անցեալ տարի Փարիզի քաղաքապետարանին մէջ մեծ ցուցահանդէս մը կազմակերպեցինք, որը նուիրուած էր Հայկական ցեղասպանութեան 100-ամեակին: Կրնամ ըսել, որ Եւրոպայի և Ֆրանսայի մէջ Հայկական ցեղասպանութեան նուիրուած ամենամեծ ցուցահանդէսն էր: Ինչ կը վերաբերի գրադարան այցելողներուն, անցեալ մթնոլորտը, որ գոյութիւն ունէր այս համայնքին մէջ, դժբախտաբար այսօր չկայ: Հայախօսները շատ էին, բայց այսօր քիչ են: Ընթերցողներուն թիւն ալ նուազած է: Սա բնական է, բայց չենք կրնար պայքարիլ այս իրողութեան դէմ: Միաժամանակ մենք կը փորձենք յառաջդիմել մեր գործին մէջ և հիմա նոր կայքէջ մը բացած էինք,

ուր մեր գործունեությունն ծառայուն կերպով ներկայացուցած ենք: Մեր այս գրադարանը գիտական ուսումնասիրության կեդրոն դարձաւ և եզակի է ամբողջ Եւրոպայի մէջ: Նոյնիսկ թուրք հետազոտողներ յատուկ կ'այցելեն այս գրադարանը հետազոտութեան համար: Ունինք նաև Ամերիկայէն այցելուներ: Կը համագործակցինք Կիւլպէկեան հիմնադրամի և ֆրանսական համալսարաններուն հետ: Կը փորձենք միշտ մեր կապերը ընդարձակել: Օրինակ՝ գալ շաբաթ պիտի այցելեմ Հայաստան՝ Ազգային գրադարանին կողմէ կազմակերպուած գիտաժողովին մասնակցելու համար: Ուրիշ կեդրոններ ալ, որոնց հետ կը համագործակցինք: Լիոնի մօտ Տեսին գիւղաքաղաք մը կայ, որտեղ վերջերս հայկական փոքրիկ գրադարան մը հիմնադրուեցաւ:

Բարեգործական միութիւնը ունի իր դպրոցը, դասախօսութիւններ կը կազմակերպէ, երաժշտական մրցոյթներ կը կազմակերպէ: Հայաստանի մշակութային հարստութիւնը աւելի կովկասեան ժառանգութիւնն է, իսկ մերը Օսմանեան ժառանգութիւնն էր, որը հայկական էր: Մեր մէջ գիտակցութիւնը կայ, բայց մշակոյթը պահպանելու խնդիր կայ: Այստեղի հայը չունի լեզուն կիրառելու տեղ և միջավայր, որը հիմնական խնդիրն է: Ատոր համար չի փորձեր հայերէնը իր ամէսօրեայ լեզուն դարձնել: Դպրոցին մէջ հայերէն կը սորվիս ու կը խօսիս, բայց դպրոցէն դուրս չեն խօսիր»:

«Իսկ որ ասում եք՝ համախմբել է պետք, ո՞ր կետերն են, որ այդ տարբեր խմբերի մարդկանց կարող են համախմբել, դա եկեղեցին է, թե՛ դա դպրոցն է, ուր միջավայրը պիտի ծառայի համախմբմանը: Ավելի շատ նրանք, որ վաղուց եկել էին Պոլսից կամ այլ վայրերից, շատ զարգացած էին, մշակույթի մասին բավականին տեղեկություններ ունեին և կարողացան փոխանցել, քիչ թե՛ շատ, հետո իրենց զավակները, ինչպես ես, կարողացանք փոխանցել, ինչ որ կարող էինք, երբ որ սկսեցինք աշխատել ավելի դժվար էր, այսպես մենք մեզ սովորեցինք, հետո ավելի հեշտ էր»:

«Եկեղեցին կառուցվել է այդ ժամանակ, դրա համար այդքան փոքր չափեր ունի, և խոսք է գնացել անգամ, որ կարիք չկա այդքան ծախս տեսնել, այստեղ այդքան հայ չկա, ու պարզ չէ՝ կմանն, թե՛ չէ, անհա սա 10 տարի հետո ուրիշ պատասխան բերեց, բայց Ֆրանսիայի ամենամեծ եկեղեցին էր, և մենք հիմա 20 եկեղեցի ունենք Ֆրանսիայի տարածքում, ամենամեծը դա է, և համայնքն էլ ամենամեծն է, չնայած

Մարտելում, Լիոնում ևս քիչ չեն եկեղեցիները, էլի մեծ են, բայց ոչ այս չափի: Ավելի շատ նրանք, որ վաղուց եկել էին, Պոլսից կամ այլ վայրերից, շատ զարգացած էին, մշակույթի մասին բավականին տեղեկություններ ունեին և կարողացան փոխանցել քիչ թե շատ, հետո իրենց զավակները, ինչպես ես, կարողացան փոխանցել, ինչ որ կարող էինք, երբ որ սկսեցինք աշխատել՝ ավելի դժվար էր, այսպես մենք մեզ սովորեցինք, հետո ավելի հեշտ էր»:

Յայրենիքի ներկայությունը գաղութում

«Արտաքին քաղաքականության պարագային, եթե Սփիտք մը ըլլալով, քաղաքականության վրայ ծանրություն կայ Հայաստանի վարչակարգին վրայ, ուրեմն Սփիտքի ղեկավարներուն հետ պէտք է ծրագիր մշակել: Միայն բողոքելը իմաստ չունի: Իրար ինչպէ՛ս պիտի ամբողջացնենք և ոչ թէ հակասենք: Ասի պէտք է նկատի առնուի: Պէտք է գիտնանք, թէ տարի յետոյ որտեղ երթալ կ'ուզենք, ինչպէ՛ս կրնանք առաջանալ, ինչ են կարևոր խնդիրները և ի՞նչ ձևով: Նոյնիսկ երբեմն հաւասարակշռելու համար պէտք է դիտմամբ հակասական ոճեր ստեղծել, բայց խորհրդակցելով պէտք է ճամբայ մը որդեգրուի, ուր միասին քայլ պէտք է առնել»:

«Դրան պէտք է նպաստի այն հանգամանքը, որ Ֆրանսիացի բոլոր քաղաքական գործիչները իրենց հրապարակային խոսքում միշտ ասում են, որ հայ համայնքը կամ ֆրանսահայությունը կամ Ֆրանսիայի՝ հայկական ծագումով քաղաքացիները ինտեգրման լավագույն օրինակն են Ֆրանսիայում, որովհետև մեծ մասը ինտեգրված է, և հայրենիք է համարում Ֆրանսիան, իսկ նրանց փոքր մասի նպատակը ոչ թե ի վնաս Ֆրանսիային գործել է, այլ Հայաստան-Ֆրանսիա հարաբերությունների լավացման հարցում կամուրջ լինելու փաստն է, որ իրենց գործունեությունը միաժամանակ ձեռնառու լինի և՛ Հայաստանին, և՛ Ֆրանսիային, և՛ իրենք իրենց գործողություններով պէտք է ցույց տան, որ առաջին տեղում Ֆրանսիայի շահերն են, ոչ թե Հայաստանի, և իրենք ավելի շատ չեն ցավում մի երկրի ճակատագրով, որը այս պահի իրենց հայրենիքը չէ: Բնականաբար, Հայաստանից նոր եկածների խումբը ամեն կերպ փորձում է արդարացնել իրեն, թե ինչու է եկել: Հին հայերը, օրինակ՝ նույն SSAF-ը, ավելի կշռադատված մտեցում են ցույց տալիս, ֆրանսիական քաղաքականությունը ելնելով: Այդ պատճառով Հայաստանին ուղղված դիրքորոշումը ավելի կառուցողական-խորհր-

դատվական է: Nouvel d'Armenie-ն բավականին մեծ դեր ունի... Լինու-Վալանսում էլ հայկական ռադիոներ կան, կա նաև Մարսելում, ու նաև սոցիալական ցանցերի միջոցով»:

«Դրա ստեղծումը լավ գաղափար է: Ունինք Հայաստան և Սփիուք, որոնք մեր ժողովուրդի երկու մասն են: Չեմ գիտեր, որ մեկը անելի կարևոր է: Ինչպես վերև ըսի, որ խօսքեր կային, որ Սփիուքն ու Հայաստանը պիտի համագործակցեին, բայց օրուայ նախագահ Լևոն Տէր-Պետրոսեանը ըսաւ, թէ դուք միայն դրամ դրկեցեք և ուրիշ բանով մի գրադուիք: Ես անձամբ լսեցի այս խօսքը: Սփիուքի և հայրենիքի փոխարաբերութիւնները այնքան կարևոր են, որ կարելի չէ արգիլել: Պէտք է իսկապէս մտածել և միջոցներ ստեղծել»:

«Սփյուռքի նախարարության ֆունկցիան այն է, որ նա հայրենադարձություն կազմակերպեր, և դա չսկսեր Ֆրանսիայից, որ գումարներ ստանար, այլ Լիբանանից, Սիրիայից, որտեղ այսօր մարդիկ գումար չունեն, որ տուն գնեն ու գան Հայաստան, նա էլ է մերը, ոչ թե որտեղ գումար կա, տեսեք, Հրանուշ Հակոբյանը վերջին անգամ ելրք է գնացել Սիրիա, Լիբանան, երբ որ երևի Ասադի հայրն էր նախագահ: Այդ նախարարությունը դրամաշորթման տարբերակ է, իմ կարծիքով:

Ես «Սփյուռքի նախարար» բառերը չեմ սիրում, իմ նախարարը չէ նա: Սփյուռքի հետ կապերը տարբեր են, բայց ես չեմ ընդունում նախարարի, որը իմ երկրինը չէ, երկիրս Ֆրանսիան է, այստեղ մոտեցումը ուրիշ է: Ես ժամանակին ասել եմ, որ եթե ուզում են, որ Հայաստանը լավ հարաբերություններ ունենա Սփյուռքի հետ, պետք է նախ և առաջ միայն իր գումարների հետևից չվազի, սկզբից միայն դա էր: Ինձ մի քանի տարի Ազգային ժողով էին հրավիրել, ես ասացի պատգամավորներին, թե ինչու չեն տալիս հինգ այթոռ Սփյուռքին, խորհրդի պես թեկուզ, սա նշան կլինի, որ Սփյուռքի գումարները չեք ուզում»:

Սփյուռք-հայրենիք կապերի անձնական բաղադրիչը

«Այստեղ հասկացվում են Սփյուռքի և Հայաստանի ներկայացուցիչների շփումների ժամանակային (երկարատև և կարճաժամկետ) կտրվածքը և վայրը (Հայաստանում, Ֆրանսիայում): Բովանդակային առումով այդ միջանձնային շփումներն ունեն ավելի լուրջ հետևանք, քան շփումները պետական կամ սփյուռքյան կազմակերպությունների ղեկավարների միջև: Լինելով խիստ անձնական տպավորությունների

արդյունք՝ այդ շփումների հետևանքներն առնչվում են նախորդ փորձի և ստացված տեղեկատվության բովանդակության և այնտեղ արտահայտված դիրքորոշումների հետ:

Այն, ինչ պատկերացնում են Սփյուռքից այն կողմ, շատ չի փոխվել, վերացական Հայաստան, Արարատ, բաստուրմա և նուռ. այդ մակարդակի վրա է, որովհետև իրենք Հայաստանում որպես զբոսաշրջիկ են, և երբ տեսնում են ցույցեր, մտածում են, թե դա ինչի համար է, ես ասում եմ իրենց, որ 20 կիլոմետր Երևանից հեռացիր և տես՝ կյանքն ինչպես է դադարում, դու Երևան ես գնացել, Գեղարդ ես գնացել, մաքուր է, իր համար լավ է, իր հայրենիքն է, արդեն ձևավորվել են որոշակի խավեր, որոնք հատկապես քառօրյա պատերազմի, մի քանի քաղաքական գործընթացների, «Մասնա ծեղի» և այլնի հետևանքով ասում էին, որ Հայաստանին պետք է պատժել, դադարեցնել դրամաշնորհները, ցույցեր են գումարում, և շատ քիչ մարդ է գնում ցույցերի, ինչպես եկեղեցի են շատ քիչ գալիս, այնպես էլ ցույցերին, եթե 100 հոգի ցույցին հավաքվի, լավ է, անշուշտ, հնարավոր է իրենք դրսից դեկավարներ կամ ֆինանսավորողներ ունեն, որ այդ ամենը տեղի ունենա. համենայնդեպս, մարդիկ արտահայտում են իրենց բողոքը Հայաստանում տիրող ներքաղաքական իրավիճակի հանդեպ: Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թե հայաստանցիներից ինչ պատկերացում ունեն, մի քիչ տարիքով տղաները, կողակից չգտած, միշտ հայաստանցի աղջիկներ են փնտրում, իրենց համար հայաստանցին դեռ անաղարտ, տնավարի, հավատարիմ և կարևորը՝ համեղ է պատրաստում, ընտանիքի աղջիկ է: Կա այդ մոդելը, շատ գովելի է, Հայաստանի աղջիկները, այստեղի համեմատ, շատ գեղեցիկ են, խնամված, ինչը աչք է ծակում, այդպիսին են նաև իտալուհիները, դրա համար ֆրանսիացի տղաները նաև նախընտրում են նրանց: Տղաները այդ տպավորությունը չեն թողնում, իրենց ուրիշ կերպարը այստեղ չի ընդունվում, անխնամ, սև հագած և այլն, տեղի է ունենում այդ խավի նվաստացում, չնայած այդ խավն էլ ինչ որ դերակատարում ունեն Հայաստանում ինչ-որ հարցերում, բայց դե...: Մեկ տեսակի հարաբերություն չկա, տարբեր են. կան, որ երբեք Հայաստանում չեն եղել և գանգատվում են, կան ուրիշներ, որ բավականին գնացել-եկել են, բայց հուսախաբ եղան, մանավանդ այդ անկախության օրերին, չնայած շատերը, որ ուղղակի գնում են որպես զբոսաշրջիկ, լավ տպավորություն են ունենում, ովքեր ինձ նման հաճախ են լինում՝ լավ պատկերացում ունեն: Երկիրը, որ դժվարություններ ու-

նի, երկիր, որ կորցնում է իր բնակիչներին, երկիր, որ խնդիր ունի Ղարաբաղի հետ կապված, այսինքն՝ մեզ համար կարևոր հարցերն են, մինչև օրս լուծում չունեն, հիմա մյուս պատկերները հաճելի են, նայած ինչ հարաբերություններ ունեն իրենց ժողովրդի կամ ծանոթների հետ»:

«Յարաբերություններ կան: Ես երեք տարի է, որ այստեղ կ'աշխատիմ: Նախկին տնօրէնը՝ Ռոմենտ Գէորգեանը, շատ ընկերներ ու գործընկերներ ունի Հայաստան և յաճախ կ'այցելէ Երևան: Յուսամ կը զարգանայ այս կեպը: Ես ալ, իմ հերթիս, պիտի այցելեմ Հայաստան, նոյնիսկ Հրանդ Տինքի հիմնարկի հետ գործունէութիւն պիտի ծառայեմ: Բայց ես կ'ուզեմ մնալ գիտական ասպարէզէն ներս, որովհետև կը կարծեմ, որ այս գրադարանի արժէքը գիտական է և կ'ուզեմ յարաբերութիւններ զարգացնել պատմութեան ինստիտուտին հետ: Զանազան բարեկամական կապեր ունիմ, բայց պաշտօնական յարաբերութիւններ»:

Տրանսսահայերի բարեգործական գործունեությունը

«Միս կողմէ այսօր կան կարևոր կազմակերպություններ, որոնք լաւ յարաբերութեան մէջ են Հայաստանի հետ: Օրինակ, «Հայաստան» ֆոնտը կը գործէ Ղարաբաղի համար: Կան այնպիսի կազմակերպություններ, որոնք իրենց ներկայացուցիչները ունին Հայաստանի մէջ՝ ՀՕՄ-ը, Օգնութեան Խաչը, Բարեգործութեան միությունը (ՀԲԸՄ): Կապերը ստեղծուեցան բայց չստեղծուեցաւ սիսթեմատիկ մեխանիզմի կառոյցը, որպէսզի Սփիւռքը օգտագործուէր Հայաստանին որպէս օգնութիւն և Հայաստանը իր կարգին Սփիւռքի գոյատևման գրաւական»:

«Մենք Հայաստանի մեջ զգանք, որ ուզում են ավելի խոր լինեն հարաբերությունները, անշուշտ, Սփիւռքը կարող է մեկ ուղղություն ունենալ, որ կարող է կողքից անել այն, ինչ պետությունը չի կարող անել»:

Սփյուռքի մասնակցության խնդիրը Հայաստանի քաղաքական կյանքում

«Սփիւռքէն պէտք չէ պահանջել, որպէսզի միջամտէ Հայաստանի ներքին քաղաքականութեան, բայց Սփիւռքը կրնայ շատ առաւելութիւններ ունենալ Հայաստանի համար, որովհետև ոչ թէ անելի խելացի ենք, այլ պարզապէս ուրիշ աշխարհայեացք ունինք: Ինչ կը վերաբերի կառավարութեան, ղեկավարութեան, քաղաքական մօտեցումներու, ունինք նաև փորձառութիւն մը, որ մեզի ցոյց տուած է, թէ ինչպէս կրնայ

ստեղծել արևմտեան ձևի կառավարություն մը, երբ որ Հայաստանը 70 տարի շարունակ Սովետական Միության իշխանության կառավարական ձևի տակ ապրած էր: Կրնանք շատ մեծ օգտակարություն ունենալ այս գծով: Կրնանք նաև օգտակար ըլլալ դաստիարակչական միջոցները առաջարկելով, ոչ թէ մեր կողմէ, այլ կառավարական շրջանակներու մէջ մեր ծանօթ փորձագէտները կրնան: Իմ անձնական կարծիքս հետեւեալն է. նախ քաղաքացի ըլլալ ինչ կը նշանակէ: Կը ծնիք երկրի մը մէջ, կը մեծնաք, կը մասնակցիք այդ երկրին բոլոր օրէնքներուն, պարտականութիւններ ունիք, կը քուէարկէք կամ կը քուէարկուիք, կ'ընտրուիք, ընտրող կը դառնաք, ղեկավար կը դառնաք, հոն կ'ապրիք: Եթէ ընտրած էք այդ երկրին մէջ ապրիլ, դուք իրաւացի էք, այդ երկրի քաղաքականութեան գաղափարներուն համար մասնակցելու, պայքարելու: Ես այսօր միւմիայն դիտող մը կրնամ ըլլալ Հայաստանի ներքին քաղաքական կեանքին: Ես երբեք իմ անձիս իրատունք չեմ տար մասնակցելու ներքին կեանքին խառնուելու, որովհետև ես այստեղ ապրած չեմ: Ես քաղաքացի չեմ: Հայաստան երթալով, անձնագիրը վերցնելով և Եւրոպայի մէջ ապրելով՝ ինքզինքս երբեք քաղաքացի չեմ կրնար համարել: Այո՛, հայ ենք, այդ տարբեր հարց: Բայց քաղաքացի ըլլալու հարցը ուրիշ իրատունքներ և արժէքներ կը հետապնդէ: Սփյուռքը կարող է առաջարկներ ներկայացնել Հայաստանին, որպէսզի Հայաստանի ներկայացուցիչները ներշնչուին և տեղեակ ըլլան, թէ ինչ տեղի կ'ունենայ արևմտեան շրջանակներու մէջ: Այսպիսով, անոնք կրնան բարեփոխումներ կատարել Հայաստանի մէջ: Հայաստանը պէտք է նաև սորվի ձերբազատիլ այս ընտրական խախտումներէն: Սփիւռքի համար գլխաւոր պատճառներէն մէկն է սա, որը պատճառ կրնայ դառնալ Հայաստանի համար տարբեր կարծիք կազմել»:

«Հայաստանցիները քննադատաբար են վերաբերում այս խնդրին, և առաջին վերաբերմունքը լինելու է ինքնարդարացնող գաղթ: Զգուշավոր է վերաբերմունքը, որովհետև լավ ինտեգրված ֆրանսահայը գիտի Ֆրանսիայի հասարակական կարգը և հասարակության լիիրավ անդամ է: Ֆրանսիայում ապրող հայը, կոպիտ ասած, սրտին մոտ չի ընդունում Հայաստանի ներքին քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձությունները: Իսկ կառույցները, հենց նույն SSAF-ը, հայտարարություններով հանդես գալիս են, փորձում են ոչ թէ Հայաստանի ներքին կյանքին միջամտեն, այլ խորհրդատվությամբ, օրինակ՝ հուլի-

սի դեպքերի հետ կապված, SSAF-ի հայտարարությունը շատ նեյտրալ էր, որ իրենց խնդիրը ոչ մեկի կողմը չբռնելն է: Նույն Մուրադ Փափազյանը և Արա Թորանյանը իրենց պարտականությունները շատ լավ հասկանում են, և երկար տարիներ նրանք դրա միջով անցել են, ու երբ որ ֆրանսիական քաղաքական համակարգը լավ են պատկերացնում, SSAF-ը ուղղակի չէր կարող Ֆրանսիայում հայկական կառույց լինելով հանդերձ, ընդդիմադիր կեցվածք ընդունել, չէր կարող ասել, որ ոստիկանության տարածք մտնող մեկը կարող է ճիշտ լինել, մոտավորապես ԵԱՀԿ Մինսկի խմբի պես նեյտրալ դիրքորոշում ունի: Դա մոտավորապես կարող է մի քանի 10 հազար մարդ լինել, որոնք ինչ-որ կերպ երբևիցե կապ են ունեցել համայնքային կառույցների հետ: Հայաստանի հետ կապը համայնքային կառույցների միջոցով է լինում կամ անձնական կապերի, եթե ինչ-որ մեկը արմատների բերումով հետաքրքրված է Հայաստանով, բայց մեծ մասամբ այն կազմակերպությունների, որոնք վերֆրանսիական են, օրինակ՝ ՀԲԸՄ-ն, Դաշնակցությունը, հնչակյանները, «Հայաստան» հիմնադրամը և այլն, նրանք, որոնք համահայկական բնույթ ունեն և ինչպես աշխատում են ԱՄՆ-ում կամ Լիբանանում, փորձում են նույն սկզբունքով այստեղ աշխատել և կապը կարողանում են պահել, իսկ այն կազմակերպությունները, որ համահայկական ցանց չունեն, զուտ ֆրանսիական են, իրենք արդեն Ֆրանսիայի առանձնահատկությամբ են գործում՝ որպես տեղի մշակութային ասոցիացիաներ, որոնք պարտադիր չէ, որ ընդհանուր համահայկական ցանցի մաս լինեն:

Ֆրանսիայի ՀԲԸՄ-ն է զբաղվում, հատկապես երիտասարդական կառույցը, որ ամառային գաղութներ են կազմակերպում և երեխաների կամ երիտասարդների տանում են այնտեղ: Կան փոքր ասոցիացիաներ, որ էլի փոքր խմբերով գնում են Հայաստան, սահմանամերձ շրջաններում իրենց նախաձեռնությամբ աշխատանքներ են կատարում, դպրոց են վերանորոգում և այլն»:

«Ոչ թե խառնվելու համար ներքին կյանքին, բայց գոնե կկարողանա օգտակար լինել, ինչ-որ բաներ կարողանա փոխել: Կամ ասացի՝ ինչու Սփյուռքի թանգարան չեք բացում, որ տեղացիները իմանան ինչպիսին է Սփյուռքի կյանքը, ինչպես են ապրել, մենք պետք է տեղյակ լինենք Հայաստանից, իսկ իրենք ինչու չպիտի տեղյակ լինեն, և չ՛ որ Հայաստանում երեք միլիոն հայ կա, յոթ միլիոն՝ դրսում»:

«Տարբեր անկիւնէ դիտուած՝ կան քաղաքական, մշակութային, սոցիալ և ընտանեկան յարաբերութիւններ: Օրինակ, մեր կազմը 6 հոգի է, որոնց մէջ կան 1 հայաստանցի, 1 դարաբաղցի, 1 պոլսահայ, 1 լիբանահայ, 2 ֆրանսահայ: Մեր յարաբերութիւնը մեր երկու հայաստանցի աշխատակիցներու հետ զուտ ընտանեկան յարաբերութիւններ են»:

Հայաստանի վարած արտաքին քաղաքականութեան ազդեցութիւնը համայնքային կյանքի վրայ

«Քաղաքական առումով տարբեր կազմակերպութիւններ տարբեր յարաբերութիւններ ունին Հայաստանի հետ: Օրինակ՝ կազմակերպութիւններ կան, որոնք համաձայն են Հայաստանի իշխանութիւններու որդեգրած ներկայ քաղաքականութեան հետ, իսկ ոմանք՝ ոչ, դէմ են:

Անկախութեան առաջին օրէն ստեղծուեցան Սփիւռք-Հայաստան համագումարներ: Այնտեղ փորձուեցան կապեր հաստատել Հայաստանի և Սփիւռքի միջև: Որոշուեցան նիւթեր, որոնց շուրջ պիտի ստեղծուէր միացեալ յանձնախումբեր: Իմ կարծիքով սա, դժբախտաբար, չյաջողուեցաւ, որովհետև փոխյարաբերութիւնները նպաստատր են երկուստեք: Միւս կողմէ՝ այսօր կան կարևոր կազմակերպութիւններ, որոնք լաւ յարաբերութեան մէջ են Հայաստանի հետ: Օրինակ, «Հայաստան» ֆոնտը կը գործէ Ղարաբաղի համար: Կան այնպիսի կազմակերպութիւններ, որոնք իրենց ներկայացուցիչները ունին Հայաստանի մէջ՝ ՀՕՄ-ը, Օգնութեան Խաչը, Բարեգործութեան միութիւնը (ՀԲԸՄ): Կապերը ստեղծուեցան, բայց չստեղծուեցաւ սիսթեմատիկ մեխանիզմի կառոյցը, որպէսզի Սփիւռքը օգտագործուէր Հայաստանին որպէս օգնութիւն և Հայաստանը իր կարգին Սփիւռքի գոյատևման գրաւական»:

«Մենք Հայաստանի մէջ զգանք, որ ուզում են ավելի խորը լինեն հարաբերութիւնները, անշուշտ, Սփիւռքը կարող է մեկ ուղղություն ունենալ, որ կարող է կողքից անել այն, ինչ պետությունը չի կարող անել»:

«Սփիւռքը կրնայ ազդել Հայաստանի վրայ, եթէ կարողանայ համոզել այս օլիկարխական վարչակարգը վերանայ: Որովհետև այս հիմնական ազդեցութիւն է, որ սոցիալ իրավիճակը չ'աճիր Հայաստանին մէջ, այլ կը վատթարանայ: Հայեր կան, որոնք շատ կապուած են Հայաստանին և կ'ուզեն ամէն տարի այցելել, բայց կան նաև այնպիսիք, ովքեր չեն զգար, որ Հայաստանը իրենց երկիրն է, որովհետև այս մշակութային իրողութիւնը չկայ այնտեղ: Երբ Հայաստան կ'այցելեն, այն

մշակոյթը չեն զգար այնտեղ, որովհետև կովկասեան մշակոյթ է, պոլսահայերու մշակոյթի նման չէ: Իսկ Հայաստանի քաղաքական ոչ դրական իրավիճակը, դժբախտաբար, նաև կ'ազդէ իրենց վրայ:

Վերջերս Հայաստանի անկախութեան 25-ամեակը նշեցինք: Մեզի համար դա հպարտութիւն է: Դարերու մեր երազն էր, և ձեռք բերեցինք: Սովետական պետութեան փլուզումէն, դարաբաղեան ազատամարտէն և երկրաշարժէն ետք անկախութիւն ձեռք բերելը մեծ իրագործում և հպարտութիւն մըն է հայերուս համար: Ո՞վ կ'երևակայէր, որ օր մը պիտի կարողանայինք Սովետական Միութեան ոտքի կանգնիլ և ստանալ մեր անկախութիւնը»:

«Ես չեմ սիրում եկեղեցուն վերագրել ազգապահպան գործունեություն, եկեղեցին ունի հավատապահպան գործունեություն, քրիստոնեական առաքելություն, որի մեջ մնալով մարդը չի կարող անմասն մնալ իր ազգությունից, իր էությունից: Մարդիկ գալիս ֆրանսերեն են խոսում, ասում եմ ցանկացած ֆրանսիական կազմակերպություն գնացեք, անգամ նախագահները, անգամ գիտաժողովները ֆրանսերենով են անում, միակ տեղը, որ հայերեն է խոսվում, միակ օազիսը հայկական մնացել է եկեղեցին, որ ամեն ինչ հայկական դեռ պահպանում ենք: Ամեն դեպքում ես հավատում եմ, որ եթե եկեղեցին իր ճիշտ կոչման մեջ է, այդ ազգապահպանությունը ինքնաբերաբար եկող բան է, բայց հակառակ դեպքում, եթե եկեղեցականը կուսակցության ճնշման տակ սկսի դավեր նյութել, քաղաքական երանգներով քարոզներ խոսի ամեն կիրակի, մեկ-մեկ կարելի է, հավատացյալներ կան, սիրում են այդ տեսակ քարոզներ լսելը, որ չձանձրանան եկեղեցում, բայց եկեղեցին թող իր բուն առաքելությունը կատարի, որը հավատքի քարոզչությունն է»:

Վերադարձ հայրենիք

«Ոչ, կա մի քանի հոգի, որ օրինակ Երևանում հարկաբաժին ունեն ինձ պես և հաճախ են գնում, բայց իբրև հայրենադարձ չէ: Իմ ֆրանսիացի ընկերները, որ հարցնում են, թե իմ երկիրը որն է, ես ասում եմ, որ երկիրս Ֆրանսիան է, ես այստեղ եմ ծնվել, ուսում ստացել, բայց Հայաստանը իմ սիմվոլն է, որ պաշտպանում եմ, և իրենք այդ տեսակետը լավ հասկանում են:

Դեպի Հայաստան նկատվում է, իհարկե հոսք չի կարելի ասել, որովհետև քիչ հատված է դա, ընդ որում՝ դրանք չորրորդ սերնդի հին հայերն են: Իմ իմացած օրինակներով կան, որ գնում են Հայաստան, և

հատկապես Արցախ գնացողներ էլ կան՝ մշտական բնակության համար»:

«Չի կարելի շարունակ քննադատել երկիրը, քննադատել ղեկավարներին, այլ պետք է քննադատել ղեկավարության ձևը, որը նաև ղեկավարների պատասխանատվությունն է: Քանի որ հայերի նոր մուտքը եղել է Սիրիայից և Լիբանանից, կապը այս երկրների հետ ուժեղ է, և իրենք էլ որոշակիորեն ֆրանսիական ազդեցություն են ունեցել: Լիբանանը մինչև հիմա էլ շատ ֆրանկոֆոն երկիր է: Այն լիբանանահայերը, որոնք 60-70-ականներից այստեղ են, իրենք փաստորեն 1-ին, 2-րդ սերունդ ֆրանսահայեր են՝ լիբանանահայ արմատներով, և ավելի շատ գնում են Լիբանան, քան Հայաստան, որովհետև բարեկամները Լիբանանում են»:

«Այն մասը, որ չեն ուզում ինտեգրվել, որ դառնա ֆրանսիացի, կամ որպեսզի իրենց սերունդները չդառնա ֆրանսիացի, նրանց մի մասը հայրենադարձվում է Հայաստան և Արցախ: Հաջող դեպքեր կան այս առումով, վերջին օրինակը իմ ծանոթներից՝ չորրորդ սերնդի մի հայ էր, որը գնաց Արցախ և նորաբաց Թումոյում գլխավոր ադմինիստրատոր է աշխատում»:

Վստահության խնդիրը

«Բայց Հայաստանում այդ երաշխիքները ոչ ոք չի տալիս իրենց, նախկին գյուղատնտեսության նախարարն էր այստեղ՝ Սերգեյ Երիցյանը, մեկը հարց ուղղեց, որ արդեն 20 տարի է գումար են ուղարկում համահայկական հիմնադրամին, ո՞ր են գնում և ինչի են ծառայում այդ գումարները, ու նրա պատասխանը, որ հիմա ժամանակները փոխվել են, մենք այլևս գումար չենք ուզել Սփյուռքից, մենք Սփյուռքին ասում ենք, որ իրենք գան, և իրենք իրենց գումարը ներդնեն Հայաստանում: Ես Երիցյանին ասացի. «Պարոն Երիցյան, դուք Սաշիկ Սարգսյան ֆենոմենի հետ ծանոթ եք, չէ, ասաց, ի՞նչ ֆենոմեն է: Ասացի ՀՀ նախագահը Ձեզ կասի, ասում է՝ մարդուն ճանաչում եմ, պարզապես ֆենոմենը չհասկացա, ասացի՝ ուրեմն ձեր բիզնեսների մեջ 50 տոկոս ոչ ոք չի մտել, որ չեք հասկացել, բոլորն էլ նույն կերակրամանից են օգտվում: Ես իմ էությամբ ո՛չ ընդդիմություն եմ, ո՛չ քաղաքական հարցերի մեջ եմ մտնում, ինձ համար սրտի ցավ է, որովհետև իմ հարազատները այնտեղ են ապրում»:

«Ինչ է այսօր Հայաստանի վիճակը, իսկ ինչ է հայ ժողովուրդի նա-
յուածքը Հայաստանի և անոր կառավարութեան քաղաքականութեան
վրայ: Շատ տխուր է: Ժողովուրդը յուսախար է: Ճիշդ չէ, որ յուսախար
ըլայ: 25 տարիներ անցած են մեր անկախութենէն, ճիշդ չէ, որ յուսա-
խար ըլլանք, այլ պէտք է հպարտանայինք: Որոշ մարզերու Հայաստա-
նը զարգացած է, բայց այդ բաւարար չէ: Տնտեսական պայմանները
լաւացան, բացի մեծամասնութեան համար: Հայաստանի գլխաւոր
հարցերէն են նաև ընտրական խախտումները, սոցիալական հասասա-
րութիւնը...»:

«Երբեմն Հայաստան կ'այցելեմ և փողոցներու մէջ կը պտտիմ, կը
զմայլիմ շէնքերու գեղեցկութեան, ատօներու շքեղութեան: Սա օրինակ
Աբովեանի մէջ է: Բայց երբ 10 մեթր առաջ կը քալեմ, արդէն իսկ սեփա-
կան աչքերովդ աղքատութիւնը կը տեսնես: Սփիւռքէն այցելող ժողո-
վուրդը լաւ չի ճանչնար, չի զգար իրավիճակը: Կը բաւարարուի միայն
հրապարակ, Օբերա, Աբովեան քալելով: Վստահ եմ, որ այդ այցելու
հայորդիները օր մը պիտի զգան իրավիճակը, որ Հայաստանը միայն
Հրապարակը կամ Օբերան չէ: Ֆրանսահայեր շատ դժգոհ են Հայաս-
տանի իրավիճակէն, սոցիալական վիճակէն: Մեր նախարարներէն յա-
ճախ կը լսենք, որ տնտեսական 10 տոկոս աճ տեղի ունեցած է, բայց
հայերը չեն ընդունիր այս երևոյթը»:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՅԱՆՔՆԵՐԻ ՀԱՅԵՐԸ.
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ**

Ընտրվել են այն փորձագետները, որոնք ԱՄՆ են գաղթել Լիբանանից, Սիրիայից, Պարսկաստանից, Հայաստանից և ԱՄՆ-ի այլ նահանգներից: Հաշվի են առնվել նրանց մասնագիտական հատկանիշները՝ լրագրողներ, ուսուցիչներ, ազգային կենտրոնների պատասխանատուներ և այլ անձինք, որոնք ունեն համայնքում շփվելու լուրջ փորձ և գաղութում դիտարկվում են որպես ազգի այս հատվածի մասին բովանդակալից տեղեկատվություն ունեցող գիտականեր:

Փորձագետներ՝ Իրան, Սիրիա, Լիբանան, Հայաստան, ԱՄՆ, Թուրքիա. տարիքային շերտ՝ 27–60 տարեկան. կրթությունը՝ բարձրագույն. ներկայացնում են՝ Իրանահայերի միություն, ՀԲԸՄ, «Հայկական դպրոց» ՀԿ, Կրթական խորհուրդ. փոխտնօրեն, միության նախագահ, լրագրող, վարդապետ, խորհրդատու, դպրոցի տնօրեն, գիտնական:

Հարցազրուցավարներ՝ *Մյուզաննա Բարսեղյան, Լուսինե Տանաշյան:*

Հարցազրույցները վարվել են 2013 թվականին Լոս Անջելեսում:

Հարցազրույցների նյութեր

Ընդհանուր պատկեր

Փորձագետների մեծ մասը համարում է, որ Լոս Անջելեսում այսօր բնակություն է հաստատել մոտ 600 000 հայ: Պատմականորեն, ըստ փաստացի տվյալների, հայերը այս քաղաք եկել են տարբեր ժամանակահատվածներում, նույնիսկ մի մասը՝ XIX դարի վերջերին: Հատկապես Ֆրեզնոյի հայությունը, որոնց մեծ մասն անցել է Լոս Անջելես: Վերջին 50 տարիների ընթացքում գաղութը համալրվել է միջինարևելյան քաղաքական անցուղարձերի հետևանքով (Սիրիայի և Լիբանանի

ներքին քաղաքական իրավիճակները, լիբանանյան քաղաքացիական պատերազմը, Իրանի Իսլամական հեղափոխությունը), ինչպես նաև նախախորհրդային Հայաստանից, խորհրդային անկախությունից հետո մեծաթիվ մարդկանց արտագաղթով: «Համայնքի պատկերը տարեցտարի փոփոխվում է: Չեմ կարող ասել դիմագիծն է փոխվում, սակայն կոսմոտիկ վերափոխվում է: Կալիֆոռնիա նահանգի առաջին եկվոր հայերը ֆրեզնոհայերն էին: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ Ֆրեզնոյում դժվարություններ կային հողագործության հետ կապված: 1920–50-ական թթ. Ֆրեզնո եկած հայ ընտանիքները, որ հողագործության հետ դժվարություններ ունեին կամ իրենց ապագան հողագործությամբ զբաղվելու մեջ չէին տեսնում, եկան քաղաք: Դրանք էին Սան Ֆրանցիսկոն և Լոս Անջելեսը. նրանք ապաստան էին գտնում տարբեր արվարձաններում: 50-ականներին արդեն ռուսահայերն էին գալիս Գերմանիայի կողմից և կոչվեցին «հիպիներ»: Այս մարդիկ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ գերիներ էին Գերմանիայում, և երբ առիթ ունեցան դուրս գալ այնտեղից, ուղղություն վերցրին դեպի Հայաստան, Ռուսաստան, իսկ մի մասն էլ՝ Ամերիկա: Ամերիկա եկող հայերի հոսքը սկսեց մեծանալ: Լիբանանի քաղաքացիական պատերազմը նոր թափ հաղորդեց դրան, և շատ լիբանանահայեր, սիրիահայեր եկան Հոլիվուդ (սա համարվում է Փոլի և Չախ Հարութի ժամանակաշրջան):

Հետագայում անընդհատ ու մեծ հոսքերով սկսեցին գալ հայաստանցի հայերը: Պարսկաստանից մեծամասնությունը եկել է 1970–80-ական թթ., Բելյուրից, հետո նորից սկսեց պակասել հոսքը, հետո մեծանալ. Պարսկաստանից 4–5 տարի չէին թույլատրում դուրս գալ, վերջերս Միրիայից շատ են գալիս, եթե չեմ սխալվում՝ թիվը հասել է 10 հազարի»:

Փորձագետը նման հոսքերի բազմությունը և ընթացքը բացատրում է ընդհանուր և առանձնակի գործոններով: Ընդհանուր պատճառներից մի քանիսն է համարում կլիման, աշխատատեղի առկայությունը, նպաստները, բարեկամների ցանկությունը մոտիկ ապրելու և այլն: «Նախ կլիման է, նրա հարմարությունը, պաղ չէ և շատ տաք չէ, նպաստավոր է: Այս երկիրը հսկայական և ուժեղ երկիր է, հնարավորությունների երկիր է: Երկրորդ՝ գործի կարելիությունը, պայմանները, եթե մեկը գա, անպայմանորեն ձևով մը գործ կարող է գտնել: Երրորդ՝ պետության տված նպաստները, թեև ամբողջ Միացյալ Նահանգներով է ադիկա, բայց և կոյտրացնե նաև այստեղ: Ավելին, արդեն ճյունագնդակի է սկսել վերածվիլ, ազգականներ, բարեկամներ իրար քաշում են,

բերում են: Մարդիկ կերթան Միջին Արևելք կամ Հայաստան՝ իրենց ամուսինը հոս կրերեն: Այդպես կսկսի մեծանալ գաղութը»:

Մինևույն դեպքում տեղի գիտակները նկատում են, որ չնայած նրան, որ գաղութը իր քանակով ավելանում է, սակայն շատ քիչ թվով էլ նվազում է: «Մի փոքր շրջանային փոփոխություններ կան, այսինքն՝ Հոլիվուդից գալիս են Գլենդել և մոտակա քաղաքները՝ Բրբենք, Լակրասենտա, ըստ հնարավորության և ավելի շատ Գլենդելից գնում են մոտակա շրջանները, որտեղ ավելի նպաստավոր է, որտեղ վարձերն ավելի սակավ են: Շատերն էլ տեղափոխվում են երեխաներին կրթություն տալու համար: Գլենդելը գնահատում են ութսունից մինչև հարյուր հազար ժողովուրդ»:

Մեկ այլ փորձագետ որպես ներքին հոսքերի պատճառ դիտարկում է ազգային ինքնության խնդիրը: Նա նշում է, որ շատ դեպքերում պարտադրանքով են գալիս հայերը. «Ենթադրենք իմ երեխան ինչ-որ տեղ պետք է մեծանա և պետք է հաճախի ծնողի հայեցողությամբ հայկական վարժարան»: Այդ տեղաշարժերով է նա բացատրում հայերի ներկայիս տարաբնակեցումը և հետագա տեղաշարժերը այս մեզապոլիսի տարածքում: Նա հստակ տեղեկություն է տալիս մեզապոլիսի տարածքում հայերի ոչ միայն ներկա տեղաբաշխման, այլև դրա շարժընթացի մասին: «Հոլիվուդ որ ասում ենք, Լոս Անջելեսի մաս նկատի ունեն, առանձին մաս չէ, Լոս Անջելեսի հայությունը մեծ մասամբ կենտրոնացած է Հոլիվուդում, Հյուսիսային Հոլիվուդում, իսկ հայերի մնացած մեծամասնությունը կարելի է գտնել Գլենդելի մեջ, ուր կգտնվի, արդեն ինչպես գիտեք, մեր ՀՀ գլխավոր հյուպատոսությունը: Գարձյալ ոչ պաշտոնական տվյալների համաձայն, բայց մոտավորապես Գլենդելի բնակչության կեսը հայեր են: Այսինքն՝ մենք խոսում ենք մոտավորապես 80–100 հազար հայության մասին, որոնք կազմված են մեծ մասամբ արևելահայ զանգվածից Հայաստանի, ինչո՞ւ չէ՝ նաև որոշ մասը արևմտահայ է: Հյուսիսային Հոլիվուդից դեպի արևելք՝ Գլենդել, կենտրոնացած է արևելահայ զանգվածը: Ես պարզապես կասեմ, ոչ որպես վիճակագրական տվյալներ, որպես ազգագրական տվյալներ, ոչ որպես հայերի ստորաբաժանում, որովհետև Հայաստանից եկած հայը, Պարսկաստանից եկած հայը, Սիրիայից եկած հայը, արևմտահայ և արևելահայ նույն հայերն են»:

«Եթե երիտասարդն իր ուսման բերումով գիտական կամ ուսումնական մակարդակ նվաճած են, ապա ատոմք գործի բերումով կմեկ-

նեն գանազան նահանգներ, ուր որ իրենց համար հարմար գործ կա, իսկ պարզ ընտանիքներ, որպեսզի ավելի ապահով եկամտի աղբյուրներ ունենան, կողքի նահանգները՝ Կոլորադո, Արիզոնա, Նևադա, ուր փոքրաթիվ հայկական համայնքներ կան, երբեմն կատացվի այնպես, որ հոն ավելի հարմար գործը կըրնան ստեղծիլ, կփոխադրվին, բայց այստեղեն մասսայական շարժում դեպի այլ տեղ չկա»:

«Այսպես. գալիս են հասնում շատ բաների, քաղաքապետի և այլ պաշտոնների: Նույնպես և Ռուսաստանի և Ամերիկայի հայությունը հարստություն է, և պետք է իմանալ, թե ինչպես ճիշտ օգտագործել այն հայության նպատակների իրագործման համար»: Այս միտքը արժե լրացնել և ավելի իմաստավորել տեղի հայերի տնտեսական իրավիճակի գնահատականներով, որոնք տալիս են փորձագետները: Մա կարևոր է նրանով, որ այս ամենամեծ և ազգի տարբեր շրջանակներում ամրագրված կարծիքներում ամենահարուստ գաղութի պատկերն իրականում այլ է:

Տնտեսական իրավիճակը

«Ես կասեմ՝ մենք հարուստ համայնք չենք, եթե համեմատենք հրեաների կամ մեկ այլ... որոնք մեր նման եկել են: Պարսիկ հրեաները, որ հիմա Գլենդելում են, իրենք էլ նույն չափն են: Մեր հայը, ասենք որ ունենում է 100 հազար դոլար, ինքը իրեն կոչում է հարուստ, բայց հրեան, երբ որ իր գրպանից 5 մլն պակասում է, ասում է՝ ես արդեն կոտր եմ ընկել, աղքատացել եմ, սնանկացած եմ: Ամենակարևորը մեր երիտասարդները բարեկեցիկ են: Շատ լավ են սովորում, համալսարաններում շատ մեծ առաջադիմություն կա, 6 տոկոսով մեր համայնքների երեխաները գնում են լավ կրթություն են ստանում, լավ էլ ռոճիկներ են առնում, ապագան շատ փայլուն է, բայց նրանք, որ նոր են եկել, 10 տոկոսն են, որ կարող են ունենալ նպաստավոր պայմաններ: Մնացած 80–85 տոկոսը հազիվ կարողանում է, բայց դժբախտաբար կառավարությունից նպաստ ստացողները, որ միայնակ նպաստով են, նրանք շատ-շատ են: Երբ որ աշխատում են տատիկ բերել, ամեն տատիկը (քանի տատիկ է թառել ծառին) 1000–1200 դոլար նպաստ է: Երեք–չորս տատ բերում են, տանը պահում են, և մեծ տներ են առնում էդ տատիկների համար: Բայց տատիկն է իրենց եկամտի աղբյուրը: Եղել է մի դեպք, երբ տատիկը մահացել է, բայց չեն իմացել, և սրանք 5 տարի նպաստ են ստացել: Կան հայեր մի քանի բնագավառներում, որ լրիվ խայտառակություն արեցին,

միայն հայաստանացիների մասին չեմ խոսում: Առաջ սկսեցին բեյրութահայերը և հավեպահայերը, ընդամենը ոսկերիչ են, իրանք զբաղվում էին մեծ մասամբ դրանով: Կան հայեր, որ կեղծել են կրեդիտ քարտերը: Մինչև բռնվում են՝ արդեն միլիոններ շահել են: 100 հազար տալիս են փաստաբանին, մի 2–3 ամիս գնում են Դուբայ»:

«Այստեղ հայերը ունեն ձեր պատկերացրած և չպատկերացրած բոլոր մասնագիտությունները: Ե՛վ արևելյան, և՛ ավանդական արևելյան մտածողության մեջ, ինչպես գիտենք, լավագույն մասնագետները բժիշկները, իրավաբանները, փաստաբանները, մաթեմատիկոսները, երբեմն ֆիզիկոսներն են: Այստեղ շրջանավարտին երբ կտեսնես, կհարցնես, կասե՛ «Ես հիմա հաճախում եմ այս ինչ դասերին», կհարցնես՝ «Ի՞նչ մասնագետ պիտի լինես», կպատասխանի՝ մի այնպիսի մասնագիտություն, որը 20 տարի քո մտքով չէր անցնի: Հավանաբար իրենք նոր սերունդն են և ավելի լավ կպատկերացնեն աշխարհը, քան մենք: Հիմա ամեն բան տարբեր է, բժիշկը էլ նույն բժիշկը չէ: Հիմա բժիշկը կամ որևէ այլ հարգված մասնագիտությունները այդքան չեն գնահատվում ինչպես ժամանակին, ներկա սերունդը մտածում է ավելի գործնական և շահութաբեր կամ սիրելի մասնագիտությունների մասին: Ե՛վ ես դրան կողմ եմ: Հիմա կան նեղ մասնագիտություններ, որոնք շատ ավելի առաջադեմ են, ընդհանուր մասնագիտությունները արդեն հին են, ինչպես օրինակ՝ հոգեբանությունը, որը, սակայն, հիմա կարող ենք բաժանել բազմաթիվ ճյուղերի:

Առաջ ավելի պրոֆեսիոնալ, անհատական արհեստներ էին՝ շինարարություն, ավտոմեքենաների նորոգում, ոսկերչություն, կոշկակարություն և այլն: Դրանց հետ կար բժշկություն, ինժեներիա և այլն: Հետո սկսեց զարգանալ ամերիկյան հասկացողությամբ աշխատանքային դաշտերը, երիտասարդությունը սկսավ ճյուղավորվել՝ տեխնոլոգիաների, արվեստի, ֆինանսի մեջ, որոնք ընդհանրապես ո՛չ Հայաստանի մեջ, ո՛չ համայնքում...: Բայց վերջին տասը տարիներուն սկսած է զարգանալ բանվորական մակարդակը, հատկապես նորեկների մոտ: Առաջ նորեկները չէին մտնում ատանկ գործերու մեջ: Ասենք, տաքսի մեքենաներ վարելը, ավտոլվացումը, փարքինգի, շենքերու շինարարության բանվորական աշխատանք, հեռավոր բեռնափոխադրումներ և այսպիսի մակարդակի գործեր սկսած են շատանալ, հոգնեցուցիչ, առողջոյանը վնասող աշխատանքների մեջ սկսած է ժողովուրդը

մտնել, որովհետև պետք ունի: Պետք է նաև գնահատանքով դիտել, որ մարդիկ մի քանի տարի փող են վաստակում, հետո ավելի լավ գործի են անցնում: Հայ ժողովրդի նկարագիրն է, որևէ մեկն այդ վիճակի մեջ չի մնա, թեև ահագին մեծ թվով հայեր կան բարեկեցության մակարդակի վրա»:

«Վերջին 20 տարիներին բավական փոխվել է պատկերը, քանի որ այժմ երիտասարդությունը տարբեր է: Օրինակ, եթե 20 տարի առաջ հարստանալու համար պետք է լինեիր ոսկերիչ, այժմ լրիվ այլ ուղղվածություն է: Այժմ մեր երիտասարդությունը շատ տարբեր բնագավառներում է (բժշկական, փաստաբանական, օրենքի...): Պետք է նաև նշել, որ աշխատում են պետական կառույցների մեջ՝ հատկապես նահանգային: Վերջինս, անշուշտ, կապված է այն բանի հետ, թե արդյո՞ք տվյալ քաղաքը հայաշատ է, եթե այո, ապա աշխատողների մեծ մասն էլ հայերն են: Ռուսաստանում միլիոնատերեր երևի ավելի շատ են, քան այստեղ: Այստեղ մեկ Քրքք Քրքքոյրյան ունենք, այստեղ տասը հատ կամ քսան հատ: Հետո միջին կարողության հարուստները ռուսախոս երկիրներում մեջ ավելի շատ են, քան թե Ամերիկայի մեջ: Ժամանակին եթե մեծահարուստ ըլլար մեկը, բավականին փող կունենային՝ ադի ըլլա ոսկով կամ դրամով հավաքած կըլլա, հատկապես Միջին Արևելք կամ նույնիսկ հիմա Ռուսաստանի կամ հետտվետական շրջանի մարդիկ թղթադրամ դիգեցին իրենց սենյակներում մեջ: Ամերիկայի պարագային մարդոց ունեցվածքը գետեղված է անշարժ կալվածներում և ... մարկետի վրա, այսինքն՝ ունեցվածքը կաշկանդված է, իրենցն է, բայց չի կարող իր ուզած ձևով գործածել: Հատկապես, որ թե՛ կալվածները, թե՛ ...մարկետները վայրիվերումների մեջ են, մեկ էլ կտեսնես, կորսցուց: Եթե մեկը 300 մլն դոլար ուներ տարբեր տեղեր ներդրում ըրած, իր արժեքը թուղթի վրա 300 մլն է, բայց կտեսնես հաջորդ ամիս 200 մլն է, հետո բարձրանում, իջնում է: Ուրեմն այնպես չէ, որ այս մարդիկը հավելյալ գումար ունեն, որ մեծ նվիրատվություններ անեն: Նույնիսկ մեծահարուստները բավարարվում են փոքր նվիրատվություններով: Եվ երկրի տնտեսական այդ ձևը ժխտական իր բանն ունի, կաշկանդում է, հարուստ է, բայց հարստությունը բանի մը չի ծառայելու, տրված է Ամերիկայի տնտեսության բարեկեցությանը: Բավականին հետաքրքրական է նաև տեղեկությունը ձեռներեցների միջև գործընկերության ազգային գործոնի մասին: Պետք է շեշտել հայ լինելու, լեզուն

իմանալու օգուտը: Շատերը հայությանը կվերադառնան հայության գանգվածային ուժի համար: Օրինակ՝ Փոլ Քրքրյանը, որ Լոս Անջելեսի քաղաքապետարանի անդամ է, ամերիկահայ անձ մըն էր, հիմա հայության եկավ, որովհետև տեսավ, որ հայկական քվեն իր ազգանունին համար պիտի քվեարկե, և ինքը սկսավ ծառայել: Հիմա, ինքնաբերաբար, ոչինչէն հարազատ հարաբերություններ զարգացան: Անձը որոշեց ծառայել այս խումբին, խումբն էլ որոշեց ծառայել այս անձին: Կարող էր այդ հայ խումբը օտարի հետ այդ հարաբերությունները մշակել, բայց երբ որ հայ է, նախընտրությունը նրան տրվեցավ: Եվ այդպիսի հարաբերություններ շատ կան: Բիզնես աշխարհի մեջ մեկը իր քովը գործավոր պիտի վերցնե, հայ կվերցնե: Կամ այստեղէն ուրիշ երկիր առևտուր պիտի անե, փնտրում է մեկ հայ, որ վստահելի ըլլա: Ժամանակին այդ վստահության հարցը 100 տոկոսով էր, հիմա խախտված է ադիկա մի քիչ: Ժամանակին հայ լինելն արդեն երաշխիք էր, որ ապահով կըրնաք ըլլալ, բայց հիմա խախտվում է ադիկա: Ժամանակավոր հարց է ադիկա: Հայը իր տեսակով խարդախ, չարաշահող անձ չէ, իր ժամանակավոր պայմաններու բերումով սայթաքում է, իսկ սովետական համակարգը 70 տարի այլասերեց մեր ժողովուրդը»:

Ազգային նկարագրի պահպանության հարցեր՝ տեսակետներ

Փորձագետների մեծ մասը օտարազգի միջավայրում ազգապահպանումը դիտարկում է հետևյալ հիմնախնդիրների լուծումներով՝ ա) ազգային լեզվի պահպանումը և դրա միջոցով հաղորդակցումը գաղութի մեջ, բ) ազգային նշանակալի կառույցների կազմակերպումը, գ) համայնքային մշակույթի զարգացումը, դ) հայրենիքի հետ կապի ամրապնդումը: Առաջնակարգ խնդիր է ազգային նշանակալի կառույցների հարցը՝ եկեղեցի, դպրոց, մշակութային կենտրոն, կուսակցություններ և այլն: Այս առումով փորձագետները միակարծիք են՝ ըստ գերակայության սահմանելով այդ խնդիրների լուծման հաջորդականությունը: Առաջինը ազգային կառույցներն են, որոնք և պետք է հոգան մնացած ազգապահպան խնդիրների լուծումը: Այդ գործընթացների մասին հաղորդվող տեղեկությունները և գնահատականները ստորև են:

Համայնքի կազմակերպությունների մասին

«1950–60-ական թթ. որպես պաշտոնական համայնք ձևավորվեց Մոնթբերեյի հայ համայնքը: Այստեղ սկսեցին զարկ տալ եկեղեցիներին, դպրոցներին, կառուցվեց Եղեռնի հուշարձան: 60-ական թթ. հետո՝

մինչև 80-ականները, հայերի թույլ հոսք կար դեպի Ամերիկա, որոնց օգնում էր «Այնճար» կոչված հասարակական խմբակցությունը. օգնում էր հայրենադարձներին դուրս գալ Հայաստանից Լիբանանի միջոցով, այստեղից էլ ովքեր չէին ցանկանում մնալ Լիբանանում, գնում էին տարբեր երկրներ, այդ թվում՝ Ֆրանսիա, Ամերիկա և այլն: Անշուշտ, ցեղասպանությունը եղավ, և երբ այստեղ ստեղծվեց ՀՕՍ կազմակերպությունը, նպատակն էր արևմտահայ գաղթականությանը օգնություն ցուցաբերել: Արդեն այդ ժամանակ սկսեցին անել դրամահավաքներ, հայկական Կարմիր խաչը ևս սկսեց դրամահավաքներ անել նույն նպատակով: Երբ տեղի ունեցավ ցեղասպանությունը, մեր կազմակերպության միտումը եղավ օգնել, հավաքագրել որբերին, նրանց բնակության վայր ու կերակուր տալ, և այս գործունեությունը մինչ այսօր շարունակվում է: Կենտրոնական վարչությունը մեկն է, բայց մենք ունենք 27 մասնաճյուղ, 14000 անդամ: Այն միայն կանանց միությունն է, այլև արդեն տղամարդիկ են ներգրավվել, սակայն մեծամասնությունը կանայք են: Մեր արևմտյան շրջանը թեև 100 տարի առաջ կար, որպես կենտրոնականի մաս Նյու Յորքի մեջ, 1984-ին դրոշվեց ստեղծել նաև արևելյանը: Պաշտոնապես 1984 թվականին արևմտյանի մեջ ոչ շահութաբեր կազմակերպություն ստեղծվեց: Թեև մայր կազմակերպությունը գտնվում է Բոստոնում: 1984-ից ամեն տարի ընտրվում են վարչություններ, որոնք ստանձնում են իրենց պարտականությունները: Այստեղ ունենք 27 մասնաճյուղ արևմտյան ասիի մեջ: «Լոռին» վերջին մասնաճյուղն էր, որ ստեղծվել է 3 տարի առաջ: Անշուշտ, անունները նվիրված են մեր հայրենիքի քաղաքներին, պատմական վայրերից են վերցված: Մեր կազմակերպության նշանաբանն է՝ «Ժողովրդիս հետ, ժողովրդիս համար»: Այստեղ սա համարվում է Հայ տուն, ցանկացած պարագայում անտուն մնացածները հենց օդանավակայանից գալիս են այստեղ: Ունենք ընկերային ծառայության գրասենյակներ, որի կենտրոնն այստեղ է: Այստեղ գործում են գաղթականների և առհասարակ բոլորի համար սոցիալական ծրագրեր: Գործում են դասարաններ տարիքավորների համար, որոնք սովորում են անգլերեն և ամերիկյան օրենքները, քաղաքացիության օրենքները: Ունենք նաև հոգեբանական աջակցության կենտրոն, բոլորովին անվճար է և պետությունից ֆինանսավորում չի ստանում, կազմակերպության մասնաճյուղերից է ֆինանսավորվում: Այս օրերին շատ սիրիահայ ընտանիքներ ունենք, որոնք գալիս են հոգեբանական և սոցիալական ծառայությունների համար»:

«Դեռ փոքրուց ես Պարսկաստանում ազգային գործերի մեծ սեր են ունեցել, կազմակերպությունների մեջ, հետո մարզիկ՝ «Արարատ» կազմակերպության մեջ և 71-ից մինչև 79-ը, որ վերադարձել եմ, «Արարատ» կազմակերպության բասկետբոլի սեկցիայի, որ այն ժամանակի ամենատիեղ սեկցիան էր, պատասխանատուն էի: Այստեղ գալուց հետո Իրանահայերի միությունը արդեն կար 1956-ին, և աշխատանքը այդքան լայնածավալ չէր: 1999-ից մինչև օրս նախագահում եմ Իրանահայերի միությունը»:

«Համայնքի ինքնակազմակերպման ուղղությամբ կան անհատական և կազմակերպական մակարդակներ: Դրանց գործունեության գնահատականները տարբեր են: Հիմա կազմակերպականը լավ վիճակի մեջ չէ: Կազմակերպություններու այսպես ասած կենտրոնները, դպրոցները, միություններու սրահները և այլ բոլորն ալ ֆինանսական պարտամուրիակներով ստեղծված են, անընդհատ աշխատանք կա, դրամահավաք կա, որ ադ պարտքերի ամսական վճարումները կատարին: Ուրեմն միութենական աշխատանքի երեք քառորդը ֆինանսավորման հարցերով է: Ասոնց վրա եթե ավելցնեն նաև, որ այս գաղութը Հայաստանին պետք է օգնե, Սուրիային պետք է օգնե, իր պապենական տունի, շրջանի, վայրի տեղերուն օգնություն պետք է ցուցաբերե, արդեն բազմաչարքար գաղութի կվերածվի: Հետո միշտ նորեկ եկողներ կան, միշտ գաղութի կարիքները շատ են՝ հասնելու նորեկներուն: Օրինակ, փաստորեն, Լոս Անջելեսը, որ խտացված հայություն ունի, հազիվ 8 տոկոսը աշակերտության հայկական դպրոց կերթա: Պատճառը ոչ թե ան է, որ չեն ուզեր, այլ նյութական կարողությունը, որ այդ գումարը ամսական հատկացնեն: Այսօր հայկական դպրոցները տարեն 5–8 հազար դոլարի ծախս է, նույնիսկ եթե զեղչեր տրվին, դժվարություն ունի ծնողն իր զավակը դրձելու, ամիսը 300–500 դոլար տալու դժվարություն ունի, երբ որ ինքը մեկսենյականոց տունի մեջ կձգի, հատկապես նորեկները: Իսկ անոնք, որոնք հին են, հոս գործ ունեն, բարվոք վիճակի մեջ են, ատոնք ալ որոշ տոկոս պիտի ներկայացնեն, ամբողջ համայնքը չեն: Համայնքի ծանրակշիռ մասը միջին դասակարգ և վար են: Մեծ է թիվն անոնց, որոնք ամերիկյան հասկացողությամբ աղքատության մակարդակի շեմից ցածր են կամ մոտ են: Մեծ է թիվը միայնակ մայրերով ընտանիքներու: Բազմաթիվ՝ քաղաքական, մշակութային, եկեղեցու շուրջ հավաքված, բայց ոչ միշտ եկեղեցական,

հայրենակցական, բայց ոչ միշտ հայրենասիրական, շրջանավարտների միություններ, բայց ոչ միայն սահմանված այդ դպրոցով, միություններ են գործում, որոշները՝ քիչ ծավալով, որոշները՝ շատ ծավալով: Կան միություններ, որոնք իրենց 100-ամյակն են նշում արդեն և ունեն տարածում ամբողջ աշխարհի վրա: Կան միություններ, որոնք ավելի նոր են, 10-ամյակի հազիվ պատմություն ունեն: Ունենք միություններ, որոնց գործելակերպը սահմանված չէ որոշ բնագավառով, դրանք այն կազմակերպություններն են, որոնք ունեն ավելի վաղ պատմություն, ունեն արտերկրի և երկրի փորձառություն, հայ հին Սփյուռքի և նոր Սփյուռքի փորձառություն: Այո, այսօր մենք ունենք նաև նոր Սփյուռք, որ կառուցվել է վերջին 40 տարիներու ընթացքին: Ունենք տարբեր՝ միայն մշակութային, ազգային, կրոնական, մարզական միություններ: Պատկերացրածը հարուստ գաղութը չէ: Եթե նույնիսկ հարստություն կա, լավ չէ կազմակերպված, որ օգտակար ըլլա թե՛ գաղութին, թե՛ առհասարակ: Ավելի լավը կըրնա ըլլա, բայց չէ»:

Կրթական գործընթացը

Այդ գործընթացով զբաղվում է գաղութի կազմակերպությունների մեծամասնությունը: Փորձագետների մեծամասնությունը գտնում է, որ բավականին անհնար է դիմակայել ազգի այս հատվածի ուժացմանը, որովհետև Ամերիկայի մշակույթը «ձուլման կաթսա» է: «Եվ դիմադրելը այս բանին բավական դժվար է, որովհետև դպրոցները ամեն տեղ անգլերեն է խոսակցությունը, առհասարակ ամեն տեղ, հեռուստատեսությունը, որ ամեն օր ժամերով բաց է, անգլերեն է, գործի միջավայրը անգլերեն է: Անգլերենի գործածությունն այնքան շատ է, որ հայերենի գործածության տեղ չկա, բացի եթե կենտրոնացած ասենք քաղաքներ են, ու նույնիսկ հոս տեղ այդպես է»:

Իսկ այս խնդիրը, ըստ հարցվածների, ամենակարևորն է հայապահպան գործերում: Այսպես՝ «Հայությունը, ճիշտ է, միայն հայերեն լեզու կամ խոսել չէ, սակայն հայությունը կսկսվի և կամբողջանա հայերեն խոսելով: Եվ այն ծնողները, որոնք գիտեն հայերեն, չեն օգտագործիլ հայերենը, և ոգին չեն ներմուծում երեխոց մեջ: Պիտի խնդրեինք անպայման, վերստին դիմել այդ ազդեցիկ միջոցին՝ լեզվին, որը երբեմն նաև անգլիտակցաբար կգործե և տարիներու ընթացքին և ոգի կձևավորե: Հիմա ասենք թե Հայաստանն եկած զանգվածի զավակները, որ հանրային դպրոց են գնում, հայախոս են, բայց հայերեն գրել-

կարդալ չգիտեն: Չեմ ասում, որ մյուս զանգվածի բոլորի գավակները հայերեն գրել-կարդալ գիտեն, բայց գոնե հայկական դպրոցի մեջ են, որոշ քանով կ'ծանոթանան»:

«Ամերիկայի մեջ կա գրեթե նույն համակարգը, որ կար խորհրդային շրջանում՝ պետական հոգաձության տակ գտնվող անվճար կրթական համակարգ: Կան նաև այսպես կոչված սեփական կրթական հիմնարկներ, և հայկականները կ'մտնեն երկրորդ խմբի մեջ: Սեփական չի նշանակում, որ պատկանում է ինչ-որ անձանց, այլ պատկանում է մեր ազգային կառույցներին: Այս հիմնարկների մեջ ընդունված է, որ և՛ ուսումնական, և՛ կրթական-դաստիարակչական մակարդակը շատ ավելի տարբեր է, քան հանրակրթականում: Դրա համար մարդիկ կ'նախընտրեն սեփական դպրոցներ հաճախեն իրենց երեխաները, չնայած որ դրանք վճարովի են»:

«Վատ կողմ կա այստեղ մեկ, որ հայերի թվի մոտ 90 տոկոսը չի գտնվի սեփական դպրոցներում, այլ գտնվում է հանրակրթական դպրոցներում: Լավ կողմը այն է, որ բոլոր դպրոցները սեփական, չնայած որ վճարովի են, տալիս են լավագույնը մեր աշակերտներին և՛ ուսումնական, և՛ դաստիարակչական բնագավառների մեջ: Եվ մեր դպրոցների շրջանավարտները կ'ընդունվին լավագույն համալսարանները: Եվ այդ վճարումները բոլորովին չեն փակում այն կյուրակական կարիքները, որ ունեն դպրոցները: Բարեգործությունների միջոցով են կարողանում լուծել այս խնդիրները: Այս դպրոցները հիմնվել են շատ վաղուց վրանների վրա, իսկ այսօր կա այս ամենը»:

«Բոլորը ուզում են այդ անել, բայց երկու ուղղություն կա. նախ, հայերեն լեզվի ծանոթացման հարց և օգտագործման հարց գրելով ու խոսելով, մշակույթ արտադրելով, հետո կա գիտակցության հարցը: Ես կարծեմ, որ շատ աշխատանք պետք է տանենք, որ գիտակցության բաժինը 90 տոկոսով հաջողի»:

«Հայկական դպրոցներն են հայ երեխաներին իրենց մայրենի լեզուն ծանոթացրել և դասավանդություններ, չնայած սահմանափակված է. Կալիֆոռնիայի և՛ այս մասում, և՛ մարզական ցանցերը բարեգործական (հոմենենթենը), և՛ նույնպես հնչակյանների ուրեմն մարզական խումբերը, դրանք են, ես կարծում եմ, հիմնական, որովհետև մեծամասնությունը հայերեն չի կարողանում խոսել, կամ չի խոսում: Բայց

նրանք էլ, որ հայոց դպրոց են գնում, օրինակ՝ իմ 2 երեխաները, որոնք դրանց մեջ են, իրավունք չունեն անգլերեն խոսեն, այսինքն՝ չեն էլ խոսում, որովհետև եթե անգլերեն խոսեն, իրենց չեն պատասխանի: Տանը խոսում են հայերեն, բայց մեծամասնությունը, երբ որ պետք է արտահայտվեն, շատ դժվարությամբ են արտահայտվում, և պետք է անգլերենով արտահայտվեն, բայց, իմ կարծիքով, այդքան էլ կարևոր չի, որ լեզուն հայերենով, ասում եմ, եթե չի իմանում կամ չի սովորում, իսկապես, հայա, ունենք շատ, որ հայերեն չեն խոսում, բայց ինձնից էլ շատ ավելի ուժեղ հայեր են: Լավ գործեր են անում, ամեն ձև էլ նվիրված են: Մի օրինակ ասեմ, որ վերջերս բասկետբոլի խումբ էի տարել, նրանց մեջ ունեինք 3 հոգի, 1/8-րդը հայ է, որովհետև շատ լավ են: Նրանց մեջ Արսենը, որ նայում ես, լրիվ բաց գույնի մազերով է, ասում ես՝ ամերիկացի է, բայց որ ոտքը շարժում է, ասում ես սա հայ է, նրա մեջ ամեն ձևի հայրենասիրություն կա, չի նշանակում, որ հայերեն չի խոսում, պետք է տեսնես՝ ինչպես է ռեստորանում հրճվում, ինչպես է ուրախանում, որ Երևանում է, Հայաստանում է: Անընդհատ ասում է՝ երբ ենք գնում Ղարաբաղ, շատ սիրուն տեղ է: Գնանք մի քիչ էն սարերում ճոտիկ անենք, բան անենք: Սա իմ տեսակետն է: Չեմ ասում չսովորել, շատ կարևոր է, բայց երբ որ հնարավորություն չկա, չես կարող ոչինչ անել»:

«Հատկապես, որ լեզուն այ իր կարգին արևմտահայերեն, արևելահայերեն, մեսրոպյան ուղղագրություն, հայաստանյան նոր ուղղագրություն, արդեն մարդիկ շվարած են: Հիմա եթե կարդաս Գլենդելի խանութներու վրա.... ո՛չ մեսրոպյան ուղղագրությամբ գրված է, ո՛չ հայաստանյան, որևէ մեկ ուղղագրության չի հետևի: Արևմտահայը կկարծի, որ ասի հայաստանյան ուղղագրությամբ է, հայաստանցին կկարծի, որ արևմտահայերեն է: Արևմտահայերենը խեղճացած է: Այսինքն՝ միակ տեղը, որ պիտի գոյատևե արևմտահայերենը, Միջին Արևելքի մեջ է՝ Սուրիայում, Լիբանանում: Այդ գաղութներն այ արդեն տկարացան»:

«Իբրև դպրոցի տնօրեն ասեմ ու քննադատեմ ինձ, որ տեղի տված եմ: Ես կարծում եմ, որ Հայաստանի հայերենը պետք է ըլլա հիմնական հայերենը ամենուրեք, նույնիսկ պետք է դպրոցներու մեջը Հայաստանի հայերենը ուսուցանվի: Իսկ արևմտահայերենը պիտի դառնա, ասենք, բարբառային մակարդակով, թեև հարուստ բարբառային լեզու մը պիտի ըլլա: Հիմա ես մեր երեխաներուն դպրոցը կհարցնեմ, որ,

օրինակի համար, հայերեն լեզուն քո պասպորտդ է դեպի աշխարհի տարբեր երկրների մեջ առավելություն ունենալու, ցանց է /network է/... Դու այսօր Արգենտինա գնացիր, բանի մը պետք ունիս, փնտրես հայ մը և քեզի կօգնես, ադ չօգնես, երկրորդը հաստատ կօգնես: Հայաստան գացիր, հանգիստ կարող ես պտտիլ, խոսիլ: Աշխարհի բոլոր երկիրները կան հայեր, որոնք քեզի կրթնան օգնել, նայել տելեֆոնի գրքերը և այլն: Այսօր մարդիկ ցանցեր /networking/ կսիրեն, անդամ են դառնում, անդամավճար են տալիս, որպեսզի տեղ մը ցանցի մաս կազմեն, անով հզորանա: Հայությունն արդեն ցանց մըն է՝ աշխարհով մեկ սփռված»:

Հայոց լեզվի պահպանման և օգտագործման խթանման հաջորդ գործոնը, ըստ փորձագետների, ներկա առաջադեմ տեխնոլոգիաներն են. էական է համացանցի միջոցների օգտագործման խնդիրը: «Անգամ համակարգչով գրելու ֆոնտերի հարց կար: Հիմա յունիկոդով դա լուծվեց: Օրինակ՝ վյուն մասնիկը եթե չլիներ, սփյուռքահայերը չէին կարող օգտվել տառերից: Այսինքն՝ եթե մեկը ուզենար հայերի երկու մասի բաժաներ, մեկ տառով կաներ՝ կպնդեր, որ այդ վյուն մասնիկը հանվեր: Հատկապես ինտերնետի աշխարհի մեջ ամեն տեղ հայկականության մասին վիդեոներ են, երգեր են, պարեր են, գիտակցությունը որ մեջն է, պիտ հոն երթա: Հետո քանի՞ հոգի պիտի լեզուին տիրապետես, և ի՞նչն է մղիչ ուժը, որ տիրապետես, բացի իր ծնողներուն հետ խոսելը»:

Այստեղ կարևոր է առաջին հերթին լեզվին ծանոթանալ և վաղ հասակից դրա ներքո մեծանալ, այն ստանալ ընտանիքում և հետագայում՝ դպրոցում: Դա բացատրվում է նրանով, որ՝ «Եթե ազգային գիտակցությունը կա, կսկսի պատմության գծով փնտրտուք կատարել, մշակույթին սկսի ծանոթանալ: Այսինքն՝ փոխանակ մեկը մինչև 14–15 տարեկան լրիվ հայկական մշակույթով, լեզվով, գրականությամբ պատրաստված է Հայաստանի պարագային, Միջին Արևելքի պարագային՝ մինչև 18–20 տարեկան, արդեն արևմտյան աշխարհի մեջ գիտակցության բերումով այդ պրոցեսն ինքնին ամբողջ կյանքի ընթացքում կզնայ»:

Ամերիկահայ փորձագետները, լեզվի տիրապետման հարցի հետ կապված, հրեաների օրինակով իրենց դիտարկումներն են ներկայացնում և խորհմաստ հետևություններ անում: «Հրեաները որ լեզու չեն իմանում, իրենց երկիրը շատ լավ էլ պահում են: Ամերիկայում հրեանե-

րից ոչ մեկը իր լեզվով չի խոսում, ոչ մեկը: Լեզուն պահում են այն դեպքում, երբ որ իրենց երկրի կանչը կա, իրենք ունեն իրենց հրեական կազմակերպությունները, շատ էլ ուժեղ են, միանգամից ինչ-որ պետք ա իրենց երեխաներին ուղարկում են, 2–3 ամիս էստեղ զինվորական բաներ են տեսնում, որ մենք չենք անում: Բոլոր իրենց երիտասարդները Ամերիկայից, Պարսկաստանից գնում են Իսրայել, 2–3 ամիս այնտեղ զինյալ զինվորական կրթություն են ստանում, փորձեր են տեսնում և վերադառնում են: Իսկ որտեղի՞ քաղաքացի: Կարող ես Հայաստանի քաղաքացի չլինես, բայց որպես կամավոր գնաս ծառայես: Ես հավատացած եմ, որ մեկը եթե հայի զգացում ունի... հիմա մենք Գլենդելում բավական պատգամավորներ ունենք, դպրոցի խորհուրդ ունենք, մեծամասնությունը հայերեն չի խոսում, կամ էլ խոսում են շաասատ քիչ: Մեկն էլ կա, որ ոչինչ չգիտի՝ մի երկու բառ: Երբ որ ընտրություններ են լինում, բոլորը տեղեկագոր են նայում, ինձ խնդրում են, որ ես թարգմանեմ, որ ժողովուրդը հասկանա՝ ինչ է ասում: Բայց այնքան ուժեղ հայ է: Մարդն ինչ անի, որ Օհայոյումա ծնվել, Ամերիկյան համալսարան է գնացել, ամբողջ իրենց շրջակայքում մի հատ հայ չի եղել, որտեղից պետք է հայերեն սովորի: Իսկ որ խումբն է ավելի շատ պահպանել իր ինքնությունը, Հայաստանից եկած հայեր... և այլն: Ես կասեմ, որ համահավասար: Նրանք, որ նոր են եկել, շատ մեծ կարևորություն են տալիս, բայց որ շուտ են եկել, նրանց հնարավորությունը ավելի քիչ է, նրանց երեխաները ավելի քիչ են իմանում հայերեն: Բայց նրանք, որ նոր են եկել 70–80-ական թվականներին, ես կարող եմ ասել, որ նրանց 90 տոկոսը հայկական դպրոցներ էլ չգնան, հայերեն խոսում են, որովհետև ընտանիքում հայերեն են խոսում, նրանց տատիկը հայերեն է խոսում, նրանց ծնողները հայերեն են խոսում: Մտահոգություն կա հայկական դպրոցների մասին: Հարցն այն է, թե որքան որակով են հայկական դպրոցները: Արդյոք ունեն միջոցներ իրենց աշակերտների համար: Եվ բավական բաներ չունեն հայկական դպրոցները, չնայած որ ծախսերը շատ են: Ուսուցիչներին շատ քիչ են վճարում, որ դա բավական չէ ապրելու համար: Ի տարբերություն հանրային դպրոցների, որտեղ շատ են վարձատրում: Եվ ընդհանրապես մանր հայկական դպրոցներ շատ կան, սակայն պետք է նրանք միասին աշխատեն, որպեսզի ավելի լավ գործեն: Այս տեսակ հարցերի մասին որպես ժողովուրդ պետք է մտածենք: Լսել եմ, օրինակ, որ դաշնակցականներին պատկանող դպրոցներում քիչ ավելի միասնական են միջոցառումներ

րում: Իսկ մնացյալները բավական անջատ են աշխատում: Եվ ամենքն իր գործն է անում՝ առանց մյուսներից լուր ունենալու: Սրբազանի կողմից ժողով արվեց ուսումնական հարցերի վերաբերյալ, բայց, դժբախտաբար, միայն մեկ (Էջմիածնի) թեմի դպրոցների հետ կապված: Հայ աշակերտների 95 տոկոսից ավելին հանրային դպրոցների մեջ են, որտեղ հայերեն տիրապետելու համար բավական գիտելիքներ չեն ստանում: Գլենդելի հանրային դպրոցներից միայն երկուսն ունեն հայերեն լեզվի լիարժեք ծրագիր»:

Մշակութային կյանքը

Գաղութի մշակութային կյանքը բավականին բազմազան և հարուստ է և՛ ներքին, և՛ արտաքին ռեսուրսների հաշվին: Այն բացատրվում է ըստ եղած կարծիքների՝ ամերիկահայերի տնտեսական կարողությունների ներուժի շնորհիվ: Այսպես՝ «Մշակութային կյանքը, ես կասեի, համեմատաբար ավելի աշխույժ է, որովհետև և մանուկ տարիքից... գնում ենք, մինչև տարեցները... բոլորի համար, իմ կարծիքով, կա աշխատանք: Երեխաների պարի դասարանները անհավատալի շատ են, և երեխաները գնում են այդ պարերի տեղերը, երգչախմբերը, մշակութային կյանքը այդ տեսակետից ավելի գաղութը հնարավորություններ ունի, գրողների միություն, ամեն մի երգչախումբ ունենալը... բավականին երգչախմբեր կան, իրենց տարեկան ծրագրերով ելույթ են ունենում: Իմ կարծիքով, այդ տեսակետից կարելի է ասել, որ մեր համայնքը լավ հարուստ է: Անընդհատ Հայաստանից թատրոններ են գալիս, հիմա շուտով Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբը գալու է ելույթ ունենա և այլն: Հիմա կարող է շատ բարձրորակ չլինել: Հիմա նայեք 80-հոգանոց երգչախումբ ունենք, և շատ հայտնի է, և տարեկան ելույթները մեր շատ բարձր են գնահատվում, և մասնատրոն Միքայել Ավետիսյանն է, Խաչատուր Ավետիսյանի տղան է: Իր հանճարեղ տղան է, և մենք 2 ամիս առաջ բեմադրեցինք «Անուշ» օպերան, որ ամեն ինչ լավ է: Հայաստանում էլ այսքան բարձր է: Իհարկե, կատարողների մեծ մասը Հայաստանից էին, բայց ամբողջ երգչախումբը, սիմֆոնիկը... մեծ մասը խառը՝ թե՛ ստեղից, և թե՛ այլ: Եվ մեկա USLA-ում հայկական ամբիոններ կան, մյուզիք սքուլներ կան, որ բավական գնում են, սովորում են, սխալը շտկում են: Նույնպես ունի իր կայուն միությունը: Հայաստանյան եկողները ավելի ակտիվ են, մենք ավելի շատ ավանդական բաների վրա ենք:

Նախքան հայաստանցիների գալը այստեղ մշակույթը շատ աղքատ էր: Եվ ամեն բան կուսակցականության հետ էր կապվում: Օրինակ, եթե մշակութային միջոցառումը հնչակներն են կազմակերպել, դաշնական ինչ գործ ունի այդտեղ: Սակայն ինձ համար այստեղ մշակույթը միջոց է ազգը պահելու համար, այլ ոչ թե նպատակ: Այն ժամանակ սիրողական էին զբաղվում մշակույթով, հայաստանցին իր հետ բերեց պրոֆեսիոնալիզմ և մշակութային բազմազանություն:

Աշակերտների մեջ պակասում է պատկանելությունը բարձրաձայնելու, հպարտություն ներշնչելու առկայությունը: Նրանք նույնիսկ չեն պատկերացնում, թե ինչ մշակույթի կրող են: Այստեղ աշակերտները գրեթե չգիտեն հայկական պարեր, հայ երաժշտություն: Հայկականի տակ հասկանում են, օրինակ, Թաթա... կամ այլ երաժշտություն: Այսօր դպրոցում փորձում ենք փոխել դա, մտցնել ազգային ջիղը»:

Երկու կարծիք Հայաստանի մասին

«Հայրենիքը ձերն է, ձեզ համար է, ձեզ հետ է, մտահոգված է ձեզնով, և որևէ ժամանակ հայրենիքը իր կարելիությունների սահմանում՝ մեծ կամ փոքր, կղնե ձեր տրամադրության տակ, ձեր ազգային դիմագծի, մշակութային, հավաքական կերպարի պահպանման նպատակի տարածման տակ»:

Առաջին. «Հայաստանի մասին ընկալումները հիմնականում կախված են նրանից, թե ինչ են խոսում TV-ներն ու թերթերը: Բացի հայհոյանքներից, ուրիշ ոչինչ չկա այստեղ: Կուսակցությունները ևս ազդում են Հայաստանի կերպարի վատ ընկալման վրա: Անընդհատ կրկնում են, որ այստեղ գող են, ավազակ են, մի՛ օգնեք Հայաստանին, բայց չեն ասում՝ լավ մարդիկ էլ կան: Չեն հավատում, որ իրենց գումարը տեղ է հասնում, երբ որ աչքովդ տեսնում ես Լաչինի ճանապարհը, աղետի գոտում հիմնադրամի կառույցները: Ինչ գումարի մասին է խոսքը, կառավարության համար տասը-քսան միլիոնը գումար չէ: Այստեղ մի փոքր կամուրջ են սարքում՝ հարյուր միլիոն դոլար է կազմում: Եթե այդքան գումար գնար Հայաստան, այնտեղ կլինեք արքայություն: Ես չեմ հավատում դրանց, քանի որ ամերիկյան բաների մեջ եմ ներառված և գիտեմ, որ Հայաստանի գումարը այստեղի մեկ ոստիկանության համակարգի գումարից քիչ է: Եվ, ըստ իս, այդ մարդիկ, որ ցելս են շարտում և վատաբանում են ԶԼՄ-ներով, խղճի խայթ ունեն և այդ խայթը փորձում են վերագրել այդ ամենին: Եվ անընդհատ կրկնում են՝

Հայաստանից շատ են դուրս գնում, այո, դա այդպես է: Բայց դա չի նշանակում, որ Հայաստանը դատարկվել է: Ընդամենը Հայաստանում կես միլիոն էլ մարդ չկա, մեկ միլիոն է: Այսինքն՝ տվյալները չեն համապատասխանում իրականությանը: Չափազանցված են: Նախագահը, որ ունենք, ո՛չ ամենալավն է, ո՛չ ամենաանմեղը: Բայց այսօրվա պայմանների մեջ ում էլ բերես չեմ կարծում՝ կարող է ավելի լավ լինել, մենք շատ մեծ հույս ունենք: Ես ինքս անձամբ լավ ընկեր եմ եղել Բաֆֆի Հովհաննիսյանի հետ, ես նրան խոսք եմ տվել՝ եթե մի օր քո շտաբն ունենաս, այդ ժամանակ ես կլինեմ քո կողքին: Բայց նա մանկապարտեզի նման վարվեց, երկրի դեկը վերցնողը նման աշխատանքներ պետք է անի: Խոստում չի կարողանում պահել, մեկ օր խոստում է տալիս, մյուս օրը խոստումը փոխում: Ես կարծում եմ, որ ամեն երկիր արժանի է իր ղեկավարին, հիմա ով ուզում է վերավորվի, իմ երկիրն է, ինձ էլ եմ ասում: Ներկայիս պայմաններում երկրի խուլիզաններին որ ես եմ տեսնում, նրանց դեմը պետք է խուլիզան ղեկավար լինի, մինչև որ փոխվի երիտասարդների ձեռքով: Մի հնազանդվեք, դուք եք, որ պետք է փոխեք երկիրը, իմ խորհուրդն է երիտասարդներին: Քանի որ այստեղի համայնքի մեծ մասը հետաքրքրված չէ, մեղիան (երեք-չորս հեռուստաալիք, կուսակցությունների թերթեր) ընդդիմադիրի ձեռքն է, դրանց շատ քիչ մասն է, որ դրական է արտահայտվում Հայաստանի մասին, բացի Հ1-ից, սակայն որը վարձավճարով է, և ամեն մարդ չի կարող իրեն թույլ տալ օգտվել դրանից:

Տարբեր մոտեցումներ կան, շատ տարբեր, իրար հակասող: Կա այն մոտեցումը, որ Հայաստանեն երբ որ մեկն այստեղ տեղափոխված է, արդարացնելու համար իր տեղափոխությունը՝ ամեն ինչ սևցնելու տրամադրության մեջ է, թե ինչու ինքը թողեց հեռացավ»:

Բացի դրանից, ՀՀ-ում կատարվող ցանկացած իրադարձություն միանգամից արձագանքվում է Սփյուռքում և ծնունդ շատ հակասական և իրարամերժ կարծիքներ ու մեկնաբանություններ:

«Հայաստանի մեջ վարած քաղաքականությունը, բնականաբար, մեծ ազդեցություն է թողնում այստեղի հայերի վրա: Օրինակ՝ Բաֆֆին հացադուլ արեց, լավ, իսկ հետո՞: Ինչ եղավ: Ավելի արժեզրկվեց հայրենիքը: Միայն 10 տարի այնտեղ ապրելուց հետո ես իրավունք ունեմ ասելու, որ Հայաստանում լույս չկա, օրինակ: Իսկ այստեղից դու չես կարող քննադատել՝ առանց օգնելու կամ ներդրում ունենալու: Եթե ու-

գում են քաղաքական կյանքում մասնակցություն ունենալ, պետք է ապրեն Հայաստանում գոնե 10 տարի»:

Երկրորդ մոտեցումը հիմնվում է Հայաստանում ստեղծված իրավիճակի քննարկման ավելի լայն շրջահայաց բնույթի վրա: Կան իրավամբ տեղին քննադատություններ քաղաքական համակարգի մեջ եղած ոչ պրոֆեսիոնալ, անարդար մոտեցումների, օլիգարխիկ համակարգի վերաբերյալ: «Ասոնք ավելի շատ քաղաքականապես հասունացած երիտասարդությունը կամ առհասարակ ժողովուրդը, որ քաղաքականապես քիչ մը հարուստ է, գիտե քաղաքական համակարգերու մասին, այն մոտեցումն ունի, որ Հայաստանը երրորդ աշխարհի երկրի նման ղեկավարվում է և ոչ թե ժողովրդավարական, դեմոկրատիկ երկիր է: Հետո կա այն գիտակցությունը, որ այս ամենը ընդհանրապես նաև կծնի Հայաստանի տնտեսական վատ իրավիճակեն, նախ փոքր տարածքով երկիր է, ստրատեգիական խորք չունի, պաշտպանողականության իմաստով փոքր է տարածքով և խոցելի է, շրջապատված է թշնամիներով, սահմանները փակ են, երկիրը հարուստ չէ հումքով և այլ միջոցներով, որ երրորդ աշխարհի երկրները օգտագործում են հակակշռելու իրենց տնտեսությունը: Նաև այդ գիտակցությունը կամ տնտեսապես տկար ըլլալու գիտակցությունը»:

«Հետո հայ քաղաքական միտքը չէ զարգացած, չկրցավ զարգանալ այս վերջին քսան-քսաներկու տարիներուն այն ձևով, որ անկախ հայրենիքի մեջ կըլլա ստեղծել այն իրական պետությունը, որ թեն աղքատ միջոցներով, թեն փոքրաթիվ և տարածքով փոքր, բայց և այնպես կարենան իրենց միջոցները, ռեսուրսները կրկնապատկել, տասնապատկել և ստեղծել այն, ինչ որ պետք է, արժանի է այդ ժողովրդի համար: Անհատապես յուրաքանչյուր հայ մեծ կարողություններու տեր է, բայց քով քովի գալու, կազմակերպվելու փորձի պակաս ունի, որովհետև հայրենիք չէ ունեցած հարյուրամյակներ ի վեր, կազմակերպական կյանք չէ ունեցած հարյուրամյակներ ի վեր և հիմա դժվարություն ունի, սովորություններ չկան, ազգային սովորություններ չկան քով քովի գալու, միասին ստեղծելու: Այն, ինչ որ ունինք 1915 թվից հետո, Միջին Արևելքի կազմակերպված գաղութներու փորձն է: Աստե անդին բան մը չկա»:

«Հայրենիքի նկատմամբ ընդհանուր առմամբ կարելի է ասել դրական է: Վերաբերմունքը դրական է, փոքր ինչ հայերի մոտ չեզոք է: Բայց

չէի ասի բացասական: Բացասական եթե լինի, ուղղված կլինի պետությունը: Մարդկանց ենթագիտակցության մեջ նստած է, որ պետությունը ճիշտ չէ: Ինչու ենթագիտակցության մեջ, որովհետև եթե մտածես այս կառավարությունը կամ այս մարդը, այս նախարարը լավը չէ, կարելի է փոխել: Մակայն այդ ամենը պետք է ասել, որ պետությունը կոռուպցիայից վարակված է, և բոլորը նույնն են, և սա պիտի չճշտվի, չուղղվի, մեզ համար կան լուրջ մտահոգություններ, որ պետությունը փտախտով վարակված է: Կա ինչ-որ ոչ փոքր տոկոս, որոնց կարծիքը կկարծեն պետության նկատմամբ այն չէ, ինչ որ կփափագեն: Հայաստանը ի վերջո պահպանվում և մնում է որպես հայության պահպանման կարևոր կենտրոն: Մենք որպես լիբանանցի կամ բեյրութցի կամ իրանցի էստեղի ժողովրդից բարձր էինք դասում մեզ՝ որպես հայ և քրիստոնյա: Եվ մեզ համար հայերեն խոսելը առավելություն էր: Իրենց իսկ երկրի մեջ մենք իրենցից լավ էինք ապրում: Իսկ այստեղ, ցավոք, հակառակն է, ամերիկյան մշակույթը համահավասարեցնում է բոլորին:

Դժբախտաբար, վատ լուրերը ավելի արագ են տարածվում: Սովետական ժամանակներում մեզ ամեն կերպ վատ էին ներկայացնում Հայաստանը, «ցեխի» մեջ էին ներկայացնում: Ես այսօր չեմ ցանկանում աշակերտներին այդպես ներկայացնել իրականությունը: Կա և՛ լավը, և՛ վատը, և՛ աղքատ, և՛ հարուստ, երկիր է բոլոր մնացած երկրների նման:

Բիզնեսը պետք է զարգացնել Հայաստանում: Որպեսզի ես ցանկանամ գնալ Հայաստանում ապրեմ, պետք է ես համոզվեմ որ այստեղի 4000 դուլարը ոչինչ է: Երբ մեկը ընտանիքից դուրս է գալիս, կոմպլեքսավորվում է, և երբ հարցնում ես՝ ինչի բաժանվեցիր ընտանիքիցդ, պետք է մի բացասական բան ասի, որպեսզի հոգեբանորեն պաշտպանվի: Այս մեխանիզմն է գործում այստեղի հայերի հոգեբանության մեջ: «Էդ երկիրը երկիր չի», «Ժողովուրդը ժողովուրդ չի» ասողը կարծես մորը անպատվի: Բայց չէ՞ որ սովետական շրջանում հենց Հայաստանը Սփյուռքի հայերին ընդունեց և մարդ դարձրեց: Եվ հիմա վատաբանում են այդ նույն Հայաստանին: Հիմա ունենք մի փոքր Հայաստան, և դա պետք է պահպանենք: Դրա համար ենք այսքան պայքարում այստեղ (Ապրիլի 24-ին Հայաստանից հետո այստեղ է մեծ երթը արվում)»:

Հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունները

Հայաստան-համայնք փոխհարաբերությունները կարող են բովանդակել ազգի այդ հատվածների կենսագործունեության բազմա-

թիվ ոլորտներ, որոնք կարող են ունենալ թե՛ պետական, թե՛ իրավական, թե՛ տնտեսական և թե՛ հոգևոր բնույթ:

«Առաջինը վերաբերում է ազգային պետության ներկայությանը գաղութում: Այժմ դեսպանատունը Գլենդելում հիմնվեց: Դա մի կողմից լավ է, և մյուս կողմից՝ վատ: Ես գոնե դրան տալիս եմ դրական գնահատական, քանի որ հայաշատ քաղաքի մեջ պետք է լիներ դեսպանատուն: Դրան բացասական արձագանք է տրվում, քանի որ համայնքը կարծես պետք է ղեկավարվի Հայաստանի կողմից, որին դեմ են հայերը: Հայաստանը դեռ փոքր է, և միայն քննադատելով ոչինչ չենք շահի, դա միայն արդարացման միջոց է: Համայնքների և խմբակցությունների միջև կապը բավական թույլ է: Դժբախտաբար, համայնքի տարբեր խմբեր համախմբվում և միմյանց օգնում են միայն դժբախտությունների ժամանակ: Կան իրանահայերի, իրաքահայերի միություններ, շատ այլ հարենակցական միություններ, որոնց հետ հատուկ աշխատանքներ են տարվում: Սակայն մարդիկ դրամ են լվանում, այլ ոչ թե իրենց նպատակին ծառայեցնում այդ միությունը»:

Հայրենիք–Սփյուռք հարաբերությունների պետական աջակցության խնդիրը, բացի դեսպանական ներկայացուցչությունից, ընթացք ստացավ Հայաստանի կառավարության կազմում հատուկ գերատեսչության կազմակերպման շտրիիվ:

«Համագործակցություններ կան, բայց ոչ այն չափի, որ, կարծում եմ, պետք է լինեն: Հինգ տարի առաջ, երբ ստեղծվեց Սփյուռքի նախարարությունը, ասացին, որ ուզում են ուսումնական ոլորտում երեխաների հետ ամսական մեկ անգամ ուղիղ կապ հաստատել մեզ հետ: Կարծում եմ՝ լավ կենտրոններ ունեն, լավ են կազմակերպում, կազմակերպեցինք, բոլոր դպրոցի տնօրենները եկան, և նույն վայրկյանին կապ հաստատվեց: Աշակերտների Հայաստան գնալը շատ բան է փոխում նրանց մեջ: Ամեն ինչ տեսական սովորելը մեկ բան է, իսկ իրականում տեսնելը՝ մեկ այլ բան: «Ես այսքան հայ մեկտեղ երբեք տեսած չկամ».

այս է լինում աշակերտների արձագանքը: Հայաստան այցելելը, հողին կապվելը շատ կարևոր է: Հայաստանում կան շատ լավ և վատ կողմեր: Ներսում պետք է հնարավորություն ստեղծվի, վստահություն ստեղծվի, որ մարդիկ կարողանան բիզնես բացել, որպեսզի յուրաքանչյուր արտասահմանյան արտադրության կողքին նաև լինի հայկական արտադրության ապրանք: Ինչ գործունեություն պետք է ծավալի: Այն, ինչ

որ պետք է անի, չի անում: Մենք շատ լավ հարաբերությունների մեջ ենք, ինձանից մի քանի անգամ բաներ ա ուզել, ինձ հետ Թոմիկով է խոսում, մի անգամ հեռախոսով ասեց, որ, Թոմիկ, ես գիտեմ, որ դու այս ամենը շատ լավ կարող ես կազմակերպել, որովհետև հիմնադրամի աշխատանքը շատ լավ ես արել: Ես ասեցի, որ ուրախությամբ կանեմ: Հետագայում, որ ասել է այսինչ բանը կազմակերպի, ես էլ կգամ: Եթե դու մինիստրություն ես ստեղծում, և եթե մինիստրությունը դրամ չունի, հնարավորություն չունի՝ ինչ պետք է անի: Իսկ կարելի է օգտագործել Սփյուռքի դրամներ նախարարության գործերի համար: Նախ պետք է կառույց ստեղծել: Հիմա նայեք այս բոլոր մինիստրությունները, ֆեդերացիաները գնացել են, բոլորն էլ թույլ են, ամենից առաջ գալիս են քումունիկելչնները: Ինչով կարելի է կապվել սփյուռքի հետ՝ ամեն ինչ տեխնոլոջի է: Ինչ-որ ծրագիր են երբ սկսում, լավ չի, շարունակաբար չի արվում, և ես շատ չեմ մեղադրում, շատ բաներ ուզում են անել, սակայն չի ստացվում: Եթե ձեզ նման Սփյուռքի նախարարությունը խմբեր ուղարկի, որ գան մեր համայնքներում նայեն շրջեն և հետո գնան խորհուրդ տան, ինքը պատկերացում ունի, մեղք էլ չունի սակայն հետո, որ գործի ա դնում, տեսնում է, որ էն չի՝ ինչ մտածում է: Սփյուռքի նախարարությունը ունի «առաջնորդության ձախտողում»: Համագործակցություններ կան, բայց ոչ այն չափի, որ կարծում եմ, պետք է լինեն: Հինգ տարի առաջ, երբ ստեղծվեց Սփյուռքի նախարարությունը, ասացին, որ ուզում են ուսումնական ոլորտում երեխաների հետ ամսական մեկ անգամ ուղիղ կապ հաստատել մեզ հետ: Կարծում եմ, լավ կենտրոններ ունեն, լավ են կազմակերպում, կազմակերպեցինք, դպրոցի բոլոր տնօրենները եկան, և նույն վայրկյանին կապ հաստատվեց»:

«Սփյուռքի նախարարության առաջին խնդիրը իր ղեկավարությունն է: Այդ կառույցը դեռ չի մշակել իր համար ռազմավարական նպատակներ, և եթե անգամ մշակել է, ապա այնպես վատ ձևով է մշակել և այնքան վատ է ղեկավարվում, որ տվյալ կառույցի լսարանը և գործին առնչվող մարդիկ տեղյակ չեն: Մի պարզ բան՝ նույն «Հետքում» այնպիսի հոդվածներ են լինում Սփյուռքի նախարարության կողմից, որ կարդում ու չես հասկանում՝ նպատակը որն է: Արդեն հինգ տարի է՝ գործում է նախարարությունը, սակայն նպատակը դեռ չի որոշել: Ցանկացած կազմակերպություն, կառույց առաջին հերթին պետք է մշակի իր ռազմավարական նպատակները, առաքելությունը, ինչի համար է

ստեղծվել: Սակայն Սփյուռքի նախարարությունը չգիտի: Մի քանի ձևական ձևակերպումներ են, այն էլ մշակվել են այն ժամանակ, երբ նախագահին պետք էր Սփյուռքի աջակցությունը հայ-թուրքական հարցում, որը շատ լավ քայլ էր այդ պարագայում: Եվ այդպես ձևական ինչ-որ կառույց էլ շարունակում է մնալ: Օրինակ՝ ես երբ ստեղծում էի «Հայրենասեր» ՀԿ-ն, ուղիղ երկու ամիս փորձում էինք մի նախադասություն ստեղծել՝ մեր առաքելությունը: Ցանկացած իրեն հարգող կազմակերպություն, ցանկացած տեսակի պետք է իր համար սահմանի իր առաքելությունը: Ինչն է կառույցի գոյության իմաստը: Եվ երկրորդ՝ առաքելությանը և նպատակներին հասնելու համար պետք մշակվի ռազմավարությունը: Եվ այս ամենը պետք է արվի ղեկավարության կողմից, ահա թե ինչու եմ նշում առաջնորդի ձայնը: Այս ամենը անհրաժեշտ է, որ Սփյուռքի հայը հասկանա՝ իր ինչին է պետք այդ կազմակերպությունը, ինչ է առհասարակ այն: Միակ «հաջողված», ավելի շուտ ճանաչված ծրագիրը «Արի տուն» ծրագիրն է, որ բոլորը լսել են դրա մասին: Չակերտավոր, քանի որ սկզբնական շրջանում, երբ սկսվեց ծրագիրը, բոլորը կարծում էին, թե հայրենադարձության պիքի հիմքն է, հետո այն պետք է դառնար ճանապարհորդություն, և այսպես կրկին չհասկացանք, թե որն էր նպատակը, չկար առաքելություն ու նպատակ: Հնարավոր է իրենց կայքում այսօր արդեն ինչ-որ ձևով նշված է իրենց առաքելությունը: Բայց չէ՞ որ դու տվյալ կազմակերպության գործողություններից ես հասկանում, արդյոք ինչն էր առաքելությունը: Ես Սփյուռքի նախարարության գործունեությունից հասկացել եմ, որ առաջին ստեղծման պատճառը եղել է Սփյուռքի աջակցության ստացումը, դրանից հետո՝ պարզապես աշխատանք և գումար ունաց համար, դրանից ավելի ոչինչ չկա»:

«Այն, ինչ ասեցիք, դա տրամաբանորեն ճիշտ է: Մենք, ենթադրենք, այստեղ հայկական վարժարան ենք, և, իհարկե, մենք պետք է մարդկանց ցույց տանք, որ մենք ճիշտ անում ենք այն, ինչ արվում է այստեղ: Մեր ակադեմիական ծրագիրը համապատասխանում է բարձրագույն համալսարանական պահանջներին, ներքին կարգապահական համակարգը կգոհացնի մեր ծնողների ակնկալիքները, որպեսզի այդ մարդիկ էլ մտածեն, որ այս վարժարանը լավ վարժարան է, արժանի է, որ ես էլ ներդրում կատարեմ, իմ երեխային բերեմ այստեղ, վճարեմ, որպեսզի իր կրթությունը ստանա: Նույնը կարելի է ասել մեծ բիզ-

նեսներին կամ ընդհանրապես բիզնեսների վերաբերյալ: Սակայն թույլ տվեք չհամաձայնվել, երբ հարցը վերաբերի հայրենիքին, սա շատ անձնական է, ինչն չէ՝ նաև զգացական է, բայց ես ընդունեմ, որ միայն զգացական բաժին ունի մեջը, անկախ, թե հայրենիքը ինչ է անում կամ ինչպես է անում, ես պարտավոր եմ ինքս ներդնել իմ բաժինը: Որովհետև, եթե խոսքը վերաբերի նրան, որ Հայաստանը լավ չի ապրում, նշանակում է, որ ես էլ իմ բաժինը պետք է ունենամ, որ Հայաստանը ավելի վատանա: Ո՛չ: Հայաստանը լավ չի ապրում: Ո՞վ լավ չի ապրում, կտավարությունը, Սփյուռքի նախարարությունը, տնտեսության նախարարությունը, գերագույն ատյանը, Արդարադատության խորհուրդը, սա նշանակություն չունի, դրանք բոլորը ժամանակավոր բաներ են: Ինչն չէ, եթե Հայաստանը լավ և ճիշտ չի անում, ինչն չէ, նաև ես բաժին չունենամ այդ լավ չանելը նույնիսկ ուղղելու մեջ: Ինչն էս, օրինակի համար, չփորձեմ հարաբերություններ, կապեր ստեղծել, ենթադրենք, դատական համակարգի... Հայաստանի միջև դատական համակարգի Ամերիկայում մասնագետներու, որով կարելի է ենթարկել այդ համակարգը, եթե լավ չի աշխատում: Տնտեսական համակարգը նույնպես, ուստի կանական համակարգը նույնպես:

Անքե անդին պետական մակարդակի հարաբերություններ են: Հայաստանից մարդիկ, մտավորականություն կայցելեն այստեղ, և փոխադարձաբար այստեղեն մարդ կերթան: Ադ ալ հատուկ սխտեմի մը չի հետևի: Առաջ ավելի շատ էր: Հիմա կտեսնինք, եկան Գլենդել քաղաքի քաղաքապետարան ուսումնասիրելու: Գլենդել քաղաքը մի բան չէ, որ քաղաքապետարանն ուսումնասիրե... Կամ, այսպես ասած, քույր քաղաք հարաբերությունները, որ կան, փոխադարձ ընկերային հարաբերություններ, սոցիալական-ընկերային հարաբերություններ, որը ոչ անհատական է, որ քաղաքական է:

Ընդհանուր առմամբ, այս է վիճակը, քիչ մը անկազմակերպ: Բայց որովհետև թվաքանակը շատ է, և տարողությունը մեծ է, քանակը նաև որակի արժեքի կվերաձվի այս պարագային, հարաբերությունները այսպես ասած շատ են»:

Սփյուռք-հայրենիք կապերի անձնական բաղադրիչը

«Կարևոր է հոգեբանական կողմը: Ինչպես նաև կարևոր է տարեկան տուրքի գաղափարը: Սփյուռքում մենք սովոր ենք այդ բանին. եթե ես որևէ տեղ անդամակցում եմ, անպայման մի որոշակի տուրք եմ տա-

լիս: Սփյուռքահայը սովոր է այս երևույթին: Հայաստանցու համար դա խորթ է: Սփյուռքում հայերի մեջ մեր ինքնությունը պետք է գորացնենք: Օրինակ՝ Հենրիկ Մխիթարյանի ամեն հաջողությունը իմ մեջ հայությունը ուժեղացնում է: Զգացական կողմն է կարևոր հայրենիքի հետ կապի մեջ: Նոր սերունդի մեջ պետք է հպարտություն սերմանենք: Ցանկացած հաջողություն և հաղթանակ բարձրացնում է հայության ոգին: Բոլոր տեսակի կապեր էլ կան: Նախ՝ անհատական կապերն են, ընտանիքից ընտանիք, բարեկամից բարեկամ, հատկապես Հայաստանից հոս տեղափոխվածների մոտ: Հետո հին Սփյուռքի հայության, որ Միջին Արևելքն հոս տեղափոխված են, այդ համայնքի՝ հայրենիքի հանդեպ ունեցած սերի պատճառով Հայաստանին օգտակար ըլլալու տրամադրությունն են ծնած հարաբերություններ: Եվ ադիկա կազմակերպություններու մեջ են կամ անհատական մակարդակի վրա: Կազմակերպությունները՝ բարեսիրական, մարզական, մշակութային, բոլորն ալ ձևով մը վերջին քսան-քսանհինգ տարիներու ընթացքին Հայաստանի հետ օրգանական կապ ստեղծած են, երբեմն արդյունավետ, երբեմն հուսահատության տեղի տված: Իսկ նաև կան անհատական առումով բիզնեսներ, որ հող ևս հուսախաբությունները մեծ են Հայաստանին կողմն ցուցաբերված թե՛ պետական, թե՛ անհատական մակարդակի վրա Սփյուռքեն եկած բիզնեսմենին չարաշահելու (կարող է փոխադարձ ալ է, այստեղից գնացածն էլ չարաշահելու տրամադրություն ունեցած է), բայց ավելի շատ Հայաստանի պարագային, փոխանակ երկարաշունչ բիզնեսներ բանալու, շուտով մը հարստանալու տրամադրությունը կա տեղացի հայաստանցիին մոտ՝ դուրսեն եկած սփյուռքահայի հետ գործ անելու իմաստով: Փոխանակ 10–15 տարով բիզնես մը ստեղծելու, բան մը ընեն, որ մի երկու տարիեն հարստանան: Հետո նաև կան անհատական գետնին վրա Հայաստանին օգտակար ըլլալու փոքրիկ խմբակներ. քանի մը անհատներ քով-քովի եկած են, ասենք, ատամնաբուժության կլինիկ մը բացած են, աչքի տեսողության կլինիկ մը բացած են կամ բարեսիրական գործ մը արած են, բայց դրանք կազմակերպություններ չեն, պարզապես անհատներ են, նախաձեռնություն արած են, որ հայրենիքին օգտակար ըլլան՝ քանի մը հոգով քով քովի գալով: Եվ այս թիվը շատ է:

Հոգևոր կապերի խնդիրը, ինչպես վերևում նշվեց, կապված է ազգի տարբեր հատվածների մշակութային վերնախավերի հարաբերություններից և ներդրումային հոսքերից: Ամեննն զգալին մշակութային

հարաբերություններն են: Երգիչներու, թատերախմբերու, երգահան-դեմներու կազմակերպումը և այլն, որ նորեն բիզնեսի կտանի, բիզնես հասկացողությամբ է, որ տեղի կունենա այդ ամենը: Մարդիկ ուզում են փող վաստակել և անում են այդ: Ազդեցություն, անշուշտ, պետք է ունենա Սփյուռքը, սակայն պետք է շատ խիստ սահմանափակվի այն, հատկապես քաղաքական ոլորտում: Ինչպես նշվեց, առաջնահերթ՝ երիտասարդներին դրսում կրթելու հնարավորության ընձեռումը Սփյուռքի կողմից, ինչպես Սփյուռքը կկարողանա այդ ֆունկցիան կատարել: Վերջինս Սփյուռքի համար բավականին մատչելի միջոց է այդ գիտելիքների փոխանցման համար: Սա և՛ կլինի ճակատագրական, և՛ վերահսկողություն կլինի: Թույլ չի տրվի ներմուծել այնպիսի բաներ, որ կվնասեն անվտանգությանը: Կվերցնենք դրական-ճակատագրականը, իսկ բացասական-ճակատագրականը կվանենք: Այս ամենը Սփյուռքի նախարարության գործն է, որը չի իրականացվում»:

Հայաստան-Սփյուռք կապերի տնտեսական բաղադրիչը

Սա վերաբերում է առաջին հերթին Սփյուռքի տնտեսական ներուժը ՀՀ տնտեսության մեջ ներգրավելու գործընթացներին, հաջողություններին և այդ ընթացքում առաջացող խնդիրներին: Ուշագրավ են ամերիկահայերի երեք խմբի տեսակետներ: Առաջինը միավորում է նրանց, որոնք կարծում են, որ Սփյուռքը պետք է մասնակցի Հայաստանի տնտեսության զարգացմանը: Բավականաչափ առաջարկների մեծ փաթեթ է քննարկվում, որոնք, ըստ փորձագետների, հայրենիքի համար ռազմավարական նշանակություն ունեն: Երկրորդ խմբում նրանք են, որոնք արդեն փորձել են այսպես ասած «գործ դնել» Հայաստանում, և ըստ այդմ՝ կարևորվում է նրանց մոտեցումների պարզաբանումը Սփյուռքի՝ հայրենիքի տնտեսական կյանքին մասնակցությամբ: Երրորդ խումբը այն ամերիկահայերն են, որոնց կարծիքով ներկա Հայաստանում պետք չէ ներդրումներ անել: «Տեսեք, կազմակերպական մակարդակի վրա ես հոն մեծ բան չեմ տեսներ, որ Սփյուռքը կազմակերպված ձևով գա: Հոս արդեն անհատական նախաձեռնությունները, գիտակցությունը մեծ դեր պիտի խաղան: Սփյուռքի մեջ չկան կազմակերպված տնտեսական մեծ հիմնարկներ, բոլորը անհատական մակարդակի վրա են: Ուրեմն հոս կան անհատներ, որոնք կտիրապետեն տեխնոլոգիաների, որոշ գիտելիքներու, Հայաստան երթան և իրենց բիզնեսների բնագավառի մեջ ուզենան օգտակար ըլլալ: Ըսենք, որ

օրինակի համար շիշերու լցման գործարանի համար մեկը մասնագետ է, երթա Հայաստան տեսնե, որ 10–20 տարվա հին տեխնոլոգիայով է, և որ ուղղություն տա, խելք տա, կապեր հաստատե: Հայաստանի մեջ դրամ չի պակասե, այսօր Հայաստանի մեծահարուստներն այնքան շատ են, որ կարող են ներդրումներ անել, ուրեմն դուրսեն մարդիկ, տեխնոլոգիա է պետք: Մենք այսօր մարդիկ ունենք, որ անօդաչու թռչող սարքերի մասնագետներ կան, որոնք կըրնան երթալ Հայաստանին օգտակար ըլլալ, միտք տալ, զարգացնել: Կամ քիմիական աշխարհի մեջ, բժշկական աշխարհի հետ, նորությունները անհատը, որ ինքը գիտե, տեղափոխե անտեղ: Նաև կազմակերպական ձիրքերը, կարողությունները, բժշկական հարցերի կազմակերպում, քաղաքների, գյուղերի ղեկավարում, մասնագետները գնան, տեխնոլոգիաներ գործածեն»:

«Հոս անհատին սիրաշահելը... Սփյուռքի վերջին 6–7 տարին Հայաստան երթալու, օգտակար ըլլալու գաղափարը շատ նահանջ ապրեց Հայաստանի մեջ եղած դեպքերու բերումով: Ադի պետք է վերականգնվի, որ մարդիկ քաջալերվին, երթան, երիտասարդները երթան այնտեղ և օգտակար ըլլան: Պզտիկ գաղափարներ կարող են բանալ: Հայաստանի տնտեսությունը շրջափակման մեջ է, պետք է ծավալով և կշիռով փոքր արտադրանքներ կատարե, որ կարելի լինի օդանավերով փոխադրել: Օրինակ, դեղերը, հիմա Հայաստանի մեջ ուղեղի պակաս չկա: Կրնան երիտասարդությունը, կենսաբանություն, դեղագործություն ուսանիլ, որ դեղագործության ասպարեզն այնքան զարգացնեն, որ փոքր տուփերով կարողանան արտահանել ուրիշ երկրներ, մանավանդ երրորդ աշխարհի երկրներ, Հայաստանը վերածվի դեղագործական մեծ կենտրոնի, Հայաստանը վերածել բժշկական կենտրոնի (միտք պահանջող, բայց արտադրական մեծ ծավալներ չպահանջող): Մարդիկ կերթան բժշկվելու և դրամն այնտեղ ծախսելու: Օրինակ՝ արտաբանության կենտրոններ բացվեն և այլև: Ուղղություններ, որ կամաց-կամաց պիտի զարգանան, բայց ինչո՞ւ չարագացնել: Օրինակ՝ օրգանիկ պտուղներու արտադրություն, որ 5–6 անգամ ավելի սուղ պետք է վճարեն, և կարդարացվի օդանավով փոխադրվիլը: Պետք է փոքրիկ ոլորտներ մտածել, և աշխատանքներ ըլլան:

Հիմա կարգ մը բաներ կան, որ վտանգավոր են: Օրինակի համար ... ստեղծման հարցը: Կըրնան ասել արի հոս՝ Ամերիկա արտադրի: Արտագաղթ կլինի: Բայց դեղագործությունը կարող են Հայաստանում ար-

տաղրել, բժշկագործություն: Օրինակի համար, ուսումնական կենտրոնի վերածվի Հայաստանը տարածաշրջանում գիտություններու և այլնի գծով: Այս տեսակի բաներ պետք է մտածվի և ոչ թե ուրիշ բաներ»:

«Եթե ես պիտի նվիրաբերեմ իմ փորձառությունը, իմ գիտությունը կամ իմ ֆինանսական կարողությունները, ինչ որ է՝ պիտի նվիրաբերեմ: Դեռ արդեն կապ չունի, թե երկիրն ինչպես կմտածեն, նախարարներն ինչպես կմտածեն, նախագահը ինչպես կմտածի: Եթե տնտեսական աջակցությունը նկատի ունեք՝ նվիրաբերում, ուրեմն այդտեղ ուզենք թե չուզենք մարդկայնորեն բոլորս ենթակա ենք տնտեսության օրենքներին: Ամենապարզ բանը տնտեսության և փորձառության աշխարհի մեջ այն իրողությունն է, որ դրամագլուխը վախկոտ է: Այդտեղ մարդը, որ ներդրում պիտի կատարի, իհարկե, ունի իր ազգային մտեցումը, այնպես էլ ունի իր շահադիտական մտեցումը, որպես գործառույթ, որպես բիզնես: Եթե մեկը բիզնես պետք է բացի Հայաստանում, ենթադրենք մի ֆաբրիկա, իր մտապատկերի վրա կա, որ այդտեղ 100, 200, 300 ընտանիքի աշխատանքով ապահոված կլինի: Բայց նաև մտապատկերի մեջ կա, որ այդ գումարը ներդնելով՝ նա շահույթ կստանա: Այդտեղ Հայաստանը, նախարարությունները, կառավարությունը պետք է անելիք ունենան: Վերջին տարիներու ընթացքին շատ հուսախաբությունների ականատես եղանք այս առումով: Մարդիկ, որոնք որոշ նյութական միջոցներ ներդրեցին և հուսախաբ եղան, նույնիսկ մեծ կորուստներով վերադարձան: Եվ դա հենց իր վատ ազդեցությունը ձգեց ուրիշներու մոտ: Եվ երբ մարկանց մոտ կա արդեն այդ նախապաշարումը, կարծրատիպը, որ պետությունը կոռուպցիայով վարակված է, և հուսահատություն կտիրե, արդեն մարդոց համար շատ դժվար է, որ գան և այդտեղ ինչ-որ բան հիմնեն, բիզնես սկսեն: Այստեղ վնաս կկրե հայաստանցին, քանզի եթե Հայաստանում այդ բիզնեսները չդրեց իր բիզնեսը, ապա անապաման մեկ ուրիշ տեղ կդնե: Եվ այդ մեկ ուրիշ երկրի մարդոց համար աշխատատեղ կստեղծվի, իսկ մեր հայրենակիցը պիտի մնա գուրկ այդ առիթից: Այո, պետությունը մեծ դերակատարություն ունի այստեղ՝ շահելու այն մարդկանց վստահությունը, որոնք ուզում են տնտեսական ներդրումներ կատարել»:

«Միյուտքը պիտի որ դրականորեն մոտենա հայրենիքին, այս պարագայում ՀՀ զարգացման, բարգավաճման, բերրիության, մտածելակերպի զարգացման մեջ: Սա մեր կարծիքն է, և կարծում եմ, որ շատերն

են այդ կարծիքին, ոմանք ունեն հակառակ կարծիքը: Եթե Հայաստանը լավ վիճակի մեջ է, մենք էլ լավ կլինենք: Եվ հակառակը: Իսկ ով կուզի իր զգացական աշխարհը լինի տխուր, չբավարարված, որովհետև, եթե ինչ-որ բան ճիշտ չէ, մատնանշելով չի լուծվի հարցը, այլ պետք է մաս կազմել այդ հարցի լուծմանը: Պետք չէ միայն բողոքել: Չկա 1, 2, 20, 50 ձև, որով կարելի է նպաստել Հայաստանի բարելավմանը, կան այնտեղ անհամար ձևեր, անհաշիվ, որոնցով կարելի է մասնակցել Հայաստանի բարելավմանը: Ամենապարզ բանն ասեմ, եթե ես և իմ ընտանիքը տարին մեկ անգամ, այլ 2 տարին մեկ անգամ գանք Հայաստան, որպես արձակուրդ, նախ ես այդտեղ իմ բաժինս դրած եղա, ներքին տնտեսական կյանքի մեջ, իմ երեխաները հայրենիքին ծանոթացան, զարգացրին իրենց հայերենը, սա ընդամենը ընտանեկան մակարդակի վրա, հայրենասիրականը դարդ չէ, տնտեսական կյանքում որոշ օգնություն է, որի կարիքը այսօր ունի մեր երկիրը: Եթե մեր նման ասում էինք 5–800000 հայություն կա Լոսուս, եթե 5-ով բաժանենք, սա կնշանակի, որ խոսում ենք 80–160000 ընտանիքի մասին: Ես ընդունեմ ամենափոքր թիվը՝ 80.000, այդ ամենափոքր թվի 50 տոկոսը դարձավ 40000, այդ 40-ից էլ 50 տոկոսը որ գնան Հայաստան, նշանակում է տարին 10000 ընտանիք այցելի Հայաստան 2 շաբաթով: Կզարգանա ներքին տնտեսությունը, զբոսաշրջությունը, փոքր բիզնեսների բարգավաճման... մեծ դերակատարում կունենա այդ 10000 ընտանիքը, եթե այդ ընտանիքներում հաշվենք 3 հոգի, 30000 հայ Լոս Անջելեսից կայցելի Հայաստան: Եվ եթե այդ 30000-ը Հայաստանում ծախսեն միայն 100 դոլար, սա մենք արդեն խոսում ենք 3 միլիոն դոլարի մասին: Դե արդեն չեմ խոսում այն միջոցների մասին, որ կարելի է օժանդակել Հայաստանին:

Կազմակերպական միջոցառումների միջոցով Հայաստանին կարելի է տրամադրել այնպիսի ճարտարագիտական կամ բժշկական սարքեր կամ փորձառություններ, որոնց միջոցով Հայաստանը 3, 4 կամ 5 տարիների ընթացքում 30 կամ 40 տարիների հնություն կարելի է արձանագրել»:

Առաջարկներ են արվում նաև հայրենիքում ծավալել *բարեգործական գործունեություն*: «Յուրաքանչյուր միություն ունի որոշակի գործունեություն և ունի իր ներդրումը Հայաստանում, որն արտահայտվում է դրամահավաքների միջոցով և Հայաստանում, օրինակ, մանկատների

վերանորոգմամբ, ծնողագուրկ երեխաներին օգնությամբ: Եկեք տեսնենք՝ ինչ ենք անում Հայաստանի համար, ես, օրինակ, Հայաստանում 3 հատ որք եմ պահում, տարին մեկ կամ 2 անգամ գնում եմ, քեռի ունեմ էնտեղ, մորքուր ունեմ, ինքս ամբողջ ուշքը միտքս ընդեղա, ես կուզեի իրավունք տալ, բայց ամեն մարդ, որ իսկի չի իմանում, որ Հայաստանը որտեղ ա, մենակ հայեոյանք ա անում շարտում, և հետո ասում ա՝ ես ուզում եմ միահավասար լինեմ, ուզում եմ լինեմ քաղաքացի, էդ բանը ինձ համար ընդունելի չի»:

Սփյուռքի մասնակցության խնդիրը Հայաստանի քաղաքական կյանքում

«Սփյուռքը պետք է ունենա ներկայացուցչական ղեկավարություն, որ պիտի ներկայացնի Սփյուռքը, օրինակ, Հայաստանի Ազգային ժողովում: Իր խոսքը պետք է ասի: Օրինակ՝ կուսակցությունները երեքն էլ տարբեր կարծիքներ ունեն, կազմակերպություններից ամեն մեկն իր կարծիքն ունի: Ուրեմն, առաջին հերթին պետք է Սփյուռքը իր ղեկավարությունն ունենա իր կարծիքը փոխանցելու՝ որպես համայնքներ, որպես ընդհանուր սփյուռք: Դժվար է, իհարկե, իրականացնելը այդ, քանի որ, օրինակ, մեկ 100-ամյակ ենք ուզում տոնել և մեկ հայտարարի չենք կարողանում գալ, քանի որ ունենք 14 ղեկավար, որոնք տարբեր կարծիքներ ունեն: Հեշտ չէ, սակայն, Սփյուռքը միևնույն է, պետք է իր ասելիքը ունենա Հայաստանի քաղաքական կյանքի մեջ: Եթե Սփյուռքը 100 տոկոսով ներդրում է անում նյութական կյանքում, ապա 100 տոկոսով իր ասելիքն էլ պետք է ունենա քաղաքական կյանքում: Քանի որ այն կարծիքը, իբրև թե, դուք տեղյակ չեք, թե ինչ է տեղի ունենում Հայաստանում, սխալ է, քանի որ մենք ամեն օր հայաստանյան լուրեր ենք լսում: Մենք շատ ավելի շուտ ենք տեղեկանում Հայաստանի մասին, և երբեմն մեր վերլուծությունները ավելի ճիշտ են տվյալ իրավիճակի համար, քան այնտեղի ապրողինը: Քանի որ հաճախ այնտեղի ապրողն իր ամենօրյա հոգսով է զբաղված և իր համար միևնույն է դարձել նման խնդիրների լուծումը, իսկ կողքից շատ ավելի օբյեկտիվ կարող ես դատել: Միանշանակ, Սփյուռքն իր կարծիքը պետք է ունենա և՛ ԱԺ-ի մեջ, և՛ որոշումների կայացման մեջ: Օրինակ, երբ որոշում են կայացնում կանանց տնային բնության վերաբերյալ, Սփյուռքի կարծիքը պետք է հաշվի առնեն: Անշուշտ, այստեղի ապրողները շատ ավելի գիտակ են, թե ինչ պետք է անել տնային բնության պարագայում, տեղեկություն-

ներ և ռեսուրսներ ունեն: Հայաստանյան իրականությունը շատ հեռու է քաղաքացիական հասարակությունից: Եվ Սփյուռքից նոր գնում և սովորեցնում են այնտեղ: Շատ խնդիրներ կան: Իմ կարծիքով, Հայաստանը իր մասն արել է: Պարտականությունը մասամբ արել է: Արդեն քաղաքացիություն տալու իրավունք կա: Բայց ես միշտ ասել եմ, արդյոք մենք էլ պատրաստ ենք այդ իրավունքը, որ տալիս են, մենք էլ Հայաստանին բան անենք: Ասեցի՝ ձեզ էլ պետք է քաղաքացի լինել, չէ՞: Դու պատրաստ ես քաղաքացի լինել. նա ասում է՝ ես քաղաքացի եմ, ես ասում եմ՝ դու տղայիդ կուղարկեն Ղարաբաղ՝ ծառայելու: Ասում է՝ չէ, իսկ ես ասում եմ՝ բա դու ինչպե՞ս ես ուզում լինել քաղաքացի և չուղարկել բանակ ծառայելու: Մենակ ուզում են քաղաքական կյանքին մասնակցեն, ընտրեն, իսկ ես ասում եմ՝ այդ դերն ունենալու համար պարտականություններ էլ կան: Այս հարցի պատասխանը, իմ կարծիքով, երկկողմանի է: Մենք պետք է ցույց տանք, հետո տեսնենք՝ Հայաստանը մեզ ինչքան է ընդունում, հիմա առայժմ մենք կարողանում ենք գնալ տուն գնել, ամեն մարդ հիմա ընդեղ տունա գնում»:

«Այստեղ ամուսնավորություններն են շատացել, քանի որ պակասում են հայկական ավանդույթները: Արժեքները փոխվում են: Եվ դրանց համար բազմաթիվ հետազոտություններ են արվում: ԶԼՄ-ից ստացված տեղեկատվությունն է առաջինը ազդեցություն ունենում դրա վրա»:

«Ինչո՞ւ մենք փորձառություններ ու փոխանակումներ չունենք, որ երկու օրենքների լույսի տակ կարելի է գործառույթներ մշակել, Հայաստանի մեջ և այդ օրենքներով, եթե չասենք բոլոր օրենքները չոչնչացնել, նվազագույնի հասցնել: Հիմա փորձենք ասել Ամերիկայի մեջ, կան Ֆրանսիայի մեջ, կան Գերմանիայի մեջ այսպես կոչված Արևմտյան աշխարհի ժողովրդավարական երկրների մեջ կոռուպցիա չկա, մենք մեզ ենք խաբում: Կա՞: Բայց ավելի նվազ չափով և բարձր մակարդակի վրա: Ամենօրյա կյանքի հետ կապ չունի: Այնպես որ, շատ ներեցեք, որ համաձայն չեմ, որ եթե Հայաստանը լավ չի ապրում, այսինչ նախարարությունը ճիշտ չի անում, Սփյուռքի նախարարությունը չի հետաքրքրվում, դա իրենց հարցն է: Մեր հրամայականը՝ նպաստել հայրենիքին: Մեզ համար այդպես է: Շատ անձնական հարց տվեցիք, բայց շատերը կան, որ մեր այս կարծիքին համաձայն են: Եթե մի քանի անգամ կփորձես նպաստ բերել, և ոչ ոք շնորհակալություն չի հայտնում, թերևս մի բուպե

կնեղանաս, բավարարված չես զգա, բայց դե հաջորդ օրը, միևնույն է, նշանակություն չունի՝ Հրանուշ Հակոբյանն է, թե՛ Հասմիկ Պողոսյանն է, թե՛ Տիգրան Սարգսյանն է, թե՛ Սերժ Սարգսյանն է: Հարգանքս իրենց՝ որպես պետական գործիչներ, սակայն նրանք բոլորը պետք է գանգնան, ինչպես ես էլ պիտի երթամ: Մակայն հայրենիքը, երկիրն ու պետականությունը պիտի մնան: Պատկերացրեք, մենք 600 տարի չենք ունեցել պետություն և պետականություն, բայց այսօր ունենք. ինչո՞ւ, որովհետև մենք կայինք, եթե մենք էլ մնացած չլինեինք, եթե մենք էլ չունենայինք Հայաստանի Հանրապետություն, դրա առավելությունը այսօրվա Հայաստանի անկախ Հանրապետությունն է, թե՛ Սովետական Մոցիալիստական Հայաստանի Հանրապետությունը, այն էլ՝ Հայաստանի Հանրապետություն: Կուսակցությունների միջև պայքարը արդեն հարթվել է: Կապ չունի, թե ինչ կուսակցություն է իշխում Հայաստանում, պետք է ամեն ինչ անենք, որպեսզի պահենք Հայաստանը, եռագույնը, պետք չէ պայմանավորել այն որևէ մի անձով կամ երևույթով: Ես էլ եմ շատ քննադատել անցյալում, սակայն, եթե ուզում ենք Հայաստանն ավելի լավ տեսնել, ապա պետք է այս ամենը հաշվի առնենք»:

«Մեկ հարց կա այստեղ, թե ինչու են սփյուռքահայերը հայաստանցիներից ավելի հայրենասեր, քանի որ կորստի զգացում ունեն, և հասկացել են, որ առանց սեփական երկրի ինչ-որ բան պակաս է, այսինքն՝ մենք ինքնություն չունենք, լինելով հայ չունենք պատկանելություն: Այստեղ ենք և այստեղ չենք: Եվ երբ խորհուրդներ են տալիս մեզ, որ չխառնվենք այստեղի կյանքին, և միայն գումար ուղարկեք, մենք շատ մեծ ցավ ենք զգում: Դա երևի թե քաղաքականության խնդիր է, ոչ հայաստանցու: Ինչպես, օրինակ, վատ ենք զգում, երբ այցելում ենք Հայաստան, օրինակ՝ Էրեբունի թանգարան, և տեղացին տալիս է ավելի քիչ գումար, քան սփյուռքահայը»:

Հայաստանի վարած արտաքին քաղաքականության ազդեցությունը համայնքային կյանքի վրա

Կարծիքները հիմնականում վերաբերում են Հայ դատի շուրջ Սփյուռքի և Հայաստանի մասնակցության ու համագործակցության խնդիրներին: «Կարծում եմ, որ Հայաստանի արտաքին քաղաքականությունը բոլոր կուսակցությունների, միությունների, նույնիսկ հակառակորդների կողմից էլ մեկի վրա շատ խնդիր չունեն: Որովհետև շատ

ճկուն և ճիշտ է: Մի ժամանակ ասում էին, որ մենք դատ ենք բացում, և մենք մեր առաջին օրակարգը, որ մեր խումբը կազմվեց, 3 մեծ ծրագիր որդեգրեցինք, բայց ամենամեծը համաշխարհային մեծ դատ բացել էր, որ երկու միլիոն դոլարի բաջետ էինք ուզում վրան դնելինք, երբ որ մեր հայ իրավաբանների միությունը քննարկեցին, ասեցին՝ չէ, մենք էդ իրավասությունը չունենք, ասեցին, որ միայն Հայաստանի կառավարությունն է, որ կարող է փողային պահանջ դնել: Եվ այդ ժամանակ միջազգային օրենքներ, որ Հայաստանը էդ օրերին չի կարող փողային պահանջ դնել: Բայց հիմա լսելով մի քանի ելույթները եղած, որ Հայաստանի կառավարությունը քննարկում է, որ առաջին անգամ ենք լսում, և փողային պահանջն էլ կարող է լինել, որի համար ուրախ ենք: ... ստեղ Հարավսլավիայի դատախազի մասին էր: Եվ հիմա նոր ինձ մեյլա գալիս, որ Prease realis-ը որ ուզում ենք, ուղարկենք Հայոց ցեղասպանության 100-ամյակի հանձնախմբի կողմից, Միշել Ստեգմենտի-ի վրա մենք պատերազմ ունենք, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, որպես միշտ, աստար կանգնող է Հայաստանին, Հայ հեղափոխական դաշնակցությունը, որ շատ հեղափոխական մտեցում է, այդ բառերի վրա պահանջել ձևը, մենք իրար հետ խնդիր ունենք: Հարթ Սարգիսյանը, որ իմ մտերիմ ընկերն է, ինձ հետ կովի մեջ ընկավ, որովհետև մենք ասում ենք հայության արդար պահանջը, իրենք ասում են՝ 100 տարի էլ անցնի, չի լինի: Տարբեր գաղափարներ կան, որ հողային պահանջները Հայաստանը պետք է անի այդ ձևով, թե Սփյուռքը... Կան տարակարծություններ, բայց էդ խումբը, որ անում են, 18 կազմակերպություններ, որ հայաստանյայց թեն էլ կա, անթիլիասյան թեն էլ կա, այս կուսակցությունն էլ կա, որովհետև երեք կուսակցություններն էլ իրար հետ համաձայն չեն նույն ձևով խնդիրը մեջտեղ բերել: Մենք դեռ չենք հասել խնդիրը միասնական լուծելու: Անգամ ցեղասպանության հարցում: Ես հիմա հիշում եմ, որ խոսում ենք հայկական հարցերի մասին, եկեք տարաբաժանենք, որ 10 հատ ընդհանուր խնդիր կա: Եկեք քննարկենք, տեսնենք՝ ո՞ր մեկս այդ 10-ը կթողնի: Ցեղասպանությունը մի խնդիր է, չեն կարողանում լուծել»:

Վերադարձ հայրենիք

«Մենք հավատում ենք, և միշտ ասում ենք, մեր վերջնական տեղը Հայաստանն է: Մենք այս խոսքերի տակ ենք մեծացել: Հայաստանը պիտի մնա Հայաստան, կապ չունի, թե ովքեր են իշխանությունները,

պետականությունը պետք է պահենք, կապ չունի, թե ինչ կուսակցություն է տիրում: Հայերի արտագաղթը պետք է դադարեցվի»: «Պետք է ետ գնանք: Դա պետք է արվի ներգաղթի միջոցով: Մի կարծեք, թե այստեղ մարդիկ ուրախ են, ուրախ չեն, քանի որ չափազանց կիսատ են մարդիկ իրենց զգում: Երեխան, որն այստեղ է ծնվել, նա այնքան մեծ խնդիր չունի, սակայն մարդը, ով իր կյանքն էստեղ է անցկացրել, այստեղ դժվարանում է հոգեպես ապրել: Այստեղ մենք նման են հողից պոկված, գեղեցիկ ծաղկամանի մեջ դրված, վիտամիններով պարարտացված ծաղկի, բայց երբ հողն էստեղ է, ինչի է պետք այդ ծաղիկը: Միջին Արևելքի վերջին 40 տարիների դեպքերը եթե նայենք (Իրանի հեղափոխությունը, Իրաքի պատերազմը), հինգից մեկը հայ էր գնում կովի: Այնպես որ, Միջին Արևելքի դեպքերը, հատկապես հիմա Սիրիայի վիճակը շատ մեծ հարված է մեզ համար՝ Հայաստանի համար: Եթե չլինեին այդ դեպքերը, այսօր մեկ միլիոն հայություն կլիներ Միջին Արևելքում: Եվ դա հայության շատ լավ պահպանված մասն էր»:

«Երբ այսպիսի տարբերություններ են լինում, դու հասկանում ես, որ դու մեկ ազգ ես, չպետք է լինի այդ տարբերությունը, քանի որ մենք էլ մեր ապագան Հայաստանի մեջ ենք տեսնում: Այն մարդիկ, որ ուզում են ամեն կերպ գալ ԱՄՆ, դեռ չգիտեն՝ ինչերի են բախվելու: Կարիք կա, որ մարդիկ իմանան, թե ինչ է սպասվում իրենց այստեղ, նրանք միայն նայում են հաջողված պատմությունները, մյուս կողմը չեն նայում»:

«Հիմա ասենք ես, որ որոշեցի Հայաստան տեղափոխվի, շատ ուզում եմ անիլ, ո՞ր ք պիտի աշխատիմ: Եթե նույնիսկ պետական հիմնարկի մեջ աշխատես, ես պետք է երկու տարի չարչարվիմ, որ իմ գիտցած հայերենս փոխեն, ուղղագրությունը փոխեն, ինքզինքս պատշաճեցնեմ և այլն, եթե ես հայերենին տիրապետում եմ: Ուրիշները, որ չեն տիրապետում, ի՞նչ են անելու: Եթե անկախության սեմին Հայաստանը այդպիսի բան աներ՝ վերցներ մեսրոպյան ուղղագրությունը, մեկ հատ սխալ աներ և ճիշտ ուղիի մեջ գնար... հիմա արդեն ուշ է»:

«Միշտ մոռանում ենք որ Հայաստանը 20 տարեկան է միայն և ոչ այս երկրի նման երկար տարիների դեմոկրատիա ունի: Մենք ուզում ենք Հայաստանը ավելի լավ տեսնել, ավելի արագ ենք ուզում տեսնել փոփոխությունները դեպի լավը»:

Վստահության խնդիրը

«Համեմատություն որպես՝ եթե մայրդ մեկ օր կարմիր է հագնում, մյուս օրը կարող է կապույտ հագնել, հետո ուրիշ գույն, մեկ է՝ նա քո մայրն է: Ես, որպես ռամկավար, այդպես եմ մեծացել: Նախկինում մեծ պայքար ու լարվածություն կար կուսակցությունների մեջ: Անգամ չէին կարող ամուսնանալ ռամկավարը և դաշնակը: Միմյանց հալածում էին անգամ»:

«Այսօր քնապահպանական դպրոցը Հայաստանից այստեղ է եկել, դա Հայաստանի մեկ երեսն է: Փոքր երկիր է Հայաստանը, և էկոլոգիական խնդիրները ևս կարևոր են, որտեղ են թափվելու այդ բոլոր աղբերը: Եթե պետք եղավ գաղթելու, ո՞ր պետք է գնանք՝ Լիբանան կամ այլ տեղ, որտեղից եկել ենք՝ չենք կարող, միակ տեղը պետք է լինի Հայաստանի Հանրապետությունը: Եվ ուրիշ Հայաստան չկա, այս է Հայաստանը: Ինչպես, օրինակ, 10000 սիրիահայերը դժվար են համակերպվում, երբ գալիս են Հայաստան, քանի որ մշակութային տարբերություններ կան: Այսօր հալեպցիև և բեյրութցիև չեն կարող միասին ապրել, ուր մնաց թե հալեպցիև ու երևանցիև ապրեն: Անգամ Հայաստանի մեջ ենք տարանջատում երևանցի, դարաբաղցի և այլն: Բայց ամեն դեպքում բոլորն էլ հայ են, լինեն լիբանանահայ, սիրիահայ, հայաստանցի հայ: Ընդհանուր և՛ զգացական, և՛ գործնական իմաստով պիտի հավատանք դեպի Հայաստան ներգաղթի գաղափարին: «Հայաստան» համահայկական հիմնադրամը, օրինակ, ավելի ու ավելի քիչ գումար է կարողանում հավաքել: Ինչո՞ւ: Քանի որ կա վստահության հարց: Կազմակերպությունները շատ են, յուրաքանչյուրը ուզում է իր անունով լինի նաև բարեգործականը, և ամեն մեկն իր ծրագրերն ունի: Տարին մեկ անգամ միայն մեր դպրոցը, օրինակ, 113000 դուլար է հավաքում»:

«Վստահության խնդիրն անգամ Հայաստանի ներսում շատ ավելի է վտանգված, քան այստեղ: Բայց պետք է մեծացնել հիմնադրամի հանդեպ վստահությունը: Այդ գումարները հեշտ չէ հավաքելը, ինչպես, օրինակ, տարրական դպրոցի երեխաները մեզ մոտ երկու դուլարներով են հավաքել այս տարի, իսկ նոյեմբերին էլ պատրաստվում են հագուստներ ցուցադրելու միջոցառման ժամանակ գումարներ հավաքել դպրոցում: Բայց պետք է իմանան նաև, թե ինչին է ծառայելու այդ գումարը: Օրինակ՝ Հաղորդի շրջանի մի գյուղի դպրոցը նորոգել է հենց

մեր դպրոցը: Այստեղ կարևոր է, որ Հայաստանի գոնե մի մասնիկ նորոգվում է և բարելավվում»:

Չամայևների հետ համագործակցությունը

«Իսկ Սիրիայի դեպքերի հետ կապված կարող եմ ասել, որ մեր օգնությունը կաթիլ էլ չէր: 100–200 հազար դոլար առաջինը՝ նվիրեց՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունն էր, որ առաջին մեկ միլիոնը դրավ, որ ամենը հետևեն: Շատ քիչ օգնություն տվեցին, դրանք ոչնչություն են: Եվ հետո էլ, որ հաշվետվություն ուզեցինք, ասացին՝ չենք կարող, ասացին՝ ցույց տվեք, որ դրամը ինչպես են հասցրել, ասեցին՝ չենք կարող ցույց տալ, որովհետև ուղարկում ենք Բեյրութ՝ առաջնորդարան, այն էլ չի կարող ձեզ ասել»:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՐՈՐԴ
ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ՝ ԹԲԻԼԻՍԻ

Ընտրված փորձագետները ներկայացնում են Թբիլիսիի հայերի կազմի բոլոր խմբավորումները՝ ըստ կուսակցական, սեռատարիքային և սոցիալական շերտերի: Հաշվի են առնվել մասնագիտական հատկանիշները՝ լրագրողներ, ուսուցիչներ, ազգային կենտրոնների, եկեղեցու պատասխանատուներ և այլ անձինք, որոնք ունեն համայնքում շփվելու լուրջ փորձ և դիտարկվում են գաղութում որպես ազգի այս հատվածի մասին բովանդակալից տեղեկատվություն ունեցող գիտակներ:

Փորձագետներ (բարձրագույն կրթությամբ, 30-60 տարեկան)՝ մանկավարժ, միության փոխտնօրեն, երաժիշտ, եկեղեցական, փաստաբան, թերթի խմբագիր: Հարցազրուցավարներ՝ *Լուսինե Տանայյան, Մոնա Ներսիսյան:*

Հարցազրույցները վարվել են 2017 թ. Թբիլիսիում:

Հարցազրույցների կյուբեր

Ընդհանուր պատկեր

— Հաշվի առնելով, որ Վրաստանի հայությանը մենք չենք կարող ասել սփյուռք, ասում ենք համայնք, քանի որ այն հին է: Օրինակ Ջավախքի հայությանը ինչպես կարելի է ասել սփյուռք, Ջավախքի հայությունը պատմականորեն ապրում է իր հողի վրա: Երբեմնի այս հզոր համայնքը ցավոք սրտի, 25 տարվա ընթացքում շատ է թուլացել և որակապես և՛ ֆինանսապես: Համայնքը կազմվել է Մովսեսյան Միության փլուզումից հետո, 1991–92 թթ., այն դժվար էր զարգանում, ֆինանսական խնդիրներ կային:

Այսօր մենք հարուստ չենք, մեծ ֆինանսներ չունենք: 90-ականներին, երբ որ մի մասը գաղթեց, ես կարող եմ ասել, որ Վրաստանը Հայաստանից վատ վիճակում էր, և այդ ազգասիրությունը, որ կար հայերի

մեջ, ես իմ ընտանիքի օրինակով էլ կարող եմ բերել: Այդ ժամանակ մեկին քաղաքական նախապատվության համար էին սպանում, մյուսին՝ ազգային պատկանելության: Այո, օրենքը բոլորի համար հավասար է, Վրաստանի օրենքների մեջ ոչ մի խտրականություն չկա, ոչ մի խմբի հանդեպ: Իսկ աշխատանքի մտնելու առումով, օրինակ, գուցե աշխատանքը չլինի, եթե դուք նախարար եք, դուք ձեր բարեկամին եք վերցնում աշխատանքի, մոտավորապես այդ կերպ էլ է աշխատում, ոչ թե միտումնավոր, որ հայ է, չեն վերցնում: Այստեղ էլ խնդիր ունենք. ինչ տարբերություն կար կոմունիստական շրջանում և հիմա: Կոմունիստական շրջանում կային կազմակերպություններ, հիմնարկներ, որոնք ուղիղ պատկանում էին Մոսկվային, այս հիմնարկներում շատերը հայեր էին դեկավարները, առաջին դեմքերը հայեր էին, հիմա չկա նման բան, փոխնախարարների մեծ մասը հայեր էին, մենք ընդգրկված էինք այդ բոլոր գործընթացների մեջ, զինվորական շտաբներում հայեր կային, կար հնարավորություն և լծակներ տարբեր հարցեր լուծելու, այսօր ցավոք սրտի լծակներ չկան, շատ անգամ Հայաստանից է ճշումը: Վերջին 25 տարիներին, համայնքային զիջումները Հայաստանի գործոնի հետ են կապված: Մենք իհարկե փորձում ենք, բայց մեզ չեն ընկալի, այս մթնոլորտում մեզ առանձին համայնք չեն ընկալի, Ջավախքը վերցնենք, այնտեղ ուրիշ մարտահրավերներ են, Թիֆլիսում ուրիշ է:

Պաշտոնական տվյալներով, 2002 թ. Թբիլիսիում ապրում էր 80 հազար հայ, 2014 թ. մարդահամարի տվյալներով Թբիլիսիում ապրում է 50 հազար հայ: Այս 12 տարիների ընթացքում 30 հազար հայ լքել է մայրաքաղաքը, նրանց քիչ մասը վերաբնակեցվել է Հայաստանում, հիմնական մասը Ռուսաստան, Ուկրաինա, ռուսալեզու երկրներ, և իհարկե Եվրոպա և Միացյալ Նահանգներ: Կան Վրաստանի պաշտոնական տվյալները, որ վերջին 10 տարիների ընթացքում Վրաստանը լքել են 607 հազարից ավելի քաղաքացիներ, դա նշանակում է տարեկան 67 հազար մարդ լքում է այս երկիրը, դրա մեջ են նաև հայերը: Ներգաղթը մասսայական չէ: Սահակաշվիլու ժամանակ, երբ պետությունը մի քիչ ոտքի կանգնեց, օրենքները նորմալ գործեցին, փոքր աճ կար ներգաղթի, չեմ ասում շատ, բայց կար: Այնուամենայնիվ արտագաղթը շարունակվում է, եթե մենք վերցնենք 2000 թ.-ից այս կողմ, որ համեմատաբար մասսայական չի եղել արտագաղթը, բայց հիմա ես նայում եմ իմ շատ ընկերներին, որ միասին բավական ակտիվ էինք, ցավոք

սրտի չկան այդ մարդիկ: Առաջ, որ եկեղեցու բակում ասեղ գցելու տեղ չկար, երիտասարդների առումով, այսօր չկա, կան իհարկե մարդիկ, որ իրենցից ինչ որ բան ներկայացնում են, և իրենց մեջ ազգային գաղափարների խտացում կա, բայց ցավոք սրտի քչանում են: Հիմա մի պլյուս կա երիտասարդական կյանքում, որովհետև Վրաստանում գործում է «Չորս պլյուս մեկ» նախագիծը, որը ազգային փոքրամասնություններին ընդունում է համալսարաններ, և դրանից օգտվում են նաև Ջավախքի ուսանողները: Առաջին տարին նախապատրաստական է, հեշտությամբ ընդունվում են, հետո դառնում են հիմնական ուսանողներ, և համայնքում բավական աշխուժություն են բերում:

Հիմա գաղթը այդքան մեծ չէ, բայց շատերը հայերից գնում են, և իմ ճանաչածներից շատերը գնում են Ֆրանսիա: Առանձին ընտանիքներ գուցե լինեն, բայց ովքեր ընդգրկված են այդ կազմակերպություններում, համայնքային կյանքում, նրանք ովքեր ակտիվ են, լավ թե վատ մնում են, աշխատում են: Այսինքն ասպագան հիմնականում Թբիլիսիի հետ են կապում:

Տեղաբաշխումը

Թիֆլիսից բացի հայերը հիմնականում կենտրոն նացած են Ախալքալաքի շրջանում, Բորժում և այլուր: Ախալքալաքում 95 տոկոսը հայ են: Թբիլիսին մի փոքր դժվար է ներկայացնել իր կերպի մեջ, որովհետև հին հայությունը, որ ապրում էր հին քաղաքում, (հին քաղաք ասելով, դա Սոլոլակն էր, Հավլաբարն էր), այսօր հայության մի զգալի հատված ապրում է Թբիլիսիի հեռավոր, կենտրոնից հեռու համայնքներում, որտեղ որ չկա ո՛չ հայկական դպրոց, որ երեխաներին տանեն, ո՛չ էլ եկեղեցի, ու ճիշտն ասած չենք էլ ծրագրում այդ հատվածներում ինչ որ եկեղեցի կառուցել: Ելնելով կյանքի այն փորձառությունից, շատ երկրներում կառուցել են այդպես, հետո տեղի հայությունը գնացել է, և այդպես մնացել են դրանք:

Ընտանիք, ամուսնություն

Ես մարտից մինչև ապրիլ մասնակցել եմ վաղաժամ ամուսնությունների թեմայով հետազոտությանը, ու շրջել եմ Մառնեուլի բոլոր գյուղերում: Տեսեք ինչպես է խնդիրը. կար մի ընթացք, որ մեծ քանակությամբ գնացին, հիմա մենք արտագաղթի մի այլ ձև ունենք, շատ լուրջ խնդիր ունենք: Եթե չեղավ հայ ընտանիքը, հայապահպանությունն էլ դժվար կլինի իրականացնել: Մենք խնդիր ունենք աշխատունակ

տղամարդկանց, ընդ որում խոսքը չի վերաբերում պետական մարմիններում աշխատողներին, հիմնական մասը մտածում է, որ պետք է մնա և քիչ գումար վաստակի, գերադասում է գնալ Ռուսաստանում աշխատել, և 3 անգամ շատ ստանալ: Եթե այսպես նայենք, նրանք հիմնականում արտագնա աշխատանքի են գնում, և դա 3-5 ամիս, այսինքն տղամարդիկ չեն մասնակցում համայնքային խնդիրներին, ընտանեկան դաստիարակությանը, շրջանների մասին է խոսքը: Ինչ լուծում կա սրան. այն երիտասարդները, որոնք հիմա սովորում են, կրթություն են ստանում, ինչ որ չափով ինտեգրվում են, որովհետև իրենք իրենց ապագան տեսնում են Վրաստանում, թեկուզ շրջաններում: Մեզ մոտ շատ գյուղատնտեսական ծրագրեր կան, որ մարդիկ իրենց բնակավայրից հեռու չգնան, Սամցխե-Ջավախքի շատ գյուղեր հատուկ նպաստներ են ստանում, հատուկ աջակցություն են ստանում, այսինքն այդ ծրագրերը ինչ որ չափով օգնում են: Ես վատ երևույթ եմ նկատում, որ կանայք դարձել են զուտ ծնողներին պահող և երեխաներին հետևող անձինք: Նրանք սոցիալիզացման հնարավորություն չունեն, որովհետև ամուսինը չի թողնում աշխատեն, բայց կան 30-ից ցածր տարիքի աղջիկներ, որոնց մտածելակերպը այլ է, չես կարող նրանց հետ նույն կերպ վարվել, դա հիմնականում 30-ից բարձրն է այդպես:

Հայ համայնքը վաղաժամի խնդիր չունի, ճիշտ հակառակը: Ընդհանուր առմամբ, եթե երկրում ուրիշ համայնքների պարագայում կա այդ խնդիրը, ես 100 տոկոս պատասխանատվությամբ ասեմ, որ ոչ մի հայ ընտանիք իր աղջկան 18-ից ցածր տարիքում չի թողի ամուսնանալ: Հիմնական տարիքը 18-ից մինչև 24 տարեկանն է: Եթե աղջիկը մինչև 18 չամուսնացավ, դրանից հետո նա սկսում է աշխատելուն սովորել: Եթե չեն ամուսնանում, ընդունվում են, սովորում են, հետո աշխատում են: Վաղաժամ ամուսնության հետ կապված, համայնքի զարգացման համար էլ ռեալիզացված կանայք շատ մեծ նշանակություն ունեն, եթե մենք համեմատվենք ուրիշ համայնքների հետ, կանանց հիմնական մասը պետք է ռեալիզացված լինի, եթե դա չկա, համայնքը շատ թույլ է: Եթե կինը սոցիալիզացված է, նա ավելի առողջ երեխա էլ է դաստիարակում, ու ընտանիքն էլ ավելի առողջ է:

Վերաբերմունքը հայերի նկատմամբ

Վերջին 80 տարիների ընթացքում արվել է ամեն ինչ խեղաթյուրելու համար հայի կերպարը, մանավանդ վերջին 30 տարիներին: Եթե մինչ

այդ կար հայության նկատմամբ նախկինից եկած թեական մոտեցում, քանի որ դարերով հայ առևտրականներն էին այստեղ, այս քաղաքի քաղաքապետներն էին հայերը, և գուցե ինչ որ մի տեղ նեղացած բաներ կային, թե ինչու իրենք չեն եղել, հայերն են եղել, իսկ Խորհրդային Միության փլուզումից հետո ավելացավ նաև կրոնական հակամարտությունը, երբ վրաց եկեղեցին ուղղափառությունից դուրս բոլորին համարեց ոչ ուղղափառ: Նա մտցրեց ատելություն այլ կրոնական դավանանքի հետևորդների և վրաց դավանանքի հետևորդների միջև: Դրա համար կրոնական հակամարտությունը նույնպես ավելացրեց այս ամբողջը: Հայերին հոչակեցին մոնոֆիզիտներ, այսինքն կրոնական հիմնական ուղղությունից շեղված, և պատկերացրեք այս քաղաքի բավական մաս վրացիներ չգիտեն, որ հայերը քրիստոնյա են: Սրան ավելացավ ուրիշ մի բան. երբ որ վրաց թալանչիները մտան Աբխազիա, և սկսեցին և հայերին և վրացիներին թալանել, հայերը հավաքվեցին, կազմեցին իրենց խմբավորումը այս հանցագործության դեմ պայքարելու համար, (և մի քիչ անհասկանալի դրվեց այդ խմբավորման անունը՝ Բաղրամյան, և պետք է գտնեին մեկին, որ մեղադրեին այդ հողերը կորցնելու մեջ) և ահավասիկ Աբխազիայի հայերը դարձան մեղավոր, որ վրացիները կորցրեցին Աբխազիան: Մենք խոսում ենք այն ծայրահեղականների մասին, որոնք ցավոք մեծ մասն են կազմում հասարակության, սա այն գործ շերտն է, որը փակում է ներքևից դեպի լավ գնացող լավը, կամ վերևի լավը, որ կուզենա իջնել ներքև, սա այն շերտն է, որը շատ անգամ, թե եկեղեցական, թե պետական ու քաղաքական աշխարհը դրա հետ հաշվի է նստում: Օրինակը բերեմ. երբ որ խնդիր է առաջանում արխագական երկաթգիծը կամ ճանապարհը վերագործարկելու մասին, քաղաքական գործիչները հասկանում են, որ դա շատ կարևոր է երկրի համար, թե տնտեսական, թեքաղաքական առումով, բայց այդ շերտը աղմուկ է բարձրացնում, և այդ ծրագրերը մնում են նորից չգործարկված: Ուրեմն այդ վերաբերմունքը հայերի նկատմամբ, ինչպես նշեցի, հնուց եկած վերաբերմունքն է, նախանձի, թերարժեքության գիտակցության, որովհետև վրաց հասարակությունը ապրում էր գյուղերում, քաղաքում ապրում էիր հայերը, հայերին ասում էին մոքալաքի, այսինքն քաղաքացի, իրենք հասկանում էին, որ դա հայերն են, քանի որ քաղաքները ուղիղ ենթակայության են եկել թագավորներին, իշխաններին: Ցարական շրջանում առևտուրը զարգանում էր, դրա համար հայության հիմնական մասը ապրում էր քաղաք-

ներում, զբաղվում էր արհեստագործությամբ, առևտրով և ինքը տուրքեր էր տալիս:

Որոշ առումով դումինաստ ենք մենք ազգային փոքրամասնությունների մեջ, որակի առումով: Մենք, առաջին հերթին Վրաստանի քաղաքացիներ ենք, այսինքն Վրաստանի կողմից մեզ ոչ ոք չի դնում ինչ որ շրջանակների մեջ: Այս երկրի շահերից ելնելով, մենք ինչ անում ենք, մտածում ենք, որ վսաս չբերենք Վրաստանին ու Հայաստանին, այլ օգուտ: Աշխատում ենք այս կերպ, որ Հայաստան-Վրաստան հարաբերությունները էլ ավելի ջերմացնենք:

Հայերին բնութագրում են որպես աշխատասեր ազգ: Թիֆլիսահայերը խնդիր ստեղծող չեն Թիֆլիսում կամ Վրաստանում, նրանք խաղաղասեր են: Վրացիների նկատմամբ շատ լավ ենք տրամադրված, վրացիներն էլ նույնպես, բայց իհարկե սուտ կլինի, որ ասեմ խնդիր չկա, նայած մակարդակի մարդ, դա կենցաղային մակարդակի ինչ որ բան է: Վրաստանում դեմոկրատիայի առումով շատ մեծ առաջընթաց ունենք, իսկ դրա համար առաջին պունկտը այն է, որ ազգային փոքրամասնությունները իրենց լիակատար Վրաստանի քաղաքացի զգան: Անցյալ տարի Վրաստանը եվրատեսիլում ներկայացրեց հայազգի Նիկա Քոչարովը, նա հաղորդագրություններով հաղթեց, բայց ոչ ոք չասեց, թե ինչու հայր պետք է ներկայացնի Վրաստանը: Անի Խանչալյանը Քուրթայիսում, պառլամենտի նոր շենքի բացման ժամանակ, Վրաստանի հիմնն էր երգում, տեսնում են չէ, որ հայ է:

Այնուամենայնիվ, մեզ մեծ մասամբ նաև քաղաքական առումով, նաև ստերիոտիպների առումով մեզ ընկալում են որպես Հայաստանի շարունակությունը, և շատ անգամ Հայաստանի շահերի պահպանողը և այդտեղ սկսվում է նաև շահերի բախում, մեզ չեն ընդունում առանձին համայնք, և այն հարցերը, որ առաջին հերթին հուզում է հայ համայնքին, օրինակ եկեղեցիների վերադարձը, որը ուրջ խնդիր է, հենց այդ խնդիրը մենք թեմի գլխավորությամբ բարձրացնում ենք, ամեն ինչ անում են, որ այդ հարցը չլինի համայնքի հետ կապված, դառնա հայվրացական հարաբերությունների առօրյա թեմա, բայց մենք ասում ենք, դա մեր համայնքի խնդիրն է, որովհետև այդ եկեղեցիները մեր պատմամշակութային արժեքն են և մեր սրբավայրը, իհարկե սա Վրաստանի հողի վրա է գտնվում, նաև Վրաստանի հարստությունն է, բայց ուզում են առք ու վաճառքի թեմա դարձնեն: Ախթալայի եկեղեցին է շոշափվում և այլն: Այս 20 տարվա բանակցությունների կամ վեճերի

արդյունքում մենք 3 եկեղեցի կորցրել ենք, ֆիզիկապես իրենք խոնարհվել են, և կան եկեղեցիներ, որ անհնար է վերականգնել հին տեսքով:

Այսօր հայերի մասին վրացիների ստերիոտիպը մեծ մասամբ այն է, որ հայը կամ կոշկակար է, կամ վարսավիր, մանր առևտուր անող, այդպես է ընկալվում: Ես չգիտեմ նախկինում իրենք ինչքան էին պատկերացնում, բայց հիմա այլ է: Ջավախքի հայերը ինչ որ անհասկանալի ձևով ուզում են այդ տարածքը անջատել: Հայերը այն մարդիկ են, որոնք Բաղրամյանի բատալյոն են ունեցել Աբխազիայում:

Որոշ պարզաբանումներ

1990-ականների ուժացման բացատրությունը մոտավորապես այն է, որ իբր ժամանակին մեր եկեղեցին ունեցել է անսահմանափակ հնարավորություններ, և եթե մեր եկեղեցու դավանանքին է եղել մարդը, ոչ բանակ է գնացել, ոչ հարկ է տվել, սուտ է իհարկե, նման բան չի եղել, այդ կերպ ասվում է նաև, որ որոշ շատ մեծ խմբով վրացիներ, դարձել են հայ առաքելական եկեղեցու զավակներ, որպեսզի հարկեր չտան, բանակ չգնան, և եկել է ժամանակը, որպեսզի արդարությունը վերականգնվի և պարզվի, որ այդ Պետրոսյանը իրականում Պետրոսյան չի եղել, եղել է օրինակ Ջուրբենաձե: Նույնիսկ զանգեր էլ են եղել, տուն են զանգում, մարդկանց ձուլում են: Ընկերներ ունեն, արմատներով Ղարսեցի են, զանգել են, ասել են, որ ուրիշ ազգանուն ունեն: Ով չէր դիմանում այդ ճնշմանը, ձուլվում էր: Պետք է պատկերացնեք այդ ֆոնը, 90-ականներին, երբ որ հայերը բռնեցին աբխազների կողմը, և բավական ազդեցիկ զինյալ խմբեր ունեին, որ եթե հայերի հետ ասոցացվում էր, դա Բաղրամյանի բատալյոնն էր, լեգենդներ են հյուսվել իրենց դաժան լինելու հետ կապված: Նույնիսկ կար ժամանակ, շատերը չէին ուզում դրա մասին խոսել, բայց դա եղել է, նույնիսկ մեր տները բաժանված էին մեր հարևանների միջև, կար ժամանակ, որ չէին առնում հայերից, գիտեին, որ գնալու են, բոլորը դա թաքցնում էին, բայց դա այդպես է եղել, և նաև մի բան էլ կա, որ այն ժամանակվա ճնշման ամենաբացահայտ երևույթն էր. կոմունիստական շրջանում տների վրա գրություններ կային, անունը, ազգանունը, հայերի տները միանգամից արդեն փակցրած էին, ու երևում էր որ այդտեղ գրություն է եղել, որովհետև տարիների ընթացքում դռան գույնը փոխվում է, դուռը հանում փոխում էին, մարդիկ կային չէին հանում, մարդիկ կային հա-

նում էին, այդպիսի երևույթներ են եղել, և այդտեղից կոտորվել է մեր համայնքի մեջքը: Կոմունիստական շրջանում, գիտեք, եղել է Բեյրութ, Լոս-Անջելես և Թեհրան: Թբիլիսիում համայնքային կյանք չկա, որովհետև համայնքի մեծ մասը կոմունիստական մենթալիտետով մեծացած մարդիկ են, այդ կոմունիստները համայնքային հասկացողությունը կոտրեցին, և նաև այն ժամանակ համայնքային ստատուսներ կային, և եկեղեցին բարձր ստատուս ուներ: Պետությունը Օսմանյան կայսրության նախկին տարածքում, նույն մոդելը նաև Ցարական Ռուսաստան է ունեցել, միչև 1920 թվականը կարևոր փաստաթուղթը քո եկեղեցուց բերած փաստաթուղթն էր, ու այնուամենայնիվ ուզեր թե չուզեր, մարդը կապված էր իր եկեղեցու հետ, որովհետև ինքը հստակ բան ուներ այնտեղից վերցնելու, գումար էր տալիս, և դրանով հզորանում էր եկեղեցին: 26 եկեղեցի ենք ունեցել Թիֆլիսում գործող, ընդհանուր 48 կրոնական կառույցից 26-ը հայկական եկեղեցի է եղել: 48-ի մեջ մտել ենք մենք, նաև մտել են ռուսական եկեղեցին, վրացական եկեղեցին, մզկիթներ, քաղաքի մեծամասնությունը մենք ենք եղել:

Առաջին գործոններից մեկը պետական լեզվին տիրապետելն է, եթե չտիրապետեցիր, չիմացար պետության պատմությունը, մշակույթը, քաղաքականությունը, ապրելակերպը, դու չես կարող լիովին լինել այդ երկրի քաղաքացի: Եթե դու չես ապրում նրանով, ինչով ապրում է այդ երկիրը, որտեղ դու բնակվում ես, դու դառնում ես 2-րդ կարգի քաղաքացի: Բայց մեզ վրա հիմա մեծ պատասխանատվություն կա, ունենալ, անել, նաև չկորցնել քո հայկականը, քո լեզուն, քո գրականությունը, այսինքն երբ դու Նարեկացի ես ուսումնասիրում, կամ Մաշտոց, դրա հետ նաև պետք է իմանաս Ռուսթավելի, Ճավճավաճե և այլն և այլն: Միայն Վրաստանի հայերի մասի չէ խոսքը, աշխարհի բոլոր հայերի մասին է խոսքը, ովքեր չեն բնակվում Հայաստանում, կրկնակի մեծ պատասխանատվություն ունենք: Դրսում ապրող հայը կրկնակի պետք է հավաքված ու զարգացած լինի ամեն ինչով, որովհետև ամեն մի մարդ իր ազգն է ներկայացնում, դա լինի Վրաստանում, Ամերիկայում թե մեկ այլ տեղ: Քեզ ընկալում են որպես հայ, այսինքն որքան մեծ պատասխանատվություն ունես ներկայացնելու հայի: Եթե քո մտավորականությունը քիչ է այդ երկրում, սա սարսափելի բան է: Եթե վրաց հարևանդ գրող է, նկարիչ է և այլն, ու դու նրա կողքին դատարկ ես, ոչինչ չունես նրա հետ կիսելու, սա ազգի նկատմամբ կարծիքը փոխում է, որովհետև նոր սերունդ է գալիս, իսկ այս նոր սերնդի հայ

երեխաները, աղջիկները, տղաները պիտի պատրաստ լինեն երկխոսություն վարելու ցանկացած զարգացած երիտասարդ վրացու հետ:

Կրթություն և մշակութային կյանք

Թբիլիսիում երկու եկեղեցիների առկայությունը՝ Ս. Գևորգ և Ս. Էջմիածին, պահպանել է նաև կրոնական զգացողությունը ժողովրդի մեջ և նույնիսկ խորհրդային բոլոր ժամանակներում էլ այստեղ այդ ծեսերը կատարվել են: Մշակութային ոլորտում գործում է մեր պետական թատրոնը, և թեև թատրոնի շենքը այսօր վթարային վիճակում է, բայց թատրոնը գործում է, որովհետև թատրոնը փորձերն անում է այս շենքում, և ուրիշ թատրոններում կատարում է իր բեմադրությունները:

Հավատքի տեսանկյունից պետք է ասեն, որ քրիստոնեական հավատքը պահպանվում է, ժողովուրդը շարունակում է մկրտվել, ամուսնանալ, ավանդություններ կան որ վերականգնում ենք, կլինի դա Ս. Մարգսի տոնի հետ կապված, լինի դա Տյառնընդառաջի, Վարդավառի, Թարգմանչաց, ինչ տոներ կան, որ հնարավոր է վերականգնել նորից, այդ ամբողջը արվում է: Ժողովուրդը իհարկե դժվար սոցիալական խնդիր ունի, եկեղեցու պատարագներին գալիս են, բայց շատերը վաղ առավոտյան գալիս են, մոմ են վառում և գնում են, որ հասնեն իրենց գործերին: Մշակութային միջավայրը պահպանելու համար, 2011թ. եկեղեցին հիմնեց Հայարտուն կենտրոնը, այն իր ուսերին ստանձնեց Թբիլիսիի մշակութային միջավայրի պահպանության առաքելությունը, ինքնության, ազգապահպանության հարցերը: Հայարտունը ստանձնեց նաև Վարդատան, որը ամեն տարի մայիսին է կազմակերպվում, եթե առաջ այն միայն Ս. Գևորգի բակում էր, ապա Հայարտան և Վրաստանում Հայաստանի դեսպանատան շնորհիվ դուրս բերեցինք և հրապարակում սկսվեց անել, և արդեն 3 տարի է, որ մենք հետ քաշվեցինք և այդ հնարավորությունը տվեցինք մեր հայկական թատրոնին: Սովետական Վրաստանը արել է, պետականորեն պահել է դպրոցները, այսօր էլ Թբիլիսիում երկու հայկական դպրոց է պահում պետությունը, կամ թատրոնը, և մարդը սկսում է ծուլանալ, թե դրսում իր դպրոցն ու թատրոնը հայությունն է պահում, այստեղ պետությունն է արել, դրան էլ ավելացել է եկեղեցին, որը իր մարդկային և նյութական միջոցներով ստանձնել է մշակութային, կրթական, ավանդություններ պահպանելու և շատ այլ հասարակական գործառույթներ իրականացնելուն, արդեն իրենք դրանով բավարարված են: Բայց տեսեք, շենքը

վերանորոգման է, պետությունը բյուջեն տալիս է, մենք տարեկան 40 ներկայացում ունենք, ուղղակի շենքը վթարային է, իրավունք չունենք հանդիսատես ներս թողնելու, բայց փորձեր են անում, հյուրախաղերի ենք ամեն տարի Հայաստանում: Այսինքն թատրոնը գործում է, ԹԻՖ-լիսում էլ ենք խաղում, նման թատրոն չկա, որ խաղացած չլինենք այս 6-7 տարվա ընթացքում, բայց նայած որ տեսանկյունից ես նայում, եթե ուզում ես շատ սրել, շատ թեմա կա, եթե ուզում ես գտնել ինչ որ բալանս, և կարգավորել:

Կարևոր գործոն է եկեղեցին, նրանց առկայությունը և գործելը, ոչ միայն իբրև եկեղեցական եմ ասում, այլ փաստն եմ արձանագրում, որտեղ եկեղեցիները գործեցին խորհրդային տարիներին, այնտեղ պահպանվեց հայությունը, դպրոցներն էլ նույնիսկ չօգնեցին, որովհետև փակվեցին, քանի որ պետական դպրոցներ էին, ձև կա այդ դպրոցները փակելու, նշանակում են հարբեցող տնօրենի, ամենաերիտասարդ ուսուցիչը 80 տարեկան, մարդիկ սկսում են չտանել և այսպես փակվում են: Կախերթի հայությունը ձեռք օրինակ: Տասնյակ գյուղերի մասին է խոսքը: Ես առաջինը դնում եմ եկեղեցու գործունեությունը, որովհետև ինքը որ գործում է, հայախոսությունն է պահում, եթե եկեղեցին չգործի և չաշխուժացնի հայկական կյանքը այստեղ, շատ արագ ձուլում կգնա, երկրորդը դպրոցն է, նրա առկայությունը, հայախոսությունը: Մյուս գործոնը Հայաստանի հեռուստաընկերությունների արբանյակային հեռարձակումն է, որը նույնպես նպաստում է հայապահպանությանը, չորրորդը Հայաստանի և Թբիլիսիում ապրող հայության ազգակցական կապերն են և փոխադարձ այցելություններն են: Մշակութային մասը, որտեղ թատրոնը այդպիսի դերակատարություն է ստանձնել, չնայած արդեն 7 տարի է չի գործում, որը շատ վատ է, ուրիշ էր, երբ որ թատրոնը շաբաթվա 3-4 օրը բեմադրություն էր իրականացնում և 100-ավոր մարդիկ էին գալիս և հայերեն խոսք էին լսում, բայց հիմա դա չկա: Հիմնականում հայապահպան գործունեությունը, հայապահպան միջոցառումներ, որոնցում ընդգրկում է նաև սփյուռքի հայերին, դրանք պահպանում և ապահովում են կապը, դա պիտի լինի կարծում եմ իր գործունեության ոլորտը, և հեռանկարն էլ պիտի խորացնի նոր գաղափարներով, նոր մտահաղացումներով: Մշակույթը իր հերթին, հիմա օրինակ «Արևիկ» թերթն եմ հրատարակում, որի 15 տարին է լրանում, այն 2000 օրինակով հրատարակվում է, և վեր ենք հանում պատանի նկարիչներին, ստեղծագործողներին, կազմակերպում ենք ցուցահան-

դեաներ: Պատկերացրեք, մենք Թիֆլիսում ունենք հայկական պետական թատրոն, որից 200 մետր հեռավորության վրա գտնվում են վրացական առաջատար թատրոններ, մենք զիջում ենք այդ թատրոններին մեր մակարդակով, մեզ այդպիսի թատրոն պետք չի, նույնը վերաբերում է դպրոցին, գրական խմբակներին:

Մշակութայինը մի կողմ դրված չէ, հրատարակել ենք մի գիրք, որի 3 համարի հարցում մեզ աջակցել է Սփյուռքի նախարարությունը, մյուսն մասն է նվիրատվության շնորհիվ է արվել: Համայնքը կարող է գործել, հզոր լինել, եթե համայնքի անդամները ունևոր մարդիկ են: Համայնք հասկացողությունը կախված է միայն ֆինանսներից, մնացածը սուտ բան է: Օրինակ Պետրոս Ադամյանի երեկոն արեցինք, շատ լավ միջոցառում էր, անցավ գնաց, իսկ բարեգործական ընկերությունը, եթե պիտի գործի, այն պետք է հարուստ լինի: Ինչ է նշանակում բարեգործական ընկերություն. դա միայն լեզուն և գրականությունը պահպանելու համար չէ, նաև պահպանելու համար է այն քաղցած տատիկներին, պապիկներին: Տեսեք, արտասահմանում մենք ունենք հայկական ծերանոցներ, ունենք հայկական դպրոցներ, մասնավոր հայկական դպրոցներ: Ես 40 տարի թատրոնի դեկավար եմ, մի մարդ չեմ գտել Վրաստանում, որպեսզի մեկ ներկայացում ֆինանսավորի: Այս առումով եկեղեցին գործում է, որին կից գործում է Հայարտունը, վերջինս ֆինանսավորվում է Հայաստանից, այսինքն պետությունը օգնում է նրան, մանկապարտեզ ունեն, խմբակներ ունեն, տարբեր մասնաճյուղեր ունեն:

Կրթություն և լեզու

Մենք Վրաստանում ունենք 100-ից ավել հայկական դպրոց, Ջավախքում, Թիֆլիսում և այլուր: 100-ից ավել դպրոց ունենք, որ ֆինանսավորվում է Վրաստանի կառավարության կողմից, ունենք պետական թատրոն և թերթ, որը ֆինանսավորում է պետությունը, համայնքին ինչ պիտի անի: Այսօրվա համայնքը չի կարող մի դպրոց պահել, որովհետև չունի հնարավորություն, գործարար մարդիկ: Կան մի քանի գործարարներ, բայց նրանք ինչ պիտի անեն: Թիֆլիսում հայկական 7 դպրոց ենք ունեցել, մեր պատճառով են փակվել: Եթե Հայաստանը կարողանար ֆինանսավորել, նոր կադրեր գային Հայաստանից, որ դասավանդեին: Այսինքն PR էր պետք դպրոցի զարգացման համար, լավ իմաստով: Հիմա Վրաստանը պահում է ռուսական դպրոց, որտեղ 90

տոկոսը գնում են էթնիկ հայերը: Այսինքն մակարդակը շենքից սկսած մինչև ուսուցիչ լինել, ձգտում կլինել: Բաժանմունքներով է, այսինքն ցանկացողը կարող է գնալ հայկական բաժանմունք, կամ վրացական: Օրինակ կարող ենք բերել շատ վրացական դպրոցներ, որտեղ չկան նման հարմարություններ, ինչպես այստեղ: Ես ասացի, որ իր հնարավորությունների սահմաններում արվում է, բայց մի անհասկանալի բան կա մեր համայնքի մեջ, ու մեծ խնդիր. մինչև 90-ականները պարզ էր ռուսական կրթության հետ կապված, իսկ այս պայմաններում էլի կարելի է հասկանալ, որ եթե գաղթելու նպատակ ունեն, ուզում են Ռուսաստան գնալ: Այստեղ ապրում են, ռուսական կրթությամբ են ավարտում, վրացերենով թերի են, հայերենը բացարձակ չգիտեն, գիտեն ռուսերենը, որը անհեռանկարային է: Երբ հարցնում ես, թե ինչնեղին է պետք, երբ պետությունը ծրագիր չի մշակում, պատասխան չկա: Գիտեք ինչ, մայրը, որը տանում է երեխային ռուսական դպրոց, ասում է, որ ինքը ռուսական է ավարտել, տանը ինչպես պարապի երեխայի հետ, ուրիշ լեզու չգիտի, երեխան է այդպես մեծանում է, և սերնդեսերունդ սա գնում է: Ռուսական դպրոցում հայկական միջավայր կա, շատ երեխաներ կան ռուսական դպրոցից, որ մեզ հետ են գործի և այլ առումով: Իրենք իրար մեջ խոսում են թիֆլիսահայերենով: Հայերի մի սովորության մասին եմ ուզում խոսել, այն, որ հայերը ասում են որ իրենց աշխատանքի չեն վերցրել այստեղ, ասել են, որ ազգանունը պետք է փոխել, շատ են այդպիսի դեպքերը: Այսօր, որ նման բան են ասում, 100 տոկոսով համոզված եղեք, որ օրինակ, եթե ֆուտբոլիստ խաղում է Վրաստանում, և ասում է, որ իրեն չեն ընդունել ազգանվան համար, դա այդպես չէ, ուրեմն նա հաստատ վատ խաղացող է, պարզապես նա փորձում է ինչ որ բան գտնել արդարացնելու համար ու դա սկսում է տարածվել:

Տանը խոսում են թիֆլիսահայերենով, ռուսական դպրոցում իրար մեջ խոսում են վրացերենով, 104-ում էլ, իրար մեջ վրացերենով են խոսում, բայց դա նորմալ են համարում: Ես Փարիզում տեսա հայ երեխաներ, իրար մեջ ֆրանսերեն էին խոսում, բայց հայերեն պարզ խոսում են: Եթե օրինակ իմանամ, որ 104 դպրոցում երեխաները հայերեն գիտեն, խնդիր չէ, թող վրացերեն էլ խոսեն, կամ այլ լեզվով, բայց այդ ռուսահայկականությունը չենք հասկանում այստեղի: Գոնե մեկ լեզու իմանան կատարյալ:

Մի լավ բան կա նրա մեջ, որ գնում են ռուսական: Թիֆլիսահայությունը շատ լուրջ խնդիր ունի, որ գնում են վրացական դպրոց, կամ

վրացական միջավայր, սկսում են մոռանալ, որ իրենք հայ են, ես չեմ ասում ինչ որ մեկի վրա հարձակվենք, կամ բղավենք որ հայ ենք, ուղղակի իրենք այնքան են ուզում հարմարվել այդ միջավայրին, որ անգամ պատրաստ են մոռանալ իրենց ինքնությունը: Դա էլ է լավ, որ ռուսական են գնում, որովհետև այնտեղ հայ են հիմնականում: 2009/2010 թ. խնդիր ծագեց հայկական դպրոցների փակման հետ կապված: Կա մի տրակտատ, որը ստորագրել է Վրաստանը, որ ինքը պարտավորվում է փոքրամասնությունների համար ապահովել կրթություն, իրենց մայրենի լեզվով, եթե լինի 3 հոգի դասարանը պետք է բացվի: Հիմա մենք ունենք ամբողջ Թիֆլիսում սփռված դպրոցներ, որտեղ դասարաններ կային, 2, 3, 4, կար 5 հոգի, այդ ընթացքում եկավ նոր կրթության նախարարը, և սկսեց օպտիմիզացնել: Ասեմ ձեզ, եթե մի տեղում լինի 20-30 մարդ, ոչ ոք չի կարող օպտիմիզացնել, փակել: Ինչից բացվեց 30-40 ականների ամենահին հայկական դպրոցը, որում ես էլ եմ սովորել, 104 դպրոցն է: 1938 թ. ունեցան առաջին շրջանավարտները, ինչից ելնելով, որովհետև հայության ազդեցությունը մեծ էր, հայերը շատ էին: 1960 թվականին են վրացները Թիֆլիսում շատ եղել հայերից, մինչև այդ, հայերը գերիշխող են եղել: Դպրոցների հարցը 2000-ականներից պարզ էր, որ նոր ուժ չի մտնում, այսինքն ուսուցիչները արդեն տարիքով էին, հետո պարզ էր, որ գնում էր գրոյի:

Երեք տարի առաջ այստեղ կար Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտ, ուր 39 թվականից գործում էր լեզվի և գրականության մասնաճյուղը, բազմաթիվ ֆակուլտետներով, հետո կամաց-կամաց ֆակուլտետը նեղացավ, և մնաց միայն բանասիրական, վերջինս էլ նեղացավ և ոչինչ չմնաց:

Ամենամեծ խոչընդոտը հայկական դպրոցների պակասն է, մենք այսօր ունենք մեկ լիարժեք դպրոց՝ 104 դպրոցը, նաև մնացել է մեկ բաժին՝ 103 դպրոցը, նախկին 110 հայկական դպրոցի բազայի վրա: Ամենամեծ խնդիրը ազգային դպրոց ունենալն է, որովհետև երեխաները մեծանում է, իր համար չի ներկայացնում հեղինակություն ոչ Թումանյանը, ոչ մեր ազգային եկեղեցական տոները, իրենց համար դրանք զուտ անուններ են, ոչինչ դա իրենց համար չի նշանակում, իրենց համար դա ոչ մի ազդեցություն չունի, և դա բավական լուրջ խնդիր է, հայ երեխան չի մեծանում հայկական արժեհամակարգով: Մենք որոշ բացեր լրացնում ենք Հայարտան միջոցով, մեր կիրակնօրյա դպրոցի և ստեղծագործական խմբերի միջոցով, պարտադիր ունենք հայոց պատ-

մություն, գրականություն: Մենք ունենք տարեկան 500 աշակերտ, բայց այս քաղաքում ապրում է 50–55 հազար հայ, որից 8–10 հազարը դպրոցական տարիքի երեխաներ են: Այդ 8 հազարից միայն 500-ն են ստանում լիարժեք հայկական կրթություն, 95 տոկոսը դուրս են մնում հայկական դաշտից: Մենք փորձում ենք, բայց ֆիզիկապես չենք կարող ընդգրկել գոնե համայնքի մեծամասնությունը, մենք ընդգրկում ենք միայն մի մասին: Շատ լուրջ խնդիր է: Թիֆլիսում հայախոս չէի ասի, բայց հայկական արժեքներ տանող մարդիկ քիչ են, դա շատ լուրջ զգացվում է, նույնիսկ այնպիսի թեմաներ, ինչպիսին է ապրիլի 24-ը և այլն, մարդկանց չի հուզում, նաև մեր համայնքում վախ կա, և այս ամենը ես կապում եմ վախի և ճնշման հետ, այս համայնքը եղել է գլխավոր լույս սփռողը ամբողջ արևելահայության համար և այդ նահանջը հիմնականում ճնշումից է, այսօր շատ անգամ ամոթ է լինել հայ, մի մասի մոտ այդ ազգայինը դրսևորվում է այդ ճնշումներից, մեծամասնությունը այնուամենայնիվ կոչ է գնում ճնշմանը:

Այս համայնքը կամաց-կամաց դառնում է ռուսախոս, այսօր եթե հայկական և ռուսական դպրոց գնաք Թիֆլիսում, 90–95 տոկոսը հայեր են, և՛ աշակերտները, և՛ ուսուցիչները, և դա արդեն 3-րդ սերունդն է այդպես շարունակվում է: Պետությունը հիմա հետաքրքիր քայլ է անում, փակում է ռուսական դպրոցները, աշակերտների քիչ քանակի համար, և դրանք դառնում են վրացական դպրոցներ և մեր հայ երեխաները, որ ռուսական դպրոց էին գնում, որը միջնաբերդ էր հայ և վրաց ինքնության միջև, դա էլ են կոտորում, և նա կամաց-կամաց դառնում է վրացական մշակույթի կրողը: Այստեղ կարևոր դեր ընտանիքն ունի, եթե ընտանիքի հիմքերը հստակ են դրված, դա ձուլման վտանգ չի առաջացնում, բայց շատ դեպքերում երբ հիմքը թույլ է դրված, ինֆորմացիայի պակաս ունեն, շատ հայեր չգիտեն, որ Արցախ կա: Հայկական հեռուստաալիքները, անկախ ամեն ինչից, կարող ենք ասել, որ դրական ազդեցություն ունեցան, սկսում են նայել արդեն, օրինակ Ավրորան են նայում, ոգևորվում են, լավ ազդեցություն տալիս է, բայց դա իհարկե ֆունդամենտալ լուծում չէ:

Փամանակին ունեինք հայոց լեզվի և գրականության ամբիոն, 15 տարի ես եմ վարել ամբիոնը, հետո ամբիոնը փակվեց, համալսարանում կա հայագիտության ամբիոն, բայց նա հայագիտության չէ, այնտեղ ամեն ինչ անում են, որ հայկականը դարձնեն վրացական: Մասնագետները վրացիներ են, ինչ պիտի անեն: Մի քանի տարի տեսանք, որ վե-

բականգնել հնարավոր չէ, որոշեցինք բացել Հայկական գիտահետազոտական կենտրոն Վրաստանում: Այդտեղ զեկուցումներ ենք լսում, առայժմ միայն դասախոսություններ ենք լսում հայ-վրացական հայագիտական, ճարտարագիտական և տարբեր թեմաներով: Կրթական բաժին կա, Մանուկյանն է ղեկավարում, թարգմանչական, լեզվի բաժիններ կան, տարբեր են:

Դա գիտական միջավայր ենք ստեղծում, բայց նպատակ ունենք ասպիրանտների ընդունել, ովքեր ուզում են շարունակել, պարզապես դրա համար մենք պետք է կապ հաստատենք, կցվենք մի որևէ համալսարանի, գիտական կենտրոնի, որ իրավունք ունենանք քննություն ընդունելու և այլն: Հետո տարեկան պետք է հրատարակեինք գիտական հոդվածների ժողովածու, նախարարը խոստացավ, որ 2017 թվականին կֆինանսավորի, ընդամենը 500 դոլլար էր հարկավոր, բայց այս տարի ասեցին, որ չհաջողվեց, կրճատումներ են եղել: Մենք հանձն առանք որ կանենք, բայց առայժմ չենք արել: Դպրոցները փակվում են, պատճառի մասին խոսելով ասեմ, որ ես ծնողներին չեմ մեղադրում, բոլորը դեմ են կանգնում ինձ, որ հայապահպանման համար պետք է տանենք հայկական դպրոց, բայց որովետև ծնողը այստեղ իր ապագան չի տեսնում, նա մտածում է տեղափոխվել, եթե նա մտածում է տեղափոխվել Ռուսաստան, նա իր երեխային հայկական դպրոց չի տանում: Կարող ենք ասել, որ երեխային տանելու խնդիր կա, եթե հենու է դպրոցը, ծնողները կամ աշխատում են, խնդիրներ կան:

Դժվար է ասել ռուսական և հայկական դպրոցների որակի տարբերությունը, մի տեղ աշխարհագրության ուսուցիչը ռուսականում է լավ, մյուս տեղ պատմության ուսուցիչը հայկականում է լավ: Ուրիշ բան, որ ասենք շենքը, կամ պայմանները, կաբինետային սիստեմ լինի, մեր դպրոցներում նման բան չկա: Բայց մի ուրիշ դպրոցում եթե 40 համակարգիչ է դրված, մեր դպրոցում 2-3 հատ է, կամ մի քիչ ավել: Այս տարի երեք մեդալակիր տվեցինք, 16 հոգուց: Խորհրդային շրջանում ռուսական դպրոցը գուցե ավելի ուժեղ էր, այսօր չէի ասի, միգուցե ավելի լավ է հայկականի մակարդակը: Գիտեք ինչով է ետ մնում, իմ աղջիկը 10 տարի գնաց ռուսական, վերջի 2 տարին տարա հայկական, տարբերությունը գիտեք ինչում եմ տեսնում, այդտեղի հայ երեխաները ավելի փակ են: Մի անգամ Երևանից եկել էին 104 աշակերտ, մինչև միջոցառումը սկսվելը, երևանցի երեխաները բարձրացել էին բեմի վրա, և պարում էին, իմ հետևում մեր ուսուցիչներն էին նստած, ասում

են, թե բա որ մեր երեխաները գնան ուրիշ դպրոց, ուրիշ քաղաք, իրենց այսպես կ'սպասեն:

Շրջանավարտները իհարկե բոլորը չեն տեղափոխվում: Վրացերենին տիրապետում են և գնում վրացերենով են սովորում, հետո իրենց ազգանվամբ աշխատանք գտնելը Վրաստանում, դա էլ խնդիր է: Մեր համայնքում մի երիտասարդ կա, Էդիկ Քոչարյան, շատ խելացի է, 40 տարեկան է, 20 տարի է աշխատանք է փնտրում, կանչում են, գնում է հարցազրույցի, ամեն տեղ ինքը շահում է, բայց ազգանվան համար չեն ընդունում: Սահակաշվիլու ժամանակ, երբ որ տնօրենների փոփոխություն եղավ, ես չէի մտածում, որ կարող եմ լինել, կուլեկտիվը որոշեց նամակ գրել, որ ես լինեմ, որովհետև պաշտոնակատարը չէր կարող դպրոցը ղեկավարել: Նամակը ուղարկվեց նախարարություն, և առանց որևէ առարկության կամ միջնորդի իրենք պատասխանեցին, որ ես նշանակվում եմ տնօրեն: Եթե հայկական դպրոցում վրաց տնօրեն նշանակեն, ինչ իմաստ ունի, եթե հայերեն բառ չգիտի, ասենք 104-ը բացառություն է, բայց հայից հետո էլի վրացի բերեցին, հայ բայց հայերեն չիմացող, էլի ծանոթությունով, դրանից հետո բերեցին ռուսահայ, հայերեն գիտի, բայց ռուսական դպրոցից է, էլի ծանոթությունով: Նայած ինչ նպատակով է գալիս, գալիս է, որ փակի հայկականը: Օրինակ այստեղ հայկական մասնաճյուղ էր 132-րդ դպրոցը, եկել էր վրացուհի, փաստաթղթեր հավաքեց, և տնօրենը չթողեց առաջին դասարան բացվի: Ուսումնական նյութերը, մինչև խորհրդային տարիները, Հայաստանի դասագրքերն էին բոլոր առարկաներից, այս պահին բոլորը վրացական ծրագիր է, հայերենով թարգմանված, բացի հայոց լեզվից և գրականությունից, որը Հայաստանից կազմակերպվում և բերվում է, հետագայում այստեղ կկազմվի ծրագիր, և կիրատարակվի, մինչ այդ այդ դասագրքերն են:

Խմբակների խնդիր չկա, եթե ես հիմնադրեցի երգի և պարի խմբակ, որը դպրոցը ունեցել էր: Հիմա էլ կան և՛ երգի, և՛ պարի, և՛ մարզական խմբեր: Դա խնդիր չէ, ընդհակառակը, նախարարությունը այս տարի հատուկ շեշտում է արտադասարանական խմբակների գործունեությունը, նույնիսկ մրցույթ է հայտարարել, որ կֆինանսավորի, եթե դպրոցը ծրագիր ներկայացնի: Օրենքը խախտվում է փաստորեն, եթե կային աշակերտներ, չպետք է փակելին, նմանատիպ հարցեր երբ առաջանում են, համայնքում չկա՞ իրավական որևէ համակարգող մարմին: Եթե լինի, անպայման կարող ենք, հիմա 110-են, կան դասարաններ

7 հոգի են, 10 հոգի են, բայց դասարաններ են: Իսկ 131 դպրոցում արդեն կոմպլեկտներ են, որովհետև քիչ են:

Այստեղ ռուսերենը օտար է համարվում, հայերենը չգիտեն: Նրանք ընդունվում են ««Մեկ պլյուս չորս»» ծրագրով: Չգիտենք, եթե ընդունվելու համար 4 առարկա է տալու, հայերենը համարվո՞ւմ է օտար: Հայկական դպրոցում ռուսերենը տվեցին որպես օտար լեզու, ոչ թե անգլերենը, երեխայի կամ ծնողի ցանկությամբ:

Համալսարանն է, որը իբրև կան անունով, ոչ ոք չգիտի, դիմորդը որ գնում է հայտ է լրացնում հայոց լեզու և գրականություն, նրան ասում են, որ չկա նման բան, հետո սա որ փակվեց, մասնավորում բացեցինք, 2 շրջանավարտ թողեցինք: Երևանի Հայ-բուսական, որ բացել էինք, և սպասում էինք կրեդիտացիայի, իբր ուսանողները այստեղ պետք է ընդունվեն, սովորեն, բայց ստանան Հայաստանի դիպլոմ, 2 անգամ հանդիպումներ ունեցանք Ախալցխայում և այստեղ, 2-3 ուսանող կա առայժմ, բայց քանի դեռ կրեդիտացիա չկա, նրանք չեն համարվում օրինական, հիմա նախապատրաստական է: Հիմա համալսարանում 2 տարի գործում է 'Ջավախիշվիլու համալսարանում, բայց դիմող չկա, որովհետև չգիտեն, երկլեզու տարականի մասնագետներ են պատրաստում, որոնք սկզբում կղասավանդեն 1-ից 6-րդ դասարանում, հետո գուցե երկու լեզվով, հայագետներ պիտի լինեն դասավանդողները: Հայերենով հանձնում են ընդհանուր ունակություններ քննությունը, միասնական ազգային քննությունը, ընդունվում են նախապատրաստական, մեկ տարի խորացված վրացերեն են ուսումնասիրում, հետո որ համալսարանը, որ բաժինը ուզում են, այնտեղ էլ հաջորդ տարի ավարտական քննությունը հանձնում են և եթե հաղթահարում են, շարունակում են ուսումը:

ՉԼՍ-ներ

Կա «Վրաստան» թերթը, որը մի քանի հարյուր կամ հազար օրինակ տպագրվում է: Լրատվական գործակալություններից է երկու տարի առաջ հիմնադրված «Ալիք» մեդիան: Չունենք հեռուստաընկերություններ ԱՄՆ-ի նման, որ գործում են, ազդեցություն ունեն, կամ ռադիո, դրա համար միջոցներ են պետք և մարդկային ռեսուրսներ, այնտեղ ստացվում է, որովհետև կան նյութական միջոցներ, և կան Հայաստանից գնացած մարդկային ռեսուրսներ, որովհետև Լոս-Անջելեսի հեռուստաընկերությունները 15-20 տարի առաջ շատ ցածր մակարդակի

վրա էին, իսկ հայության գնալով մակարդակը ավելի բարձրացավ: Մենք որպես եկեղեցի ամբողջ աշխարհի հայության մեր եկեղեցիների հետ կապի մեջ ենք Մայր Աթոռի միջոցով, բայց որ ասենք հստակ ինչ ոչ բաներ, դեռ չէ: Մենք հանրային հեռուստաընկերության 2-րդ ալիքով ունենք հայերեն լեզվով նորություններ շաբաթը 2 անգամ, բայց դա նախագիծ է, տարբեր ազգերին 30 րոպե տալիս են, համայնքային նորություններն էլ են լուսաբանում, բայց դա մեծ ազդեցություն չունի: Այսօր մենք հնարավորություն ունենք, որ համայնքը վրացական ալիքները կարող է թարգմանությամբ, հայկական սուբտիտրներով դիտել, բայց շատերը, հատկապես շրջաններում, չգիտեն դա ինչպես օգտագործել: Պետությունը այս առումով մի ընթացք գործունեություն ծավալել է ինֆորմատիվ կերպով, բայց օգտագործման դժվարություններ կան: Մեդիայի ազդեցությունը փաստորեն այնքան մեծ չէ, որ կարողանա ինչ որ բան ձևավորել: Նույն խնդիրն էլ Հայաստանում է, մարդիկ ընկալում են այն, ինչ իրենց հետաքրքրում է: «Ալիք» մեդիան մեկ տարեկան է, բավականին նորմալ լրատվություն է հաղորդում, նա վրացերեն է թարգմանում: «Վրաստան» թերթն է, որը ևս շատ օբյեկտիվորեն արտացոլում է Վրաստանի կյանքը, լուսաբանում է համայնքի կարևորագույն միջոցառումները, նաև պաշտոնական էջ ունի Հայաստանի իրադարձությունների և այնտեղ հատուկ մեկ էջ կա, որտեղ կան լուրեր Արցախից: Կա նաև Հայարտան էլեկտրոնային էջը, որտեղ հիմնականում նրանց գործունեությունն է: Հայկական հեռուստահաղորդումներ ունենք վրացական հեռուստատեսության Առաջին ալիքով, որոշակի ժամանակ է հատկացվում, որ լուրերից զատ նաև անդրադառնում է վիրահայերի կյանքին: Հայկական հեռուստաալիքներ ևս կարողանում ենք նայել: Հայկական լրատվություն սպառողները բավական շատ էին, թվերը չգիտեմ, բայց մի քանի հազարի է հասնում, հայաշատ շրջաններում հայերեն կարդում են, Թիֆլիսում մեծամասնությունը արդեն հայերեն չի կարդում, և այստեղ դա իրենից ոչ մի արժեք չի ներկայացնում: Կա «Ալիք» մեդիա, լրատվական կազմակերպություն է, հիմնականում օնլայն, բայց նրանք ունեն տպագիր, նաև վիդեոներ են պատրաստում, 2 տարվա գործունեություն են ծավալում, կա լրատվական գործակալություն Ախալքալաքում, որը նույնպես նոր է, բավական հետաքրքիր գործեր է անում, տեղական նյութերը, ավանդույթները հաղորդում է, Ջավախքում, և ոչ միայն կատարվող իրադարձությունները լուսաբանում են:

Կազմակերպություններ

Թբիլիսիում շուտով կգործի «Վերնատուն»-ը, պաշտոնական բացումը շուտով կլինի, նրա հիմնական նպատակը կլինի գիտական, գրական կապեր հաստատել հայ և վրաց գրողների, մտավորականության հետ: Եթե Հայարտանը ստեղծագործական խմբեր, խմբակներ են, կրթական, այնտեղ կլինի այդպիսի գրադարան: Եկեղեցուն կից գործում է առաջնորդարանը, որին կից մեկ երկու տարուց կգործի թանգարան: Կան հասարակական մի քանի կառույցներ, որոնք որոշակի ձևով գործում են, դրանցից կառանձնացնելի «Վրաստանի հայ համայնք» կազմակերպությանը, որը ազգային տեսանկյունից որոշակի գործեր է անում, ապրիլի 24-ի, մայիսի 9-ի և այլնի հետ կապված միջոցառումներ կազմակերպել: Նկարիչների միությունն էլ բավականին ակտիվ է գործում, մենք ենք օգնել նրանց, Երաժիշտների միությանը, նաև օգնել ենք Մտավորականների միության ձևավորմանը, բայց իներտ են, Թբիլիսիի հայությունը իր վրա չի վերցնում որևէ պատասխանատվություն, մենք եկեղեցիները նորոգենք, չնորոգենք չի նորոգվի, մենք կիրակնօրյայի ուսուցիչ պահեցինք, պահեցինք, ինքը չի պահի: Այսինքն համայնքը որևէ մասնակցություն չի ունենում, ինքը համարում է, որ մոմ վառելով, գաճաճակում գումար զցելով արդեն մասնակցություն է ունենում: Որոշ գործիչներ ժամանակին այս հաստատությունը կառուցելիս օգնել են, բայց հիմա իրենց գործերն էլ լավ չեն: Ժամանակին հոգաբարձուների խումբ էինք ստեղծել, մի քանի գործարաններ: Ցավով նորից կրկնում են, որ թբիլիսահայությունը ոչ մի պատասխանատվություն չի վերցնում: Օրինակ բերեմ, այս վերջերս մենք ունեինք բարեգործական միջոցառում, մի հայ երեխայի օգնելու համար, որպես կամավոր օգնող, վրացիներ ավելի շատ գրանցվեցին, քան հայեր: Կամավորության մշակույթը համայնքում չկա, որովհետև սոցիալական վիճակը այստեղ ուրիշ է: Մենք չենք կարող ասել, որ Շեվառնաձեից սկսած, այդ հարցը միանշանակ լուծվեց, մենք գիտենք, որ այդ թեման հատուկ էր այստեղ, նպատակ ուներ, բայց մեր հասարակությունը այնքան է հասունացել, մենք գիտակցում ենք դա ինչի հետ է կապված: Երկրի զարգացման հետ մեկտեղ նրանց վիճակն էլ կբարելավվի, ինչի համար մեր կառավարությունը լուրջ քայլեր է ձեռնարկում: Հիմնականում կարող եմ ասել, որ էական ազգային, տնտեսական կամ այլ խնդիրներ չկան: Ոչ մի խնդիր, ազատ կերպով, եթե ցանկացած անձ

ցանկանում է ստեղծել կազմակերպություն, գրանցվում է, ինչպես տիկին Էմմայի հետ մենք գրանցել ենք «Վրաստանի գիտահետազոտական միություն» կազմակերպությունը: Հիմնականում զբաղվում է տպագրությամբ, ուսումնասիրում է նաև մեր վիրահայերի նշանավոր մարդկանց գործունեությունը, հանդիպումներ է կազմակերպում: Այսօր ի ուրախություն մեզ, մի շաբթ կազմակերպություններ կան, որոնք ունեն երիտասարդ ղեկավարներ, և ընդգրկված է երիտասարդ սերունդը, դա շատ ողջունելի է: Մինչև ստեղծվելը, այդ պակասը ինձ թվում է կար, մտածում էի այդ ուղղությամբ, և ի ուրախություն վիրահայերի և մեզ, կան այդ երիտասարդական կազմակերպությունները, որոնք զբաղվում են մշակութային գործունեությամբ, հասարակական կյանքի աշխուժացմամբ: Ցավոք սրտի քիչ են, ոչ բոլորն են ընդգրկված, հավանաբար կեսից ավելի քիչ: Ոչ միայն կազմակերպչական, այլև մասնակցության առումով նույնպես քիչ են: Այո, նաև մասնակցության առումով:

Այսպես հիմնականում կազմակերպությունների միջոցով, և եկեղեցուն կից Հայարտուն մշակութային կենտրոնի միջոցով, իհարկե տարբեր կազմակերպիչներ ընդգրկված են, համատեղ իրականացվում են շատ աշխատանքներ: «Արևիկ մանկական վիրահայ երեխաների օգնության» բարեգործական հիմնադրամի 15 տարին է լրանում: Շատ ակտիվ էինք աշխատում, մինչև Հայարտուն ստեղծվելը: Հայարտան 6-րդ տարին է լրանում, և ինչ որ մենք էինք անում, այնտեղ գնաց: Մենք ֆորումներ էինք անում, երեխաներին ցուցահանդեսներ, ամեն ինչ, բայց այս 15 տարվա ընթացքում մոտ 2000 դոլլար օգնություն ստացած չենք լինի, անհատներից օրինակ: Մենք կազմակերպում էինք փառատոն, տոմսերը դայրոցներում վաճառում էինք, և այդ տոմսերով թատրոնի շենքում կազմակերպում էինք այդ, իսկ հետո արգելեցին դայրոցում տոմսեր վաճառել, մենք այլևս չէինք կարող, ծախսեր կային, թեկուզ հենց դահլիճի համար, և մենք արդեն 3 տարի է չենք կազմակերպում, պարզապես նյութական օգնություն ենք ցուցաբերում, նոր հագուստ ենք տրամադրում, տվել ենք դայրոցներին, 2 անգամ ուղարկել ենք Ղարաբաղ:

Եթե ռեալ վերցնենք, հայապահպանության դաշտում մեզանից բացի մեկ կազմակերպություն է գործում, դա «Հայաստանի հայ համայնք» կազմակերպությունն է: Իրենք զուտ ազգային գործունեություն են ծավալում: Մյուս կազմակերպության առումով, ինձ մի քիչ կասկածելի է իրենց հայապահպանությանն ուղղված միջոցներն ու միջոցառումները:

որը: Համայնքի ղեկավարություն հասկացողություն չկա, կա հայերի միություն, որը հիմա էլ է գործում, 90-ականներին բավական ակտիվ կառույց էր, և հետագայում դարձավ պետության վերահսկողության տակ գտնվող կառույց, և այսօր իրենից ոչինչ չի ներկայացնում: Այսօր ամենամեծ դերակատարությունը եկեղեցին ունի, որովհետև այն ամեն տեղ ներկայացված է, և այն ունի 5 կենտրոն՝ մշակույթի, կրթության և երիտասարդության, Թիֆլիսում մեր կենտրոնական Հայարտունը, Բաթումիում, Միխոցմինդայում, և կբացվի նաև Վերնատուն կենտրոնը: Մենք հայ գրողների կենտրոն ունենք, որտեղ գիտահետազոտական կտարվեն, միջոցառումներ և այլն:

Գաղութում ընթացող տևտեսական և սոցիալական գործընթացներ

Ես ուզում եմ սկսել 19-րդ դարից: 19-րդ դարում Թիֆլիսում գործում էր գործարար մարդկանց կազմակերպություն, գործում էր բարերարների միություն, գործում էր մշակույթը: Տարբեր կազմակերպություններ կային, որոնք կոնկրետ աշխատում էին տեղի հայության համար: Ինչ է նշանակում տեղի հայություն: Եկեղեցու, թատրոնի, գրադարանների, գրողների, դերասանների, այդ մարդիկ իրենց գումարը ներդնում էին այդպիսի մարդկանց համար: Ժամանակները փոխվելուց հետո, ամեն 10 տարին մեկ, 15 տարին մեկ, երբ գործարար մարդիկ հեռանում էին, նրանց փոխարինողներ չկային. Ղազարյանին, Մանթաշովին էին փոխարինում, չկային և տեսեք, փաստորեն 20-ական թվականներին, 30-ական թվականներից հետո, կամաց-կամաց երբ Սովետական միությունը մտավ այս երկիր, Հայաստան, և ընդհանրապես կարմրեց կես երկրագունդը, բարեգործություն հասկացողությունը ինքնըստինքյան վերացավ, որովհետև եկած պետությունը արդեն թույլ չէր տալիս այդ բարեգործությունը, նրանց մտածելակերպի հետ չէր համընկնում, և ինչ եղավ, մեծահարուստները թողեցին գնացին, մեկը գնաց Ֆրանսիա, մեկը՝ Անգլիա: Եկան կոմունիստները և նրանց հարստությունը վերցրեցին դարձրեցին պետական սեփականություն: Մանթաշովի տները դարձան պետությանը և ինչպես Հայաստանում, դե Երևանի մասին չէ խոսքը, Երևանը այն ժամանակ վատ դրության մեջ էր: Գնացին այդ մարդիկ, իրենց կառուցած շենքերը, հյուրանոցները, տները, մանկապարտեզները, մշակույթի տները, գործարանները, դպրոցները մնաց պետությանը: Պետությունը սեփականաշնորհեց:

Թիֆլիսում հայության հիմնական մասը այսօր սպասարկման ոլորտում է աշխատում, տաքսի ծառայություններում, հյուրանոցներում, ռեստորաններում, պետական պաշտոններում քիչ հայեր կան, քաղաքականության մեջ նույնպես: Կոնկրետ շերտ չունենք, մեկը կոշկակար է, մեկը բիզնեսմեն է: Ակտիվ հասարակական կյանքում եւ քիչ հայեր կան, հավանաբար դա գալիս է 90-ական թվականների այդ ծանր տարիների հետևանքով, երբ հայությունը կենաց մահու, ապրելու խնդիր ուներ և դրա համար կարծեք թե երկյուղի, շատ չակտիվանալու սինդրոմը մինչև այսօր էլ գործում է, դրա համար հայությունը ավելի շատ առևտրի մեջ է, և մեծ շուկաներում իրենք են, մենք այստեղ գործարարաներ, ներկայացուցիչներ չունենք, մի քանի ապակու գործարան կա այստեղ, կամ տնաշինական կամ այլ, բայց դրանք փոքր երևույթներ են և համայնքային կյանքի մեջ ընդգծված դերակատարում չունեն: Համայնքը, որպես հին համայնք, նաև ունի իր ավանդությունները: Այդ ավանդությունները թեև խորհրդային տարիներին շատ էին խեղաթյուրվել, բայց մենք կամաց-կամաց ամրապնդում ենք և վերականգնում դրանք մեր ազգային, եկեղեցական, ժողովրդական տոնախմբությունների միջոցով: Մոցիալ-տնտեսական վիճակը լավ չէ, կարելի է ասել ապրող վրացիներինն էլ, որովհետև իրենք իրենց հետ ապրում են, գրեթե նույն մակարդակի վրա են, բայց բնականաբար, որպես ազգային փոքրամասնություն, իրենք ավելի խոցելի են, որովհետև եթե կան պետական պաշտոններ, այստեղ գնում են վրացիները, և հայության համար քիչ աշխատատեղեր են մնում, այնպես որ հայությունը սոցիալապես խոցելի խավ է այստեղ, չնչին մասն է, որ իրեն կարող է համարել ապահով:

Այստեղ ունենք մասնագետներ, որոնք իրոք անփոխարինելի են, ֆինանսական գծով տնօրեններ կան շատ: Սակայն մենք այստեղ մրցակից չենք իրենց, մրցակցային էլ չենք, որովհետև իրենց երկիրն է, տիրապետում են ամեն ինչին, կրթական ոլորտում լինի, թե տարբեր մասնագիտությունների առումով, մենք մրցակից չենք: Այսօր վրացիների մեջ արդեն լավ վարպետներ կան, քարշարներ, ճարտարապետներ, այսինքն տարբեր մասնագիտությունների մեջ եթե նախկինում հայեր էին, այսօր իրենք էլ են սովորել, զարգացել և գրեթե չեն տեսնում մի ոլորտ որ մենք մրցակից լինք իրենց: Մեծամասնությունը բիզնեսով է զբաղվում, մանր և խոշոր: Արվեստով, թատրոն ունենք, թերթը «Վրաստան» թերթն է, եկեղեցին, «Հայարտուն» մշակութային կենտրոնը

ունենք: Ինչպես տեղացիները, նույն վիճակում էլ հայերն են: Տարբեր շերտերի մարդիկ կան, կան բավականին բարեկեցիկ ապրողներ, կան միջինից էլ ցածր ապրող ընտանիքներ: Գրեթե բոլոր ոլորտներում էլ կարելի է գտնել հայազգի աշխատակիցներ: Բնականաբար դպրոցներում ավելի շատ են ուսուցիչները, որովհետև կան հայկական դպրոցներ:

Ընդհանրապես հայերը ամենավատը ապրում են և Հայաստանում և Վրաստանում: Մի քիչ համեմատաբար Ջավախքի վիճակը բարելավել է, որ ճանապարհները կառուցված են, ապրանքի՝ շուկա հասնելը ավելի հեշտ դարձավ: Նայեք, հիմա լուրջ բիզնեսմեններ չկան, եթե մի հայ իրենից ինչ որ բան ներկայացնում է, ես իրենց ճանաչում եմ: Հարուստ մի քանի հոգի են, բայց եթե համեմատենք մյուս համայնքների հետ, լուրջ թիվ չէ, բայց նույն ջավախքցի հայը գնում է Մոսկվա, դառնում է ամենահարուստ մարդկանցից մեկը, իսկ այստեղ չի կարողանում: Տնտեսապես շատ թույլ են: Շաբաթական բավական դիմումներ ենք ստանում, ֆեյսբուքով տարածում ենք, երեխաների բուժման համար գումար չունեն: Օրենքով մենք բոլորս հավասար ենք այս պետության մեջ, բայց իրականում այդպես չէ: Մենք 2-3 անգամ պետք է լավը լինենք, որ հավասար լինենք իրենց, ամեն տեղ էլ այդ խնդիրը կա՝ մեծամասնություն և փոքրամասնություն: Հիմնականում հաջողակ հայերը՝ բարձր աշխատավարձով, իրենց ինտելեկտի հաշվին են դա ապահովում, բանկերում աշխատող հայեր ունենք, որ ավելի բարձր որակ են ներկայացնում, քան նույն աշխատավարձ ստացող վրացին: Դպրոցներում ուսուցիչներ են, ընդ որում ամենաշատը իրենք են, գյուղատնտեսության մեջ են, և մանր առևտրի, և արհեստներ ունեն: Ասեմ, որ վրացիների մոտ հայերը ընկալվում են բարձր մակարդակի արհեստավորներ, այստեղ էլ մրցակցության հաշվին է, որ հայը ավելի լավ է պատրաստում, Ջավախքից տղաներ կան, հազարավոր տղաներ, որոնք ունեն հնարավորություն, գործում են Ռուսաստանում, կամ այլ երկրներում: Նրանք կարող է իրենց գյուղում մի եկեղեցի կառուցեն, բայց որ ասես եկեղեցու փոխարեն մանկապատեզ կառուցիր, կամ սպորտդահլիճ, կամ մշակույթի տուն, չեն անի: Իհարկե եկեղեցին կարևոր է, բայց ամեն մեկը մտածում է, որ եկեղեցի կառուցի, Աստված իրեն կտա: Այսինքն այստեղ եկեղեցին ավելի մեծ շնորհ և առավելություն ունի: Հիմա եթե դու գործարար մարդուն ասես, արի մի ներկայացում ֆինանսավորի, իսկ մեր առաջնորդը ասի, եկեղեցուն մի

քան է պետք, գործարարը առաջին հերթին կլսի եկեղեցուն: Դա վատ չէ, դրա մասին չէ խոսքը: Մենք ունենք մի տեսանկյուն, և այս տեսանկյունով գնում ենք: Ասենք քաղաքի շրջանում 38-40 գյուղ կա, մի գյուղում մի գործարար մարդ եկեղեցի կառուցեց, հաջորդ գյուղում մյուսն էլ է ուզում:

Հասարակական կյանք

Տղամարդկանց ազդեցությունը շատ է կանանց վրա, մեր շրջանների մասին է խոսքը: Ես նախորդ տարի ընտրությունների ժամանակ ընտրական վարչությունում էի աշխատում, որպես հայալեզու մասնագետ, ու ինչպես ասեմ, գոյություն ունի գենդերային խնդիր, ես համարում եմ, որ Վրաստանում այս խնդիրը այդպես արտահայտված չէ, բայց մեր համայնքի ներսում մենք ունենք խնդիր: Կանայք կազմում են ձայն տվողների 57 տոկոսը, տղամարդիկ 43 տոկոսը: Հաշվառումը արվում է, վերջում այնպես է ստացվում, որ 2 անգամ շատ տղամարդ է մասնակցում, քան կանայք: Մեծ է տղամարդկանց ազդեցությունը, դա քաղաքում էլ կա, որ ազատ չեն աշխատանք և մասնագիտություն ընտրելու տեսանկյունից: Շատ է օգնում «Չորս պլյուս մեկ» ծրագիրը, որը շատ լավ ծրագիր է: Մարդկանց մտածելակերպը որպեսզի փոխվի, նրանք պետք է ինտեգրվեն: Շատ լավ է այս ծրագիրը երիտասարդների համար, թվով քիչ են գալիս, 700 հոգին տարեկան, ես համարում եմ, որ քիչ է: Եթե վերցնենք թե ում համար է այդ առավելությունը, ապա դրանք հայերի և ադրբեջանցիների համար է, ուրիշ ազգերի համար չկար, բայց այս տարվանից ուզում են այդ ծրագիրը օսերի համար էլ անեն: Եթե ստատիստիկայով համեմատենք, մեր ժողովուրդը էլի քիչ է, 300 հոգին հավասար է 800 հոգի ադրբեջանցուն: Երբ օսերի համար կարվի արդեն դա էլ կհամեմատենք, չնայած նրանք իրենց կարծես փոքրամասնություն չեն զգում: Անկեղծ ասած, սա ինչ որ տեղ ձևականություն է, որովհետև Վրաստանը այնքան պատասխանատվություն է վերցրել իր վրա, որ հերոսաբար փորձում է այդ հարցերի տակից դուրս գալ: Ես Թիֆլիսում եմ մեծացել, չեմ զգացել, որ օսերը իրենց փոքրամասնություն զգան, բայց այս տարի ակտիվացել են և արդեն կերևա: Ինչ վերաբերում է արտագաղթին:

Եղել են նման դեպքեր, երբ նոր կազմավորվում էր Վրաստանը, այն ռադիկալ ուժերը, որ կային կառավարությունում, ասում էին, որ այսպես պետք է լինի, բայց Շեվառնաձեի շրջանից սկսած, այդ

փոփոխությունը եղավ: Այսօր Վրաստանում կա այն սերուցքը, որ ազգության հարց եթե բարձրանում է, վատ են զգում իրենց: Հիմա կան տարբեր խնդիրներ: Վերջերս եկեղեցու կողքին շինարարություն է գնում, փորձեցին հարց բարձրացնել, իբր հայկական մշակութային կենտրոնի վնասելու խնդիր: Թեկուզ թատրոնի պարագայում, քանի տարի է, թատրոնը պետք է վերանորոգվի, բայց օպերայի պետական շենքը 6 տարի է, փակ էր: Ինչ վերաբերում է հայրենիքից դուրս ապրող քաղաքացիներին, ցանկացած հայ որտեղ ապրում է, պիտի լինի այդ երկրի զավակը. այդ երկրի հաջողությամբ պիտի ուրախանա, այդ երկրի անհաջողությամբ պիտի տխրի: Հայրենիքը դա փոքրիկ տուն է, այդ տան մեջ կարող է 3 մարդ ապրել, կարող է 10 մարդ ապրել, երկիրը դա մի փոքրիկ տուն է, որտեղ ապրում են մի քանի միլիոն մարդիկ, ոչ մի տարբերություն չկա: Դրա համար, որտեղ քո տունն է, որտեղ դու բնակվում ես, դու պիտի լինես այդ հողին կպած անձնավորություն, քո ընտանիքով, քո զավակներով, քո զավակը պիտի ծառայի այդ երկրին, դու չես կարող այդ երկրում ապրել, ու մտովի այդ երկրի անհաջողությունների համար ուրախանաս, դա սարսափելի բան է: Միայն այս դեպքում հզոր կլինի նաև քո պատմական հայրենիքը, իսկ դա ինչ է նշանակում. դու ազնիվ մարդ ես, իսկական քաղաքացի ես, եթե դու քաղաքացի ես այն բնակավայրի համար, որտեղ դու բնակվում ես, ինքնըստինքյան դու հավատարիմ մարդ ես լինում քո պատմական հայրենիքին: Հիմա մենք գուցե շատ ենք խոսում համայնքների մասին, հզոր, գիտուն, նորարար մարդիկ, հանճարեղ գրողներ, երգահաններ, սպորտսմեններ, նրանք պիտի գործեն իրենց երկրում: Հայեր ունենք Ռուսաստանում, որոնք ներկայացնում են Ռուսաստանը, և մենք դրա համար ուրախանում ենք, որ տեսեք հայ է, բայց մենք ավելի ուրախ կլինեինք, որ ստացած մեդալները կամ մրցանակները լինեին մեր դրոշի տակ և մեզ ճանաչողների քանակը կավելանար, այսինքն մեր գերխնդիրը սա պետք է լինի: Ես ասում եմ, որ պետք է լինես երկրին հավատարիմ, բայց չկորցնես քո երկրի ավանդույթը: Ամենաանընդունելին ինձ համար այն է, երբ արտասահմանում ունենք 46, կամ 59 կազմակերպություն, այս կազմակերպությունները բոլորը իրար ուտում են: Գիտեք ինչու են շատ ստեղծվում այդ կազմակերպությունները, կոիվ կա, թե ով է առաջինը: Օրինակներ կան, որ ես ականատես եմ եղել, որ եթե դու այս կազմակերպությունից ես, դու ունես քո ծրագիրը, այն 46-րդ կազմակերպությունը ունի իր ծրագիրը, եթե սա վերաբերում է մի

գրողի, որին հրավիրում է մի կազմակերպություն, մյուս կազմակերպությունները այդ հանդիպմանը չեն գնում, և ոչ էլ հրավիրված մարդուն են ուզում բարևել: Ահա որտեղ է կորչում մեր միասնությունը: Եթե մենք օտար երկրում չենք կարողանում մեր կազմակերպություններով բարձրացնել մեր գրականության, նկարչության, երաժշտության վիճակը, թատրոնի, դպրոցի մակարդակը, սա ուղղակի իմաստ չունի, պիտի կարողանանք բարձրացնել:

Հայաստան-վիրահայոց համայնք փոխհարաբերություններ

Շատ դրական, օգնում են արբանյակային հեռուստաալիքները, շատ դիտվում են Առաջին և Շանթ հեռուստաալիքները, մանավանդ Շանթը: Դա մեզ օգնեց, օրինակ արդեն գրեթե 10 տարի է, մենք անցել ենք նոր տոմարի, առաջ մեր բոլոր տոները Թբիլիսիում, Բաթումում արվում էր հին տոմարով, ուղղափառ վրաց եկեղեցու հետ միասին: Հիմա իրենք որ նայում են հեռուստատեսությամբ, տեսնում են, որ օրինակ Զատիկն է, լինում է մեկ ամսվա տարբերությամբ, դա շատ ծանր է: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանին, Հայաստանի մասին այսօր էլեկտրոնային լրատվությունը հասանելի է, մանավանդ հիմնականում ռուսալեզու ժողովուրդ է Թբիլիսիի հայությունը, հայախոս է, բայց կարդալը ռուսերեն է: Լրատվամիջոցներից, հեռուստաընկերություններից, ընդհանուր պետք է ասեմ, որ թբիլիսահայությունը հանդիսանալով հին հայություն, հակադրություն չունի այսօրվա Հայաստանի հետ, ինչպես նոր կազմավորված այլ համայնքներ, որոնք որ նեղացած են Հայաստանից, որովհետև իրավիճակի ելնելով, նա իր ընտանիքով գնացել է, ծնողներն են այստեղ, մենք չունենք դա: Թբիլիսահայությունը կապված է Հայաստանին, և հայաստանասիրությունը, հայրենասիրությունը, էջմիածնասիրությունը այստեղ մեր ժողովրդի մեջ կա: Արցախի նկատմամբ շատ ուշադիր են: Միայն մի քանի դժգոհություններ ունեն. հայկական հեռուստաընկերություններով հեռարձակվող այդ հայկական սերիալները, որը մեր հայ իրականության հետ բացարձակ կապ չունի: Ախալքալաք, Ախլցխա, Բաթում, Թբիլիսի, որտեղ որ հայությունը նայում է, այդ դժգոհությունը կա: Բայց Հայաստանի կյանքով ապրում են, եթե իրենց ասես նախագահ, նրանք մտածում են Սերժ Սարգսյանի մասին, չի մտածում Վրաստանի նախագահի մասին, ասես վարչապետ, Կարեն Կարապետյանի մասին են մտածում, իրենց նեքին կապը կա: Ինտելեգրված է Թբիլիսիի հայությունը

վրաց հասարակության մեջ, տիրապետում է լեզվին, մշակույթին, ավանդություններին, ընկերություն, բարեկամություն են անում, բայց նրանց հիմնական մասը իրենց կապը նայում է Հայաստանի հետ:

Մենք ցանկություն ունենք Հայաստանի կյանքի մեջ մասնակցություն ունենալ, բայց չկա այդ մեխանիզմը, որ ինքը մասնակցի, եթե մինչև 10–12 տարի առաջ երկքաղաքացիության մասին օրենքի ընդունումը սկիզբում ապրող հայությունը, մասնակցում էր ընտրություններին, հիմա չի կարողանում մասնակցել, իսկ խոսքը գնում է 100 հազարավոր հայերի մասին, որոնք զրկված են ընտրություններին մասնակցելու իրավունքից: Հաջորդը այն է, որ այստեղ հին հայեր կան, նոր հայեր կան, որ ունեն կյուրական միջոցներ, բարեգործություն են անում, բայց նրանք որևէ ազդեցություն չեն կարողանում ունենալ հայկական կյանքի վրա, ամենաշարքային քաղաքական գործիչը ավելին է ունենում, քան ամենահայտնի հայ գործիչը, որը մեծ ներդրումներ է անում հայկական կյանքում: Այս հարցի մասին մենք Էջմիածնում էլ ենք քննարկումներ ունեցել, այս հարցին պետք է լուծում տրվի, օրինակ Ավրորան, Ռուբեն Վարդանյանը, Վարդան Գրիգորյանը, նրանք չեն ցանկանում քաղաքական գործիչներ լինել, բայց իրենք կարող են իրենց օգտակարությունը բերել Հայաստանին, բայց չի գործում այդ մեխանիզմը, նրանք կարող են հավաքվել և գիտական լավ առաջարկություն անել, բայց ընդունել չընդունելը քաղաքական իշխանությունն է պատասխանատու: Տարբեր են, մի քանի շերտ կա: 80 տոկոսը Հայաստանում բարեկամներ, ընկերներ ունեն: 2003թ.-ից այս կողմ, երբ Հայաստան-Վրաստան հարաբերությունները լավացան, ճանապարհները բացվեցին, Բաթումի, Աջարիա, ավելի է կապը մեծացել: Միանշանակ ազդում է: Ես խնդիր չունեմ, Հայաստան գնալու, շփվելու, բայց մարդիկ, որ մեծացել են այստեղ, և ոչ մի անգամ չեն եղել Հայաստանում, և շատ անգամ գնալով հիասթափվում են՝ սահմանից սկսած: Բայց բոլոր պրոցեսները մեր համայնքի վրա ուղիղ ազդում են, ինչքան Հայաստանը ուժեղ է, այնքան մեր հանդեպ շատ հարցեր այլ կերպ կընկալվեն, ինչքան Հայաստանը թուլանում է, այնքան մեր համայնքն էլ է թուլանում, և մեր համայնքի վրա ճնշումն էլ է ավելանում, որովհետև մենք շատ ենք կապված իրար հետ:

Մեր համայնքը եղել է համահայկական կյանքի ամենակարևոր դոնորներից մեկը: Ցավոք սրտի այդ դոնորության չափը և որակը փոխվել է: Մեր համայնքը շատ վաղուց է որ ո՛չ Արամ Խաչատրյան է

ծնել իր մեջ, ո՛չ Փարաջանով, բայց ես հավատում եմ, որ պոստնցիալ կա: Պետք է այդ դոնորը, այդ մարդը լինի, որ հետո Հայաստան տեղափոխվի և օգտակար լինի իր պետությանը: Ամենամեծ ինստիտուտը դա հայրենիքն է, և մենք դա պետք է սերմանենք երիտասարդների մեջ: Իհարկե եկեղեցին և պետությունը իրենց տեղը ունեն, բայց ամենամեծ ինստիտուտը դա հայրենիքն է: Հետաքրքիր երիտասարդություն կա այստեղ, բայց ցավոք սրտի, եթե մենք 70-80-90-ական թվականները, դեռ չեմ ասում 60-ակաները, երբ մենք այստեղ 45 հայկական դպրոց ունեինք, երիտասարդությունը այստեղ մի քիչ հեռու է հայ գրականությունից, մշակույթից, դա է ամենավտանգավորը: Այս երիտասարդությունը, և՛ վրացիները, և՛ հայերը, շատ եվրոպական մտածելակերպ ունեն, կորցնում են իրենց արմատները: Հայրենասեր դաստիարակել չես կարող: Մենք օրինակ, առաջին դասարան հավաքեցինք, 32 երեխա է սովորում, 3-րդ դասարանում պետք է հասկանանք, թե ով է մեր գիտությանը և մշակույթին պետք, մենք սկզբից պետք է հասկանանք ինչ ենք անում, և այդ մարդկանց կենսագրությունը չփչացնենք, որով և երկրի կենսագրությունն ենք փչացնում: Պետք է հասկանանք, որ այդ երեխաների մեջ Սևակ կամ, Մինաս կամ, Խորեն Աբրահամյան կամ, սա մեկ օրվա գործ չէ: Բանակը ինչպես ենք ստեղծում, ասում են սա տանկիստ է, ուղարկում ենք տանկ վարելու, դա դիպուկահար պետք է լինի, այս մեկն էլ լավ խոհարար է: Չենք կարող բոլորին բերել թատրոն և ասել, որ Շեքսպիր ենք նայելու: Ասում ենք, որ Երևանում ռաբիզը շատ է, մենք ենք մեղավոր, եթե երեխային 14–15 տարեկանում դուր է գալիս, չես կարող նրա միջից դա հանել: Տաղանդը պետք է դեռևս կնոջ արգանդում առանձնացնենք, այստեղից պետք է սկսել:

Իհարկե, մեր բնակչության 99 տոկոսը, հայերի մասին է խոսքը, սերտորեն կապված են իրենց պատմական հայրենիքի հետ, դա չես խլի, որովհետև այն մեր պատմական հայրենիքն է: Բոլորս երկրպագում ենք մեր հայրենիքին, պատմական հայրենիքին, և ինչքան մեր հայրենիքը կապված լինի այս երկրի հետ, այնքան լավ կլինի տեղի հայերի համար, նույնը վերաբերում է Ֆրանսիայի հայերին: Ինչքան Հայաստանը հզոր կապերի մեջ լինի Ֆրանսիայի հետ, այնքան լավ տեղի հայերի համար, կամ Կանադայի հետ: Սա շատ կարևոր բան է, բոլոր դեպքերում դու բաժանված ես երկու մասի՝ քո ծննդավայրը և քո պատմական հայրենիքը: Ինչպիսին է քո պատմական հայրենիքի

փոխհարաբերությունը այս երկրի հետ, ինչքան ամուր են նրանց կապերը, այնքան հզոր են տեղի հայերը և գնահատված: Շատ բարձր են ընկալումները, որպես Մայր հայրենիք, որին պաշտում են, ես կասեի, և ապրում են նաև հաջողություններով, եթե ինչ որ բան այնպես չի լինում, տխրում են: Այդ կազմակերպությունները մասնակցում են հատկապես Սփյուռքի նախարարության կողմից մի շարք ծրագրերի, որոնցից գրեթե բոլորին ընդգրկված են: Ես, երբ դպրոցի տնօրեն էի, այն ժամանակ տարբեր միջոցառումներ կային, թեմատիկ շարադրություններ, օրինակ Եղեռնի մասին և այլն, այդ թեմաներով դպրոցը միշտ ակտիվ մասնակցում էր: Համացանցի միջոցով տեսնում են, ընդգրկվում են, մասնակցում են: Չեմ կարծում, որ կլինի մրցույթ կամ փառատոն, որ Վրաստանից մասնակից չլինի:

2008թ. Ռուսաստանի ագրեսիայի հետևանքով շատ լավ էր Հայաստանի դիրքորոշումը, եղբայրական, բարեկամական, և դա միշտ, բոլոր առիթներով նշում է վրացական կողմը և հատկապես վերջին ժամանակները վարչապետ Կարեն Կարապետյանի այցը և մեր վարչապետի այցը Հայաստան, շատ դրական էր, ջերմ էր, եղբայրական էր, և վերջերս էր կրթության նախարարի այցն էլ էր ողջունելի: Շատ դրական եմ գնահատում մեր հարաբերությունները, և կարելի է ասուլ որ ավելի է բարձրացել այդ ջերմությունը, որակապես ավելի բարձր է, հատկապես վերջին շրջանում: Նրանք կարող են ցավել, կամ երկրպագել, բայց երբ չես ապրում այդ երկրում, այլ ուրիշ երկրում, որի միջավայրը և մտածելակերպը այլ է, դու չես կարող այդ երկրից դուրս գալ, թե Հայաստանում ինչպիսի փոփոխություն կարող է լինել, իհարկե ոչ: Կարող ես փորձել ինչ որ բանով օգնել: Կարող ես մի բանով օգնել, եթե քո ընտանիքում հանճար է ծնվել, այդ հանճարին ուղարկես Հայաստան, դա է ամենամեծ օգնությունը, որ հանճարը չմնա այլ երկրում: Ռեւուրսների օգտագործումն է կարևոր, որ երկիրը զարգանա:

Վերջին տարիներին հաճախ են Հայաստանի քաղաքացիներ դառնում, մանավանդ Ջավախքից: Ես գիտեք ինչ եմ մտածում, սա իմ կարծիքն է, և չի կարող իմ կարծիքը ամբողջովին ճիշտ լինել: Ջավախքի բնակչության 50-60 տոկոսը Հայաստանի քաղաքացիներ են և բոլորը ուզում են դառնալ Հայաստանի քաղաքացիներ, նրանք Հայաստանին օգնում են, թե՛ վստում: Եթե նրանք Հայաստանի քաղաքացիներ են դառնում, գալիս են և սկսում ստեղծագործել Հայաստանում, միանշանակ օգուտ է, իսկ եթե քաղաքացի է դառնում միայն օդանավակայան

հասնելու համար, որ այնտեղից թոչի Ռուսաստան, Ուկրաինա, սա վլաս է և Ջավախքին, և Հայաստանին և Վրաստանին: Հայաստանի քաղաքացի մեծ մասը դառնում է նրա համար, որպեսզի տոմս ձեռք բերի, թոչի Ռուսաստան:

Սփյուռքի նախարարությունը ծրագրեր պետք է ունենար, թե ինչ կերպով սփյուռքի ներուժը օգտագործի, ՅՈՒՆԵՍԿՕ-յում հարց են քննարկում, Մշակույթի նախարարությունը բացարձակ չի օգտագործում Սփյուռքի ներուժը, լավաչի հարցը, կամ ուրիշ հարցեր: Սփյուռքի ներուժը այսօր չի օգտագործվում, որովհետև հաշվառում չի արվել սփյուռքում ինչ գործիչներ ունենք, մենք միայն անուններն ենք կարդում: Մարդիկ ունենք, որ մեծ ընկերություններում են աշխատում և 40-50 հազար աշխատողների ղեկավարներ են և շատ մեծ ընկերությունների փոխտնօրեններ, գործադիր տնօրեններ: Ուրեմն հաշվառում պետք է անել, թե մենք Հայաստանից դուրս ինչ մասնագիտության ինչպիսի մարդիկ ունենք, որ ոլորտներում ինչ ազդեցություն ունենք: Այսօր սփյուռքի ներուժը ամենալավը կարողանում են օգտագործել հրեաներն ու հույները ու դրա հետ միասին նաև դպրիները: Օրինակ Ավրոբայի շնորհիվ Ռուբեն Վարդանյանը և մյուսները մեծ հեղինակություն ունեն, և այսօր իրենք կարող են ասելիք ունենալ, մենք պետք է տեղ տանք այդ մարդկանց: Սամվել Կարապետյանը որ Արցախից սկսած մեծ գործեր է արել, և Ռուսաստանում շատ հայեր իր ընկերությունում են աշխատում, բայց նա էլ ասելիք չունի: Երբեմն ասում են, որ մենք դրսում ենք ապրում, չգիտենք ինչ է կատարվում, այդ իրավացի են, կարևոր մի հարց կա, ով իր երեխային տալիս է բանակում ծառայելու, նա խոսք ունի, երբ որ ես սփյուռքում ապրում եմ, և կարող եմ մեկ-մեկ մեծ-մեծ խոսել, բայց իմ երեխան սահմանում չի ծառայում, դրա համար այստեղ հարց կա, մենք պետք է հնարավորություն տանք սփյուռքի տղաներին գալ ծառայել, դրա համար հայաստանցին իրավունք ունի, որովհետև նա այդ հողի վրա է ապրում և իր երեխան ծառայում է բանակում: Երբեմն դա կարող է լինել հակադրության հարց, բայց այդ հակադրությունը մենք կարող ենք հեշտությամբ լուծել, եթե մեխանիզմները լավ աշխատեցնենք, և տարաբաժանենք թե ինչ ունենք մենք անելու: Տեսեք 90-ականներին հայությունը զգաց սփյուռքի օգնությունը, եթե այսօր մենք Շառլ Ազնավուրին մեծարում ենք, նաև մեծարում ենք նրա համար, որ ամենաձար ժամանակներում նա համերգներ էր տալիս

և Հայաստանի համար միջոցներ էր հավաքում: Հայությունը երախտապարտ է, որ իր եղբայրները օգնեցին իրեն, օգնեցին Արցախում հաղթանակ տանելու համար, անցած տարի ապրիլից հետո տեխնիկա մտավ Հայաստան, որը մեր զինվորները այսօր կարողանում են օգտագործել:

Առաջինը ֆինանսական առումով է: Ճառերով, որ Հայաստանը սիրում են և այլն, բայց եթե կոնկրետ գործ չկա, իմաստ չունի: Կամ եթե ես թեկուզ ֆիզիկապես կարող եմ օգնել իմ երկրին, գամ օգնեմ: Սա իմ կարծիքն է, ով ֆինանսապես ինչքան կարողանում է, պետք է օգնի: Վստահություն պետք է լինի, որ այդ ամենը հասնում է հասցեատիրոջը: Հայաստանում հիմա գոնե զգացվում է, որ այս առումով փոփոխություն կա: Հայաստանից ավելի շատ ընկալումներ ունեն: Այնուամենայնիվ հայերի մի մասը Հայաստանին իրենց տեր են զգում, եթե անվտանգության հարցեր լինեն, գոյատևման կամ ֆիզիկական ոչնչացման և այլն, զգում են, որ Հայաստանը կարող է իրենց տեր լինել:

— Կոնկրետ մեր կենտրոնը բավական ակտիվ է մասնակցում համահայկական բոլոր ծրագրերին, նախարարությունների հետ է համագործակցում, և Մշակույթի, և Կրթության, և Երիտասարդության հարցերի և իհարկե Սփյուռքի նախարարության հետ շատ սերտ կապեր ունենք, և նաև աջակցություն էլ ենք ստանում իրենցից՝ թեմա է ստանում, նաև Սփյուռքի նախարարությունից փոքր ֆինանսական օգնություն է ստանում կենտրոնում ուսուցիչների աշխատավարձերի համար, նաև գրքեր ենք ստանում: Հիմնականում կապը կրթական է: Ժամանակին Մշակույթի նախարարությունը ոչ մեծ, բայց ֆինանսական օգնություն է ցուցաբերել միջոցառումների կազմակերպման համար: Մենք խնդիր չունենք, բայց ընդհանուր խնդիրը համայնքում հայկական դպրոցների և գրքերի հարցն է, որ մինչև հիմա լուծված չէ, դպրոցները լիարժեք հայկական գրականություն չեն ստանում: Պայմանավորվածություն կա, որ հայոց լեզուն և գրականությունը Հայաստանից գա, իսկ մյուս գրքերը թարգմանվում են հայերեն: Պայմանավորվածություն կա, բայց ելի ծնողները ինչ որ կերպ կարողանում են երեխաներին գիրք ապահովել կամ մենք ենք աջակցում օրինակ Քարթլիի շրջանում ներքին կարգով այբբենարաններ ենք հասցնում, բայց դա պաշտոնական չէ: Մեր համայնքում լուրջ խնդիրներ կան, և հիմնականը կրթական խնդիրն է: Եթե երեխան չի դաստիարակվում ընդհանուր

հայկական արժեքների շուրջ, իր համար հայկականությունը ոչինչ չի ներկայացնում:

Մերը ոչ հասարակական կազմակերպություն է, բայց ես կարող եմ օրինակ բերել թատրոնի միջոցով, թատրոնը համայնքի միջոցով Ֆրանսիա է գնացել, նաև Թեհրան, Մոսկվայում էլ եղել ենք դեսպանության միջոցով, հիմնականում մշակութային գծով այդ կապերը ունենք: Ավստրիայի հայ համայնքի հետ ունենք կապեր՝ Արտեմ Օհանջանյանի հետ, ամերիկահայ ընկերներ ունենք, այստեղից գնացած, բայց ուղիղ համայնքային կապ չունենք իրենց հետ: Հիմա Սփյուռքի նախարարության դերակատարության մասին, ասեմ որ մենք այստեղ ունենք համայնքներ, որոնց պետությունը իր հնարավորությունների սահմանում ինչ կարողանում, անում է, մենք չենք կարող ասել, որ կոնկրետ հայերի նկատմամբ է այդ դրսևորումը, որովհետև չկա նման բան, ես աշխատում եմ, շփվել եմ, հայ-վրացական դպրոց է վերջերս կառուցվել Մետրաստոյում՝ ամենահայաշատ թաղամասում:

Համակարգող դեր պետք է ունենա, եթե մեր նման համայնքներում որտեղ սոցիալապես անապահով շերտը շատ է, եթե կարողանան դպրոցներ հիմնել, որը հասկանում ենք, որ դա լուրջ ֆինանսական խնդիր է, պետք է ուղղորդող, համակարգող և օգնող դեր ունենա, նաև կապը պահող: Այստեղ տարբեր միջոցառումներ որ կազմակերպվում են, մասնակցում ենք, դաշտ է ստեղծվում նաև մյուս համայնքների հետ շփման համար: Այս առումով Սփյուռքի նախարարությունը գործում է: Աշխարհի միակ պետությունը Հայաստանն է, որ վաղուց պետք է ունենար Սփյուռքի նախարարություն: Վրաստանը 5 տարի առաջ ստեղծեց Սփյուռքի նախարարություն, նրանք դրսում քիչ են, իսկ մեր նախարարությունը 11-12 տարվա պատմություն ունի: Նախարարությունը իր դերը կատարում է երկրի համար: Գուցե դրսի համար մի քիչ ծիծաղելի է, «Եկեք տուն» և այլն, բայց սա բոլոր դեպքերում իր արդյունքը տալիս է, որովհետև այն հազարավոր երեխաները, որոնք գալիս են իրենց պատմական հայրենիք, անպայման այստեղից ինչ-որ բան տանում են, տանում են օդը, կանաչի հոտը, քաղաքը, գյուղը, թոնիքը, սա մեր ազգային կոդի մեջ նստած է, և եթե կապված չես քո երկրին, սա կորչելու է, իսկ կորելու դեպքում դու դառնում ես այն երկրի բնակիչը, որոնք ապրում են իրենց ավանդույթներով:

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

«Հայկական Սփյուռքն այսօր» խորագրով մենագրությունը եզրափակում է հրապարակումների շարքը, որոնք հիմնված են հեղինակի մշակած և նրա ղեկավարությամբ իրականացված՝ Թեհրանի, Բեյրութի, Փարիզի, Լոս Անջելեսի և Թբիլիսիի հայկական գաղթօջախների էթնոսոցիոլոգիական հետազոտությունների վրա: Այս գրքում տեղ գտած վերլուծական մշակումների հիմքում ավելի քան չորս տասնյակ տեղական փորձագետների հետ անցկացված խորին հարցազրույցների նյութերն են: Դրանով իսկ հասանելի դարձավ օտարազգի միջավայրում գտնվող էթնիկ խմբի էթնոսոցիոլոգիական ուսումնասիրության գլխավոր նպատակը, այսինքն՝ ներսից իմաստավորել նրա ներկա իրավիճակը և հեռանկարները: Այն փաստը, որ փորձագետների մեծ մասը համայնքի գործունեության մեջ ակտիվ դիրքորոշում ունեցող բարձր որակավորում ունեցող գործիչներն են, հնարավորություն ընձեռվեց ստանալու բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն այդ քաղաքների հայ բնակիչների կենսագործունեության մասին: Բացի դրանից, իրականությանը մոտ բովանդակ տեղեկատվության համար, իրավիճակի նկարագրման որոշակի դեկլարատիվությունը (պայմանավորված փորձագետների սոցիալական դիրքորոշմամբ) հաղթահարելու նպատակով հետազոտության մեջ ընդգրկվել էին նաև համայնքի շարքային անդամներ: Վերջիններս որոշակի ճշգրտումներ կատարեցին փորձագետների կարծիքների և դատողությունների մեջ: Անհրաժեշտ է նաև նշել, որ փորձագետների խորին հարցազրույցները կատարվում էին տվյալ քաղաքի հայերի մեծաքանակ զանգվածի ստանդարտացված հարցազրույցների խորապատկերի վրա, ինչպես նաև հրապարակում եղած տվյալների և նյութերի վերլուծության ընթացքում:

Անհրաժեշտ էր ավելացնել ընտրված գաղթօջախների բարձր ներկայացուցչականությունը: Դա պայմանավորված էր նրանով, որ առաջին հերթին նրանք ներկայացնում են Մերձավոր Արևելքի, Եվրո-

պայի և Ամերիկայի երկրներում տեղաբաշխված ամենախոշոր հայկական գաղթօջախները: Երկրորդ՝ դրանք ինչպես հին, այլազգի շրջապատում համագոյակցության լուրջ պատմություն ունեցող, այնպես էլ նոր, արագ զարգացող գաղթօջախներն են: Երրորդ՝ այդտեղ մենք գործ ունենք հոծ և ցրիվ տարաբնակեցված հայերի խմբերի հետ: Եվ չորրորդ՝ յուրաքանչյուր գաղթօջախ ունի ձևավորման բավականին տարբեր աղբյուրներ: Սրանով ապահովվեց հետագոտության արդյունքների անաչառության և ներկայացուցչության խնդիրը, որն էլ թույլ տվեց Սփյուռքի ներկա վիճակի և հայ համայնքներում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ ավելի ընդգրկուն տեղեկատվություն ստանալ: Այսպես, փորձագետների տեղեկատվությունը որոշակի տվյալներ էր ներառում էթնիկ խմբի թվի, կազմի, տվյալ քաղաքի տարածքում նրանց տարաբնակության բնույթի մասին, որոնք բացակայում են այդ երկրի պաշտոնական փաստաթղթերում: Հարցազրույցների ընթացքում հաստատվեց, որ ամենահայաշատը Լոս Անջելեսն է, իսկ սակավ հայաշատը՝ Թեհրանի գաղթօջախը: Ըստ տեղեկատվությունների՝ ուսումնասիրված այս հատվածում դիտարկվեց տարաբնակեցման երեք ձև՝ հոծ բնակեցում՝ Բեյրութ, Թեհրան, դիսկրետ՝ Փարիզ, Թբիլիսի, Լոս Անջելես, վերջիններիս մոտ տարածված է նաև դիսպերս ձևը: Հաստատվեց նաև այն կարծիքը, որ ազգի մեջ ընթացող տարածական տեղաշարժերն ունեն մեկ ընդհանուր միտում՝ հոծ բնակեցված վայրերից արտագաղթում են երկրներ, որտեղ ցրված/դիսպերս վիճակը ինքնաբերաբար մեծանում է: Առաջինի շարքում են Թեհրանը և Բեյրութը, իսկ երկրորդի՝ Լոս Անջելեսը, Թբիլիսին և Փարիզը: Դրան համապատասխան՝ բնորոշվում է յուրաքանչյուր գաղթօջախի սոցիալ-ժողովրդագրական ներուժը: Այսպես, հայերի տարիքային կազմը Թեհրանում «ամենածերն» է, իսկ Լոս Անջելեսում «ամենաերիտասարդը»: Նմանապես սոցիալական կազմը ամենաբարդն է վերջինիս մոտ և համեմատաբար պարզ՝ առաջինի: Հարկ է նշել, որ հարցազրույցների նյութերը, ակնհայտ կարծիքների հաստատումից բացի, ոչ միայն ճշգրտումներն են մտցնում յուրաքանչյուր գաղթօջախի ներկա կազմի մասին, այլև ներթափանցում են գործընթացների բնույթի մեջ: Այսպես, լրջորեն քննարկվում են միգրացիոն ընթացքի պատճառահետևանքային կապերը, գատվում են ընդհանուրը և առանձնահատուկը, որոնք պայմանավորված են տվյալ երկրի և հատկապես հայերի իրավիճակով: Բացի դրանից, հաղորդված քանակական նշանա-

կույթուն ունեցող տվյալները գուգորդվում են բովանդակային վերլուծությամբ՝ նպաստելով որակական փոփոխություններին հետևելուն: Այս մեթոդով տեղեկատվության բովանդակության բարձր որակն օժանդակում է ստանալ տարբեր միջավայրերում էթնիկ խմբի կենսագործունեության իրատեսական և խորը պատկեր: Մրա հիմքում ոչ միայն երևույթների փաստագրումն ու դրանց բացատրությունն են, այլև փորձագետների անձնական կարծիքը այս կամ այն խնդրի վերաբերյալ: Այն անձնական է և արտահայտում է փորձագետի արժեհամակարգը՝ դրա ներքո ապահովելով իրատեսության բարձր աստիճան: Այսպես, նկարագրելով և գնահատելով գաղութի տնտեսական վիճակը կամ մշակութային կյանքը, փորձագետը կամա թե ակամա տալիս է դրանց հատկանիշների սանդղակը՝ ըստ իր կարծիքի գերակայության սկզբունքի: Եվ համեմատելով քառասուն փորձագետների սանդղակները՝ հանգում ենք խիստ կարևոր հետևյալ հետևությունների:

Առաջին հետևություն. անկախ երկրից, տարիքից, գործունեության ոլորտից, ծագման վայրից և այլ հատկանիշներից՝ փորձագետները ցույց են տալիս խնդիրների (հատկանիշների) գերակայության դասակարգման միանման սանդղակ: Այսպես, ազգապահպան գործունեների շարքը հաջորդաբար դասադասվում է ըստ լեզվի, եկեղեցու, կրթական ու մշակութային կենտրոնների և այլ նմանատիպ կառույցների թվարկումների: Սա խոսում է ազգապահպան խնդիրների նույնանման մոտեցումների մասին, որը, ըստ երևույթին, օտարազգի միջավայրում հայ էթնիկության պահպանման առանձնահատուկ դրսևորումներից է. սա պետք է հաշվի առնվի ազգային նախագծերի, ծրագրերի մշակման աշխատանքներում:

Երկրորդ հետևություն. Միյուրքի ընտրախավի ներկայացուցիչների մեջ արդեն ավանդույթ է ձևավորված գաղութի կազմակերպման վերաբերյալ, գործում են կարծրատիպեր, որոնք հիմք են դառնում ազգապահպան ծրագրերի մշակման և իրագործման համար:

Եվ վերջին՝ երրորդ հետևություն. փորձագետների տարակարծություններն են, որոնք առաջանում են միայն վերոնշյալ սանդղակի կադապարներում, վերաբերելով միայն նախագծերի իրականացման ուղիներին, և որն է կարևոր՝ այդ խնդիրները լուծող կառույցների գործունեության գնահատականներում: Դա կարևորվում է նաև նրանով, որ հենց գնահատականներում և արժևորումներում արտահայտվեց տարակարծությունների մեկ խումբ՝ մանավանդ հայրենիք՝ Միյուրք փոխհարաբերությունների համատեքստում:

Նախքան այս հարցի քննարկումը հարկ է նշել, որ ներկայացված նյութերը 2013–2016 թթ. անցկացված հետազոտությունների արդյունքն են, այսինքն՝ «թավշյա հեղափոխությունից» առաջ, և համապատասխանաբար արտահայտում են այդ շրջանի հասարակական կարծիքի վիճակը: Սրա ամենահամոզիչ արտահայտությունը ակնառու է հայրենիքի մասին գնահատումներում և ՀՀ ղեկավարման օղակների նկատմամբ վերաբերմունքում: Այստեղ տարակարծությունները միավորվում են երեք խմբի մեջ: Առաջինը, անկախ արտահայտությունների բազմությունից, հայրենիքի ներկա իրավիճակի քննարկումն է, երկրորդը՝ Սփյուռքի՝ հայրենիքին օգնելու հարցադրումներն են, իսկ երրորդը՝ հայրենիք գալու/վերադառնալու ցանկությունները: Այս համատեքստում գործում է գնահատականների հակադրություն՝ «դրական-բացասական»: Դա միանշանակ չէ, քանզի գոյություն ունեն արտահայտությունների բազմաթիվ նրբերանգներ և ձևակերպման ենթատեքստեր: Սակայն բացառվում է նաև առաջարկված երկանդամի օգտագործումը երևույթների տիպաբանման համար, մանավանդ որ տեքստային վերլուծությունը ցույց տվեց, որ այս երկանդամի կողմերն իրական են: Ներկայացված հակադիր երկանդամի կտրվածքով վերը նշված գնահատումների երեք խմբերը տարբերակվում են ըստ առանձին գաղթօջախների և անգամ առանձին փորձագետների:

Այսպիսով, հայկական տարբեր համայնքների փորձագետների պատասխանների պոմենների համադրումը բովանդակային վերլուծության լուրջ ներուժ է պարունակում: Այն մեծացնում է այլազգի միջավայրում ընթացող սոցիալական, մշակութային գործընթացների փոխադարձ կապերի համալիր ուսումնասիրման հնարավորությունները: Դրանցում գրանցված ծագումնաբանական, սոցիալական և ժողովրդագրական կառուցվածքի, վարքի շարժառիթների, էթնոմշակութային կենսակերպի վերաբերյալ նկարագրությունները և կարծիքները հնարավորություն են տալիս էապես առաջ ընթանալու կոնկրետ գաղթօջախի սոցիալական և մշակութային ներուժի նկարագրության մեջ: Մաթոյլ է տալիս ոչ միայն խորացնել մեր գիտելիքները ժամանակակից Սփյուռքի մասին, այլև ևս մեկ քայլ կատարել ազգային ծրագրերին գիտական հիմնավորումներ հաղորդելու գործում:

Ամփոփելով վերոնշյալ դրույթները՝ անդրադառնանք այն իրողությանը, որ հայ էթնիկության զարգացման երկու հիմնական ուղղությունները՝ սեփական էթնիկ տարածքում և Սփյուռքում, պայմանավո-

րում են մի շարք առավելություններ և թերություններ: Մի կողմից, որպես էթնիկ փոքրամասնություն հանդիսացող ամբողջական խումբ, հայկական Սփյուռքը ձևավոխվում և ձուլվում է: Ընդ որում, էթնոհոծ գոտիներից հայերի թափ ստացած արտահոսքի հետևանքով Սփյուռքը տարածքային առումով ավելի է ընդարձակվում և ցրվում: Մյուս կողմից, տիրապետելով հարմարվողականության բարձր հնարավորությունների, Սփյուռքը կարող է կարևոր նշանակություն ունենալ համաշխարհային տնտեսական տարածքում իր էթնիկ հայրենիքի ինտեգրման գործում: Իսկ գլոբալացման պայմաններում նա կարող է հանդես գալ որպես միջմայրցամաքային և տարածաշրջանային տնտեսական ու հոգևոր ազգային կառույցների ձևավորման կարևոր գործոն: Այս առումով առանձնահատուկ նշանակություն է ստանում Սփյուռքի պահպանումը, նրա տարբեր օղակների միջև որակապես նոր փոխհարաբերությունների ձևավորումը, որը հնարավոր է հատուկ հետազոտական ծրագրերի մշակման և իրականացման միջոցով. դրա մեկ փորձը ներկայացվեց այս մենագրության մեջ:

ЗАКЛЮЧЕНИЕ

Представленная монография “Армянская диаспора сегодня” завершает цикл публикаций, основанных на материалах конкретных эмпирических исследований современной армянской диаспоры в армянских переселенческих очагах Тегерана, Бейрута, Парижа, Лос Анджелеса и Тбилиси, разработанных по программе и реализованных под руководством автора. Базовым источником для аналитических разработок данной книги являются материалы более четырех десятков интервью местных экспертов. На этой основе была достигнута главная цель эмпирического изучения этнической группы в инонациональном окружении, а именно осмысление ее состояния и перспектив на основе информации, полученной от ее представителей. Тот факт, что значительная часть экспертов состояла из занимающих активные позиции в общинных делах деятелей, позволило получить весьма достоверную и содержательную информацию о жизнедеятельности армян, жителей этих городов. Для того, чтобы наполнить большим и близким к реальности содержанием и преодолеть некоторую декларативность в описании общины указанных экспертов (как следствие их социальных позиций), в исследовании были привлечены также рядовые члены общины. Последние были призваны дополнить и скорректировать некоторые мнения и суждения основных экспертов.

Работа с экспертами проводилась на фоне, проводившегося в этот период стандартизированного интервью большого массива армян – жителей данного города и анализа имеющихся в наличии в общинных центрах, СМИ данных и материалов. Высокий уровень репрезентативности исследования обеспечивался выбором в качестве объекта исследования наиболее крупных армянских переселенческих очагов в странах Ближнего Востока, Европы и Америки. В их состав вошли как старые, имеющие солидную историю сосуществования с иноэтническим окружением, так и новые бурно развивающиеся переселенческие очаги, состоящие из компакто и дисперсно расселенных групп этноса.

В исследовании обеспечивалась объективность и репрезентативность полученной от экспертов весьма объемной информации о положении армян диаспоры и происходящих среди них процессов. Эта информация содержит отсутствующие в большинстве случаев в официальных документах сведения о численности этнической группы, ее состава и характера расселения по территории каждого исследованного города. Вместе с тем они подтвердили общие представления о численности армян в указанных городах: наиболее многочисленным оказался Лос Анджелес, наименее малочисленным – Тегеран. В исследованных городах определились три типа расселения этноса: первый тип компактный – Бейрут, Тегеран, второй дискретный – Париж, Тбилиси и Лос Анджелес. Во второй группе городов армянам был присущ также дисперсный тип расселения. Подтвердилось и то общее мнение, что в пространственных перемещениях этноса преобладает вектор движение из зон компактного расселения в сторону тех стран, где он активно диффузируется. В ряду первых оказался Тегеран, а вторых – Лос-Анджелес, Тбилиси и Париж. Соответственно указанному и определился социально-демографический потенциал каждой общины: возрастная структура тегеранских армян сравнительно “старая”, а американских – молодая, соответственно социальный состав последних сложнее первых.

Материалы интервью кроме констатации и подтверждения утвердившихся мнений, не только внесли уточнение в данных о составе общины, но и содержали новые показатели о происходящих процессах, выявили их содержание. На основе анализа состояния данной страны и ситуации сложившихся у ее жителей- армян, экспертами приводились причинно-следственные связи миграционных процессов, а в статистически значимые данные ими вносились качественные измерения.

Таким образом, ценность полученных сведений заключена в том информационном ресурсе, носителем которого являются сами эксперты – участники событий. Они в силу своих интеллектуальных и аналитических возможностей показали весьма содержательную картину происходящих в общине процессов. Эксперты не только фиксировали факты, но и высказывали о них свое мнение, в котором отразилась система ценностей каждого из них и, в котором была заключена специфичная и весьма ценная информация. Описывая и оценивая экономическое положение или культурную жизнь конкретной общины, экспер-

ты старательно перечисляли составные элементы этих сфер жизнедеятельности общины по уровню их приоритетности. И, сравнивая таблицы их распределения в мнениях более чем сорока экспертов, приходим к следующим важным для данного исследования выводам.

Первый вывод. Независимо от страны, возраста, сферы деятельности, происхождения и других параметров, все эксперты указали на одинаковый порядок расположения проблем, стоящих перед общиной, необходимых в ее деятельности. В ряду решения задач, стоящих перед руководством общин, на первом месте находились задачи сохранения национального языка, поддержание церкви, функционирования образовательных и культурных центров и т.д. Это свидетельствует по-видимому о некоторых этнических “армянских” особенностях приоритетов в сохранении идентичности в инациональном окружении и специфичности методов построения общинных организаций. Их следует учитывать при разработке национальных проектов, программ.

Второй вывод. В разработке мер поддержания этничности в инациональном окружении, элиты общин обращаются к традиции исторически наработанных приемов и видов деятельности в их организации и управлении.

Третий вывод. Различия мнений экспертов проявляются не в порядке расположения приоритетов, они касаются лишь путей реализации отдельных проектов и оценок деятельности организаций выполняющих работы в каждом из них. Этот вывод важен тем, что именно в оценках этой деятельности и проявляется целый спектр разногласий, что особенно четко вырисовывается в вопросе оценок состояния взаимосвязей родина-диаспора¹.

Наиболее убедительное выражение сказанного можно найти в суждениях экспертов о родине, в их оценках сложившейся там ситуации и, отношении к органам управления РА. Эти, весьма множественные и разнотипные, оценки можно объединить в три крупные группы. В первой из них иллюстрируются различия между экспертами в высказываниях о современной ситуации на родине; во второй группе – прояв-

1 Следует указать на то обстоятельство, что исследование было проведено в 2013-2016 гг., следовательно, отражало сложившееся в этот период общественное мнение в диаспоре о ситуации на родине, взаимоотношениям родина-диаспора.

ляется общая установка на необходимость оказания помощи родине и в третьей – отражается отношение к репатриации. В этом контексте действует распределение оценок в дихотомии “положительно – отрицательно”. Подобное противопоставление, конечно, неоднозначно, в высказываниях экспертов присутствовали нюансы, различные подтексты (как следствие их социальных позиций), что не отрицает использование дихотомических принципов в типологии. В разрезе этой двухчленной оппозиции вышеуказанные три группы оценок варьируются и по отдельным общинам и даже по отдельным экспертам.

Вывод очевиден. Сопоставительное изучение сюжетов интервью экспертов разных общин позволило получить весьма содержательный аналитический ресурс. Он раскрывает широкие возможности системного исследования взаимосвязей происходящих социальных и культурных процессов в этнической группе, находящейся в инонациональном окружении. Зафиксированные в ходе интервью большого числа экспертов, представителей армянских общин, качественно новые данные позволяют существенно продвинуться в конкретных описаниях социально-культурного потенциала каждой общины. Это дает реальную возможность не только углубить наши знания о современной диаспоре, но сделать и еще один шаг в научном обосновании национальных программ и проектов, создать информационную базу их разработки и реализации.

Резюмируя вышесказанные положения, следует обратиться к той реальности, в которой находится современная армянская этничность, развитие которой проходит в своей национальной среде и в диаспоре. Такое положение создает целый ряд преимуществ и недостатков. С одной стороны, являясь сообществом этнического меньшинства разных стран, армянская диаспора трансформируется и ассимилируется. При этом, вследствие получившего большой размах оттока армян из компактных зон расселения, диаспора пространственно все более расширяется и диффузируется.

С другой стороны, обладая выработанными веками серьезными адаптативными навыками диаспора может сыграть особую роль в интеграции своей родины в мировое экономическое пространство. А в современных условиях глобализации она способна стать фактором образования межконтинентальных и межрегиональных экономических и

культурных национальных структур. Именно поэтому особое значение приобретает сохранение диаспоры, формирование качественно новых связей между ее отдельными звеньями, основанных на научном знании о каждом сегменте этноса, путем разработки и реализации специальных исследовательских программ, одним из опытов которых является представленная монография.

CONCLUSION

The monograph entitled “Armenian Communities Today” completes a series of publications, based on the materials of an ethno-sociological study on the Armenian communities of Teheran, Beirut, Paris, Los Angeles and Tbilisi, which were elaborated by the author and carried out under his guidance. Over forty profound interviews with local experts underlie the analytical elaborations found in this book. Thus, the main purpose of the ethno-sociological study of an ethnic group in a foreign environment, i.e. to understand its current situation and perspectives from inside, was attained. The fact that most of the experts were high-ranking people of high qualifications, with an active position in the community activities have allowed us to obtain quite accurate information about the life of the Armenians living in these cities. Besides that, to receive the entire information close to reality, ordinary members of the community had also been included in the study to overcome the declarative character (conditioned by the experts’ social standing) when describing the situation. Such members made certain corrections in the experts’ opinions and judgments. It should also be noted that the experts’ profound interviews were conducted against the background of standardized interviews of large masses of the Armenians in a given city, as well as based on the analysis of available data and materials.

It was necessary to increase the high representation of the selected communities. Firstly, this was due to the fact that they represented the largest Armenian communities located in the Middle East, Europe, and America. Secondly, these are older communities, with a serious history of coexistence in a foreign milieu, as well as the new ones, which developed promptly. Thirdly, there we are dealing with groups of Armenians populated densely, and those who are scattered. And fourthly, each community has quite different sources of formation. This ensured the impartiality and representativeness of research findings, which allowed us to acquire more comprehensive information on the current state of the Diaspora and the processes, taking

place in the Armenian communities. Thus, the experts' information contained certain data on the ethnic group's number, composition, and nature of their settlement on the territory of a given city, which are missing in the official documents of that country. The interviews confirmed that the largest Armenian community lives in Los Angeles, and the smallest is in Tehran. According to the information, in this part of our research, three forms of resettlement were studied: dense settlements (Beirut and Tehran), discrete (Paris, Tbilisi and Los Angeles) and disperse (which is also widespread in Los Angeles) It has also been confirmed that territorial moves of a nation have one common tendency: people emigrate from densely populated areas to countries, where the scattered/dispersed state automatically increases. Among the first are Tehran and Beirut, and among the second is Los Angeles, Tbilisi and Paris. Accordingly, the socio-demographic potential of each community is defined. Thus, the age structure of the Armenians is the "oldest" in Tehran and the "youngest" in Los Angeles. Similarly, the social composition is the most complicated in Los Angeles and relatively simple in Tehran. It should be noted that the interviews, besides confirming obvious opinions, not only make clarifications about the current composition of each community, but also penetrate into the nature of the processes. Thus, the cause-and-effect relationships of migration processes are seriously discussed, the general and the distinctive features are separated, which are conditioned by the situation of the country and especially the Armenians. Additionally, the conveyed data of quantitative significance are accompanied by a content analysis, which contributes to following qualitative changes. With this method, the high quality of information content helps to obtain a realistic and profound picture of the life and activities of an ethnic group in different environments. The basis of this is not only documenting and explaining phenomena, but also the personal opinion of experts on any issue. It is personal and expresses the value system of an expert, thereby ensuring a high degree of realism. Thus, when describing and evaluating the economic situation or cultural life of a community, an expert voluntarily or unwillingly gives the scale of their features, according to the priority principle of his/her opinion. And comparing the scales of forty experts, we come to the following very important conclusions:

Conclusion One: Regardless of the country, age, sphere of activity, place of origin and other characteristics, experts show a similar scale of clas-

sification of problems (features) in priority. Thus, the factors supporting national identity are consecutively graded as follows: notional language, church, educational and cultural centres and other similar structures. This speaks of similar approaches to the issues of national identity, which, apparently, is one of the specific manifestations of the Armenian ethnicity in the foreign environment; this should be taken into consideration when elaborating national projects and programs.

Conclusion.Two: Among the elite representatives of the Diaspora community, there is already a tradition of organizing a community, and stereotypes are used that form the basis of elaborating and carrying out programs to preserve national identity.

And the last one, **Conclusion Three:** The difference in experts' opinions arises only within the stereotypes of the above-mentioned scale, and they are related only to the ways, in which the projects are implemented, and what is more important, when evaluating the activities of the institutions that solve these problems. It is also important to note that the assessment and evaluation of these activities were expressed in one group of diverse opinions, especially in the context of Motherland-Diaspora relations.

Before discussing this issue, it should be noted that the presented materials resulted due to the research conducted in 2013-2016, i.e. before the “velvet revolution” and accordingly, reflect the public opinion of that period. The most convincing expression of this is evident in the assessment of homeland and the attitude towards the Armenian leadership. Here, diverse opinions are shown in three groups. The first group represents the discussion of the current state of homeland irrespective of the multitude of expressions, the second is the statement of questions of the Diaspora, helping homeland, and the third one is the desire to visit/to return to homeland. In this context, there is a contradiction between the evaluation “positive and negative”. It is not unequivocal because there are many nuances of expressions and contexts of formulation. However, the use of the suggested dichotomy is also excluded to typologize the phenomena, especially that the textual analysis has shown that the sides of this dichotomy are genuine. On the basis of the presented contrary dichotomy, the above-mentioned three groups are differentiated by individual communities and even experts.

Thus, comparing the subject-matter in the answers of experts from different Armenian communities contains a serious potential for the analysis

of the content. It enhances the possibilities of a complex study of the mutual links of social and cultural processes in the foreign environment. Descriptions and opinions on the origin, social and demographic structure, motives of behavior, ethno-cultural lifestyle recorded therein affords an opportunity to essentially move forward in the description of the social and cultural potential of a specific community. This allows us to deepen our knowledge of the modern Diaspora and take one more step forward in providing national programs with scientific motivation.

Summing up the aforementioned provisions, let us touch upon the reality that the two main trends in the development of Armenian ethnicity, in their own ethnic area and in the Diaspora, have some advantages and disadvantages. On the one hand, as an ethnic minority, the Armenian Diaspora is transformed and assimilated; at this, due to the wide-ranging leakage of the Armenians from the ethnically dense zones, the Diaspora is spatially expanding and spreading. On the other hand, having a high level of adaptability, the Diaspora can play an important role in integrating its ethnic homeland in the global economic arena. Under the conditions of globalization, the Armenian Diaspora can act as an important factor in the formation of intercontinental and regional economic and spiritual structures. In this respect, the maintenance of the Diaspora, the formation of qualitatively new relations between its different circles, which is possible through the development and implementation of special research programs, acquire particular importance; such experience has been presented in this monograph.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
12

ՈՒՐԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԱՅՍՕՐ

ԹԵՐՐԱՆԻ, ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ, ԲԵՅՐՈՒԹԻ, ՓԱՐԻՉԻ, ԹԲԻԼԻՍԻԻ
ՀԱՅԵՐԻ ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆ

Սրբագրիչ՝
Սեդա Քուվեյյան

Էջադրումը և ձևավորումը՝
Արթուր Հարությունյանի

ISBN 978-9939-9178-3-2



9 789939 917832